ԱՆԴՐԷ Տ. ՕՀԱՆԵԱՆ

ԱՆՑԱԾ ՕՐԵՐԻ ՇՂԹԱՆ

(Վէպ)

Թեհրան

Տպարան Ֆրանսուա Մալեք Բարամ

1949

Շամրիկ Դարբինեան
Շաւարշ Թունեան
Իրան-Թաւրիզ

ԱՆԴՐԷ Տ. ՕՀԱՆԵԱՆ

ԱՆՑԱԾ ՕՐԵՐԻ ՇՂԹԱՆ

(ՎԷՊ ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔԻՑ)

Թեհրան
Տպարան Ֆրանսուա Մալեք Քարամ
1949

ՆԱԽԱԲԱՆ

Ձեռնարկելով ներկայ վէպի հրատարակութեան, ընթերցող հասարակութեան ուշադրութեանն ենք յանձնում հետեւեալ իրողութիւնը. Իրանահայութիւնը, իր գոյութեան 350 տարիների (1605—1949) ընթացքում, չի ունեցել իր վէպը. մի քանի իրանահայ գրողներ հրատարակել են պատմուածքներ, վէպիկներ եւ այսքան միայն։ Մեր ներկայ վէպը՝ «Անցած օրերի շղթան»՝ ինքնին ներկայացնում է նախորդ տասնամեակի իրանահայ կեանքը՝ իր մշակութային մտահոգութիւններով, յոյզերով ու ապրումներով, այլեւ պարունակում է էջեր հայ եւ պարսիկ ժողովուրդների բարեկամութեան, պատմական համառօտ ակնարկ իրանեան վեհապետների սակաւ առիթներով խիստ, սակայն մեծ մասամբ խնամքոտ եւ հովանաւորող քաղաքականութեան՝ հայ համայնքի նկատմամբ։

Վէպիս մէջ շօշափուած հիմնական խնդիրը՝ տասնհինգ տարի առաջ իրանահայ դպրոցների փակումն ու հայ մշակութային տագնապը՝ բարեբախտաբար ժամանակաւոր բնոյթ կրեց՝ անցնելով պատմական անցեալի գիրկը եւ մեր դպրոցները վերաբացուեցին ներկայ դեմոկրատիկ վարչաձեւի օրօք. այժմ մեր նոր սերունդը հնարաւորութիւն ունի պետական լեզուի հետ սովորելու նաեւ իր մայրենի լեզուն։

Վէպի դէպքերը հիւսուած են մեծ մասամբ պատմական իրողութիւնների վրայ, որոշ դէմքեր իրական են եւ յիշատակուած իրենց իսկական անուններով, միւսները վիպական են, որոնց նմաններին, սակայն, կարելի է հանդիպել իրական կեանքում։

Պարսիկ ժողովուրդը՝ ի բնէ բարի եւ մարդասէր՝ տեղ է գտել այս վէպի մէջ որպէս այդպիսին. նոյնպէս եւ հայ ժողովրդի երախտագիտական զգացումները՝ դէպի իր հիւրընկալ ժողովուրդը։

Վէպիս մէջ յաճախ կը հանդիպէք բարբառով գրուած էջերի. Թեհրանահայութիւնը յատուկ բարբառ չունի. այժմ 35,000 Թեհրանահայութեան մէջ կարելի է հանդիպել հայկական բազմաթիւ բարբառների՝ երբեմն իրար խառնուած. մենք ներկայացրել ենք հէնց այդ ձեւով, սովորական մարդկանց բերնում իրենց բարբառը թողնելով, իբրեւ իրական երեւոյթ։

Եթէ մենք յաջողել ենք գէթ մօտաւոր պատկերը տալ նախորդ տասնամեակի իրանահայ կեանքի, որի գործօն անդամներից ենք եղել, այդու հասել ենք մեր նպատակին։

Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում ա՛յն մի խումբ իրանահայ հայրենակիցներին, որոնք իրենց սիրալիր վերաբերմունքով եւ բարոյական ու նիւթական աջակցութեամբ դիւրացրին այս վէպի հրատարակութիւնը։

Հեղինակ

ՆԱԽԱԲԱՆ

[illegible]

ԱՆՑԱԾ ՕՐԵՐԻ ՇՂԹԱՆ

ԹԵՀՐԱՆ

Նրանք հինգ ընկերներ էին՝ գործի բերումով մտերմացած։ Իրանն ապրում էր վերաշինութեան մի շրջան և բազմաթիւ գործնական մարդիկ թեւած էին շենքերի, գործարանների, բայց մանաւանդ ճամբաների շինութեան աշխատանքներին։ Ընկերային կեանքում առաջ էր եկել մի նոր դաս՝ կապալառուների, նրանց ստորադրեալների և շինարարական բանւորութեան։ Հինգ ընկերները կապալառուներ չէին, ո՛չ էլ շինարարական բանւորներ, նրանք տարբեր ժամանակներում, մերթ միատեղ, մերթ առանձին, կատարել էին գործարկուի դեր. խնայել էին մի փոքրիկ գումար՝ անգործ ժամանակ «գլխանալու» համար, մինչև որ մի խոշոր կապալառու նոր գործ կը վերցնէր և նրանց աշխատանքի կը կոչէր։

Նրանք քայլում էին Թեհրանի Նադերի փողոցով. որ ամենանշանաւոր վայրերից է և համարւում է քաղաքի կենտրոնը։

—Եկէք սուրճով հիւրասիրեմ ձեզ,—ասաց Վաղինակը, որ միջահասակ, ամրապինդ կազմուածքով, համակրելի դէմքով ու սև գանգուրներով, հազիւ 28—30 տարեկան մի երիտասարդ էր, հինգ ընկերների մէջ ամենակրտսերը։

Նրանք չսպասեցին հրաւէրի կրկնութեան. ներս մտան «Ֆիրուզ» սրճարանը, որ նոր էր բացւել և գմբէթաձև առաստաղ ունէր։ Սրճարանը դեռևս շատ փոքր էր և աւելի անուշեղէնի վաճառքով էր զբաղւում, քան այցելուներ ընդունում։

Նրանք նստեցին կենտրոնի մի սեղանի շուրջ և սուրճ պատուիրեցին։

Խօսակցութիւնն սկզբում ընթացաւ սովորական ցաւոտ հարցի շուրջ. «Արդեօք կը յաջողւի՞ Ֆէօդր Կարպիչին շահելու Մազանդարանի գծի այսինչ բաժնի նուազուրդը»,—և նրանցից ոմանք յուսատու էին, ոմանք՝ յոռետես։

—Էլ գլխանալու հնար չկայ,—ասում էր կարմիր երեսով

և կապույտ աչքերով Սարօն,—խնայածս փոքր գումարն էլ ծախսեցի՛ վերջացաւ. ի՞նչ կը լինի ընտանիքիս վիճակը:

—Էն՛ ինչ որ մերը,—յարեց բարձրահասակ, չոր դէմքով Կարօն. է՛լի էդ տեսակէտից Վաղրիկի վիճակը մեզնից լաւ է. նա կին ու երեխայի տէր չի. ինքն է ու իր գլուխը, երիտասարդ է, առողջ,—ապա դառնալով Վաղրիկին,—Ես քո տեղը որ լինէի հա՛, ողջ աշխարհը ոտքիս տակը կը տայի…

—Դիւրին է այդպէս դատելը,—ասաց Վաղրիկը.—Ինձ էլ համարեա նոյն պայմաններն են շրջապատում՝ ինչ որ ձեզնից ամէն մէկին. ինչ վերաբերում է ծախսերին, մինակ մարդը աւելին է ծախսում՝ քան փոքր ընտանիք ունեցողը: Ճիշտ է, իմ խնայածս գումարը դեռ չի վերջացել, բայց եթէ մի տարի էլ այսպէս անգործ մնանք, չգիտեմ թէ ինչ կը լինի…

—Կապալառուներն էլ իրե՛նց ցաւն ունեն,—ասաց Բարդուղը մօրուքը շոյելով,—նախ որ՝ նրանց ծախսը շատ ա, մի անգամ արդէն լայն ապրուստի վարժւելով՝ նրանք չեն կարողանում իրենց ծախսերը կրճատել, անգամ՝ գործ չունեցած ժամանակ: Երկրորդ՝ երբ նոր գործ են ուզում վերցնել՝ մի զգալի գումար պէտք դնեն գործի մէջ, երբեմն այդ տրամադրելի գումարը չեն ունենում և ստիպուած են որևէ կալուած, կամ թանկագին զարդեր գրաւ դնել, և կամ թէ մեծ տոկոսներով պարտք վերցնել… Այս է պատճառը, որ նոր գործ վերցրած ժամանակ նրանք աւելի դաժան են, աւելի ագահ և դրանքում մեզպէս թաշբրոններն են տուժում ու նաև թշւառ բանւորութիւնը, որի օրավարձից կըտրում են հա՛ կտրում: Կապալառուի փողը քամու բերած փող ա՝ քամին էլ տա՛նում ա. գործի տաք ժամանակը մէկ էլ տեսար կապալառուն մէկ գիշերում հազարներ ծախսեց «Աստորիայում», «Փարս»-ում, «Կանարի»-ում, էս ու էն արտիստկայի վրայ. կամ թէ չէ՝ պոկէրի մէջ տարւեց հազարներ, դէ յետոյ եկ ու էշը ցեխիցը հանիր… Որտեղից պէտք դուրս բերի էդ գումարը, եթէ ոչ ինձնից ու քեզնից, բանւորից, կամ թէ չէ՝ պաշտօնեաների ու քննիչների շրթունքը պէտք քաղցրացնի՝ ցեմենտից, երկաթից, փայտից ու այլ բաներից իր փողը հանի…

—Իմ վիճակս էլ գնալով վատանում է, աղե՛րք,—ասաց Վահրամը բեխերը շոյելով,—կառավարութիւնը տրամադիր է մեզ սեղմելու կուլտուրական գետնի վրայ, մինչև հիմա պահան-

ջում էր մեր հայկական դպրոցներում պետական դպրոցների ծրագիրը գործադրել, էդ արինք. բայց նա չի գոհանում և ամեն օր մի նոր պահանջ ա դնում. մտադրութիւն ունի՝ ձեռքը մեր դպրոցների վրայ դնելու. ինչ պէտի լինի մեր, հայ ուսուցիչներիս վիճակը, մենք պարսկերէն չգիտենք. մեր ժամանակ դըպրոցներում պետական լեզուն թոյլ էր. շատ թոյլ, ո՞վ կը մտածէր թէ մի օր պարսկագիտութիւն պէտի պահանջւի։ Մեր դըպրոցները որ փակեն՝ ինչ կը լինի մե՛ր ճարը. Վարդաշխի հետ ամեն օր էս մասին ենք խօսում…

—Չգիտեմ ինչու՝ այս կաֆէի կամարներն ու աստառը տեսնելիս յիշեցի առաջին օրերին իմ Թեհրան գալը,—ասաց Վաղրիկը. —այս քաղաքը համբաւաւոր է, իւրայատուկ, և միջազգային մի խառնարան է ներկայացնում ինքնին. բայց և տիպիկ պարսկական է՝ իբրև մայրաքաղաք։ Այս քաղաքը մտնելը գուցէ դիւրին է, բայց ելնելը՝ դժուարին. ապրելը հաճելի է, բայց դիմանալը՝ անհնարին։ Ես որքան դիտել եմ՝ այլ երկըրներում հազար ու մի խաղեր, չանտաժներ արած ու դուրս պըրծած մարդիկ երբ Թեհրան են եկել՝ ժամանակի ընթացքում Թեհրանը պատռել է նրանց դիմակը, խեղճացրել և քամած կիտրոնի պէս դէն շպրտել. այստեղ մտնող առիւծը վերջում մուկ է դառնում. Լսեցէք թէ ինչ պատահեց ինձ՝ երբ առաջին անգամ ոտք դրի Թեհրան։

—Պատմի՛ր, հետաքրքրական է,—ասացին միւսներն անհամբեր։

ՌՈՍՏԱՄԻ ԳՈՒՐԶԸ

—Երբ առաջին անգամ ոտք դրի Թեհրան,—շարունակեց Վաղրիկը,—դա տասը տարի առաջ էր, բարեկամս ինձ ասաց.

—Գնա՛նք, պտտենք քաղաքը, տե՛ս։

—Գնա՛նք, ասացի, ցոյց տուր և ծանօթացրո՛ւ։

Մենք անցանք մի քանի կոշտ հողէ յատակով փողոցներ, որոնց երկու կողմից առուներ էին ձգւում՝ կանաչախիտ ծառերով. փողոցները ջրած էին և հաճելի էր քայլելը։ Յետոյ մենք հասանք խիաբանը Լալեզար, որ Թեհրանի կենտրոնն է, հռչակաւոր փողոցը, ուր վերից վար ձգւում են կողք-կողքի խանութներ՝ լիքը ապրանքներով։ Քաղաքի այս մասում աւելի

շոգ է, ուստի և բոլոր խանութները արևկալ վրաններ ունեն կախած իրենց գլխոց. այդ վրաններն իջնում են գետնից համարեա՛ մէկ մետր կամ քիչ աւելի բարձրութեամբ, այնպէս որ մենք ստիպուած էինք անընդհատ կռանալ, որպէսզի ճակատներս չդիպչէր վրանների փայտերին. փողոցի կէսը դեռ չիջած՝ ասացի բարեկամիս.

— Ես յոգնեցի կռանալով, չա՞տ կայ փողոցը վերջանալ:

Բարեկամս մի երկու անգամ էլ կռացաւ և բեռը ծանր մարդու նման սաստ տաժանքով.

— Պէտք է սովորած... Պէտք է կռանալ սովորած... Քիչ մնաց:

Երբ հասանք փողոցի բերանը, ուր Թոփխանէ հրապարակն է բացւում, մենք շտկեցինք, ուղղեցինք մեր կռացած մէջքն ու ներս ընկած կուրծքը, ազատ օդ շնչեցինք, նայեցինք միմեանց դէմքի և ծիծաղեցինք յաղթաթոք:

Որքան Լալէզարը նեղ է, այնքան Թոփխանէն ընդարձակ է, գեղեցիկ, և տպաւորիչ. Նրա մի կողմում ձգւում է Բալադիէի (քաղաքային ինքնավարութեան) ընդարձակ շէնքը՝ քաղաքային ժամացոյցի աշտարակով. Նրա հանդիպակած կողմը՝ Հեռագրատան լայնանիստ շէնքը՝ մեծ գմբէթով, երկայն պատշգամբով. Հրապարակի կենտրոնում մի մեծ աւազան շատրւաններ է ցայտում, իսկ աւազանի շուրջ գեղեցիկ ծաղկանոցն է:

Մենք հեռագրատան մօտով իջանք Նասրիէ խիաբանը (պողոտայ) և մի քանի քայլից հասանք չարսույը բազարը (մեծ շուկան): Մեծ շուկան ընկած է մի քանի սափհան փողոցից ներքև, ծածկուած է իրար յաջորդող գմբէթներով. որոնց գագաթից փոքրիկ լուսամուտներ լոյս են ցաթում. Շուկան նման է լաբիրինթոսի պէս մի փապուղի. Ինձ համար նորութիւն չէր այս շուկան, որովհետև նա յար և նման է Թաւրիզի, Համադանի, Սպահանի և առհասարակ պարսկական բոլոր քաղաքների շուկաներին, որոնք միջնադարեան աւատական հասարակարգի կնիքն ունեն. ահա՛ պղնձագործների խանութները, կօշկակարների խանութների շարքը, նրանց յաջորդում են հիւսները, ապա դարբինները, յետոյ գիվայ[1] վաճառողները, ապա կերպասավաճառները, այնուհետև նպարավաճառներն ու քաղցրավաճառները

1) Ամառային հողաթափ, պարսկական ազգային արտադրութիւն է:

և այն. և այս բոլորը՝ շարքով, հերթով և միջնադարեան համ-քարութեան կնիքով։

Դիւրին չէ քաղաքով անցնելը. խուռներամ անցորդներն ամէն պահ քեզ են դիպչում, հրում, բեռնակիր էշերն, առանց ձեռնպահութեան, իրենց բեռը դէմ են տալիս մէջքիդ, կողքիդ ու կրծքիդ, իսկ խանութպաններն գետնից բարձր իրենց խանութի շեմքին ծալապատիկ նստած՝ անընդհատ ու անդուլ հրաւիրում են գնելու իրենց ապրանքներից։ Եւ յաճախ յետ եմ մնում բարեկամիցս, նա ճեղքում է ամբոխն ու առաջ անցնում, ապա մի պահ կանգ է առնում, որպէսզի ես հասնեմ իրեն.

— Քաղաքավարութեան տեղ չէ, ասում է նա, ոչ ոք քեզնից ներողութիւն չի խնդրի էստեղ, դու էլ հրիր ու անցիր. ես քեզ մի տեղ եմ տանում…

Մենք խարխափում ենք լաբիրինթոսի մէջ, մինչև որ հասնում ենք համեմատաբար խաղաղ մի տեղ, ուր անցուդարձը նուազում է. նոյն իսկ նկատում ենք լոյս, որ նշան է թէ շուկայի փողոցն այստեղ ընդհատւել է. բարեկամս կանգնում է մի ցեխից ծեփւած բուրգի առաջ. վերցնում է գլխարկը. թաշկինակով սրբում գլխի քրտինքն ու ասում.

— Լա՛ւ նայիր էս բուրգին և իր ծայրին անկած փայտին։

Ես նայում եմ և որևէ արտառոց բան չեմ նկատում. դա մի հասարակ, սովորական ցեխէ բուրգ է, որի նմանը կարելի է հանդիպել Իրանում ամէն քայլափոխի, հին քաղաքամասերում. իսկ բուրգի ծայրին անկած փայտը բազուկից աւելի հաստ է, սեւացած և տեղ-տեղ ցից, հաստարմատ փշատեղերով։

— Ի՞նչ է սա, ասում եմ, բան չգտա՞ր ինձ ցոյց տալու։

Բարեկամս խորհրդաւոր ժպտում է, գլխարկն աչքերին քաշում և դէմքն ուղղելով բուրգի ծայրի փայտին, ասում է.

— Սրան Թեհրան կասեն… Հա՜յ գիտի Ռոստամ, դարղինկոթը սեւ ո՞րտեղ են տնկե…

Ապօ նկատելով իմ դէմքի հարցական արտայայտութիւնը, ֆերդովսիական շեշտով ու պաթոսով արտասանում է.

— Չինին գաֆ'թ Ռոստամ բէ Խաֆան իար,

Թէ է՛յ սիր նա՛գաշթէ ազ քա՛ր զա՛ր…

(Այսպէս ասաց Ռոստամն՝ «Ո՛վ Խաքանչինար,

Ե՛յ դու ռազմից չհասած ռազմավար»)…

—Ռոստամ Զալը, որ իր Ռախշի վրայ հեծած ամպի տակ առեց Թուրքեստանն ու Մազանդարանը, Աֆղանստանն ու Արաբըստանը, դէպի հիւսիս, դէպի հարաւ, դէպի արեւելք և դէպի արեւմուտք, քշեց սկիւթացիներին, գրաւեց Սամարղանդն ու Բուխարան, յաղթեց հզօր Աֆրասիաբին, գահ բարձրացրեց Քէյ Խոսրովին, այս բոլորն անելուց յետոյ անպարտելին Ռոստամը երբ Թէհրան եկաւ, որ այն ժամանակ, ասում են, մի փոքրիկ աւան էր, մեր էս քեօհնայ (հին) Թէհրանը նրան ծնկի բերաւ… Ռոստամն էստեղ ընկաւ լութիների շրջանը, սկսեց կեր ու խումով, թառ ու սանթուրով, աղջիկ ու աղայով, անեցած բոլոր փողերը մսխեց, մնաց դատարկ ձեռքով ու գրպանով, մի կտոր հացի կարօտ՝ վերջը մաչրար [1] եղաւ իր դարդը դրաւ գնաց… Ահա՛ սա, այս բուրջի գլխի փայլը Ռոստամի դարդի կոթն է… Սրան Թէհրան կասեն։

—Բայց դա աւանդութիւն է, Ռոստամի ժամանակ Թէհրան գոյութիւն չունէր… առարկում եմ ես։

—Ինչպէ՞ս չէ, քանի որ պարսիկը կայ, Թէհրանն էլ կայ. էստեղ եկող փահլեւանը իր դարդը դրաւ կը դնի և յետ կը դառնայ. —ասում է նա անսակխայի հաւատքով և խանդավառ։

Ես նայում եմ դարդի կոթին, այս անգամ նա ինձ թըւում է աւելի խեղճ, աւելի անպաշտպան. իշխանների գլուխներ ճեղքած ու խոնարհեցրած Ռոստամի դարդի կոթը կարծես խեղդւում էր քաղաքի չորացած ու ճաքճաքած ցեխի մէջ։ Թէհրանի անորեւոյթ ոյժի խորհրդանիշն էր դա։

Մենք թողնու՞մ ենք բուրջը և տարբեր ճամբաներով վերադառնում Թոփխանէ. լրագրավաճառները սուր կանչերով վազվըզում էին այս ու այն կողմ. բաչեկմա՞ն մի չարաթաթերթ է գնում ու նայելով միջի մի դռնապար նկարին՝ ծիծաղից պայթում է.

—Տե՛ս, տե՛ս մեր Լալէզարը իր չադրներով [2], տես թէ ի՞նչպէս են անցնում մարդքէները։ [3]

Նայում եմ՝ «Մոլլա Նասրէդդին» երգիծաթերթն է. մի էջի վրայ նկարած է Լալէզար պողոտան՝ իր ներքեւ իջած արեկով վրաններով. նրանց տակով անցնում են կապած մարդիկ՝ վզներին թոկ անցկացրած և թոկից մի մեծ քար կապած. նր-

---

1) Ափսոս: 2) Վրան: 3) Մարդիկներ:

բանից դէմքերն արտայայտում են տանջանք ու վիշտ. մէկ աչ-քը մայթին, միւսը՝ վրանի փայտին յառած…

— Սրանք է, ասում եմ ես, և բարեկամիս հետ կուշտ խնդում ենք։

ՇՂԹԱՅԱԿԻՐ ԱՌԻՒԾԸ

— Եւ դեռ Թեհրանի մասին բաներ ունեմ պատմելու քեզ, — ասում է բարեկամս քայլելով, — մի անգամ Թեհրանն են բերում մի մեծ ու հզօր առիւծ. վանդակի մէջ նա ահագնօրէն մռնչ-ում էր և ժանիքները զարկում երկաթէ ճաղերին. Մտածում են առիւծին ծանօթացնել Թեհրանին. Նրա դունչն ու երախը դնչակով ամրապինդ կապում են շղթաներով, վզին մի թոկ են դը-նում և շրջեցնում Թեհրանի փողոցները։ Սեւ Թեհրանի լութի-ներն ու լոթերը (լոտիկ) շրջապատում են առիւծին և սկսում նեղացնել. մէկը նրա բեխն է քաշում, միւսը փայտով խփում, երրորդը առիւծի մօրուքից մի մազ է պոկում և շատերը նրան ձեռնահարում են… Խեղճ գազանը, կենդանիների արքան, ան-ճարացել էր. նա մռնչում էր, բայց չէր կարողանում կծել կամ յօշոտել, բերանն ու դունչը շղթայած էին, թաթով զարկում էր օդին, գետնին, դէս ու դէն էր ընկնում, ջղայնանում ու գալարւում, բայց օգուտ չունէր. լութիները նրան հանգիստ չէին տալիս. վերջը հզօր առիւծը խեղճանում, կուչ է գալիս և ան-ճարացած միայն խնդրում էր ձեռնահարութիւնից, բայց լու-թիներն ու լոթերը ձեռք չէին վերցնում. ի վերջոյ բանն այն-տեղ է հասնում, որ խեղճ առիւծն այլեւս ո՛չ պաշտպանում էր, ո՛չ խնդրում. այլ այս անգամ ինքն էր նրանց մօտենում, որ ձեռնահարեն… Այսպէս խեղճանում, փոխում է իր բնոյթը Թեհրանում, անտառների արքան. հզօր առիւծը։

Տարիներ են անցնում. առիւծն այլեւս բնաւ նման չէր անտառի արքային. նա ծերացել ու խեղճացել էր միանգամայն. այն աստիճանի, որ այլեւս ո՛չ ոք նրանից ո՛չ միայն չէր վա-խենում, այլ նոյն իսկ ուշադրութիւն անգամ չէր դարձնում վրան. Նա իր օրերը մեծ մասամբ անց էր կացնում խանութ-ներում, տներից վանուած թափառաշրջիկ շների հետ. կերա-կրւում էր նետուած ոսկորների կտորներով ու աւելցուկներով։ Նրա բուրդը տեղ-տեղ թափել էր, մարմինը քաշուել, աչքերը պըղ-

տարել էին և լաւ չէր տեսնում։ Նա անտեսուած ու արհամարհ-ւած էր. շներն անգամ նրան բանի տեղ չէին դնում և յաճախ նոյն իսկ խլում էին նրա ձեռք բերած չոր ոսկրը։

Պատահեց, որ այդ օրերին Թէհրանի հին բնակիչներից մէկն անցաւ առիւծի մօտով. նա նկատեց անտառների երբեմնի ար-քային ու խեղճ թէ նրան տեսել էր մի տեղ. ապա յանկարծ յի-շեց «շղթայակիր առիւծ»-ին. մի ժպիտ խաղաց իր դէմքին և մօտենալով կենդանուն՝ մի-երկու անհասկանալի խօսք ասաց, ապա ձախ ձեռքով բռնեց առիւծի բաշից, յետ մղեց, որից առիւծի բերանը բացուեց ցաւից ու զարմանքից. ապա յանկարծ սկսեց իր աջ ձեռքի բթամատով առիւծի ժանիքները մէկ-մէկ ծակել նրա բերնում…

Բարեկամներս այս պատմութեան վրայ ես յիշեցի Ա. Սա-րայեանի մի փոքրիկ պատմուածքը իր ըմբիշ հօրեղբօր մասին։ Հօրեղբայրս, Մինասը, ասում է Սարայեանը, հզօր ըմբիշ էր. նա շրջել էր ամբողջ աշխարհը և իր բազուկների ուժով շահել իր ապրուստը։ Պատահեց, որ նա եկաւ Թէհրան. բայց խեղճ հօրեղբայրս արդէն ծերացել էր, թեւերի ուժը պակսել, նրան ամէն մի ատլետական ըմբիշ կարող էր գետնել. և սակայն ապրել էր պէտք. ուստի և հօրեղբայրս կրկէս մտաւ ծառայու-թեան. նրա գործն այն էր, որ ամէն օր իր գլուխը դնում էր մի վարժեցրած առիւծի բերանը և հանում, ու այդպիսով շա-հում իր ապրուստը. բայց պատահեց, որ մի օր, մի դժբախտ օր, երբ խեղճ հօրեղբայրս իր գլուխը ըստ սովորականին դրեց առիւծի բերանը, առիւծն իր բերանը փակեց… Այսպէս վախճան գտաւ աշխարհ շրջած և շատ ըմբիշների գետնած խեղճ հօրեղ-բայրս, — ասում է Ա. Սարայեանը։

Ես գիտեմ, որ Ա. Սարայեանը Թէհրան չի եղել, բայց նա հրաշալի կերպով բնորոշել է Թէհրանը, — եզրափակեց Վաղրիկը։

ՓՈՂՈՑ ՍԱՆՐՈՂՆԵՐ

Նա դուրս եկաւ ըստ սովորականին՝ իր ամենօրեայ ապար-դիւն փնտռտուքները կատարելու. նա գիտէր, հաստատ գիտէր, թէ փողոցի ո՛ր մասում, ո՛ր անկիւնում կը հանդիպի նրանց. դա ամենօրեայ մի պատմութիւն էր՝ միօրինակ ու կրկնուած. նա գիտէր, թէ իր օրն ինչպէս պիտի անցնէր։ Եւ նա քայլում էր

անշտապ, հանդարտ, անփոյթ քայլերով. անկիւնի խանութից ծխախոտ գնեց և ապա ուղղուեց Նովէրի պողոտան. դա իր սովորական ճամբան էր։

Պողոտայի կէսին չհասած՝ նա տեսաւ հինգ հոգի, որ քայլում էին կողք-կողքի, հանդարտ, անփոյթ և ծոյլ քայլերով։ Նրանցից մէկ զոյգ մերթ ընդ մերթ մի պահ կանգ էր առնում, ինչ որ բան ասում և ապա շարունակում ճամբան. այդ հինգ հոգու ընթացքը յիշեցնում էր երթը նահանջող զինուորների, որոնք խախտել էին կարգ ու կանոնի օրէնքները և այժմ գնում էին յօգնութեան անձնատուր։

Նա հասաւ քայլողներին, որոնք գալիս էին դէմ դիմաց.

—Էսօր հինգ րոպէ ուշա՛ցել ես, —ասաց նրանցից ամենատարէցը, Վահրամը, —ուստի և իբրև տուգանք, դու մեզ կը հիւրասիրես մի-մի բաժակ սուրճով։ Մի՛ վախեցիր, հիմի դեռ շուտ է, նոր ենք թէյ խմել, ժամի 10—11-ի մասին է խօսքս։

—Ի հա՛րկէ, ի հա՛րկէ, —հաստատեցին միւսները. —հիմա դեռ շուտ է։

—Գիտե՛մ, —ասաց նա քամահրանքով, —մեծ գործեր ունէք և իմ հինգ րոպէ ուշացումս ահագին վնասների դուռ է բանալու ձեզ համար…

—Հապա ի՞նչ կարծեցիր. նորութիւն չե՞ս լսել, —վրայ բերեց Վահրամը, «Խուշհալ» ընկերութիւնը մեծ գործ է վերցրել Մազանդարանի շրջանում, երեկ նաճուրդը շահեց 5 տոկոսով, դու տուն էիր գնացել՝ երբ մենք իմացանք. քեզ խօսք է տուել «Խուշհալ»-ի անդամ Ֆեօդր Կարպինը, որ առաջին հերթին տաս կիլոմետր գիծ տայ. դէ՛հ, ուրեմն իզուր տեղը չէ որ սուրճ ենք դնում քո վզին։

—Արդեօք, —ասաց նա, —դա ձեր ամենօրեայ կատակներից չէ՞ և չէ՞ք ուզում իմ հաշուին ձրի սուրճ վայելած լինել…

—Էս լուսամութին, մեր էս վիճակում, ի՞նչ կատակի ժամանակ է. —ասաց Սարօն։

—Այդ դէպքում ես մի հանդիպեմ ընկերութեան գրասենեակը, տեսնեմ ի՞նչ են ասում, յետոյ կը գամ ձեզ կը գտնեմ այստեղ և սուրճով կը հիւրասիրեմ, —ասաց նա և շարունակեց ճամբան։

—Էս միամիտն էլ կա՛րծում է, թէ իրեն գործ պիտի տան…

Տօ՛, մտաւորականն ո՞ւր, կոնտրատն ո՞ւր. էնքան տանեն ու բերեն, որ լեզուն բերնից կախեն. տո չգիտէ թէ ի՛նչ գայլերի հետ գործ ունի, — ասաց Կարօն։

— Մէրը չմեռնի Ֆէօդր Կարպիչի, եթէ էպլխներին էլ քթից բռնած մօտ չածի, — յարեց Տրդատը, սուր մօրուքը շփելով։

— Ինչո՞ւ էք էդպէս գտնում, մա՛րդ Աստուծոներ, մի՞թէ Ֆէօդր Կարպիչը հէնց կապալառու է ծնուած. մի՞թէ նրա անցեալը մեզ յայտնի չէ. մի՞թէ դեռ հինգ տարի առաջ չէր որ նա էլ մեզ նման քաղցից շկլրտում էր և սրա-նրա յետևից վազում. մի՞թէ նա չէր «այն պատմութիւնների» դերակատարը, որ բոլորիս յայտնի է. հիմա ի՞նչ եղաւ որ մոռացեցին այդ բոլորը. հարստացաւ՝ դրա՞ համար. հաստատած եմ, որ եթէ այդ ոսկէ թամբը վերցնէք նրա վրայից՝ ապա ո՛չ մի ախոռում նրան տեղ չեն տայ։ Ա՛խ, փո՛ղ, փո՛ղ, ինչե՛ր չես անում. երեկւայ քրէական տիպին դարձնում ես պատուաւոր քաղաքացի, այս ու այն ազգային մարմնի պատուոյ նախագահ, պատուոյ անդամ ու էլ չգիտեմ ինչ... Բարեկի՛րա, գթառա՛տ, ժողովրդասէր ու ժողովրդի բարեկամ, բայց տես տես, որ հէնց այդ ժողովրդի արիւն-քրտինքը քամելով է որ «մարդ» են դարձել, սրան-նրան զրկելով, է՛ս թաշկրանի փողը ուտելով, է՛ն աշխատաւորի վարձը կտրելով, սրա՛ն խաբելով, նրա՛ գլխին գլխարկ դնելով ու էլ չգիտեմ թէ ինչե՛ր անելով՝ մէկ էլ տեսար հարստացան, ինքնաշարժի ու տան տէր դարձան, ծառայ ու աղախին հրամայեցին, սրա՛ն դող անուանեցին, նրա՛ն սրիկայ հռչակեցին ու մի գեղեցիկ օր էլ Թէօդորոս Կարապետեանը դարձաւ «Ֆէօդր Կարպի՛չ»... «Պատիւ ունե՛մ, Ֆէօդր Կարպիչ Ալլահվերդով»... Եւ ո՞ր գայլի սիրտ կերածը կը համարձակի իր արդար պահանջի մասին խօսք անել Ֆէօդր Կարպիչների մօտ. մէկ էլ տեսար այս ու այն պաշտօնեայի չըթուքը քաղցրացրին և խեղճ պահանջատէրը աչքերը բաց արաւ դատարանում, ընտանիքը մնաց լալով ու ողբալով, իսկ նման դէպքերում էլ հէնց մեզ նմանները, Ֆէօդր Կարպիչներից գործ ստանալու ակնկալութեամբ, նրան կարդարացնեն և խեղճ պահանջատէրին կը մեղադրեն...

Այսպէս խօսողը ծայրից քայլող Վաղրիկն էր։

— Վա՛ղրիկ. էսօր ինչպէս երևում է դու մէջքիդ վրայ ես

արթնացել, —ասաց Վահրամը, —լեզուդ շատ ես բլբլացնում, էդ ասածներդ նորութիւն չեն, բայց մի բան էլ ճիշտ է, որ մենք Թեօդոր Կարպիչների փէշից կախուած պիտի մնանք, մինչև որ մի օր էլ նրանց ուղտը մեր դռանը չոգի, հասկացա՞ր. մեկ ծաղկով գարուն չի՛ գայ, մեր ձեռքում ի՞նչ կայ, մենք ի՞նչ կարող ենք անել միլիոններ ունեցողին. մեր ախին ո՞վ կը նայի. կը նային հագուստիդ, գրպանիդ, և կը ծիծաղեն ու կանց-նեն։ Սրան Թեհրան կասեն, դրամ ունես՝ մի բան ես, դրամ չունես՝ ո՛չինչ. հա՛ խօսիր, խօսքդ լսողն ո՞վ է։

—Թող հէնց էսօր Թեօդոր Կարպիչը քեզ կանչի, Վա՛զրիկ, և ասի. «Վազրի՛կ, ես մտածում եմ քեզ մի գործ տալ. ճար-պիկ ու գործունեայ տղայ ես, գիտեմ որ անգործ ես. քեզ նը-ման տղերքը մեզ պէտք են, որ երեսներս պարզ դուրս գանք. Մազանդարանի գծի հինգ կիլօմետրը քեզ. դէ՛, տեսնեմ ինչ-պէս ես աշխատելու»... Ես արևն եմ տամ, հէնց էդ րոպէին կը մոռանաս քիչ առաջ ասածներդ և Թեօդոր Կարպիչը աչքիդ կերևայ և՛ բարեգործ, և՛ հրեշտակ, և՛ Աստուած, —ասաց Սարօն, կապոյտ աչքերը կկոցելով։

—Սարգի՛կ, եթէ ես այսօր նիւթապէս նեղ դրութեան մէջ եմ և չեմ ուզում քաղցից մեռնել կամ փողոցներում մուրաց-կանութիւն անել, պատրաստ եմ իմ աշխատանքս ծախելու գոր-ծատէրին, թէ՛կուզ մի քիչ էլ սովորականից ցած գնով, սա դեռ չի՛ նշանակում որ ես իմ աչքերս փակում եմ կամ կուրանում արևի լոյսի պէս ճշմարտութիւնների առաջ. ճիշտ է, այդ րո-պէին Թեօդոր Կարպիչը իմ աչքիս մի քիչ տարբեր կերևայ, բայց՝ իբրև իմ աշխատանքս գնողի, այն էլ ցածր գնով. ես գիտեմ որ այդ գործից առիւծի բաժինը նա՛ է վերցնելու. առանց քրտինք թափելու. չարչարուողը ես պիտի լինեմ և իմ ձեռքիս տակի մարդիկ. մի քիչ ես պիտի ուտեմ, շատը Թեօդոր Կար-պիչի գրպանը պիտի գնայ. բայց դեռևս սա չի՛ նշանակում թէ նա արդար է, իսկ ես՝ անարդար, նա բարեգործ է, իսկ ես՝ մուրացկան. ո՛չ, ես իմ հալալ աշխատանքս եմ ծախում...

—Էդպէս որ խօսում ես, —ասաց Կարօն, իբր թէ դու էլ քո ձեռքի տակի մարդկանց աշխատանքը չես շահագործում. դու էլ նրանց նկատմամբ մի Թեօդոր Կարպիչ ես, ուրիշ ոչինչ. ու-րեմն էլ չխօսենք, աւելի լաւ է տեսնենք թէ ինչ նորութիւն

ջնի էս Բարդողը, որ գալիս է։

Նրանք շրջապատեցին նորեկին, որի դեմքը արևներից այրւած, կաշւ դիմագծերով մէկն էր։

—Բա՛րդող, ի՞նչ նորութիւն… գործից-մարդից խաբար կա՞յ… Մազանդարանի գծից ի՞նչ կասես… Յեօզէր Կարպիչին տեսա՞ր, յոյս ունենա՞նք թէ չէ, —հարցերի տարափ տեղացին այս ու այն կողմից։

—Յոյս կայ, բայց ժողովրդական առածն ասում ա՝ «մինչև որ առուն ջուր գայ, գորտի աչքը դուրս կը գայ»… Հիմի մերն ա, էդ անպիտանները մինչև որ մարդու հոգին բերանը չեն հասցնում՝ գործ չեն տալիս. գիտէ՛ք է՛լի, խեղդում են՝ թողնում. էն էլ բամբակով են խեղդում. էնքան ցած գներ են առաջարկում, որ օգուտի յոյս չկայ, մեզ մնում ա ձրի փահլայի դեր, —գանգատ յարեց Բարդողը։

—Ամբողջ կեանքդ կապալների մէջ ես անցկացրել, բա չե՞ս կարող դրանց նեղը լծել, որ մի չաղ գործ անի. նրանք առանց քեզ չեն կարող գործ անել, դա հաստատ ա, —ասաց Վահրամը։

—Հարստութիւնը մարդու հարբեցնում ա. հարուստը նմաբաշի չի ճանաչում. նրանց պէտք ա կեղծիքների մէջ փորձւած մարդ, որ է՛ս պաշտօնեային տեսնի, է՛ն ինժեների բերանը քաղցրացնի, որ կառուցած կամուրջի ցեմենտի պակասութիւնը չնկատեն, որ հազար ու մի կեղծիքների վրայ մասների արանքով նայեն, իսկ ես խիղճ ունեմ, չեմ կարող կեղծիք կատարել. շատ նման կաշխատեմ օր ու գիշեր, բայց դա քիչ ա, նըրանց ուրի՛շ բան ա պէտք…

Այս խօսակցութեան պահուն վերադարձաւ Արմէնը, այս անգամ նրան շրջապատեցին, Բարդողին մոռանալով։

—Հը՞, —հարցրեց Վահրամը, —Յեօզէր Կարպիչին տեսա՞ր, ի՞նչ ասաց, աղայ ես թէ՞ աղջիկ…

—Ո՛չ մէկը և ո՛չ էլ միւսը… Ամբողջ երկու ժամ նախասենեակում սպասելուց յետոյ գրասենեակի վարիչը ներողութիւն խնդրեց, որ Յեօզէր Կարպիչը գնացել է բանկ և պիտի ուշանայ, ուստի և պատւիրեց վաղը առաւօտեան ժամի 8-ին գնալ գրասենեակ՝ հանդիպելու…

—Էդ անպիտանը, ասում են, երկու դուռ ունի իր գրասենեակում. երբ չի ուզում մէկին ընդունել՝ միւս դռնից դուրս է ելնում…

— Ես աչքովս եմ տեսել, — յարեց Կարօն, — իմ ներկայութեամբ իր կառավարչին ասաց, որ իր իմացածն անի մի Հրեայ սեղանաւորի նկատմամբ, որ եկել էր դրամ պահանջելու. էդ կառավարիչն էլ նրանից պակասը չի, ասես մի շապկի մէջ են մեծացել, ասես միմեանց միտք են կարդացել. էնպէ՛ս են հասկանում իրար։

— Գնա՛նք սրճարան, — ասաց Արմէնը, — իմ պարտքս կատարեմ, թէև գործս այսօր չյաջողուեց. այստեղ խմբով կանգնելն էլ անյարմար է, պարապորդի տպաւորութիւն ենք թողնում։

ՍՐՃԱՐԱՆՈՒՄ

«Փերդովսի» սրճարանը գտնւում է Թեհրանի կենտրոնում. դա գործի մարդկանց, կապալառուների և թաջըրների սրճարանն է. այդտեղ են տարւում բոլոր տեսակի բանակցութիւններն ու պայմանագրութիւնները, այդտեղ են կատարւում, ծխախոտի տուփի վրայ, բոլոր տեսակի հաւանական ու անհաւանական հաշիւները, բազմաթիւ զերօներով թւեր շարւում են իրար տակ և ենթարկւում թւաբանական բոլոր գործողութիւններին. ո՛չ միայն իրենք, գրող ու հաշւողներն են հաճոյք ստանում դրանից, այլև՝ դիտողները, ուղղակի և անուղղակի մասնակիցները։ Սրճարանի օդը տոգորւած է ծխով, սուրճի բարկ հոտով. մարդիկ խմում են, ծխում ու հաշւում, գտնում ու քննարկում գործի բոլոր հանգամանքները, նրբութիւններն ու վտանգները. առաւելութիւններն ու թերութիւնները։ Կան մասնագէտներ, կան նաև, մեծ մասամբ, ո՛չ մասնագէտներ. կան պրակտիկներ, կան նաև թէօրետիկներ, կան հին կապալառուներ, կան նաև ձուից նոր ելած դեղնակտուցներ։ Այստեղ վարպետ աչքը կարող է մի հայեացքով ջոկել դրամ ունեցողին՝ չունեցողից. ունեցող ձևացողներին՝ չունեցող ձևացողներից. այստեղ սխալն ու կեղծը ճշմարտի դիմակ հագած՝ թափառում են սեղանից-սեղան, նստում այս ու այն աթոռին; խմում, ծխում, հաշւում ու զկրտում... Այստեղ հնչում են խոստումներ, որոնք փակչում, մնում են սեղանների և աթոռների վրայ, մինչդեռ նրանց տէրը մեկնում է սրճարանից. այդ խոստումները, վառ ու երազուն,

փարւում են սուրճի գոլորշիներին, ծխախոտի ծուխին և տատանւում, օրօրւում ու ծփւում նազանքով սրճարանի մթնոլորտում։ Այնտեղ երազների քուրան է, յոյսերի օրրանը, ոսկեհանքերի շլացուցիչ փայլի փորձարանը։

Այս բոլոր մտածումների մէջ իշխում է, սակայն, մի այլ մտածում. ինչպէս չափել դիմացինին. ինչպէս անել, որ դիմացինի գործը ձեռից ելնի և իր ձեռքն անցնի, և կամ գոնէ նրա գործից ինքը եւս օգտւի, մասն ունենայ։ Կայ նաև մի այլ կարևոր հարց, որ զբաղեցնում է մտքերը. «Ո՞վ պիտ վճարի կերած-խմածի գումարը»։ Եթէ մէկի «վզին դրել են» հիւրասիրել, այլևս ապահով են ու անհոգ, իսկ եթէ չեն հրաւիրւած՝ ապա ինչպէս անել որ ուրիշը վճարի։ Կան, ի հարկէ, հիւրասէր ու ձեռնբաց մարդիկ, որոնք ոչ մի կերպ չեն ուզում հիւրասիրւել, այլ իրենք հիւրասիրող են, բայց այսպիսիների թիւը շատ չէ և դրանք, իրենց թիկունքից, կոչւում են «յիմար»... Կան նաև մարդիկ, որոնք մի ամբողջ երեկոյական գործի պատմութիւն են գրում սեղանի վրայ՝ մէն-միակ նպատակով՝ որպէսզի հիւրասիրւեն։

Ահա՛ սրճարանի առաջ կանգ առաւ վերջին տեսակի մի ինքնաշարժ, նրա միջից ելաւ նոր խուզւած ու ածիլւած, նոր հագուստներով ու կլորիկ փորով, կաղլիկ մէկը. Նա առանց շուրջը նայելու ներս մտաւ սրճարան և հայեացքն արագ ու անցողիկ պտտեցնելով՝ գնաց նստելու անկիւնի մի սեղանի մօտ, ուր նըրան ընդունեցին անմիջապէս և իրարանցումով. սա նոր հարըստացած կապալառուներից է, Թեհրանի nouveaux riches-երից, վըկայ՝ իր վերջին տեսակի ինքնաշարժը, ածիլւած դէմքը և կլորիկ փորը, որ նոր է սկսել աճել...

Նա նստում է սեղանի գլուխ, չի ժպտում, դէմքի մըկանները չեն շարժւում, ուղղակի չի նայում մէկի դէմքին ու աչքերին, հայեացքն ինչ որ հեռուներն է թափառում և կարծես ինչ որ բան է փնտռում։

— Ի՞նչ կը հաճէիք վերցնել, — ասում է նրա սեղանակիցներից մէկը, յատուկ յարգանքով և երկիւղածութեամբ, — ապա դառնալով սպասեակին՝

— Տղա՛յ, կանգնելու ձեւը չգիտե՞ս այսպիսի պատուաւոր այցելուների մօտ... ապա նորէն դիմելով հիւրին՝

—Ի՞նչ կուզենայիք, Միշա Արտեմիչ, շամպա՞յն, վիսկի՞, ջի՞ն…

—Թող մի վիսկի բերի սոդայով,—վերջապէս ասում է հիւրը։

Սպասեակը սլանում է։

—Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել, Միշա Արտեմիչ։

—Առայժմ ոչնչով… միայն թէ հասկացրէք այդ ձեր Յեօզէփ Կարպիչին, որ ինձ հետ մրցելը վտանգաւոր է. ես մեծ կապեր ունեմ, տասնեակ տարիների մտերմութիւններ պետական բարձր շրջանակների հետ. կոնտրակտը, խոշոր կոնտրակտը, մեր պապենական ժառանգական զբաղմունքն է եղել։ Այժմ ես ժամադրութիւն ունեմ,—ասում է վեր կենալով, հայեացքը միշտ հեռուն։

—Բայց, Միշա Արտեմիչ, դուք ոչինչ չվերցրիք, վիսկին, վիսկին այժմ կը բերեն…

—Դա դատարկ բան է,—ասում է նա ձեռքը թօթուելով,—ամբարները վիսկիով լիքն են, դո՛ւք խմէ՛ք իմ փոխարէն… չը մոռանա՛ք պատւէրս։

Եւ դուրս է ելնում կաղալով, միշտ հեռուն նայելով։ Ուրիշ սեղաններից անմիջապէս մի քանի հոգի մօտ են վազում՝

Ի՞նչ եղաւ, նոր գո՞րծ է վերցրել, ձեզ խոստացաւ գի՞ծ տալ… Ա՜խ, Միշա Արտեմիչը…

Տ՛, ի՞նչ գործ, ի՞նչ բան, դեռ պատւիրած վիսկին էլ չխմեց… ասում է՝ «պետական բարձր շրջանակների հետ տասնեակ տարիների մտերմութիւններ ունեմ», թէ՝ «կոնտրակտը, խոշոր կոնտրակտը մեր պապենական ժառանգական զբաղմունքն է եղել»… էլ չի՛ ասում, որ ընդամենը չորս տարուայ հարստացած է, որ ինքը բաղնիսպան Արտեմի տղան է, որ… էլ ի՞նչ ասեմ, ո՞ր մէկը չի իմանում էս բոլորը, դեռ սպառնալիք էլ կա՛րդում է, մարդու աչքերին էլ չի՛ նայում…

Այս ասելով՝ փաստաբան Վէքիլեանը մեծ ցաւով վճարեց վիսկիի դրամը, վիսկին ուժեղ թափով քաշեց գլուխը, վեր կացաւ ու դուրս ելաւ սրճարանից, քթի տակ հայհոյելով։

Նոյն պահուն Վահրամը մտերմիկ շշնջիւնով ասում էր Արմէնի ականջին.—

—Սիրելիս, ինձ չմոռանաս, Յեօզէփ Կարպիչը քեզ հետ մտերիմ է, անպայման քեզ գործ կը տայ, ինձ գոնէ չմոռանաս։

—Վստահ եղիր, ասում էր Արմէնը,—եթէ գործ ստացայ՝ առաջին հերթին քեզ մի նուէր՝ հոգուս պարտքը։

—Քո հոգի՛դ սիրեմ, —ասաց Վահրամը։

*
* *

Հայկունին թողեց սրճարանը և տխուր յոյզերով հեռացաւ։ Նրան սկսեց տանջել ամենօրեայ մտահոգութիւնը։ Ի՞նչ անի կնոջը, ի՞նչպէս կարգադրի բնակարանի վարձի հարցը, ինքը առաւօտեան դուրս էր եկել տնից այն յուսով, որ կը հանդիպէր Ցեօզր Կարպիչին, գործ կը ստանար և կանխավճարի կարգադրութիւն, այնուհետև ամէն ինչ կանոնաւոր կընթանար. իսկ ա՞յժմ. ի՞նչ անել և ինչպէ՞ս անել…

Այսպիսի տխուր խոհերով նա հասաւ տուն. նեղ աստիճաններով բարձրացաւ մեղաւորի պէս, կինը նրան ընդառաջեց հարցական հայեացքով, բայց տեսնելով նրա տխուր և ընկճուած տեսքը՝ հասկացաւ որ չէր յաջողել.

—Կլա՛րա, —ասաց Արմէնը, —այսօր երկու ժամ սպասեցի Ցեօզր Կարպիչին, սակայն բանկում զբաղուած լինելու պատճառով նա չկարողացաւ գալ, կառավարիչը ներողութիւն խնդրեց և ասաց, որ վաղը հանդիպեմ։

—Եթէ խնդիրը քսանչորս ժամուայ հետ է կապուած, կսպասենք. դրա համար չարժէ յուսահատուել, ես արդէն տանտիրոջը խնդրեցի, որ վարձի համար մի քանի օր համբերի, որովհետև միևնոյն է, եթէ քեզ գործ էլ յանձնեն, ապա դժուար թէ անմիջապէս կանխավճար տան։ Այժմ դու երեխային նայիր, ես ճաշ պատրաստեմ, —ասաց կինը։

Արմէնը սենեակ մտաւ։ Մանկական մահճակալի մէջ պառկած էր վեց ամսական մի աղջիկ. մանուկը հանդարտ քնել էր, խաղաղութիւնն իջել էր սուս այդ մահճակալի վրայ ու թևերը փռել. նրա փոքրիկ ձեռքը դուրս էր եկել վերմակի տակից և հանգչում էր կրծքին. մանկան դէմքը շառագունել էր. գանգուրները ցրուել էին փոքրիկ կլոր ճակատին, կոպերն այնպէս էին փակուած, որ կարծես մարմարակերտ արձանի կոպեր լինէին՝ բարեձև ու ողորկ։ Այդ կլորիկ դէմքը, այդ հանդարտ խաղաղութիւնը, այդ փոքրիկ, թմբլիկ ձեռքը կրծքին, այդ գանգուրները այնպէս գրաւեցին Արմէնի ուշադրութիւնը, որ նա մի

քանի վայրկեան մոռացած ամէն ինչ՝ և՛ գործ, և՛ Ֆէօդր Կարպիչ, և՛ դրսի աշխարհ՝ հմայուած դիտում էր և մի խանդակաթ զգացում, որ միայն ծնողական է, համակեց նրա էութիւնը. նա մի պահ ուզեց յանկարծ գրկել մանկանը և պինդ համբուրել, բայց իրեն զսպեց, յանցանք համարելով վրդովել մանկան խաղաղ քունը։ «Կը տանջւեմ, կը հիւծւեմ քեզ համար, փոքրիկս, միայն թէ դու երջանիկ լինես», —ասում էր նա իւրովի։

ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական խնդիրը գնալով ծանրանում էր. լուսաւորութեան վարչութիւնը պահանջում էր հայկական դպրոցներից կիրառել պետական դպրոցների լրիւ ծրագիրը, իսկ հայոց լեզուի և կրօնի համար յատկացնում էր ընդամէնը տասը ժամ շաբաթական. դպրոցների տեսուչները պիտի լինէին պետական դպրոցաւարտ՝ վկայականով, գէթ միջնակարգի. այսպիսին հայ հատուածի մէջ դեռևս չկար, եղածները հայկական կամ արտասահմանեան դպրոցների կրթութիւն ունէին. ուստի ոչ մի հայ մըտաւորական չէր կարող դպրոցներում տեսուչի պաշտօն ստանձնել, իսկ հայրենագիտական առարկաների շաբաթական 10 ժամը այնքան չնչին էր, որ հազիւ մէկ-երկու ուսուցչի կարիք զգացւէր։ Կառավարական այս պահանջները ստիպեցին ազգային մարմիններին լրջօրէն քննելու խնդիրը ու մի ելք խորհելու։

Այս առթիւ մի խորհրդակցութիւն հրաւիրւեց Թեհրանի Համայնական խորհրդի կողմից, որին մասնակցում էր նաև Հայկունին։ Ժողովը մանրամասն քննութեան առնելով խնդիրը, ընտրեց մի յանձնախումբ հինգ հոգուց բաղկացած, յանձնարարելով երեք դիմումներ խմբագրել՝ լուսաւորութեան նախարարին, վարչապետին ու նաև վեհապետին ուղղւած, խնդրել այդ դիմումների մէջ, որ աւելացնեն հայոց լեզուի ու կրօնի դասաժամերը ու նաև հաւաստիք տալ, որ պետական ծրագիրը այսուհետև աւելի ևս մեծ ուշադրութեամբ գործադրւի դպրոցներում։

Այս յանձնարարութեամբ՝ խմբագրիչ յանձնախումբը երկու օր յետոյ ժողով գումարեց ու անցաւ դիմումների խմբագրութեան. այդ յանձնախմբին մասնակցում էր նաև Հայկունին. որոշւեց առաջին հերթին խմբագրել լուսաւորութեան նա-

խարարին ուղղւելիք դիմումը և յաջորդ նիստին ստորագրել և ուղարկել, իսկ վարչապետին ու վեհապետին դիմումներ պիտի արւէին այն պարագային միայն, երբ լուսաւորութեան նախարարութիւնը բացասական պատասխան տար։ Յանձնախմբի յաջորդ նիստը նշանակւեց երկու օր յետոյ և ժողովականները ցրւեցին։

Յաջորդ օրն առաւօտեան, երբ Հայկունին ըստ սովորականին դուրս էր ելնում տնից, փողոցի դռանը նրան կանգնեցրին երկու անծանօթներ. մէկը հարցրեց անունն ու ազգանունը.

—Արմէն Հայկունի,—ասաց նա։

—Սա՛ է,—ասաց անծանօթն իր ընկերոջը,—ապա դառնալով Հայկունուն,—ոստիկանատուն պիտի գաք մի քանի րոպէով. հրամմեցէք։

—Կնոջս յայտնեմ…—ասաց Հայկունին։

—Կարիք չկայ. միայն մի քանի րոպէով ձեզ ուզում են,—ասաց անծանօթը, ապա առանց պատասխանի սպասելու՝ կառք կանչեց և Հայկունուն պատւիրեց նստել։

Նա մեքենայաբար, կարծես առանց անդրադառնալու թէ բանն ինչումն է, կառք մտաւ, խօսող անծանօթը նստեց նրա մօտ, իսկ միւսը տեղ բռնեց առջևի աթոռին. կառքը շարժւեց։ Տիրեց լռութիւն, միայն ձիերի պայտերն էին աղմկում փողոցի քարերի վրայ։

Հայկունին մտածում էր.—

«Մի՞թէ ձերբակալում են ինձ, բայց ինչի՞ համար. մի՞թէ դպրոցական հարցի. բայց չէ՞ որ ըմբոստութեան կամ որևէ վիրաւորական արտայայտութեան դէպք տեղի չի ունեցել ո՛չ մեր համայնքի և ո՛չ էլ իմ կողմից. իսկ ինչ վերաբերում է մեր մշակութային իրաւունքների պաշտպանութեան, դա ամեն մի քաղաքացու հասկանալի իրաւունքն է»։

Այս մտքերի մէջ նա սկսեց ուշադիր նայել փողոցով անցուդարձ անողներին, որպէսզի գէթ մի ծանօթի տեսնի և մի կերպ հասկացնի, որ իրեն տանում են, այս ձևով իր կինն էլ կիմանայ կատարւածի մասին և միջոցների կը դիմի։ Բայց հակառակ նրա բուռն ցանկութեան, ո՛չ մի ծանօթ չէր երևում անցորդների մէջ։

Կառքը հասաւ մի նորաշէն, հսկայ շէնքի առաջ ու կանգ-

տաւ. Հայկունուն պատուիրեցին իջնել, մտան հակայ շէնքը, անցան միջանցքներով, որ մարդիկ էին անցուդարձ անում. ապա, վերջապէս, մտան մի սենեակ։ Գաղտնի ոստիկանը զեկուցեց, որ բերել է իրեն յանձնարարուած անձնաւորութեան, ու թեք նայեց Հայկունուն. պաշտօնեան շեղակի մի հայեացք նետեց Հայկունու վրայ և կարգադրեց «տանել»։

«Ե՛կ» — ասաց ոստիկանը Հայկունուն. դուրս եկան սենեակից, անցան միջանցքներով և իջան շէնքի բակը, որ բաւական ընդարձակ էր. բակը կտրելով՝ կանգ առաւ մի երկրորդական, միայարկ շէնքի առաջ, որի դռանը պահակ կար. ներս անցան և աջ թեւի սենեակը մտան։

Ոստիկանական երկու պաշտօնեաներ նստած էին երկու սեղանների յետև, նրանց թիկունքում մի պահարան կար, իսկ գրասեղանի դիմաց — մի նստարան. Հայկունուն պատուիրեցին նստել այդտեղ, ապա մի կարճ խօսակցութիւնից յետոյ հերթապահ ոստիկանը մօտեցաւ, պատուիրեց ոտքի կենալ և սկսեց խուզարկել Հայկունու գրպանները մէկ-մէկ և միջի պարունակութիւնը հանելով՝ դնել սեղանի վրայ։

Այս գործողութեան պահուն Հայկունին խորհում էր. «Ինչո՞ւ են ինձ բանտարկում, ի՞նչ է պատահել արդեօք քաղաքում, որեւէ պրովոկատորի զո՞հ եմ ուրեմն»… այս և նման հարցեր յաջորդում էին միմեանց նրա գլխում, իսկ ոստիկանը շարունակում էր մանրակրկիտ խուզարկութիւնը։ Երբ խուզարկութիւնը վերջացաւ, սեղանի մի անկիւնում կուտակուած էին մի քանի կտոր թղթեր, մի քանի թուման թղթադրամ, թեւի մի ժամացոյց, թաշկինակ, գօտի և փողպատ։

— Ցարէ՛ք, — ասաց հերթապահը, մի թուղթ տալով ձերբակալուին։

Նոյն գաղտնի ոստիկանը վերցրեց թուղթը և Հայկունին տարաւ շէնքի խորքի գրասենեակը. այնտեղ մի հարցարան լեցրին, որի մէջ կային անուն-ազգանուն, ծննդավայրը, զբաղմունքը, ընտանեկան պարագաներ և այլն։

Բակի վրայ բացւող պատուհանից Հայկունին նկատեց ամփոփուած մի շրջանաձև բակ, որի վրայ բացւում էին երկաթաձող մեծ դռներ, նրանց յետևում կանգնած էին բազմա-

թիւ բանտարկեալներ՝ գզգզուած հագուստներով, մազերն աճած, անհրապոյր դէմքերով։ Նրանք խօսում, աղմկում էին։ Ժխոր էր տիրում։

Այս անգամ Հայկունին յանձնեցին բանտի ներսի հերթապահին, որը մի ոստիկանական պաշտօնեայ էր։ Մտան ամփարտած, շրջանաձև բակը, որի վրայ ճառագայթաձև բացւում էին վեց երկաթաճաղ դռները. դրանք նրբանցքներն էին, նրանց վրայ կար երկրորդ յարկը՝ շրջանաձև պատշգամբով, ուր դարձեալ բացւում էին երեք նրբանցքներ։

Հայկունին տարան ներքևի յարկի երկրորդ նրբանցքով և բաց թողին յետևի բակը, ուր զբօսանքի էին ելել մի քանի տասնեակ բանտարկեալներ. բակում շրջում էին երկու ոստիկաններ:

Հայկունին որբացածի պէս մնաց կանգնած տեղում և տխուր հայեացքով դիտում էր բակում շրջող բազմութեան. ցնցոտիապատ մարդիկ, որոնց մի մասը շրջում էր բակում, մի մասն էլ նստած պատի տակ՝ քթւում էր իր ցնցոտիները և որը երկու մասով բռնելով՝ նետում էր մի կողմ…

«Ուրեմն ինձ նետեցին քրէականների մէջ… բայց ինչո՞ւ, ի՞նչ եմ արել ես»…

Խորհում էր խորապէս վիրաւորուած Հայկունին և պատասխան չէր գտնում իր հարցերին։

—Պարո՛ն,—դիմեց նրան հերթապահ ոստիկանը,—քե՛զ ինչո՞ւ են բերել այստեղ։

—Չգիտեմ, ես էլ զարմանում եմ, սրանք քրէական յանցաւորնե՞ր են,—հարցրեց Հայկունին։

—Ի հարկէ. բայց կարելի է քեզ համար մի բան անել. որ տանեն վերևի կորիդորը. այս քո տեղը չէ,—ասաց ոստիկանը թեթև ժպիտով։

Հայկունին հասկացաւ.

—Արա՛ այդ բանը, ասա՛ որ բողոքում եմ, որ ինձ այստեղ են բերել, ես քեզ կը բաւարարեմ։

—Այդ դէպքում այսպէս կանենք. երբ սրանց ներս կը տանեմ, դու յետ մնա՛ բոլորից և ինձ հետևիր,—այս ասելով, ոստիկանը շարունակեց բակում շրջել։

Բանտարկեալները, նոր դէմք տեսնելով, հետաքրքրւեցին. նրանցից մի քանի հոգի շրջապատեցին Հայկունուն.

—Պարո՛ն, —ասաց նրանցից մէկը. —դու մեզնից չես երեւում, այս ի՞նչպէս է որ ընկել ես այստեղ…

—Չգիտեմ. դեռ ինձ ոչինչ չեն ասել… ասաց Հայկունին։

—Եթէ քրէական չես, ապա ուրեմն «տես» ոստիկանին, նա քեզ կը տանի առաջին կորրիդորը. —ասաց մէկ ուրիշը։

—Երբեմն պատահում է, պարոններ, որ այս քօլ ու կրաւատով մարդիկ աւելի ծանր յանցանքներ են գործում, քան մենք. բայց սրանց դրամը իրենց մեղքերը ծածկում է. հիմա ոստիկանին «կը տեսնի» և իրեն կը տանեն փառաւոր տեղ, գործն էլ շուտ կը նայեն, —ասաց մի ուրիշը։

- Ձայնդ կտրի՛ր, —ասաց մէկ այլ բանտարկեալ, —աղան պատւաւոր մարդ է երեւում, անշուշտ ծխախոտ էլ կունենայ, - մի հատ ծխախոտ, եթէ կարելի է…

Հայկունին ծխախոտ տուեց. միւսներն էլ ձեռները մեկնեցին.

—Մնացածը պահիր քեզ, թէ չէ ո՞վ գիտէ, ե՞րբ ծխախոտ կը բերեն քեզ համար, —ասաց նրանց մէջ բարեխիղճը։

—Դուք ի՞նչ յանցանքներով էք բանտարկուած. —հարցրեց ընդհանուր ձեւով։

—Է՛հ, կանք էլի, —ասաց մէկը, —մէկը գողութեան, միւսը սպանութեան, երրորդը՝ բռնաբարութեան, չորրորդը՝ դանակ քաշելու. սրանք քննուածներն են, կան նաև յանցանքը չճշտուածներ:

Ոստիկանը մօտեցաւ և հրամայեց հեռանալ, ապա դառնալով Հայկունուն՝

—Պարո՛ն, սրանց երես մի՛ տուր. թէ չէ վրադ բան չեն թողնի, —ասաց։

Հայկունին մնաց մենակ, իր տեղում կանգնած. ապա ըսկսեց կարճ տարածութեան վրայ մտախոհ քայլել։

«Տեսնես Բրայան իմացա՞ւ բռնուելս, արդեօք ի՞նչ դրութեան մէջ է, ի՞նչ է անում փոքրիկս, արդեօք Բրայան ո՞ւմ խնամքին կը յանձնի ձուտիկս՝ իմ գործով զբաղուելու համար… բնակարանի հարցը, ապրուստի հոգսը… Անշուշտ մի թիւրիմացութիւն կայ իմ ձերբակալման մէջ. ի՞նչ է եղել, որ ինձ բռնել են»…

Այսպէս անթիւ մտքեր և հարցականներ չարչարում էին նրա ուղեղը. ապա նրա հայեացքը նորէն ընկաւ քրէականների

վրայ, որոնք ցնցոտիապատ, կեղտի մէջ կորած ղանդղաձի էին նման, և նա խիստ սրտնեղեց։

«Ի՞նչ կը լինի իմ վիճակս, եթէ ինձ սրանց մէջ պահեն», անցաւ նրա մտքով ու աւելի սրտնեղեց։

Արդէն ժամից աւելի անցել էր, երբ ոստիկանը նշան արաւ բակի բանտարկեալներին, որ ներս գնան. Նրանք դանդաղ քայլերով ու մի տեսակ ակամայ՝ ձգւեցին դէպի ներս։ Հայկունին կանգնած մնաց իր տեղում, հետևելով ոստիկանի խորհրդին. երբ վերջին բանտարկեալն էլ անցաւ, Հայկունին մի դրամ դրեց պաշտօնեայի ափի մէջ, իբրև նւէր, և հետևեց նրան։

Մի մեծ կամերայի մէջ լցւեցին բակի բանտարկեալները. մեծ եղաւ Հայկունու զարմանքը, երբ տեսաւ որ ոստիկանը իրեն էլ առաջնորդեց նոյն կամերան մտնելու. մի անտանելի հոտ դիպաւ նրա քթին և դռան շէմքից ընկրկելով՝ նա վրդովւած ասաց.

—Ո՞ւր ես բերում ինձ. ես այստեղ չեմ մնայ. ես կը սպասեմ այս միջանցքում, մինչև որ ինձ այստեղից տանեն։

—Պարո՛ն, —ասաց ոստիկանը, —իմ հերթս հիմա փոխւում է, դու ներս մտիր, մինչև որ ես գնամ և յայտնեմ, որ քեզ այստեղից փոխադրեն։

—Ո՛չ, ես կը սպասեմ միջանցքում, իսկ դու, յոյս ունեմ, խոստումդ կը կատարես. ասա՛ որ ներս չեմ մտնում և սպասում եմ։

Ոստիկանը մեկնեց։

Քիչ յետոյ երկու այլ ոստիկաններ փոխարինեցին նրան, նրանց հարցումին թէ ինչո՞ւ Հայկունին ներս չի մտնում՝ նա բացատրեց, որ բողոքել է և սպասում է որ իրեն տանեն այդտեղից։

Բերին բանտարկեալների ճաշը. դա մի-մի կտոր թափ-տուն կոչւած հաց էր և դեղնագոյն «աշ», (թանապուր). բանտարկեալներն աշխոյժի եկան և մէկը միւսի յետևից խլում էր իր բաժինը և ներս գնում։

Քրտինքի ու կեղտի հոտը ապարել էր նաև միջանցքը, որից Հայկունին սրտախառնութիւն ունեցաւ։

Նա այսպէս սպասեց մինչև երեկոյ, քանիցս իր բողոքն յայտնելով հերթապահներին. վերջապէս մթնշաղին կանչեցին Հայկունուն.

—Պարո՛ն, —ասաց հերթապահ սպան, —ձեզ ինչո՞ւ էին տարել այդ բաժինը։

— Զգեստ, այդ դո՛ւք պիտի փոխեք, — ասաց Հայկուշին չոր ու սառը։

Նրան բարձրացրին աստիճաններով երկրորդ յարկը և երկաթաձող դուռը բաց անելով՝ մտցրին առաջին նրբանցքը։ Այդ միջանցքը մութ էր և երկու կողմերում կային կամերաներ. ցածր դռներով, որոնց վերևի մասը ապակի չունէր, այլ երկաթէ ձողերով էր բանուած։ Հայկուշին մտցրին թիւ 11 կամերան և դուռը փակեցին վրան։ Դա մեծ արկղի ձևով, առաստաղը ցածր ու կամարաձև մի խուց էր, որի յետևի պատի վրայ, վերևում, մի փոքր պատուհան կար՝ երկաթէ ձողերով։ Յատակին փռած էր մի կտոր բամբակէ գոյնզգոյն «չիթու» կոչուող կապերտ. ուրիշ ոչինչ չկար, ո՛չ թախտ և ո՛չ աթոռակ. Հայկուշին մի պահ կանգնած մնաց դռան յետև, նայեց կամերային. հանեց բաճկոնը, գլխարկը, պառկեց յատակին՝ գլխարկը դնելով գլխի տակ, բարձի տեղ, բաճկոնը գցեց վրան և յոգնած օրուայ տպաւորութիւններից՝ խորը քուն մտաւ։

ՔԱՂԱՔՈՒՄ

Բյուրան, իր մանկանը դիեցնելուց յետոյ օրոր ասաց և երեխան քնեց։ Նա անցաւ խոհանոց, մի հայեացք պտտեցրեց և վերցնելով զամբիւղը՝ փողոց իջաւ գնումներ կատարելու։ Նպարավաճառի խանութում նա հանդիպեց ծանօթ տիկիններին, որոնք համարեա ամէն օր գնումների բերումով՝ հանդիպում էին միմեանց ու խօսում, օրուայ նորութիւններ յայտնում, դատում, քննադատում այս ու այն երևոյթը, դժգոհում մթերքների թանգութեան և կեանքի սղութեան առթիւ, մի քիչ բամբասում և ապա ամէն մէկը իր հերթին յանկարծ անդրադառնում էր որ ուշացաւ, ճաշի ժամը մօտենում է՝ մինչդեռ ինքը խօսքի բռնուեց, ճաշը չի հասցնի, տնեցիներն իրեն «կը սպանեն». ուստի և զամբիւղը խլելով՝ ամէն մէկը հապճեպ "դուրս" էր թռչում խանութից և մի վերջին բամբասանք նետելով՝ դիմացինին թողնում էր հարցականի առաջ. յաջորդ օրը աւելի քաղցր զրոյց ունենալու նպատակով։

Բյուրան նպարավաճառի մօտ հանդիպեց ամենօրեայ ծանօթ դէմքերի, այնտեղ էր տիկին Մարանը, Էփիմէ քոյրիկը, Սուրբիկը, Սուսանը և Հռիփը, որին ասում էին «մածակենց հարս»։

Երբ Բլարան ներս մտաւ՝ մոծակենց Հարոն պատմում էր քաղաքում տեղի ունեցած ձերբակալութիւնների մասին.

—Հա՞յ են թէ այլազգի, —հարցրեց տ. Մարանը:

—Հա՛յ են, հա՛յ, էդ է ցաւը. թէ չէ այլազգի ամեն օր ձերբակալում են, ո՞վ գիտէ ինչ գործերի, գողութեան կամ սպանութեան համար:

—Վա՞յ տուր գլխիս, իմ Մակարիս էլ բռնած չլինե՞ն, մէկ քիչ առաջ դուրս եկաւ տնից... բացականչեց Սուրբիկը ձեռքով իր աջ այտի միսը բռնելով:

—Դէ լա՛ւ ա, ճէնց կառավարութեան դարդը քո Մակարդ էր, չէ՛ մի, Մակարի՛ն էլ բռնէին, —ասաց Սուսանը՝ կէս արհամարհանքով, կէս հանգստացնելու դիտաւորով:

—Ախր ինչո՞ւ համար են բռնել, քանի՞ հոգի են, —հարցրեց տ. Մարանը:

—Չգիտեմ, միայն թէ լսել եմ որ շատ են բռնել, էսպէս՝ 25—30 հոգու.—ասաց Հաւոփը:

—Կայ-չկայ՝ դպրոցների պատճառով է, քանի որ վերջերս կառավարութիւնը պահանջներ էր անում, համայնական խորհուրդը ժողովներ էր գումարում, —ասաց տ. Մարանը ծանրօրէն:

—Անպայման Սիրունեանին բռնած կը լինեն, քանի որ նա մի տասն անգամ բռնել է. ինչ որ լինի-չլինի՝ էդ մարդուն կը բռնեն, —ասաց էփիմէ քոյրիկը:

—Այս օրերին վտանգաւոր է նման բաների մասին խօսել. Սիրունեանի անունը տալն իզուր է, գիտէք որ կառավարութիւնն իր տեղեկատուներն ունի, եթէ այդ մարդուն չեն էլ բռնել՝ կը բռնեն երբ մենք այդպէս դատենք. վերջապէս մեղք է, կին ու երեխայի տէր է, դուրսը այդ մասին մի՛ խօսէք, —ասաց Սուսանը ակնյայտ սրտցաւութեամբ:

Այս խօսակցութեան պահուն Բլարայի մտքով մի կասկած անցաւ. Արմէնն ու Սիրունեանը գիւղում դպրոց յանձնախմբի մէջ էին, չլինի՞ թէ... բայց չէ՞ որ Արմէնը նոր դուրս եկաւ տնից, ուրեմն յիմարութիւն է այս մասին մտածել, եզրակացրեց նա և գնումները կատարելով՝ շտապ հեռացաւ:

Խանութի կանայք մի քիչ էլ շարունակեցին իրենց զրոյցը. վերջումը յայտնեցին, որ դպրոցներն այդպիսի ճնշման տակ են, հաստատեցին, որ հայերը Իրանի խաղաղ ու հաւատա-

րիմ հպատակներն են, միմեանց յորդոր կարդացին դուրսը չը խօսել ձերբակալութիւնների մասին, քանի որ առայժ. բան դեռևս չկար և ապա ամեն մէկն իր հերթին յանկարծ անդրադառնալով որ ուշացել է, որ ճաշը չի հասնի և անեցիներն իրեն «կը սպանեն», մի երկու խօսք նետելուց յետոյ դուրս ելաւ աճապարանքով:

Սակայն, նրանցից ամեն մէկը ճամբին հանդիպած ծանօթ կնոջն հաղորդեց անմիջապէս օրուայ նորութիւնը՝ ձերբակալութիւնների մասին, պատուիրելով ոչ ոքի չասել... Այսպէս մինչև երեկոյ՝ արդէն ողջ քաղաքը գիտէր, որ մի քանի հայեր են ձերբակալուած, բայց թէ քանի՞ հոգի էին և ովքե՞ր՝ առայժ. ոչ ոք գիտէր, քանի որ հազար ու մի տեսակ շշուկներ էին պտտում:

Բրաբոն ճաշին երկար սպասեց Արմէնին, բայց նա չեկաւ. մի քանի անգամ փողոց իջաւ՝ գոնէ մի ծանօթի հանդիպելու նպատակով, բայց ոչ ոքի չհանդիպեց և ստիպուած եղաւ տուն դառնալ, քանի որ երեխան մենակ էր: Վերջապէս ժամի չորսից անց էր, որ նա որոշեց երեխային յանձնել հարևանուհու խնամքին, դուրս ելնել և Արմէնին փնտռել:

Նա անցաւ Նոյերի փողոցը, հնդեակին հանդիպելու յոյսով. բայց նրանցից ոչ ոք չկար. անցաւ սրճարանների առջևով, ապակիների յետևից հայեացք նետեց ներս, Արմէնին կամ որևէ ծանօթ դէմք փնտռելով, բայց սրճարաններն էլ ամայացած երևացին նրա աչքին. նա այն տպաւորութիւնն ունեցաւ, որ անցուդարձ անողների մէջ հայերն առանձնապէս շատ նւազել էին, հատ ու կենտ հեռաւոր ծանօթներ էին անցնում միայն: Մինչ այդ՝ նա մոռքում յանդիմանում էր Արմէնին, որ այսպէս ուշացել է և իրեն անհանգստութեան մատնել, բայց այժմ սկսեց կասկածել, որ Արմէնը էլ ձերբակալուած է միւսների նման, մանաւանդ որ Սերունեանի հետ միևնոյն յանձնախմբում էր, իսկ Սերունեանին կառավարութիւնը հետապնդում է. ուրեմն... Այս մտքի վրայ՝ նա վճռականօրէն իր քայլերն ուղղեց դէպի տեսչի բնակարանը:

Նա դռանը հանդիպեց տեսչի քրոջը, նկատեց որ աչքերը կարմրած էին. դէմքը տխուր էր, հասկացաւ որ տեսուչը ձերբակալուած է.—

—Տիկին, —ասաց Բրաբոն, —տխուր էք, ի՞նչ է պատահել...

—Իսկ ի՞նչ պատահեց… Երեսուն տարի կառավարութեան ծառայած եղբօրս բռնել են. նա ի՞նչ վատ բան է արել, գողութի՞ւն է արել, մա՞րդ է սպանել, որ նրան բռնել են,—և տեսչի քոյրն սկսեց նորէն լալ։

—Մի՛ յուսահատուէք, տիկի՛ն,—ասաց Բլարան,—վտանգաւոր բան չկայ, գիտէք որ կառավարութիւնն ուզում է պետական ծրագիր պարտադրել մեր դպրոցներին, այս ձերբակալութիւնները վախեցնելու համար են. շուտով խնդիրը կը լուծուի և բաց կը թողնեն. այժմ կարո՞ղ եմ պ. տեսչի տիկնոջը տեսնել։

—Տանը չի, գնացել է Համայնականի նախագահի մօտ,—ասաց քոյրը։

Բլարան հրաժեշտ առեց նրան ու արագ քայլերն ուղղեց Համայնականի նախագահի տունը։

Միջահասակ, լեցուն մարմնով, ճերմակ մազերով ու հեզահամբոյր տեսքով նախագահ բժ. Վալթօն նրան ընդունեց զգուշաւոր և խօսել սկսեց ցած ձայնով.

—Տեսուչը ձերբակալուած է. նոր նրա տիկինն այստեղ էր, խորհուրդ առի գնալ ոստիկանատուն և հարցնել իր ամուսնու մասին. պէտք է վերջապէս անկողին և ուտելիք ուղարկել, եթէ անմիջապէս չպիտի արձակեն. հասկանո՞ւմ էք թէ չէ։ Իսկ ինչ վերաբերում է ձեր ամուսնուն, եթէ նա այս գիշեր տուն չգայ, ուրեմն նա էլ ձերբակալուած է, այդ դէպքում վաղը առաւօտեան շուտ կը գնաք տեսչի տիկնոջ մօտ, նրա հետ ոստիկանատուն կերթաք՝ անկողնի և ուտելիքի մասին կարգադրութիւն անելու համար։ Մինչ այդ ես էլ եթէ նորութիւն իմանամ ձեր ամուսնու մասին՝ լուր կը տամ ձեզ։ Մի՛ մտածէք, տիկին, առանձին վտանգաւոր բան չկայ, մենք մի այնպիսի յանցանք չենք գործել՝ որ խիստ վարուեն, հասկանո՞ւմ էք թէ չէ,—եզրակացրեց նա աւելի ցածր ձայնով։

Բլարան, որ քիչ առաջ սիրտ էր տալիս տեսչի քրոջը, այժմ ինքն էր լուռ լալիս և նախագահն էր մխիթարում նրան։ Նա շնորհակալութիւն յայտնեց ու դուրս եկաւ։ Այժմ փողոցը, անցուդարձ անող մարդիկ նրա աչքին չէին երևում, իր ամուսնու բանտարկութեամբ մտասևեռ՝ նա քայլում էր կարծես երազի մէջ, տենդով բռնուածի պէս և դէպի ամուսինը խղճահարութեան զգացումով։

Նալերի փողոցով անցնելիս նրան մօտեցաւ Վահրամը.

— Բլար ջան, ինչո՞ւ ես լաց եղել, ի՞նչ է պատահել, չլինի՞ թէ Արմէնին էլ...

— Այսօր Արմէնը տուն չի եկել, առաւօտեան տնից դուրս եկաւ ու ճաշին չվերադարձաւ, մինչև ժամի չորսը սպասեցի, գնացի Համայնականի նախագահի մօտ, նա էլ չգիտէ, դուք չե՞ք տեսել։

— Ո՛չ, մենք առաւօտեան որ լսեցինք թէ տեաչին ու մի քանի հայերի ձերբակալել են՝ սրանքը ճղեցինք... ես չհամբերեցի տանը, նոր դուրս եկայ. ախար կլին, երեխայի տէր ենք... պէտք է մի կտոր հաց գտնենք ուտելու։ Հա՛, դու գնա՛ տուն, ես գէսից-գէնից լուր կը հաւաքեմ ու գիշերը կը գամ կը յայտնեմ քեզ։ Լաց մի՛ լինիր, վատ օրը շուտ կանցնի։

Բլարան տուն մտաւ մի թոյլ յոյսով, որ Արմէնը եկած կը լինի, բայց նրա յոյսն ի զերև ելաւ, երբ միայն հարևանուհին դիմաւորեց նրան երեխան գրկին։

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

Արմէն Հայկունին արթնացաւ, երբ դեռևս մութն էր. նրա ձեռները պաղել էին սառը օդից։ Առաջին պահ նա չկարողացաւ որոշել թէ որտեղ էր գտնւում, բայց նախորդ օրւայ դէպքերը մէկը միւսի յետևից գրոհեցին նրա ուղեղում, սկսեց նոյն մտածումների շարանը, ինչ որ նախորդ օրը չարչարել էր նրա միտքը։ Ինչո՞ւ համար է բռնւած, ի՞նչ է պատահել դուրսը, կինն ու երեխան ի՞նչ վիճակում են. ուրեմն երէկ Բլարան չի իմացել թէ բանն ինչո՞ւմն է. անշուշտ այս գիշեր նա անքուն է անցկացրել՝ իր մանկան սնարի մօտ, այժմ նա էլ մտածում է իր մասին։ Հայ համայնքը ի՞նչ է խորհում, արդեօք ի՞նչ միջոցների են դիմել Համայնական խորհուրդն ու ազգային մարմինները՝ իրեն ազատելու համար. անշուշտ սա դպրոցներին անչափ հարց է. թէ չէ ինքը որևէ յանցանք չունի գործած, իր խիղճը մաքուր է։ Այնուհետև նրան սկսեց զբաղեցնել կնոջ ու երեխայի ապրուստի հարցը. ամառւայ ամիսները մի կերպ անցկացրին. այժմ աշունն է սկսել, դպրոցներն անորոշ վիճակում, ինքը անգործ, իր բոլոր ճիգերը՝ գործ գտնելու՝ ապարդիւն անցած. ի՞նչ կը լինի ճարը կնոջ ու զաւակի, եթէ իր բան-

ծարկութիւնը երկար տևի… բայց ինչպէս բոլոր նոր բանտար-կեալները, նրա մէջ եւս գլուխ բարձրացրեց ինքնավստահ յոյսը, որ այսօր-վաղը անպայման կազատուի, ուստի և սկսեց ծրագիր-ներ կազմել ապագայ գործի, աշխատանքի մասին։

Կամերայի փոքրիկ պատուհանից սառը օդ էր ներս թա-փանցում և նա մեղմ ցաւ էր զգում իր ծնկներում, ուստի և վեր կացաւ, ոտների ծայրերի վրայ կանգնեց, փոքրիկ պատու-հանը փակեց․ ապա սկսեց շփել իր ծնկները․ շփեց նաև իր աջ ականջի խեցին, քանի որ բարձ չունենալով, գլխարկն էր գործ ածել բարձի փոխարէն և ականջը ցաւեցրել էր։

Նա սկսեց խորհել ռէժիմի մասին։ Վերջին տարիները իշ-խանութեան խիստ կենտրոնացում էր տեղի ունեցել․ այժմ հերթն հասել է ազգային փոքրամասնութիւններին․ սկսել են կրճատել փոքրամասնութիւնների մշակութային իրաւունքները․ հետևա-բար առաջին հերթին դպրոցներն են ենթակայ առարկայ։ Պետա-կան կրթական ծրագիրը թէև տարիներից ի վեր գործադրւում է հայկական դպրոցներում, սակայն դա չի գոհացնում կառավա-րութեան ազգայնական քաղաքականութեանը, նա ձգտում է վերացնել հայոց լեզուն, ձգտում է ձուլել հայ համայնքը պե-տական ղանգուածի մէջ… Այժմ հարց է ծագում․ արդեօք հնա-րաւո՞ր է ձուլել հայ ժողովրդին, մոռացնել տալ նրան իր լե-զուն, իր պատմութիւնը, իր ազգային աւանդութիւններն ու սովորութիւնները․ այդպէս դիւրին կերպով ձուլւո՞ղ է հայ ժո-ղովուրդը, ինչպէս որ կարծւում է․ Ի հարկէ ո՛չ․ ապացոյց՝ մեր ողջ պատմութիւնը։ Ռուսական ցարը յիսուն տարի առաջ քա-նիցս փորձեց նոյն քաղաքականութիւնը, սակայն ձախողեց․ ո՛չ միայն հայը չձուլեց, այլ ընդհակառակը, տեղի ունեցաւ մի այլ երևոյթ, աւելի՛ շեշտուեց հայի ազգայնութիւնը․ հայերէն չգիտցող հայերն անգամ ցանկացան սովորել իրենց լեզուն, հայ ժողովուրդը ծառացաւ իր կաթողիկոսից սկսած մինչև յետին գիւղացին, մինչև ամենաանտարբեր հայը, մինչև Թիֆլիզի առնական կինտօն։

Նրա յիշողութեան մէջ տողանցք կատարեցին հայ եկե-ղեցական կալուածների գրաւման և դպրոցների փակման առթիւ եղած ցոյցերն ու տենդագին վիճակը, հայ ժողովրդի յաղթա

ու մրգամրունքը, և վերջապէս ցարական կառավարութեան ան-գի տալը: Անցաւ այդ իշխանութիւնն իր քաղաքականութեամբ, և սակայն հայ ժողովուրդը ապրեց:

Փոքրիկ լուսամուտի ապակին մթնեց. լուսաբաց էր և լոյսը կախ էր մնում գիշերուայ խաւարի դէմ:

ԴՐՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Առաւօտեան ժամի 8-ն էր, երբ կամերայի դուռը բացւեց և հերթապահ ստախկանը կարգադրեց թէյ տալ Հայկունուն: Թիթեղէ փոքրիկ, դեղին մատուցարանի մէջ դրած էր մի թէյնիկ, մի փոքր բաժակ և մի քանի կտոր շաքար: Հայկունին խնդրեց ստախկանին թոյլ տալ լուացւելու. նրան առաջնորդեցին միջանցքի ծայրում գտնւող պէտքարանը, որի դրսի սրահակում գտնւում էր լուացարանը: Լուացւեց, սրբիչ չունէր, ուստի և գրպանի թաշկինակով սրբւեց ու յետ դարձաւ իր խուցը: Թէյը նրան հաճելի թւաց, քանի որ քսանչորս ժամ էր ոչինչ չէր կերել: Պահանջ զգաց ծխելու, սակայն ծխախոտ չէր մնացել... այժմ զգալի եղաւ բանտի առաջին զրկանքը:

Սկսեց քայլել խուցի մէջ, սակայն տարածութիւնն այնքան փոքր էր, որ հազիւ երեք քայլ առած՝ դէմ էր առնում պատին: Խուցի փոքրութիւնը ճնշում էր նրա հոգու վրայ:

Այսպէս անցաւ մօտ չորս ժամ. կէսօրւայ մօտ էր, որ միջանցքում հնչեց Հայկունու անունը. նա ներսից բաղխեց իր խուցի դուռը՝ «Այստե՛ղ է, այստե՛ղ է»—կանչելով: Քիչ յետոյ բանալին աղմկեց փականքի մէջ և դուռը բացւեց.

—Պարոն Արմէն Հայկունին դո՞ւք էք,—հարցրեց հերթապահը»—առացէք անկողին և ուտելիք:

Հայկունին մի պահ կարծես շփոթւեց. ապա իրեն հաւաքելով, ներս առաւ անկողինն ու պաշարը: Դուռը նորէն փակւեց:

Անկողինը դրեց մի անկիւն, նստեց յատակին ու բաց արաւ ուտելիքի կապոցը. ամեն ինչ նրան երևաց հարազատ, մտերիմ. այս ալիւմինէ կաթսան իր կափարիչով, այս գդալը, հացը, որ գնւում էր հարևան փռւից, ծխախոտն ու լուցկին անգամ նրան մտերիմ թւացին, հին բարեկամներ, որոնց ընդամենը

քանի չորս ժամ էր չէր տեսել և սակայն այնքա՞ն կարօտ ունէր։ Բլուրն է այս բոլորը դասաւորել ու կապել, նա է նկել այս ճաշը՝ անդադար շարժումներով ու արցունքով. այս մաքի վրայ երկու կաթիլ արցունք գալիս ցայտեց նրա աչքերից։ Եւ այս բոլորի մէջ նրան թւում էր թէ զգում է իր երեխայի ներկայութիւնը, նրա բոյրը… Դրսի աշխարհը խուժել էր իր նեղ խուցը և աղմկում էր իր առօրեայ յոյզերով. նա թիկունքը յենեց պատին. մի հատ ծխեց խորը շնչով, և ծխի միջից նրան երևացին հարազատ երկու դէմքերը։ Բլուրն տխուր էր ու կարմրրած աչքերով. երեխան անտարբեր էր դէպի աշխարհի անցուդարձը, նա չգիտէր ինչ է կատարւում, նա չէր գիտակցում, որ իր ապագայի հարցն է խնդրոյ առարկայ, բազմաթիւ իր նմանների. և փոքրիկը թափահարում էր իր թևերը, ձեռներով ճանկում էր մօր մազերը, մերթ ժպտում էր, մերթ՝ կիտում յօնքերը…

Նա սթափւեց մտքերից, երբ ծխախոտը վերջացաւ. այրելով նրա երկու մատները։ Նա իր հարազատների և ազատութեան արտակարգ կարօտն զգաց։ Խուցը նրան թւաց շատ փոքր, շատ նեղ։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Նոյն օրը երեկոյեան ժամի չորսի շուրջ նրան կանչեցին հարցաքննութեան։ Հերթապահը նրան յանձնեց մի այլ հերթապահ պաշտօնեայի, սա էլ մի հրացանաւոր զինւոր վերցրեց և Հայկունուն մէջտեղ առած՝ քայլեցին բանտից դուրս, կտրեցին ընդարձակ բակը, բարձրացան ոստիկանատան մեծ շէնքի աստիճաններով և կանգ առան միջանցքի ծայրի սենեակի դռան առաջ։

Պաշտօնեան բաղխեց դուռը և ներս մտաւ. Հայկունին զինւորի հետ մնաց դռան առաջ. քիչ յետոյ նրան ներս կանչեցին։

Երկու գրասեղանի յետևն նստած էին երկու պաշտօնեաներ. Հայկունուն աթոռ առաջարկեց երիտասարդ, գեղեցկադէմ պաշտօնեան, և գրիչը վերցնելով՝ սկսեց հարցաքննել։

— Ե՞րբ էք բանտարկւել, պ. Արմէն Հայկունի։

— Երէկ առաւօտեան ժամի 9-ին։

— Պատմէք ձեր կենսագրութիւնը թւականներով, որտեղ էք ծնւել, որտեղ և ո՞ր թւականին սովորել. ո՞ր երկրներում էք եղել և այլն, մինչև այսօր։

Նա հերթով պատասխանեց բոլոր հարցերին։

—Դուք Հայոց Համայնական Խորհրդի անդա՞մ էք, —հարցրեց քննիչը։

—Ո՛չ։

—Հապա ի՞նչ հանգամանքով էիք մասնակցում նրա նիստերին։

—Ես մասնակցել եմ մի քանի նիստերին իբրև ուսուցիչ։

—Յանձնախմբի մէջ էիք։

—Այո՛։

—Ի՞նչ գաղտնի նպատակ ունէր յանձնախումբը և ովքեր էին անդամները։

—Յանձնախումբը ոչ մի գաղտնի նպատակ չունէր. նա ընտրուած էր մի դիմում գրելու լուսաւորութեան նախարարին և խնդրելու, որ պետական ծրագրից դուրս գոնէ տասն ժամ յատկացնի հայոց լեզուի և պատմութեան դասաւանդման։

—Դիմում գրեցի՞ք և ուղարկեցի՞ք։

—Դիմումի սևագիրը պատրաստ էր. մնում էր յաջորդ նիստին մաքրագրել և ուղարկել, բայց ես ձերբակալուեցի և չգիտեմ թէ ինչ եղաւ այնուհետև։

—Յանձնախմբի միւս անդամների ներկայութեամբ նոյն բանը կը կրկնէ՞ք։

—Դա բացայայտ բան է, նրանք էլ նոյնը կասեն, քանի որ եղելութիւնը պատմեցի։

—Այժմ ստորագրեցէք այս բոլոր պարբերութիւնների դիմաց, —ասաց քննիչը թղթի վրայ տեղերը ցուցնելով։

Հայկունին ստորագրեց։

Ապա քննիչը ներս կանչեց հերթապահ պաշտօնեային, որ կեցած էր դռան յետև և պատուիրեց տանել Հայկունուն։

—Կարելի՞ է կարգադրէք, որ խուցիս դուռը երբեմն բաց թողնեն, օդը նուաղ է, —ասաց Հայկունին քննիչին։

—Այդ մասին՝ հարցաքննութիւնը վերջանալուց յետոյ, —կտրուկ ասաց քննիչը։

«Երևի դեռ պիտի շարունակի», —մտածեց Հայկունին, հետևելով հերթապահին։

Բանալին աղմկեց կողպէքի մէջ. Հայկունին իր խցումն էր։

«Երևի յանձնախմբի անդամները ձերբակալուած են, քանի

որ երես առ երեսի ակնարկ արաւ քննիչը. մի՞թէ այդ չէ պատ-ճառը նաև, որ չթոյլատրեց խուցից դուրս բանալ. ուրեմն միւս-նե՞րն էլ այս միջանցքի խուցերումն են. ի՞նչպէս սատկեր»…

Քիչ յետոյ նա հերթապահին կանչեց և դառն յուսալից խնդրեց իրեն թոյլ տալ պէտքարան գնալու:

—Մի քիչ սպասիր,—եղաւ պատասխանը:

Անցաւ կէս ժամ. Հայկանին նորէն բախեց դուռը:

Այս անգամ պահակը դժկամութեամբ բաց արաւ դուռը. Հայկանին սրբիչը ձեռին՝ անցաւ միջանցքով. բոլոր խուցերի դռները փակ էին, սակայն նրանց յետևում շունչ-կենդանի չկար. դամբարանի տպաւորութիւն էին թողնում:

Նա անցաւ պէտքարան. մատիտ չունէր, ուստի և իր սանրի ծայրով պատի դաճի վրայ գրեց իր անունը այնպէս, որ պէտ-քարանում եղողը անպայման նկատէր:

Վերադարձաւ ու փակուեց իր խուցի մէջ, տխուր մտքերի անձնատուր:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Անցաւ դարձեալ երկու օր: Նա ամեն օր, համարեա նոյն ժամին, ճաշ էր ստանում կնոջից:

Բանտարկութեան չորրորդ օրը նրան դարձեալ կանչեցին հարցաքննութեան. այս անգամ քննիչն առաջարկեց նրան պարս-կերէն լեզուով գրել այն, ինչ որ ինքը կը թելադրէր: Հայկանին առարկեց, որ ինքը հազիւ տառաճանաչ է, չի տիրապետում պե-տական լեզուին, ուստի և պիտի դժուարանայ այդ թելադրու-թիւնը կատարելու. քննիչը պահանջեց գրել ինչքան որ գիտէ և թելադրեց.

«Նորին Կայսերական Մեծութիւն»… Հայկանին մի քանի անջատ տառեր շարեց իրար կողքի, տձև ու անկարգ. իսկապէս որ պարսկերէն չգիտէր և իր գրելու ձևի մէջ կեղծիք չկար. քննիչն համոզուեց այդ բանում և՝

—Պետական լեզուն պիտի սովորել, պարոն Արմէն,—ասաց քննիչը կէս յանդիմանական, կէս ակնարկի ձևով: Հայկանին լուռ մնաց:

Ուրեմն ուզում է հասկացնել, խորհեց նա, որ պետական լեզուն բոռ պաշտօնին չսովորելու համար են այս խստութիւն.

ները. բայց ինչո՞ւ է ուզում ձեռագիրս ստուգել, ի՞նչ է տեղի ունեցել, արդեօք կարծում է թէ «Յանձնախմբի» քարտուղարը ե՞ս եմ եղել և կեղծո՞ւմ եմ, անգրագէտ ձեւանալով. այս հարցերի պատասխանը նա չգտաւ։

Քննիչը դարձեալ կարգադրեց հերթապահին, իր խուցը վերադարձնել Հայկունուն։

—Կը թոյլատրէ՞ք այժմ խուցիս դուռը կիսաբաց ձգել, — հարցրեց Հակունին։

—Այժմ կարելի է, — կարգադրեց քննիչը։

«Ուրեմն հարցաքննութիւնս վերջ գտաւ», եզրակացրեց Հայկունին ու թեթև սրտով հեռացաւ։

Երբ նա մտաւ թիւ առաջին միջանցքը, նկատեց որ ձախ կողմի երկու իրար յաջորդող խուցերի դռները կիսով չափ բաց էին. նրանց առջևով անցնելիս նայեց ու տեսաւ, որ առաջին խուցում պառկած էր հայոց դպրոցի տեսուչը, մէջքը յենած բարձին, իսկ միւսում ձգւած էր յանձնախմբի քարտուղար Սիրունեանը. Պարզ էր, ուրեմն յանձնախմբի երեք հոգին ձերբակալւած էին. Մնում էր ստուգել միւս երկուսի մասին։

Երբ Հայկունին իր խուցը մտաւ և հերթապահն հեռացաւ, խուցի դուռը բաց ձգելով, քիչ յետոյ սկսեց մեղմ ձայնով կանչել.

—Սիրունեա՛ն... Սիրունեա՛ն, լսո՞ւմ ես ինձ.

—Լսում եմ, — եղաւ պատասխանը։

—Ո՞վքեր են ձերբակալւած։

—Յանձնախմբի անդամները, բացի Սագինեանից, որը, իբրև խորհրդարանի անդամ, անձեռնմխելի է... Բոլորս այս միջանցքումն ենք։

—Իմ ձեռագիրս վերցրին, ի՞նչ է նշանակում։

—Անանուն, անստորագիր նամակ է ուղարկւած Մեծի հասցէին, փնտռում են թէ ո՛վ է գրել...

—Ուրեմն ուրիշի յանցանքին մե՞նք ենք զոհ գնացել.

—Այդպէս, անխոհեմ քայլ է արել ինչ որ մէկը։

—Տեսնես ո՞վ է դա...

—Խնդիրը հէնց այդ է...

—Ե՞րբ կարձակեն մեզ, — հարցրեց Հայկունին։

—Երևի մի քանի օրից, արդէն համոզւել են որ մեր գործը չէ, — եղաւ Սիրունեանի պատասխանը։

Պահակը միջանցքի ծայրից հասաւ կենտրոնին, նրա քայլերի ձայնից էր այդ շշացում, ուստի և նրանք դադարեցրին խօսակցութիւնը։ Երբ պահակն եկաւ ու նորէն հեռացաւ, Հայկունին դարձեալ հարցրեց.

—Սիրունեա՛ն, քեզ քանի՞ անգամ հարցաքննեցին։

—Երեք անգամ, երեք քարտուղարի...

—Ինձ երկու անգամ...

Պահակի քայլերի ձայնը փոխուեց, արագացաւ, ուստի և նրանք լռեցին։ Քիչ յետոյ, երբ նա միջանցքի կենտրոնին հասաւ՝

—Ո՞վ էր խօսում, պարոննե՛ր, խօսելն արգիլուած է, —ասաց բարձր ձայնով։

Լռութիւն տիրեց. Հայկունին պառկեց անկողնի վրայ և թեւերը գլխի տակ դնելով՝ խորասուզուեց մտքերի մէջ։

ԱՐՁԱԿՈՒՄ

Բանտարկութեան ութերորդ օրը, առաւօտեան ժամի 11-ին, Հայկունին լսեց հետեւեալը.—

—Պարոն Ալմաճեա, իրերդ հաւաքիր... բանտային հերթապահն էր:

Հայկունին համակ լսողութիւն դարձաւ. նա կպաւ խուցի բաց դռան շրջանակին և այդպէս մնաց հսկելիս. քիչ յետոյ յանձնախմբի անդամ Յովհաննէսն անցաւ Հայկունու խուցի առջեւով իր անկողինն ու ձեռքի կապոցը քարշ տալով։

—Արդեօք ազատո՞ւմ են, թէ՞ մի ուրիշ բաժին են փոխադրում, —մտածեց Հայկունին և երբ միջանցքը խաղաղուեց, նա ցած ձայնով հարցրեց.

—Սիրունեա՛ն, ո՞ւր տարին Յովհաննէսին...

—Ազատեցին. երեւի մեզ էլ կարձակեն շուտով..

Սիրունեանը փորձուած, հին բանտարկեալ էր. նա մի քանի անգամ բանտ էր նստել, ուստի և ամէն շարժ ու ձեւից, անցուդարձից ճշգրիտ եզրակացութիւններ էր հանում։

—Երանի Յովհաննէսին, —մտածում էր Հայկունին, —հիմա կը գրկի իր կնոջն ու զաւակներին, կը տեսնի պայծառ արեւ լոյսը և ազատութեան համը։

Ժամի 12-ին նա դարձեալ ճաշ ու ծխախոտ ստացաւ Բրաբայից. այս անգամ ճաշը ախորժեց նրան. ուրեմն իրեն չպիտի արձակեն, որ ճաշ բերին, ուրեմն պիտի շարունակել դեռեւս այս

անիմաստ ժամավաճառութիւնը։ Նրան այնպէս էր թւում, որ ինքը մեծ գործեր ունի դուրսը կարգադրելու և սակայն ստիպւած է այստեղ, բանտում, զուր ժամեր վատնել։ Նա ճաշեց, ապա ծխեց, ծուխը մինչև թոքերի ծայրը ներշնչելով, ապա մի թմբիր եկաւ վրան և չզգաց, թէ ինչպէս քնեց։

Նրան թւաց, թէ երազի մէջ լսում է իր անունը.

—Աղայէ Արմէն Հայկունի,—լսեց նա պարսկական արտաբերութեամբ իր անունն ու ազգանունը,—իրերդ հաւաքի՛ր, աղայէ Արմէն...

Այլևս երազ չէր. Հայկունին ընդոստ նստեց անկողնում, ապա իր առաջին հարցումը եղաւ.

—Ազատո՞ւմ էք...

—Ինշալլահ խուբ միշէ... (Աստուծով լաւ կը լինի),—ասաց հերթապահը։

Երկու րոպէում Հայկունին պատրաստ էր. նա և իր անկողինը քարշ տալով անցաւ միջանցքով և Միրունեանի ու տեսուչի խուցերի առջև մի քիչ դանդաղեց, որպէսզի նրանք տեսնէին որ իրեն տանում են։

Բանտի դրասենեակում նրան վերադարձրին վրայից վերցրած իրերը, ստորագրել տւին մատեանի մէջ և երբ ձևականութիւնները լրացել էին.

—Գնացէ՛ք, պարո՛ն,—ասաց բանտապետը։

Հայկունին դուրս եկաւ միջանցք, մի դրամ դրեց հերթապահի ձեռքը, իբրև նւէր, մի դրամ էլ դռանը կանգնած հսկիչի ձեռքը, ապա բակն անցնելով՝ փողոց ելաւ և մի կառք նստելով՝ տուն մեկնեց։

Փողոցներում մարդիկ անցուդարձ էին անում ըստ սովորականին, ամենք նայում էին կառքի մէջ նստած Հայկունուն, որի դէմքը անհամբեր արտայայտութիւն ունէր, նրան թւում էր թէ կառքը սովորականից աւելի դանդաղ է առաջանում։ Դէմքի մազերն աճել էին և նրան թւում էր, թէ ամիսներ է չէ բացւել։ Ճամբին ո՛չ մի ծանօթի չհանդիպեց։

Կառքը վերջապէս կանգ առաւ իրենց դռան առաջ. Նա իրերը քարշ տալով բարձրացաւ աստիճանները. սիրտը տարօրէն տրոփում էր, նրան թւում էր թէ տարիներ է չի տեսել կնոջն

ու զաւակին. արդեօք, ի՞նչ է անում այժմ Բյարան, գիտէ՞ որ ինքը կը գայ։

Դուռը բաց արաւ Բյարան և Արմէնին տեսնելով՝ մի պահ կարկամեց. անսպասելի էր…

Նրանք գրկախառնուեցին միմեանց անուն տալով։

Մանկական մահճակալի մէջ թևերը թափահարելով ժըպտում էր մանուկը. նա հրեշտակի տեսք ունէր, ազատութեան համն ունէր։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—Պարոննե՛ր, լուսաւորութեան վարիչը մի յատուկ գրութեամբ պահանջում է, որ Հայոց դպրոցի տեսուչը պիտի լինի պարսկագէտ, ունենայ պարսկական միջնակարգի վկայական. միայն այս պայմանով կարող ենք մեր դպրոցը վերաբանալ. հաւանո՞ւմ էք թէ չէ… իսկ ինչ վերաբերում է շաբաթական տասն ժամ հայոց լեզուի և կրօնի դասաւանդութեան, խնդիրը փափուկ է, գիտէք, և այդ մասին զգուշաւոր բանակցութիւններ ենք տանում լուսաւորութեան նախարարի հետ, ամեն կերպ աշխատում ենք, որ կառավարութեան վերաբերմունքը չսառի դէպի մեզ, որ մեր դպրոցը, թէկուզ նուազ դասաժամերով, ունենայ նաև հայոց լեզուի և կրօնի պահեր… Այժմ այս ժողովի քննութեանն եմ դնում մեր դպրոցի տեսչի հարցը, խնդրեմ արտայայտուէք։

Մի պահ խոր լռութիւն տիրեց. ոչ ոք չէր ուզում առաջին արտայայտուողը լինել, մանաւանդ որ խնդիրը առնչւում էր իշխանութեան. միւս կողմից՝ դպրոցի տարիների տեսուչը որևէ յանցանք չէր գործել, չէր թերացել իր պարտականութեան մէջ, որի համար մէկ օրից միւսը նրան անփառունակ ձևով արձակէին իր պաշտօնից։

Այնուամենայնիւ, լռութիւնը խզեց դարձեալ նախագահը՝ բժ. Վաթօն.

—Պարոննե՛ր, ձեր լռութիւնը չի փրկի մեր դպրոցը. հաւանո՞ւմ էք թէ չէ… պէտք է վերջապէս արտայայտուէք, դուք էք այս քաղաքի ազգային իրաւական մարմինը և ձեր որոշումից է կախուած դպրոցի բախտը։

Նախագահի այս յայտարարութիւնը կարծես սթափեցրեց

ժողովականներին. ուստի և առաջին հերթին ձայն տուեց Յովսէփ խանը, որ պետական հնամեայ պաշտօնեայ էր եղել և մօտ ծանօթութիւններ ունէր պետական շրջանակների հետ, իսկ ազգային-հասարակական գործերում երկար տարիների փորձառութիւն ունէր։

—Ինչպէս որ զեկուցեց պարոն նախագահը,—ասաց նա,— լուսաւորութեան վարիչը պահանջում է փոխել դպրոցի տեսուչին. մենք, իրանցիներս, միշտ ենթարկուել ենք մեր կառավարութեան, ի՞նչ կայ որ. կը փոխենք տեսչին և մեր տեսուչը մեզնից չպիտի վիրաւորուի. որովհետև կառավարական հրաման է. իսկ ինչ վերաբերում է հայոց լեզուի դասերին, ինձ նախարարի օգնականի օգնականը խոստացաւ «մի բան անել»...

Յովսէփ խանի պէս մի ազդուրիչ անձնաւորութեան արտայայտուելուց յետոյ պատգամաւորների լեզուները բացուեցին, նրանք բոլորն էլ կրկնեցին. քանի որ կառավարութիւնը պահանջում է, ուրեմն տեսչին պիտի փոխել. բայց ո՞ւմ ի նկատի ունենալ իբրև տեսչի. ահա՛ այս հարցն էր որ ոչ ոք չէր կարողանում լուծել, քանի որ կառավարութեան պայմանները լրացնող համապատասխան մարդ չէին գտնում։

—Այդ հարցի կարգադրութիւնը թողէք մեզ. նախագահութեան, մենք կը մտածենք և մի յարմար թեկնածու կը գտնենք. կը բերենք յաջորդ ժողովին. իսկ ինչ վերաբերում է մեր դպրոցի տեսչին, ապա սխալուած չեմ լինի եթէ բոլորից մեր գնահատանքի խօսքն ասեմ յարգելի պարոնին, որ երկար տարիներ անձնուէր աշխատեց կրթական մարզում, սերունդ կրթեց ու դաստիարակեց և այսօր մեկնում է խաղաղութեամբ։ Պարոննե՛ր, այսօրուայ օրակարգը սպառուած է և ես ժողովը փակուած եմ յայտարարում. համախո՞ւմ էք թէ չէ...

Այս խօսքից յետոյ դպրոցի տեսուչը, Արսէն խան, տարիներ պաշտօնավարելուց և ութն օր բանտ նստելուց յետոյ, վարձատրուեց նախագահի տաք խօսքերով և մեկնեց խաղաղութեամբ։

Նախագահութիւնը ցրուեց. թէև պատգամաւորները մեկնեցին։ Բժիշկ Վաթօն ցածր ձայնով, մեծ գաղտնիք յայտնելու ձևով, ասաց միւսներին.—

—Պարոննե՛ր, հիմա մենք կարող ենք գնալ Մասթեան խա-

նի թեկնածութիւնը, հաւանո՞ւմ էք թէ չէ… տեսա՞ք ինչպէս ժողովում յայտարարեցի՝ թէ այդ խնդիրը թողէք նախագահութեան․․ Հիմա մենք կարող ենք արագ գործել, որպէսզի լուսաւորութեան վարիչը տարկութիւն չունենայ և դպրոցը չըփակուի. ի՞նչ էք ասում, չկանչե՞նք խանին և համոզենք։

—Կանչե՛նք, երկաթը տաք-տաք պէտք ծեծել.—ասաց փոխ նախագահ և գանձապահ Ներսէսը, որ շուրջ վաթսուն տարեկան, բարեձև կազմուածքով և պարտաճանաչ մարդ էր, հանրային կեանքում յայտ բերած իր շիտակութեամբ յայտնի։

Նախագահը ծառային կանչեց.

—Ցվա՛յ, Կարապե՛տ, անմիջապէս կերթաս Մատթէոս խանենց տուն. կասես գոքասը քեզ մի շուտ կանչում է Համայնականում. հասկանո՞ւմ ես թէ չէ… Մատթէոս խանին կը կանչես. էլ մի ուշացնի հա՜, աղա՛յ, շուտ գնա՛։

Կարապետն ինչ որ անորոշ բաներ քրթմնջալով դուրս եկաւ։

—Այբի՛կ,—դարձաւ նախագահը քարտուղարին,—ի սէր Աստուծոյ, արձանագրութիւնները շատ շքեղ կազմիր, կառավարութեան դէմ արտայայտութիւններ չլինեն, հասկանո՞ւմ ես թէ չէ… մի՛այն լուսաւորութեան վարիչի մասին յիշիր և նրա պահանջների, յիշատակիր նաև, որ Համայնականի անդամները յայտարարեցին իրենց հլու հպատակութիւնը Իրանի Կառավարութեան և Նորին Կայսերական Մեծութեան, որ պատրաստակամութիւն յայտնեցին կառավարութեան պահանջած փոփոխութիւններն անմիջապէս մտցնել հայոց դպրոցում, այժ տալ պետական դպրոցական ծրագրին և խնդրել, որ գոնէ շաբաթական տասն ժամ հայոց լեզուի և կրօնի դասեր թոյլատրեն, հասկանո՞ւմ ես թէ չէ…

Այս խօսակցութեան վրայ ներս մտաւ Մատթէոս խանը, որ շուրջ վաթսունհինգ տարեկան, ակար աչքերով և համակրելի դէմքով մի անձն էր։

Նախագահն ու դիւանի անդամները յարգալից բարև տուին և աթոռ հրամցրին։

Սովորական հարց ու պատասխանից յետոյ նախագահն անցաւ բուն խնդրին.

—Միրզի խան, գիտէք որ կառավարութիւնը պահանջներ է դրել հայոց դպրոցի նկատմամբ. այժմ էլ լուսաւորութեան վա-

րինչը մեզ գրել և գրել է հետևեալ պայմանները, որ դպրոցի տեսուչը պիտի լինի պարսկագէտ, ունենայ պարսկական միջնակարգի վկայական և պետական դպրոցների ծրագիրը հիմնովին կիրառէի մեր դպրոցներում, հասկանո՞ւմ էք թէ չէ... Գիտէք որ մեր դպրոցի տեսուչն այս պայմանները չի լրացնում, ուստի և մենք կանգնած ենք մեր ազգային դպրոցի փակման վտանգի առաջ, եթէ դուք մեզ օգնութեան չհասնէք։ Դուք միակ անձնաւորութիւնն էք, որ լուսաւորութեան նախարարութեան պայմանները լրացնում էք. բացի այդ՝ դուք առաջին անձնաւորութիւնն էք Իրանում, որ դեռևս տասնամեակներ առաջ կազմել և հրատարակել էք պարսկերէն լեզուի «Այբբենարան», որը երկար տարիներ գործ է ածւել դպրոցներում. բացի այդ, որքան մենք գիտենք, դուք միասին սովորել էք ներկայ լուսաւորութեան վարիչի հետ «Քոլէջ»-ում. ուրեմն դուք միակ յարմար անձն էք, որ կարող է ստանձնել հայոց դպրոցի տեսչի պաշտօնը և մեր դպրոցն ազատել փակման վտանգից. ահա՛ այս առթիւ է, որ ձեզ հրաւիրել է Համայնականի գլուխը և վստահ է, որ չպիտի մերժէք... հասկանո՞ւմ էք թէ չէ։

Այս յայտարարութեան ընթացքում գիւղի միւս երկու անդամները գլխով հաւանութեան շարժումներ էին կատարում և մեղմ ժպտում։

Մատթէոս խանը հազաց և ապա խօսք առաւ.

—Յարգելի պարոններ, շատ ցաւում եմ, իսկապէս, որ մեր դպրոցը կանգնած է այդպիսի դժուարութեան առաջ. ի հարկէ մեզնից ամեն մէկի պարտականութիւնն է օգնութեան հասնել և իր ուժերը ներածին չափ օգտակար լինել մեր ազգային կրթական տաճարին, բայց մի՞թէ պահանջն այդքան խիստ է և հնարաւոր չէ տեսուչ պ. Մարգարեանին պահել իր պաշտօնի մէջ. ինձ համար անյարմար է... գիտէք։

—Ոչ մի անյարմարութիւն. մենք արդէն յայտնեցինք պ. Մարգարեանին իրականութիւնը և նա մեկնեց խաղաղութեամբ. այո՛, այո՛. խաղաղութեամբ, հասկանո՞ւմ էք թէ չէ... ասաց նախագահը հապճեպով։

—Եթէ այդպէս է դրութիւնը, ես յանձն կառնեմ, ի սէր մեր դպրոցի և երեխաների,—ասաց Մատթէոս խանը համակերպութեամբ։

—Դէ՛հ, ուրեմն ա՛յս էլ եղաւ, հաւանո՞ւմ էք թէ չէ,—ասաց նախագահը աշխույժով և ձեռներն իրար շփելով,—արձանագրի՛ր, պ. Ալբրին, որ Մատթէոս խանը սիրայօժար յանձն է առնում հայոց դպրոցի տեսչութիւնը. հաւանո՞ւմ ես թէ չէ... Այժմ ձեզ մնում է հանդիպել անմիջապէս հոգաբարձութեան և ստանձնել դպրոցի ղեկավարութիւնը,—ասաց նա Մատթէոս խանին դառնալով.—պարոննե՛ր մեր պարտականութիւնը կատարեցինք, հաւանո՞ւմ էք թէ չէ, - այժմ ժողովը փակուած է, երթանք խաղաղութեամբ:

ՆՈՐ ԴԷՊՔԵՐ

Աշուն էր և Հայոց ազգային դպրոցն արդէն սկսել էր իր պարապմունքները՝ պետական ծրագրով, իսկ հայոց լեզւի ու կրօնի դասերի հարցը մնացել էր կախ. բանակցութիւններ էին վարւում կրթական վարիչի հետ, հարցը ձգձգւում էր և դրական արդիւնքի չէր յանգում:

Նոր տեսուչն աշխատում էր որքան հնարաւոր է կարգին պահել դպրոցը և դէմ չգնալ կառավարութեան քաղաքականութեան. շշուկներ կային, որ կառավարութիւնը մտադիր է գրաւելու փոքրամասնութեանց դպրոցական շէնքերը և վերածելու պետական դպրոցների. այս պատճառով փոքրամասնութիւնները, ու նաև հայ ազգային-հասարակական մարմինները, միջոցներ էին խորհում ազգապատկան շէնքերը դնել այնպիսի իրաւական ձևի տակ, պետական օրէնքներն ի նկատի առնելով, որպէսզի շէնքերը պահէին. առաջարկ կար, որ նման շէնքերը արձանագրուէին մէկ կամ մի քանի հոգաբարձուների անունով, որպէսզի իբրև մասնաւոր ստացուածք, հնարաւոր լինէր փրկելու գրաւումից.

Գաւառական քաղաքներում ևս պահանջներ էին դրել կրթական նախարարութեան տեղական վարիչների կողմից. ուստի և անընդհատ նամակներ ու դիմումներ էին տեղում Թեհրանի ազգային մարմինների հասցէին, որոնցով խնդրում էին միջոցներ ձեռք առնել, կառավարութեան դիմումներ տալ և հարցը մեղմել. սկզբում այդ դրութիւնները խնդրանքի բնոյթ ունէին, սակայն հետզհետէ նրանք սկսեցին կրել դժգոհութեան և պահանջի բնոյթ, մեղադրում էին կենտրոնին, որ անտարբեր է,

անհոգ և անուշադիր դէպի գաւառները, չէին ըմբռնում այն կացութիւնը, որ տիրում էր կենտրոնում, որ ազգային մարմինները հաշւի չէին առնում կրթական վարիչի կողմից, որի պահանջը օրը օրին սաստկանում էր։ Ազգային մարմինները անճրկել էին, ամքել և այն ապօրինութիւնը կար, որ ամեն մարդ վախենում էր։

Գաւառական մէկ-երկու քաղաքում դրութիւնը համեմատաբար աւելի մեղմ էր, ու բացատրւում էր տեղի կրթական վարիչների մեղմ ու բարեացակամ վերաբերմունքով, ուստի և Թեհրանի Համայնականը դրեց գաւառների մարմիններին, որ օգտուելով տեղական կրթական վարիչների անձնական բարեացակամութիւնից, աշխատեն տեղի վրայ համախոհութեան գալ և առայժմ մի կերպ քարշ տալ դպրոցների գոյութիւնը, մինչև որ մի դուռ կը բացուէր։ Այս ձևով մի կերպ յարմարուեցին Քերմանշահի, Արաքի և Համադանի դպրոցները. Նրանց անունները չփոխուեցին, պետական ծրագիրը բռնեց դպրոցական դասացուցակները, իսկ այդ ցուցակներից դուրս. իբրև անգիր օրէնք, մնացին Հայոց լեզուն, պատմութիւնն ու կրօնը, որոնք դասաւանդւում էին անպաշտօն կերպով, յաճախ առանց դասագրքերի. այնպէս, որ պետական քննիչներ եկած պահուն որևէ փաստացի ակտ չգտնէր և պատճառ չգտնէր նոր խստութիւնների։

Պարսիկ ժողովուրդը ո՛չ միայն մասնակից չէր այդ խստութիւններին, այլև առիթէ-առիթ, մասնաւոր անձերի միջոցով, բարեացակամ վերաբերմունք ունէր և յաճախ փորձեր էին լինում մեղմելու սեղմումները։ Մի քանի գաւառական կրթական վարիչներ նոյն իսկ խորհուրդ էին տալիս իրենց հայ բարեկամներին անպաշտօն և թաքուն կերպով դասաւանդել իրենց լեզուն ու կրօնը և զգո՛յշ լինել, փաստեր չտալ քննիչ պաշտօնեաների ձեռքը։

Հայոց եկեղեցին. սակայն, սեղմումների ենթակայ չէր, կրօնական ծէսերն ու արարողութիւնները կատարւում էին ըստ առաջնոյն։

Իրերն այս վիճակն ունէին, երբ լուր ստացուեց, որ լուսաւորութեան վարիչն իր պաշտօնի ընթացքում երբ անցնում է Ղազվինի հայոց դպրոցի մօտով, զայրոյթով վար է բերել տալիս դպրոցի հայերէն ցուցանակը։ Այս դէպքը չարագուշակ

նախանշան համարուեց նոր դէպքերի. բոլոր հայերն ազդուած և մտահոգ էին. Պազվլինի գիւղացին այլեւս փակուած էր նկատում. սպասում էին, որ միւս քաղաքներում եւս նմանօրինակ դէպքեր կը կրկնուեն. ուստի և անմիջապէս ազգային մարմինները խորհրդակցութեան նստեցին։ Այս խորհրդակցութիւնները որեւէ գործնական արդիւնք չունեցան. դարձեալ որոշեցին լինել զգոյշ, աչալուրջ և դպրոցներում գործադրելով պետական կրթական ծրագիրը՝ տեղիք չտալ իշխանութեան նոր խստութիւնների։

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՑՈՒՆՔ

—Երեխանե՛ր, երբե՛ք չմոռանաք ձեր մայրենի լեզուն. Նրանով է որ դուք առաջին անգամ օրօր էք լսել, նա է որ ձեր աչքերը բացել է աշխարհի վրայ. Նրանով է որ դուք խօսում էք ձեր մայրիկների, ձեր ծնողների ու հարազատների հետ. Նրա միջոցով է որ դուք ծանօթանում էք հայ ժողովրդի պատմութեան. մեր դէմ շատ հալածանքներ են եղել՝ մեր լեզուն արգիլելու համար, բայց մեր պապերն ու մայրերը ո՛չ միայն չեն մոռացել իրենց լեզուն, այլեւ աշխատել են ամեն կերպ կենդանի պահել այն և փոխանցել յաջորդ սերունդներին։ Մենք էլ նոյնը պիտի անենք։

Զանգը հնչեց. վարժապետ Նիկոլը վերջացրեց իր խօսքը և պատուիրեց աշակերտներին հանգարտ դուրս ելնել դասարանից, չաղմկել և պարկեշտ պահել իրենց, քանի որ կրթական վարիչն այդ օրը պիտի այցելէր դպրոց։

Դպրոցի բակում արտակարգ վիճակ էր տիրում. նախ նկատելի էր, որ այդ օրը ուսուցիչներն հագել էին իրենց նոր հագուստները, ապա, հակառակ սովորութեան, բոլորը դասամիջոցին բակումն էին և կանգնած խօսակցում էին սովորականից աւելի ցածր ձայնով և մտահոգ դէմքերով. վերակացուներն աշխատում էին երեխաներին հանգիստ վիճակում պահել և թոյլ չտալ որ աղմկեն կամ վազեն։ Դպրոցի ծառաները նոյն իսկ սովորականից աւելի մաքուր էին հագնուած. բակը մաքուր աւլած էր և ջրած։

—Ամեն ինչ նախատեսնուած է՝ պատշաճ ընդունելութեան համար,—ասում էր ուսուցիչ Արմենակը,—յատուկ սենեակ է կահաւորուած փափուկ բազկաթոռներով, կոր սեղանով և շքեղ սփռոցով, վարագոյրներ են կախուած, վարիչը պիտի հիւրասիրուի

տուրճով և խմորեղենով, սակայն պետք մոռացել իրեն՝ սուրճն ամենքից յետոյ։ Մաթևոս խանը քաջածանոթ է պարսկական հյուրընկալութեան ձևերին. քաղաքավար խօսակցութեան եղանակին, ուստի պետք վստահ լինել, որ Վարիչը գոհ ու տպաւորւած պետք հեռանայ, ու… թերևս շաբաթական ասած ժամ հայոց լեզուի և կրօնի դասերի մասին էլ մեզի վրայ կարգադրութիւն անի։ Մաթևոս խանը իրեն մօտ է պահել պարսիկ ուսուցիչներին, որպեսզի Վարիչի աչքին առաջին հերթին հայերը չընկնեն, որ չգցի իր սրամտութեան վրայ… Նա քաղաքագէտ է, այն է պատճառը որ մեզ կարգադրեց բակում մնալ և հսկել աշակերտների կարգապահ ընթացքի վրայ։

Այս խօսակցութեան վրայ էին, երբ ծառաներից մէկը շնչասպառ ներս մտաւ բակը և գնաց դէպի աստիճանները, տեսչանոց բարձրանալու համար.

—Հը՛, ի՞նչ կայ, Մարտիրո՛ս,—հարցրեց ուսուցիչներից մէկը։

—Պարո՛ն, ասլխի օթօլը երևաց խիաբանի էն գլուխը…

—Դէ գնա՛ շուտ յայտնիր պ. տեսչին,—խուճապահար կարգադրեց ուսուցիչը ծառային և ապա դառնալով դէպի իր պաշտօնակիցները,—պարոններ, շուտ շտա՞պ և երեխաներին շարք կանգնեցնել…

—Պէտք է հայտնել տեսչին,—ասաց ուսուցիչներից մի ուրիշը և ուղղւեց դէպի երկրորդ յարկը։

Մինչդեռ դպրոցի ներսում փութկոտ կարգադրութիւններով էին զբաղւած, դուրսը, փողոցում, դպրոցի դռան առաջ տեղի էր ունենում հետևեալը։

Վարիչի ինքնաշարժը կանգնած էր դպրոցի դռնից մի քանի քայլ վրայ, ներսից Վարիչը վրդովւած կարգադրութիւններ էր անում ինքնաշարժի առաջ պատւի կեցած երկու ոստիկաններին.

—Անմիջապէս վար բերէ՛ք այդ դպրոցի ցուցանակը, առանց մի վայրկեան ուշանալու… հասկացա՞ք։

—Այո՛, ղո՛րբան, խիկը՛յն,—ասացին ոստիկանները ուղիղ ձգւելով։

—Յետոյ, ես հիմա կը կարգադրեմ մի քանի ոստիկաններ ևս ուղարկել ձեզ օգնութեան. նրանց հետ կը դատարկէք դըպ-

ինչը բոլոր աշակերտներից և ուսուցիչներից, դուրս կանէք բա-յորին, և դռների մօտ պահակ կը կանգնէք, ցնոր կարգադրու-թիւն: Հասկացա՞ք:

—Այո՛, ղօրբան,—ասացին ոստիկանները պատուի կեցած և է՛լ աւելի ուսերը վեր ձգելով:

Ապա վարիչը կարգադրեց շարժավարին յետ դառնալ:

Այդ իսկ պահուն, երբ վարիչի ինքնաշարժը յետ էր դառ-նում՝ մեկնելու, դպրոցի դռանը երևաց հեռապահ Մատթէոս խանը. տեսնելով որ ինքնաշարժը պտոյտ է գործում՝ նա առաջին պահ կարծեց թէ դպրոցի դուռն են փնտռում, սակայն անմիջապէս ուշքի եկաւ՝ երբ ինքնաշարժը արագ պտոյտով սլացաւ փողոցն ի վեր: Այդ պահուն նա նկատեց երկու ոստիկաններին, որոնք սանդուխք դրած՝ մէկը վեր էր բարձրանում դպրոցի ցուցանակի ուղղութեամբ, իսկ միւսը ներքեւում կանգնած՝ սանդուխքն էր բռնել...

—Պարոննե՛ր,—ասաց Մատթէոս խանը ոստիկաններին դիմե-լով,—այդ ի՞նչ գործի վրայ էք...

—Այ՛ս գործի վրայ որ տեսնում ես, պարո՛ն,—ասաց սան-դուխքի վրայ գտնուող ոստիկանը՝ ցուցանակը վար առնելով,—վարիչի հրամանն է...

Մատթէոս խանն այլայլեց և շփոթուած դիմեց դպրոցի բակը. Նրան անմիջապէս շրջապատեցին բակում գտնուող ուսու-ցիչները, որոնք հսկում էին աշակերտների շարքերի վրայ:

—Պարոննե՛ր, վարիչը յետ դարձաւ՝ մեզ չարժանացնելով իր այցելութեան. այժմ էլ երկու ոստիկաններ ցած են բերում մեր դպրոցի ցուցանակը,—այս խօսքերի վրայ նրա ձայնը դողաց, ապա կարգադրեց,—զանգը տուէ՛ք և երեխաներին տարէք դասա-րան, խուսափեցէք որևէ արտայայտութիւն անելուց...

—Սա երրորդ անգամն է որ այդ պարոնը մեզ յոյս է ուղար-կում թէ գալու է դպրոց այցելութեան. մենք պատրաստւում ենք ինչպէս որ հարկն է նրան ընդունելու, այժմ էլ դպրոցի ցուցանակն է վար բերում... Դաշվինի դպրոցի օ՞րն է ընկնում նաև մեր դպրոցը,—վրդովուած ասաց ուսուցիչներից մէկը:

—Վարիչ է, պարոննե՛ր, հրամայեց՝ վերջացաւ. զգուշա-նանք, որ աւելի վատթար կարգադրութիւններ չհետևեն... այժմ դասարան տարէք երեխաներին:

Զանգը հնչեց. այս անգամ բոլորին թւաց՝ թէ զանգի ղօղանջները սովորական ուրախ ու առոյգ թրթիւնները չունէին. նրանք հնչում էին եկեղեցու այն զանգերի պէս, երբ մահւան թափօրն է ծայր առնում. Եւ մի դողդոջուն ձեւով զանգահարում էր։

Աշակերտ-ուհիներն էլ զգացին, որ մի ինչ որ արտակարգման պատահեց՝ տեսչին և ուսուցիչներին յուզումի մատնելով, ուստի նրանք ևս զգացւեցին և մի մեռելային լռութիւն տիրեց դպրոցի բակում. միայն զանգն էր, որ հնչում էր արտակարգօրէն երկար, եղերական ելեւէջներով, այժմ արդէն ահազանգի պէս։

Աշակերտների շարքերն ուղղւեցին դասարանները. երկու ուսուցիչների միջև՝ Արմենակի ու Վահրամի, նախքան դասարան մտնելը, հետեւեալ խօսակցութիւնն էր տեղի ունենում.

— Ասում է՝ աւելի վատթար կարգադրութիւններ կարող են հետեւել, սրանից էլ վատթար ի՞նչ կարող է լինել որ… — ասում էր Վահրամը։

— Կարո՛ղ է, լսիր քեզ մի անեկդոտ պատմեմ այդ առընչութեամբ, — ասաց Արմենակը. — Մի կին զոյգ երեխայ է ծնում, երկուսն իրար կպած էին. կինն սկսում է լաց լինել, գլուխը ծեծել թէ՝ «այս ի՞նչ դժբախտութիւն է, սրանից աւելի մեծ դժբախտութիւն չէր կարող լինել». ամուսինը նրան մխիթարում է ասելով՝ «Ա՛յ կին, սա դժբախտութիւն է, ճիշտ է, բայց աւելի մեծ դժբախտութիւններ կան և կարող էր մեզ այդպիսին պատահել»… Կինը վրդովւում է ամուսնու այս խօսքերից՝ «Ա՛յ մարդ, ասում է, սա ինքը ամենամեծ դժբախտութիւնն է, սրանից աւելին ի՞նչ կարող է լինել»։

Անցնում է մի քանի ամիս՝ իրար կպած երեխաներից մէկը մեռնում է… Ամուսինները շւարում են, ինչ անելնին չգիտեն. ինչպէս թաղեն մեռածին, երբ նրան կպած երկրորդ երեխան կենդանի է. իսկ երկուսին միասին թաղել չեն կարող. այստեղ ամուսինն ասում է իր կնոջը. «Կի՛ն, տեսա՞ր որ աւելի մեծ դժբախտութիւններ կան. դու գոհ չէիր առաջինից, այժմ այս երկրորդ դժբախտութիւնն աւելի վատթար է»։ — Այժմ մերն է, սիրելի Վահրամ. ճիշտ է ասում Մատթէոս խանը, որ աւելի վատթարը կարող է պատահել…

Տեսուչը յուզված՝ քայլում էր տեսչանոցում. Նրա վրայ չափազանց ծանր էր ազդել վարիչի վարմունքը, մանաւանդ որ դասընկերներ էին եղել միևնոյն դպրոցում, անձնապէս մօտ ծանօթներ էին. «Գոնէ բարեկամական ձևը պահէր. նա ինձ նուաստացրեց նախ՝ ոստիկանների, ապա պաշտօնակից ուսուցիչների մօտ, հասարակական մարմիններն էլ իրենց հերթին… բայց մենք անզգուշութիւն չարի՞նք արդեօք, որ դպրոցի ցուցանակը նախօրօք ինքներս չվերցրինք… Դալվինի օրինակը մի ազդարար էր այսօրուայ մեր դժբախտութեան. միւս կողմից էլ՝ սա մի քաղաքականութիւն է, որ սկսել են գործադրել և մենք չգիտենք թէ ուրիշ ինչեր կարող են հետևել այս կարգադրութեան: Վարիչը մեզ չարժանացրեց իր այցելութեան… Սա վատ նշան է. ուրեմն բարկացած է»…

Այս մտքերով էր տարուած նա, երբ դրսից, դպրոցի բակից լացի և աղաղակների ձայներ հասան ականջին. Նա համարեա դուրս վազեց, աստիճաններով իջնելիս լացի ու աղմուկի ձայներն աւելի որոշ դարձան. ինչ որ անախորժ բան էր տեղի ունենում դրսում. արդեօք ի՞նչ էր պատահել… Դռնից դուրս ելաւ բակ և ահա նրա աչքերի առջև հետևեալ տեսարանը պարզուեց: Բակում կային մի քանի ոստիկաններ, որոնք երեխաներին քշում էին դէպի դպրոցի դուռը. փոքրիկները՝ ոստիկանների տեսքից սարսափած, (երեխաներ կան, որոնց սարսափ է ազդում ոստիկան բառն անգամ) լալիս էին. ոմանք ճչում, գրքերն ու տետրակները թևի տակ՝ վազում, մէկի մատիտն էր վայր ընկնում, միւսի գրիչը. երրորդի գիրքն ու տետրակները. մի չքաւոր երեխայի մաշուած կօշիկ մի հատը ոտքերի տակ տրորւում էր… լաց ու աղմուկը ժխոր էին ստեղծել. գետին ընկած մի բացուած գրքի էջի վրայ երևում էր Ս. Մեսրոպի նկարը՝ «Տառերի գիւտը» վերնագրով. Ս. Մեսրոպի նկարը կոխոտում էին ու անցնում:

Տեսուչը մօտեցաւ առաջին պատահած ոստիկանին.

—Պարո՛ն, ես այս դպրոցի տեսուչն եմ, ձեզ հարց եմ տալիս թէ ի՞նչ է պատահել, ինչո՞ւ էք երեխաներին հալածում…

—Վարիչի հրամանն է, դպրոցը պիտի դատարկուի, —պատասխանեց ոստիկանը չոր և կոպիտ եղանակով, —դուք էլ դուրս եկէք, ասաց նա տեսչին:

—Ասացի որ ես տեսուչն եմ այս դպրոցի․ հրամանագիր ունի՞ք, ցոյց տուէք։

—Պարո՛ն, ժամանակ չունեմ քեզ բացատրութիւն տալու․ բոլորդ պիտի հեռանաք առանց այլեւայլի․ մենք մեր պարտականութիւնն ենք կատարում․—ասաց ոստիկանը եւ շարունակեց երեխաներին քշել դէպի դուռը, դպրոցից դուրս։

Երեխաների լացն ու աղմուկը քայլեց դէպի փողոց, ձգւեց մայթերով եւ փողոցում երթեւեկողների ուշադրութիւնը գրաւեց․ խանութպանները դուրս եկան եւ կանգնած խանութների դռան առաջ՝ հարց էին տալիս թէ ի՞նչ է պատահել, հայոց դպրոցում հրդե՞հ կայ արդեօք։

Մի հայ խանութպան կանգնեցրեց երկու փոքրիկ աշակերտուհիների, որոնք թեւանցուկ՝ հոնգուր-հոնգուր լալիս էին քայլելով․

—Աղջի՛կ, հո՛գիս, ի՞նչ ա պատահել․ ինչո՞ւ էք լաց ըլում․ ձե՛զ մատաղ, ուսումնարանը հօ, կրակ չի՞ ընկել…

—Ո՛չ… ասաց մէկը հեկեկալով,—ո՛չ… ասաց միւսը եւ աւելի դառնօրէն լաց եղան։

—Ի՞նչ ա պատահել, ախր ինչո՞ւ էք լաց ըլում, ինձ ասէք, մի՛ վախենաք, դուք ո՞ւմ երեխէքն էք…

—Աժանն՛երը… ասաց փոքրիկներից մէկը եւ սարսափած նայեց յետ, դէպի դպրոցը։

—Աժաններն հանեին ձե՞զ… Ե՛ս դրանց… մի՛ վախէք․ ի՞նչ ա որ վախում էք…

Աշակերտների նորանոր խմբեր յաջորդեցին լացող զոյգին․ մի փոքրիկ տղայ, հնամաշ հագուստներով, մէկ ոտքին կօշիկ, միւսը՝ բոբիկ, պատռած գուլպայով, արցունք խմելով ասաց․

—Աժանները թափւան դպրոց… մեզ քշեցին… փակում են… կօշիկս, ա՛խպէր, կօշիկս… ոտքս կոխ ուին՝ կօշիկս մնաց․ հայրիկս կը ծեծի…

—Մի՛ լար, ղո՛ւրբան, ես քեզ կօշիկ կառնեմ․ հիմա գնա՛ տուն, յետոյ կը գաս ես քեզ նոր կօշիկ կառնեմ… Ես դրանց… հօրդ տամ՝ էսօր մարդ չեն ծեծի․ էսօր երեխայ չեն ծեծի, գնա՛, ղո՛ւրբան,—ասաց խանութպան Մատթէոսը յուզւած եւ գրկեց հարեւանին։

—Բա է՛ս էլ ուսումնարան փակելու թահր ա… էս էլ զէն-

դէզանի (կեանք) ա... ես դրանց... մի մտիկ արա, ո՞նց են բեխէքը մշկում. ձեզ մատաղ... մի մտիկ արէք է՞... վա՜յ ես ձեր մարդ ատողի...

Լացող ու յուզուած երեխաների շարքը, խառնիխուռն, փոքրիկ խմբերով, ձգւել էր պողոտան ի վեր, անցորդները կանգ էին առնում հարցաքննում, կարճ ու կտրուկ պատասխան էին ստանում հեկեկացող մանուկներից, երեխաներից ոմանք նոյն իսկ հրաժարւում էին խօսել, պատասխան տալ և լալով շարունակում էին ճամբան։

Դպրոցի փակման և երեխաներին փողոց հանելու լուրը կայծակի արագութեամբ տարածւեց քաղաքում. այժմ արդէն ծնողների շարանը ձգւեց դէպի դպրոց, մեծ մասամբ մայրերի, որոնցից շատերը խոհանոցային հագուստով, ոմանք առանց գուլպայի, ոմանք՝ շերեփը մոռացմամբ ձեռքը բռնած, մազերը չսանրած, անայլն ազատ վիճակով դուրս էին վազել իրենց երեխաներին տէր կանգնելու համար. նրանք տարբեր ձևերով էին լսել դպրոցում պատահած աղէտի մասին. ոմանք ասել էին, թէ դպրոցում հրդեհ է ծագել, ոմանք՝ թէ երեխաներին ծեծել են, ոմանք էլ անորոշ պատասխաններ էին առել և ահա ծնողական սիրոյ զգացմունքը փոթորկւել էր, դուրս նետւել տներից և յորդել դպրոց տանող պողոտաները.

—Թող տեսնեմ ո՞վ ա իմ երեխաներիս ծեծել, իմ անուշ բալիկներիս,—ասում էր մազերը խռւխ մի կին՝ համարեա վազելով,—մինչև հիմա իմ երեխաներիս մազին դիպչող չի՛ եղել... թող մի տեսնեմ ո՞վ ա...

Ճամբին պատահած առաջին երեխաներին հարցրեց.

—Իմ Իգայիս և Պապոնիս տեսե՞լ էք, ո՞ւր են, ո՞վ ծեծեց նրանց, շա՞տ են ծեծել, քիթները արիւնե՞լ էր...

—Չենք տեսել,—եղաւ երեխաների պատասխանը. մայրը առբաց հեռուն, դարձեալ կանգնեց մի այլ խումբ երեխաների առաջ.

—Երեխե՛րք, Իգայիս, Պապոնիս ի՞նչ ա պատահել, դէ ասէ՛ք, տեսա՞ք նրանց. երկրորդ, երրորդ բաժանմունքումն են...

—Չտեսանք, ամենը գալիս են,—ասացին երեխաները։

Մայրը, աւելի անհամբեր ու յուզւած, համարեա վազեց. կօշիկը դուրս թռաւ ոտքից, նա շփոթւած մի պահ կանգնեց, ոտքը կօշկի մէջ խրեց ուժով և աւելի արագ վազեց. նա ան-

համբեր ու կրակւած հայեացքով անդադրին փնտռում էր երե-խաների մէջ իր զաւակներին. և ահա, վերջապէս, նա մի խումբ երեխաների մէջ նկատեց գանգրահեր, սև մազերով և կարմիր ժապաւէնով մի հարազատ, մի սիրելի գլուխ, մայրական սիրտը ճխաց և արցունքներ ցայտեցին աչքերից, հայեացքը պղտոր-ւեց, մի պահ տեսողութիւնից կորցրեց իր երեխային, բայց ա-հա՛ նա, իր Իդան գալիս էր՝ ընկերուհիների հետ թևանցուկ, կարմրած աչքերով. մայրը հասաւ, համարեա չոգեց, երկու ձեռներով խլեց երեխային ընկերուհիների միջից և բարձրացնե-լով սեղմեց կրծքին, սկսեց խենթի պէս համբոյրներ տեղալ աղջկայ դէմքին, գլխին, աչքերին, ապա մի պահ լուռ գգ-ւանքներից յետոյ հարցերի տարափ տեղաց.

—Իդա ջա՛ն, հո՛գիս, անուշի՛կս, ո՞վ ծեծեց քեզ, ո՞վ լա-ցացրեց, ո՞րտեղիդ խփեցին, քիթդ արիւնե՞ց, սա՛, ջա՛նիկս, ով խփեց քեզ…

—Չէ՛, չեն խփել… վախեցանք, աժաններից…

—Գուցէ խփել են դու չե՞ս յիշում, գուցէ վախենո՞ւմ ես ասել. սա՛, ջա՛նիկս. ես կը ծեծեմ քեզ խփողին, սա՛, մի՛ վախեցիր…

—Չէ՛, չեն խփել.—եղաւ երեխաների միահամուռ պատասխանը։

—Պապոնի՞ս, Պապոնի՞ս են ծեծել, ո՞ւր ա Պապոնս, իմ հոգիս…

—Պապոնը գալիս ա… ասացին մի քանի երեխաներ. Մայրը ցած դրեց Իդային և վազեց դէպի տղան։ Տղան լաց չէր լի-նում, միայն թէ դէմքը աժգոյն էր և մօրը տեսնելով՝ առաջ վազեց։

Մայրը նոյն ձևով, ինչպէս որ աղջկան, գրկեց ու հար-ցերի տարափ տեղաց.

—Չէ՛, մայրի՛կ, չեն ծեծել… բայց աղջիկները շատ վա-խեցան և սկսեցին լաց լինել, երբ աժանները տեսան։ Մեզ չեն ծեծել, ոչ մէկին չեն ծեծել։

Մայրը բռնեց երկու երեխաների ձեռքից և յետ դարձաւ եկած ճամբով.

—Ձեզ վրայ ձեռք բարձրացնողի ա՛չքը կը հանեմ. ես ձեզ ինչպէս եմ պահե՞լ որ տեղից վեր կենողը ձեզ ծեծի… Աստուած նրան ծեծի։

Բազմաթիւ ծնողներ իրենց երեխաների ձեռից բռնած

տուն էին դիմում, նրանք յուզուած ու տխուր տեսք ունէին. Նրանցից ոմանք ասում էին.

—Ուզում էին դպրոցը փակել՝ թող կանոնաւոր ձեւով անէին. մի՞թէ վայել է դուրս գալ կաթնակեր երեխաների դէմ և ժանդարմներով լցնել դպրոցի բակը... Սրանց ձեռից ի՞նչ կը գայ, եթէ կրակ էլ լինեն.

—Այս բոլորը կրթական վարիչի գործն է, սկի կառավարութիւնը տեղեակ էլ չի թէ ինչ է կատարւում. էդ վարիչը դոնմա է. յայտնի է, որ այդպիսիները աւելի թթու են լինում, —ասում էր մէկ ուրիշը.

—Է՛հ, էդ բոլորը էրուած սրտի խօսքեր են, թողէք. փաստն էն է, որ մեր դպրոցը փակւեց. հիմա պէտք է մտածենք մեր երեխաների կրթութեան մասին. բայց ի՞նչպէս անենք, որ իրենց մայրենի լեզուն չմոռանան, էս է կարեւորը.

Եւ անմեղ մանուկների արցունքը տեսնելով՝ ամենատարբեր հայերն անգամ վրդովմունք զգացին իրենց ներսում. «Սա մի անիմաստ քաղաքականութիւն է, որ վերջ չունի», — եզրակացնում էին նրանք, «Ցարն էլ փորձեց մեր դպրոցները փակել և մեզ ձուլել, բայց չյաջողեց. Հայը ապրեց, ռէժիմներն անցողական են, մնայունը ժողովուրդն ա»...

Այդ օրը չքաւոր երեխայի հայրը, համբալ Մուկուչը, երբ լսեց դպրոցի փակւելու լուրը, իր զաւակին չծեծեց՝ կօշիկը կորցնելու համար. «Ե՛ս քեզ համար նոր կօշիկ կառնեմ, ե՛ս, — ասաց, — պէտք չի որ ուրիշը քեզ համար կօշիկ առնի, մի՛ լար, զաւա՛կս»...

Բայց փոքրիկ, չքաւոր տղայի արցունքներն հոսում էին...

ԿՐԿԻՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—Լսեցի՞ր նորութիւնը, ասում էր Վահրամը Վաղրիկին, — դպրոցը փակելուց յետոյ, կրթական վարիչը բանտարկել է տալ իր տարիների դպրոցական ընկեր ու բարեկամ Մաթէոս խանին, մեր հայոց դպրոցի տեսչին. բանտարկուած են նաև Արմէն Հայկունին և երկու ուրիշներ, համայնական խորհրդից... Բոլորի սիրտը վախ է ընկել, խուսափում են բանտարկուածների մասին խօսել, նրանց հարազատներին հանդիպել, դպրոցի մասին մտածել... Դեռ լսեցի նաև, որ բանտարկուածների բնակարաններն էլ

խօսք խուզարկութեան են ենթարկել և թղթեր ու գրքեր գրաւել։ Եղ. գժբախտ Արմէնը, հերիք չէ որ անգործ է, հիմա էլ բանտարկութիւն… ի՞նչ պիտի անեն իր կինը, երեխան. տեսար ի՞նչ է արել եղ. աղան, որ հա՛ բռնում են. Վաղրիկ, չգնա՞նք կնոջը, Բրաբայրին մի տեսնենք և իմանանք բանն ինչո՞ւմն է։

—Արմէնը իր անձնական շահերի համար չէ բանտարկւում, այլ մեր ժողովրդի և մեր մշակոյթի համար. ժողովուրդը պէտք է գիտակցի այս և օգնութեան հասնի. բայց ո՞ւր է այդ գիտակցութիւնը. հէնց որ հարցը իրենց սեփական կաշուին է հասնում՝ սկսում են գժգոհել ու օգնութեան կանչել. բայց երբ ուրիշն է տուժում՝ լուռ են, անտարբեր և նոյն իսկ վերաբերմունք են ճչում, բանուորների գործը լրացներով։ Գնա՛նք տեսնենք Բրաբայրին. ես թոյլ չեմ տայ ինձ թերանալու ընկերական պարտականութիւններիս մէջ դէպի Արմէնը,—ասաց Վաղրիկը։

Նրանք ուղղուեցին Արմէնի բնակարանը։

Դպրոցի մօտով անցնելիս տեսան, որ ամեն մի դռան մօտ երկու ոստիկաններ էին կանգնած. մի մեռելային լռութիւն էր տիրում դպրոցի ներսը, այն դպրոցի, որի մօտով անցնելիս լսում էիր երեխաների ուրախ ճիչն ու աղմուկը, ծաղը, երգը, կանչն ու ծիծաղը իրար խառնուած. այժմ կարծես թաղման արարողութիւնից յետոյ մեռելատուն լինէր… Վաղրիկն ու Վահրամը մռայլուեցին, նրանք արագացրին իրենց քայլերը, որքան հնարաւոր է շուտ հեռանալու այդ տեսարանից։

—Ցղա՛յ, ես վարիչը ինչո՞ւ է սկսել այս անխնամ հալածանքը մեր լեզուի և մշակոյթի դէմ. մենք ի՞նչ վտանգ կարող ենք ներկայացնել էս հսկայ երկրում, ուր ընդամենը հարիւրքան հազար ենք մեր թւով. բացի այդ՝ այս երկրում հայութիւնը քաղաքական նպատակներ չի հետապնդում, իրենք լա՛ւ գիտեն այս մասին. միւս կողմից՝ հայութիւնը շինարար և երկիրը ծաղկեցնող տարր է. Իրանի Շահ Աբաս Մեծը հէնց այդ նպատակով հայութեան հոծ զանգուածներ քշեց ու բերաւ այս երկիրը, հովանաւորեց առևտուրը և կարճ միջոցում հայութիւնը, յանձինս Ն. Ջուղայի հռչակաւոր հայ խոջաների, հրաշքներ գործեց առևտրութեան և մշակոյթի մարզերում։ Այնուհետև բոլոր արքաների օրօք հայութիւնը գիտել է իբրև ընդունակ, շինարար և յառաջադէմ տարր և, որպէս այդպիսին,

ունեցել է մշակութային ինքնավար կեանք․ մէկ անգամ միայն քաղաքական դեր է կատարել այս երկրում՝ ա՛յն էլ սահմանադրական շարժումների ժամանակ, և իր արիւնն է տուել այս երկրին՝ յառաջադէմ կարգեր ունենալու համար,—ասում էր Վահրամը։

—Նրանք, որոնք ուզում են փոքրամասնութիւններին ձուլել, սխալ քաղաքականութիւն է որ վարում են․ քանի որ նման քաղաքականութիւնը յաճախ հակառակ երևոյթի մղիչ է հանդիսանում ակամայից․ այժմ դու կը տեսնես, որ ազգայնօրէն անտարբեր հայերն անգամ կը դառնան թունդ հայեր․ փոխանակ ձուլելու՝ կը շեշտուի նրանց ազգայնութիւնը․ Զուր չի ասում առածը՝ «Հալածել, նշանակում է տարածել»։ Բոլոր հայերը վշտացան ու դառնացան՝ իրենց դպրոցը փակուած տեսնելով․ Նըրանց մէջ հակակրանքի մի ալիք առաջացաւ դէպի փակողը։ Սխալ է նման քաղաքականութիւնը նաև այն տեսակէտից, որ մի կուլտուրական փոքրամասնութեան ձուլելու համար աւելի բարձր կուլտուրա պիտի ունենայ···—ասում էր Վազրիկը համոզուած շեշտով։

Այսպէս խօսելով նրանք հասան Արմէնի բնակարանի փողոցը։ Դեռևս հեռուից նկատեցին, որ երկու հոգի անծանօթներ, կասկածելի արտաքինով, քայլում էին՝ մէկը Արմէնի բնակարանի դռան առջև, միւսը՝ հանդիպակաց մայթի վրայ․

—Ասես բնակարանը հսկողութեան տակ է,—ասաց Վահրամը շփոթուած։

—Պարզ է, դու յետ դարձիր, ես կը գնամ ներս, մի պատրուակով,—ասաց Վազրիկը։

—Ես հասակն առած մարդ եմ, թող ես գնամ...

—Իսկ թէ Մատթէոս խանը քեզնից ջահէ՞լ է, որ բանտարկեցին,—յարեց Վազրիկը,—դու անցիր գնա՛ ես պէտք գնամ ներս։

Վահրամը անմիջապէս յետ դարձաւ, քայլում էր թեթևացած հոգով, կարծես գոհ էր, որ այսպէս եղաւ․ ինքը մինչև վերջին պահը ուզեց կատարել իր ընկերական պարտականութիւնը, այո՛, նոյն իսկ պնդեց, բայց Վազրիկն էր որ արգելք հանդիսացաւ։ Եւ նա սկսեց քթի տակ մրմռալ ժողովրդական հանրածանօթ երգը՝ «Աղջի՛, Հաւո՛մ, Հաւոմին տարել են, տարի ծերին մի շաբաթ պահել են»···

Վազրիկը շարունակեց ճամբան և հասնելով Արմէնի բնա-

կարանի դուռն, առանց այլեւայլի ներս մտաւ. դուռն մօտ կանգնած անծանօթը ոտքից գլուխ ուշադիր զննեց նրան և կարծես զարմացաւ, որ Վաղրիկը առանց իրեն կոչելու, առանց շփոթւելու ներս մտաւ։ Միւս մայթի վրայի անծանօթը հարցական հայեացքով նայեց իր ընկերոջը. սա գլուխը ներս մտցրեց դռնից և նայեց աստիճաններն ի վեր, բայց Վաղրիկն այլեւս անցել էր առաջին յարկը և բաղխում էր Արմէնի բնակարանի դուռը։

Դռան յետեւից լսեց Բլարայի զնգզնգուն ձայնը. «Ո՞վ է»...

—Ե՛ս եմ, Վաղրիկը, Բլա՛րա, բաց արէք դուռը։

Դուռը բացուեց։

—Վաղրիկ, դուք այստեղ...

—Այո՛, Բլա՛րա, ես բարեկամ եմ, խնդրում եմ ինձ ներս ընդունէք,—ասաց նա թեթև դողացող ձայնով։

—Ա՛հ, խնդրեմ... ասաց կինը շփոթւած և երկուսով սենեակ մտան։

Առաջին բանը, որ Վաղրիկը նկատեց, երեխայի մահճակալն էր. մի թափանցիկ քօղ ծածկում էր քնած մանկանը, որի դէմքն ուրւագծւում էր սեւ ճերմակ մշուշի միջից, որ աւելի էր գեղեցկացնում նրան։ Վաղրիկին թւաց, թէ քօղի տակ մի կանդրաճեր հրեշտակ է պառկած. նրա յարգանքն աւելցաւ դէպի Բլարան, մի տեսակ երկիւղածութիւն զգաց դէպի նրա մայրութիւնը. մի պահ կարկամեց, ուզեց խօսել՝ բայց բառ չկարողացաւ արտաբերել. դարձաւ դէպի Բլարան. սա կանգնած էր դէմքը շառագոյն, հայեացքը գետնին, ամօթխած։

—Շնորհաւորում եմ ձեր մայրութիւնը... հիանալի է... կարողացաւ ասել Վաղրիկը և նստեց բազկաթոռին։

Բլարայի դէմքի վրայով վարդագոյն ամպեր անցան. նրա մայրական հպարտութիւնը շոյւած էր. նա եւս իր հերթին յարգանք զգաց դէպի Վաղրիկը. դէպի նրա վեհանձնութիւնը, չէ՞ որ անցեալում մերժել էր Վաղրիկի առաջարկութիւնը. «Այսքան էլ վեհանձնութի՞ւն,—խորհում էր նա,—չէ՞ որ ամեն մերժւած մարդ ընդունակ չէ այսպիսի վեհանձնութեան»...

Յետոյ նա իրեն մեղաւոր զգաց. նրան թւաց թէ ինքը փոքրացաւ, այնքան փոքրացաւ, որ Վաղրիկը, համարեա կարճահասակ ու փոքր, իրեն թւաց մի հսկայ, մի յաղթական որ

ասում էր իր վարմունքով՝ «Դու ինձ չկարողացար գնահատել, Բելլա, ես վատ չեմ»...

Լռութիւնը խզեց դարձեալ Վաղրիկը.

—Քիչ առաջ լսեցի, որ Արմէնը բանտարկուած է. հպարտ կարող էք լինել, Բելլա, որ այդպիսի ամուսին ունէք. նա ո՛չ քրէական յանցանքի համար է բանտարկուած և ո՛չ էլ անձնական գծուծ հաշիւների. նա համոզմունքի տէր մարդ է, նուիրուած մեր լեզուին, մշակոյթին, մեր նոր սերնդին. ես գիտեմ նաև, որ նա ընկերային գաղափարներ էլ ունի, նա քուրմն է տառապող մարդկութեան։ Բելլա, Արմէնը մեծ մարդ է, թէև փոքր է նրա ասպարէզը, թէև մեր ժողովուրդը չգիտէ ի հարկին գնահատել իր անձնուէր, իր գաղափարական զաւակներին, բայց այս միշտ էլ, ամեն տեղ, այսպէս է եղել... շատ անգամ մահւանից յետոյ է, որ մարդիկ գնահատել են իբրև մեծութիւն։ Մեր առաքինութիւնը և գիտակցութեան բարձրութիւնը պիտի երեւայ մեծ մարդկանց կենդանութեան օրոք նրանց գնահատելու մէջ։ Ես այժմ զգում եմ, որ դուք չէք սխալել Արմէնին ընտրելով... դուք կարողացել էք գնահատել նրան, ըմբռնել նրա հոգու և մտքի վեհութիւնը։ Ես խոնարհւում եմ ձեր երկուսի առաջ, ես պատրաստ եմ ամեն զոհաբերութեան, խնդրում եմ ինձ ընդունել իբրև ձեր ընտանիքի բարեկամը, մի բարեկամ, որ ի պահանջել հարկին պիտի ընդունակ լինի իր անձը զոհելու... Ես ուզում եմ ձեզ նմանել, ձեր ճամբով, ձեր հետքերով քայլել. խնդրում եմ մի՛ մերժէք ինձ այդ շնորհը... այս խնդրում գոնէ մի՛ մերժէք ինձ...

Ձայնը խեղդուեց նրա կոկորդում, աչքերը խոնաւացան, ապա իր վրայ իշխելով՝ շարունակեց խուլ ձայնով.

—Ես գիտեմ որ դուք, Բելլա, տառապում էք Արմէնին համար, գուցէ և աւելի՝ քան նա. դուք բաժանում էք նրա կեանքի բոլոր դառնութիւնները, որոնք յատուկ են գաղափարական մարդուն, դուք նոյն իսկ չէք դիմում որևէ մէկի օգնութեան. դուք տառապում, տանջւում էք ինքներդ ձեր մէջ, ձեր ցաւը ատամներիդ տակ սեղմելով։ Ես ինձ մեղաւոր եմ զգում, որ ոմանք, միևնոյն ժողովրդի, մարդկութեան զաւակները, այսպէս տառապում են, իսկ ոմանք զերծ են տառապանքից, անհոգ և ուրախ կեանք են վարում և անհաղորդ են մարդկային

տանջանքներին… Ներեցէ՛ք ինձ, որ մինչև այժմ հեռու եմ մնացել ձեր տառապանքից, չեմ բաժանել այն ձեզ հետ միասին, բայց լաւ է ուշ, քան՝ երբէք…

Նա լռեց և մխատիկ հայեացքով նայում էր իր ծխախոտի ծուխին, որ բարակ շերտով ձգւում էր վեր, նազանքով օրօրւում և ապա պատառ-պատառ մասերի բաժանւում։

Բրայան շշմած էր. նա կուչ էր եկել բազմոցի անկիւնում, հայեացքը յատակին և մտածում էր։

«Արդեօք, այս աղան եկել է ինձ բարոյապէս օգնելո՞ւ թէ ջախջախելու. այսքա՞ն մեծ հոգի՝ այսպիսի փոքր մարմնի մէջ. այսքա՞ն յստակ գիտակցութիւն, այսպիսի ճշգրիտ ըմբռնում իրերի և գաղափարների. որոնց վրայ ես ու Արմէնն անգամ, մեր երկար զրոյցների և վերլուծումների մէջ. այսպիսի յըստակութեամբ չենք անդրադարձել։ Ի՞նչ հազւագիւտ մխիթարութիւն, ի՞նչ ովազիս՝ մեր հանրային կեանքի անապատում»…

Ես շնորհակալ եմ, իմ և Արմէնի փոխարէն, ձեր գնահատութեան և բարեկամական պատրաստակամութեան համար. բայց ինձ թւում է, որ դուք, Վազրիկ, մեզ գերագնահատում էք։ Մենք մեր պարտքն ենք կատարում մեր ժողովրդի հանդէպ, երբեմն՝ գիտակցաբար, երբեմն՝ ինքնաբեր մղումով. ինձ թըւում է թէ սա աւելի դաստիարակութեան հետ կապ ունի, այսպէս են դաստիարակել մեզ մեր ծնողները, առաջին հերթին, յետոյ դպրոցն ու հանրային որոշ միջավայրը։ Պիտի խոստովանեմ, որ մինչև այսօր ես ձեզ լաւ չեմ ճանաչել, չգիտէի որ դուք այդքան պարզորոշ գաղափարներ ունէք։ Ինչ վերաբերում է ձեր բարեկամութեան՝ մեր դուռը միշտ բաց է ձեր առաջ, միայն թէ այժմ մեր բնակարանը հսկողութեան տակ է, ես չեմ ցանկանայ որ դուք էլ վտանգուէք մեր պատճառով…

—Այդ արդէն չեղաւ. եթէ դուք ընդունում էք իմ բարեկամութիւնը. որի համար ես երախտապարտ եմ, ապա ուրեմն վտանգի հարցը դառնում է անիմաստ. բարեկամ մարդը ամեն տեսակի վտանգ աչքի առաջ պիտի ունենայ։ Այժմ խնդրում եմ ասէք, թէ Արմէնն ի՞նչ պայմաններում է գտնւում և ի՞նչ գիտէք նրա մասին,— առաց Վազրիկը գործնական մարդու շեշտով։

—Արմէնին ձերբակալեցին երէկ երեկոյեան. մեր բնակարանը խիստ խուզարկութեան ենթարկեցին. ամէն թուղթ, գիրք. նոյն

իսկ լրագիր, հաւաքեցին մի ճամբրուկի մէջ, կնքեցին, ստորագրել տուին ինձ, և տարան… Ես արդէն նրա առաջին բանտարկութեան ժամանակ ծանօթացել եմ բոլոր ճամբաներին, մի քիչ փորձառութիւն ձեռք բերել, ուստի և հէնց երէկ երեկոյեան բանտ հասցրի նրա անկողինը և ուտելիք ու ծխախոտ. այժմ ինձ անհանգստացնում է այն պարագան, թէ արդեօք Արմէնի թղթերի մէջ որևէ վտանգաւոր գրութիւն հօ՛ չկայ։ Ասեմ նաև, որ խուզարկող գաղանի պաշտօնեան սեղանի վրայից վերցրեց նաև միկրատը և դրեց թղթերի հետ, ճամբրուկի մէջ. չեմ կարողանում հասկանալ, թէ միկրատն ինչո՞ւ պէտք է վերցնէին…

—Այդ երևոյթի բացատրութիւնը թերևս Արմէնը կարողանայ տալ, երբ ազատուի. իսկ ինչ վերաբերում է թղթերին, դա մի քիչ մտահոգիչ է, իհարկէ, բայց չեմ կարծում թէ Արմէնը որևէ բան գրած լինի իշխանութեան դէմ, թերթերը խիստ գըրաքննութեան բովից են անցնում և ապա հրատարակւում. ուրեմն յղուած գրքին իմաստ չունէր, քանի որ չպիտի հրատարակւէր։ Յուշատետր ունի՞ Արմէնը։

—Ո՛չ։

—Է՛հ, ուրեմն մտահոգուելու պատճառ չունենք, քանի որ եթէ յուշատետր պահէր, գուցէ նրա մէջ արձանագրած լինէր օրուայ դէպքերը, դպրոցի փակուիլը և մի քանի տողով էլ քննադատած լինէր կրթական վարիչի բռնած ընթացքը. բայց այդ էլ չունի։ Այժմ խնդրում եմ համաձայնէք, որ այսօրւանից ես տանեմ Արմէնի ամենօրեայ ճաշը և ծխախոտը, քանի որ ձեր երեխայի պարագան կարող է ձեզ խանգարել…

—Այո՛, այդպիսի դէպքերում երեխայիս յանձնում եմ հարեւանուհուս՝ տիկին Մարիամի խնամքին, նա մի բարի և պատրաստակամ կին է, ես շատ երախտապարտ եմ նրան, բայց ի՞նչպէս կը լինի, որ դուք…

—Կը լինի՛, —վճռական ասաց Վաղրիկը, —այսօր ձեզ հետ միասին կը տանենք ճաշը, որպէսզի ես ծանօթանամ ճամբաներին, իսկ վաղուանից՝ դա իմ գործն է։ Քլա՛րա, խնդրում եմ անկեղծօրէն ինձ ասէք, եթէ դրամի կարիք…

—Ո՛չ. խնդրում եմ այդ մասին չխօսել, ես արդէն մեծ զիջում արի ճաշը տանելու խնդրում, —ընդհատեց Քլարան հապճեպով։

Նրանք պայմանաւորուեցին, որ եթէ գաղտնիներն հարցնէին

ՆՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

—Հերիք չէ որ դպրոցը փակեցին, ուսուցչին և միւսներին բանտարկեցին․ այժմ էլ մեզ են կանչում և անախորժ հարցաքննութիւնների ենթարկում, հասկանո՞ւմ ես թէ չէ․ մենք գործադրում էինք պետական դպրոցների ծրագիրը, հազիւ դպրոցը սկսել էր կարգի ընկնել այս դպրոցական տարեսկզբին․ Մելիքեանը ամէն ջանք գործ էր դնում կանոնաւոր և պարտաճանաչ կերպով տանելու կրթական գործը, այնպէս, որ կառավարութեան կողմից ոչինչ առարկութեան տեղ անգամ չմնար, բայց կրթական վարիչը նոր առիթներ փնտռեց, խառնութիւններ ձեռք առաւ, հասկանո՞ւմ ես թէ չէ․ արգիլել է հայոց լեզուով գրքեր, օրացոյցներ, նոյն իսկ մահազդներ տպելը, արգիլել է նաև Ն․ Ջուղայի կրօնական օրացոյցը, որ ամէն տարի Վանքը հրատարակում էր․ երևում է որ վարիչի նպատակն է հայ փոքրամասնութիւնը ձուլել, էլ չի մտածում որ հայը հազարաւոր տարիներ ապրել է իբրև հայ և պիտի շարունակի ապրել. մեզ ձուլելը հեշտ բան չի… հասկանո՞ւմ ես թէ չէ։

—Լսե՞լ ես, բժիշկ, որ այսօրուանից կարգադրուել է բոլոր հիմնարկութիւններին, առևտրական տներին, խանութներին և բոլորին առհասարակ, որ անմիջապէս փոխեն իրենց ցուցանակները, ջնջեն որևէ օտար լեզուով գրութիւն և բոլոր ցուցանակներն ու բլանկները գրեն միմիայն պարսկերէնով․ իշխանութիւնն արդէն սկսել է ցուցանակները ցած բերել, պաշտօնեաները մտնում են խանութները և ինչ որ օտար լեզուով ռէկլամ կամ յայտարարութիւն կայ՝ գրաւում և արգիլում են։

—Այո՛, այո՛, ինձ էլ իմաց տուին, որ իմ բժշկական ցուցանակս պոկեմ և նորը գրել տամ՝ միմիայն պարսկերէնով, հասկանո՞ւմ ես թէ չէ,—վրայ բերեց բժիշկ Վաթօն,—Ներսէ՛ս, ի՞նչ ես կարծում, այս բոլորը միայն մե՞ր դէմ է ուղղուած…

—Ո՛չ, իմ կարծիքով՝ հէնց այս ցուցանակների փոփոխութեան փաստը ցոյց է տալիս․ որ միայն հայերին ի նկատի չունի այս քաղաքականութիւնը․ այլ առհասարակ բոլոր օտարներին․ արգիլւում են ո՛չ միայն հայերէն, այլև ֆրանսերէն, անգլերէն և ռուսերէն ցուցանակները․ ուրեմն սա միայն հայերի դէմ չէ ուղղուած։ Պետ խօսում է, որ փորձ են արել իրենց դպրոցնե-

բում հանրահաշւի և երկրաչափութեան խնդիրներէն տարազները (ֆորմուլ) վերածել պարսկերէնի. սա, ի հարկէ, անհեթեթութիւն է, — ասաց Համայնականի փոխ-նախագահ և գանձապահ Ներսէսը.

— Գիտէ՞ք որ ամերիկեան քոլէջին նոյն իսկ պահանջներ են գրւած կրթական վարիչի կողմից, — հարցրեց Համայնականի քարտուղար Այբբիկը.

— Ո՛չ, ի՞նչ պահանջ, — հարցրին միւսները միաբերան.

— Զարդանը, որ այդ դպրոցի քառասուն տարիների աւանդն է և նոյն այս կրթական վարիչի ուսուցիչն է եղել, պարսիկ մտաւորականների մի զգալի մասը նրա դպրոցում է սովորել. այդ նոյն Զարդանը այսօր մատնւած է նեղ կացութեան. կանգնած է դպրոցը փակելու վտանգի առաջ. ամերիկեան միսիոնարութիւնը իր կեանքում այսպիսի խստութեան չէր հանդիպել. նոյն իսկ ասում են, որ Զարդանը պիտի հեռանայ, գնայ Ամերիկա.

Այբբիկ, հաստա՞տ լուր է դա, որ ասում ես, — հարցրեց բժ. Վաթոն յուզւած.

— Այո՛, ես լսեցի ամերիկեան քոլէջի ուսուցիչներից.

— Տեսէ՛ք, ամերիկեան հովանու տակ գտնւող քոլէջի նման մի դպրոց որ փակւում են, մեր դպրոցը հո՛ կը փակեն ու կը փակեն. այս բոլորից յետոյ՝ ես յոյս չունեմ որ մեր դպրոցը բացւի, հասկանո՞ւմ էք թէ չէ. պէտք է մտածենք մեր երեխաներին մի որևէ պետական դպրոց ուղարկելու մասին, ուրիշ ճար չկայ. Հարաւային Իրանահայութեան Մեջլիսի պատգամաւոր Զ. Բուդաղեանի բոլոր դիմումները ու ջանքերը, մեր դպրոցը վերաբանալու ուղղութեամբ, ապարդիւն անցան...

— Լսեցի որ կանայք մի միութիւն են կազմել՝ «Զարթօնք» անունով. նպատակ ունեն հայ երեխաներին հայերէն սովորեցնել գաղտնի պայմաններում. արդէն դրամ են հանգանակում վառահեյի մարդկանց շրջանակում, — ասաց Ներսէսը.

— Հա՛, ես տեղեակ եմ այդ բանին, գովելի աշխատանք է որին ձեռնարկել են մեր տիկինները, բայց այդ դասընթացներին մեր հասարակութեան երեխաների քանի՞ տոկոսը կարող է յաճախել. հազարաւոր երեխաներ են դուրս մնացել, որոնք մի զգալի մասը շուտ կը մոռանայ մայրենի լեզուից, հասկանո՞ւմ ես թէ չէ...

— Ճիշտ էք ասում, բժիշկ, բայց ծնողների էլ պարտականութիւնն այն է, որ գրագէտները հէնց իրենք պարապեն իրենց

երեխաների հետ, ուրիշները կան, որոնք ի վիճակի են ուսուցիչ վարձել՝ իրենց երեխաների հետ մասնաւոր դասեր պարապելու համար, իսկ նրանք, որոնք ո՛չ մէկն ունեն և ո՛չ էլ միւսը, իրենց երեխաներին ուղարկեն «Զարթօնք»ի դասերին. այսպէս մի կերպ քարշ պիտի գան, մինչև որ այս քաղաքականութիւնը փոխուի,—ասաց Ալբրիկը։

—Ի հարկէ քարշ կը գան, բայց գիտէք նաև մեր հատուրակութեան. քանի վէրքը թարմ է՝ կը վրդովուի, կը յուզուի, բայց երբ մի փոքր անցնի՝ անտարբերութիւնն ու անփութութիւնը կիշխի, հասկանո՞ւմ ես թէ չէ. դրանք արմատական միջոցներ չեն, արմատականը մեր դպրոցների վերաբացումը կը լինի.—ասաց բժ. Վաթօն։

—Բժիշկ, ի՞նչ նոր լուր մեր բանտարկեալներից,—հարցրեց Ներսէսը։

—Մերոնց մեղադրում են, որ իբր թէ այս անգամ էլ պարսկերէն թերթից բաներ են կարդացած և մի անանուն նամակ կազմուած նրա հասցէին, հասկանո՞ւմ ես թէ չէ,—այս վերջին բաները նա արտասանեց յատուկ շեշտով և խորհրդաւորութեամբ,—աւելի կասկածում են Մելիքեանի վրայ, որովհետև պարսկագէտը նա է. ասում են որ նրա թերթերի մէջ գտել են կարդացած յայտարարութիւններ, հասկանո՞ւմ ես թէ չէ. բայց այդ մեղադրանքը անհիմն է, Մելիքեանը կարիք չունէր անանուն նամակ կազմելու, քանի որ ինքը տեսուչ էր, դպրոցն արդէն բացուած էր, հասկանո՞ւմ ես թէ չէ...

—Այդ բոլորը կրթական վարիչի գործերն են,—ընդհատեց Ալբրիկը,—ասում են, որ դա քինոտ մարդ է և չի հանդուրժում առհասարակ որևէ մէկին, որ ծանօթ է իր անցեալին. նա չարանում է ամեն անգամ, երբ ասում են թէ Մելիքեանն էլ վարիչին հաւասար կրթութիւն ունի։

—Ներսէս,—դարձաւ բժիշկը գանձապահին,—գանձարկղում փող ունե՞նք, մի քիչ դրամ ուղարկենք Մելիքեանի ընտանիքին։

—Ո՞րտեղից, բժիշկ...—Թաշակները դեռ չէինք սկսել գանձել, որ դպրոցը փակեցին. գանձարկղում ընդամենը մի քանի թուման դրամ կայ.

—Հապա ինչպէս անենք, մարդը նստած է բանտում, ընտանիքը կարիքի մէջ է...

— Կարելի է եկեղեցուց պարտք վերցնել մի հարիւր թու-ման. տանք անուշի ընտանիքին, յետոյ մենք կաշխատենք այդ պարտքը վճարել,— ասաց Ներսէսը:

— Հա՛, էդ լաւ ասացիր. հէնց էդպէս էլ արա, Ներսէս,— ասաց բժիշկը թեթեւացած, որ այդ հոգսից ազատուեց:

— Ե՞րբ պիտի արձակեն բանտարկեալներին, ի՞նչ միտք ունի նրանց պահելը,— հարցրեց Ալբրիկը:

— Միւսներին կարծում եմ շուտով կազատեն, բայց կասկա-ծում եմ թէ անուշին այդպէս շուտ բաց թողնեն. նրա մասին այլ բաներ էլ են մռմռում, բայց պարզ չի լինում հասկանալ, կարծես քաղաքական բնոյթ են տալիս, իբր թէ… անբարեյոյս մարդկանց հետ ծանօթութիւն է ունեցել, հասկանո՞ւմ ես թէ չէ… այսպիսի բաներ,— ծամծմեց բժիշկը:

— Ինձ թւում է,— ասաց Ներսէսը,— նման կասկածներ են յայտնում, որպէսզի երկար պահեն այդ խեղճ մարդուն. պար-զապէս մերոնց բանտարկեցին նրա համար, որ մեր հասարակու-թիւնը վախենայ և չբողոքի դպրոցի փակման համար. անուշին ուզում են պահել, որ հետագայում էլ բողոք չլինի. ահա՛ խնդրի էութիւնը, թէ չէ «անանուն նամակ է գրել, կասկածելի մարդ-կանց հետ ծանօթութիւն է ունեցել» ֆրան-ֆասոն՝ սրանք բոլորը վարիչի սարքած էնտրիգներն են: Մելիքեանը լաւահամբաւ քա-ղաքացի է եղել. բազմամեայ պետական պաշտօնեայ և երբէք իր կեանքում հակապետական կամ հակաօրինական քայլ չի առել: Ես չեմ կարող հաւատալ նրա հասցէին եղած մեղադրանքներին:

— Հիմա ի՞նչ է մեր անելիքը. համայնական խորհուրդ կա-րո՞ղ ենք գումարել, դպրոցի մասին կարո՞ղ ենք խորհրդակցել,— հարցրեց Ալբրիկը:

— Քանի որ մերոնք բանտումն են և կրթական վարիչը դեռ չի հանդարտել, մենք ո՛չ մի ժողով և խորհրդակցութիւն չենք կարող անել, թէ չէ՝ բոլորին էլ բանտը կը դնեն, հասկանո՞ւմ ես թէ չէ… մենք միայն կարող ենք այսպէս, դիւանի խոր-հրդակցութիւն ունենալ և ուրիշ ոչինչ, մինչև որ տեսնենք թէ ինչ է լինում: Մենք միշտ աչքի առաջ պիտի ունենանք որոշ դէպքեր, յիշո՞ւմ էք ինչպէս պատժեցին բազմութեանը… Մենք որևէ ըմբոստութեան տրամադրութիւն չունենք, և զգոյշ

պիտի լինենք, որ պրովոկացիայի չենթարկուենք, հասկանո՞ւմ էք թէ չէ…—ասաց բժիշկը ցածր ձայնով։

—Ի հարկէ, ի հարկէ,—յարեցին Ներսէսն ու Ալբերիկը և խորհրդակցութիւնը փակուեց։

ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ

—Ամէն անգամ, երբ հայ ժողովուրդը վտանգուել է, նա ապաւինել է իր եկեղեցուն. ու, դարերի ընթացքում, արդէն դարձել է մի բնազդ. և մի՛ զարմացէք, որ այսօր մեր եկեղեցին լեփ-լեցուն է բազմութեամբ. մի-երկու տարի առաջ, յիշո՞ւմ էք, բացի Զատկից և Ջրօրհնէքից, միւս տօներին և կամ կիրակիներին քանի՞ հոգի եկեղեցի կը գար. մի քանի ծեր մարդիկ ու կանայք՝ և ուրիշ ոչ ոք. եկեղեցին և քահանաները դարձել էին արհամարհանքի և մոռացութեան առարկայ. մեր քահանաներն էլ՝ գիտէք է՛լի, ղի քո է կարողութիւն… Ցնուերները էն ուխտարանն էլ ճիշտ կարդալ չգիտեն. ի՞նչ եղաւ, ուրեմն. կարծում էք թէ այս երկու տարուայ մէջ հրա՞շք կատարուեց, ժողովուրդը կրօնամոլ քրիստոնեա՞յ դարձաւ. ո՛չ. բայց նրա բնազդը, վտանգի պահուն, նրան մղում է մի պաշտպան գտնելու, մէկին ապաւինելու և դա՝ մեր եկեղեցին է, որ դարեր շարունակ այդ դերն է կատարել՝ մեր ժողովրդի հոգեկան ու ֆիզիքական փրկելու համար։ Այժմ, երբ մեր դպրոցը փակուել է, ժողովուրդը բնազդաբար դիմում է դէպի իր եկեղեցին. նա կորցրել է իր առաջաւոր դէմքը և ապաւինել իր հնադարեան միջնորդին,—ասում էր մի կիրակի օր եկեղեցու բակում իր շուրջ խմբուած մարդկանց լրագրող Ամբունին։

—Իսկապէս. հէնց անցեալ տարի, ես յիշում եմ, եկեղեցում ամայութիւն էր տիրում. քահանաները գանգատում էին, որ եկեղեցի յաճախող չկայ, իրենց եկամուտը նուազ է և չեն կարողանում կառավարուել. իսկ հիմա նկատում եմ, որ եռանդի են եկել, չաղացել են անիրաւները, ինչքան որ իրենց գրպանն է չաղանում՝ այնքան էլ իրենք։ Ժողովուրդը մոմ է որ վառում է, աջհամբոյր է որ տալիս է, հանգուցեալների առթիւ նուէրները օրէց օր շատանում են, եկեղեցին փոքր է գալիս մեր հասարակութեան. բայց ափսոս որ մեր քահանաները թերուս են, թէ չէ դպրոցի

փակուած ժամանակ նրանք կարող էին հսկայ դեր կատարել, կրօն-ուսուցման անուան տակ հայոց լեզւի և պատմութեան դասեր կարող էին տալ և մեր ներկայ մատաղ սերունդը զուրկ չէր մնայ մայրենի լեզւից. —ասաց գիւղատնտես Մակարեանը.

—Խնդիրը նրանումն է, որ մեր քահանաները իրենց մտաւորով յիսուն տարով յետ են մեր հասարակութիւնից. երբ մի հայեացք էք նետում մեր հասարակութեան մտաւոր մակարդակի վրայ, տեսնում էք որ մի զգալի տոկոսը միջնակարգ կամ թերի միջնակարգ կրթութիւն ունի, կան նաև բաւականաչափ համալսարանականներ՝ բժիշկներ, ճարտարապետներ, իրաւաբաններ, լրագրողներ ու գրիչ շարժողներ. բացի այդ՝ մեր հասարակութեան մեծ տոկոսը տարրական կրթութիւն անպայման ունի. մէկ խօսքով՝ անգրագէտների թիւը խիստ փոքր է. իսկ մեր քահանաները, հազւադէպ բացառութեամբ, տեղ են բռնում տարրական կրթութեան և անգրագէտների արանքում... Այժմ ձեզ եմ հարցնում, պարոննե՛ր, դուք կարողանու՞մ էք հանգիստ քիղերով լսել մեր քահանաների քարոզը. որևէ ուսանելի բան կա՞յ այդ քարոզների մէջ մեր մտաւորական հասարակութեան համար. իհարկէ որ ո՛չ. մեր կղերից՝ քահանայական պաշտօնն այնքան արհամարհելի է դարձել, որ այժմ քիչ թէ շատ կրթուած մարդը ո՛չ մի գնով չի ցանկանում քահանայ ձեռնադրուել. այժմ քահանայ են ձեռնադրւում մեծ մասամբ կեանքից վրիպած, կեանքում յաջողութիւն չունեցած կիսագրագէտ մարդիկ, որոնք ապաստանում են եկեղեցիները՝ ապրուստ ապահովելու մտահոգութեամբ և այդպիսիները հոգևորականի պարարտ հող ունեն իրենց մէջ՝ լինելու ագահ, դրփող, կատէր ու նիւթամոլ. ճիշտ է բնորոշել մեր ժողովուրդը՝ «Տէր ու ձէր՝ տէրտէրի փոր», —ասաց Ամրունին քամահրանքով.

—Ի՞նչ էք կարծում. ինչպէս կարելի է բժշկել այդ վէրքը, պ. Ամրունի, —հարցրեց երիտասարդ վարժապետը անհամբեր սպասղութեամբ.

—Դժբախտաբար մեր արդի հոգևորականները տեղ չեն թողել, որպէսզի հնարաւոր լինէր բժշկել այդ վէրքը. նրանք այնքան են նսեմացրել քահանայութեան հեղինակութիւնն ու վարկը. որ այժմ, ինչպէս քիչ առաջ ասացի, ո՛չ մի մտաւորական չի կամենում քահանայ ձեռնադրուել. բացի այդ՝ մեր հասարակու-

թիւնն էր․ որքան բարձրանում է իր մտաւոր մակարդակը, այնքան հեռանում է կրօնից ու եկեղեցուց․ մի երրորդ կողմից՝ մեր ժողովրդի գլխին պայթած ամենածանր աղէտից՝ 1915-ի Ապրիլեան եղեռնից յետոյ՝ կարծէք նա ըմբոստացաւ նոյն իսկ Աստուծոյ դէմ, դարձաւ թերահաւատ։ Այժմ եկեղեցու շուրջ այսպէս խմբւելը մեր մշակոյթի սիրուն է աւելի՝ քան կրօնի․ վաղը, երբ մեր դպրոցները բացւեն, մեր ժողովուրդը դարձեալ կը դատարկի եկեղեցին և կը խմբւի իր դպրոցի շուրջ,—եզրափակեց Ամբունին։

—Ինչպէս որ մեր քահանաները չեն կարող մեզ բաւարարել, հոգևոր սնունդ մատակարարել,—ասաց Մակարեանը,—ես յիշում եմ տէրտէրի մի քարոզ, որ լսեցի տարիներ առաջ մի հարսանեկան հանդէսում․ քահանան ուզում էր հանդիսականներին բացատրել «կողակից» բառի իմաստը․ և բացատրեց այսպէս․ «Սիրելի ժողովուրդ՛ը... գիտա՞ք Աստուած ինչ թաւուր ա ստեղծի Եւայի՞ն... Աստուած ձեռը բարանդ ա արի՝ Ադամի կող—ղաբուրղէն քաշել դուրս ա հանի... Էդ խի՞ Աստուած Ադամի ոտից եա քթալից չի հանի ոսկրը, խի՞ կողից ա հանի... Էնդուր համա, որ իրան կողակից անի, որ Եւան՛ը Ադամի կողին պառկացնի»...

Մակարեանի այս պատմութիւնը զւարթ ծիծաղ պատճառեց ունկնդիրներին և նրանցից ամէն մէկը սկսեց մի-մի անեկդոտ պատմել հոգևորականների կեանքից, ակնարկելով այն հոգևորականին, որի կենցաղը յարմարւում էր աւելի անեկդոտին։

—Ես բախտ եմ ունեցել շրջելու հայկական շատ գաղութներ․ ամէն տեղ, բնականաբար, եկեղեցի ունենք, որոշ վայրերում՝ յարմար կառոյցով, որոշ տեղերում էլ՝ մի սովորական սրահ՝ եկեղեցու վերածւած։ Բայց շքեղ են եղել եկեղեցիները թէ հասարակ՝ ամենուրեք նկատել եմ մեր հոգևոր դասի ողբալի աղքատութիւնը, հազւագիւտ բացառութիւններով․ բացի այդ, եթէ գիտել էք՝ մեր եկեղեցիների շուրջ ամենուրեք խմբւած են իւրայատուկ տիպեր, տարօրինակութիւններ՝ յանձինս տիրացուների և ժամկոչների․ կարծէք թէ մեր եկեղեցիները հոգեկան հիւանդների մի-մի ապաստարաններ են․ նորմալ մարդիկ խուսափում են մտնել պաշտօնի․ ահա՛ դիտեցէք բակի այն անկիւնը,—ասաց Ամբունին իր խօսակիցներին բակի ծայրը ցոյց տալով,—տեսէք այն մեր «հռչակաւոր» տիրացուին, որ խօսում է միւս երկու

տիրացուների և ժամկոչի հետ. մի՞թէ այդ շարժումները նոր-մալ են. նայեցէք միւսների հայեացքներին, կարծէք Լաֆոն-տէնի առակների մէջ նկարագրուած կենդանիները լինեն՝ Բեն-ժամէնի վրձինով նկարուած: Ժամասացութիւնը վերջացել է թէ չէ՞ դրանք տաք վէճի են բռնուել եկեղեցու պատի մօտ և Աստծուն ուզում են զարմանք պատճառել՝ իր իսկ ստեղծագործութիւնը ցուցադրելով յանձինս իրենց այլակերպութեան:

Խօսակիցները հետաքրքրուած՝ այն կողմ նայեցին.

—Եկէք կամաց քայլերով նրանց մօտենանք, այնպէս, որ չիմանան թէ յատկապէս իրենց լսելու համար ենք գնում,— ասաց Մակարեանը, որ երգիծական շնորհք ունենալով՝ սիրում էր կատակաբանել:

Նրանք դանդաղ քայլերով հասան տիրացուներին և ժամ-կոչին, որոնց խօսակցութեան տաք պահուն, Ասենք նաև, որ տի-րացու Խէչօն յայտնի էր իբրև տոմարագէտ, գոնէ այդպէս էր ներկայացնում իրեն, և իր վէճերը մեծ մասամբ պտտում էին կա՛մ տոմարի և կամ «աշխարհի գաղտնիք»-ի շուրջ, որ, ըստ իրեն՝ «իր ձեռքի մէջն էր»…

Ամրունին, Մակարեանն ու Վարուժանը կանգ առան չորս-հինգ քայլի վրայ, իբր թէ զբօսնում են, սակայն իրենց ուշա-դրութիւնը դէպի տիրացուն էր և նրա երեք խօսակիցները:

Տիրացու Խէչօն այդ պահուն ուսերը վեր քաշելով և կըրծ-քին իջած ճերմակ, քառանկիւնի մօրուքը մերթ ընդ մերթ թևթևակի շփելով՝ ասում էր, ցուցամատը նրանց քթին ուղղելով.

—Տօ՛, Ղարաղանի՛ տաւար… Տօ՛, Բեղլուայի գոմէշ… Տօ՛, Փէրիու էշ… Տօ՛մարը. տօ՛մարը որ չլինի՝ հի՛ւ… (ձեռքի ափին փչելով) ո՛չ դպրոց, ո՛չ եկեղեցի, ո՛չ վարժապետ, ո՛չ վար-դապետ, ո՛չ կահանայ[1], ո՛չ տիրացու և ո՛չ ժամկոչ կլինի էս տա՛ւարի պէս. — և այս խօսքի վրայ նա ցուցամատը համարեա՛ դիպցրեց ժամկոչ Զաքօի մօղա, ահեկի քթին. ժամկոչի դէմ-քի ո՛չ մի մկանը, սակայն, չշարժեց այս դրանից. նա միայն իր աչքերը ուղղեց դէպի իր քթի ծայրը, որ անտառապատ գա-գաթի էր նման, և իր հայեացքը խաչեց քթի գագաթի վրայ:

Տիրացու Միկօն և Կակօն գոհ էին թւում, որ դրանք դէպի

1) Այսպէս էր արտաբերում քահանայ բառը:

Զաքօն էր ուղղուած. Նրանք անհամբեր, բեխ ու քիթ ցցած՝ իրենց հայեացքը դարձնում էին Խէչօի ցուցամատի ուղղութեամբ և դող էին, դող, որ այդ անողոք ցուցամատը համարեա չփում էր Զաքօի քթածայրը։ Սակայն դրօնը չուշացաւ.

— Դուք ի՞նչ գիտէք. դուք ոչի՛նչ չգիտէք. չը՛-գի՛-տէ՛ք… Հասկանո՞ւմ էք. — և կրնկի վրայ պտտելով, — շուռ եմ գալիս և ասում՝ մէ՛կ յիմար, ե՛րկու յիմար, ե՛րեք յիմար, — այս ասելիս նա ցուցամատը հերթով թափահարում է նրանց քթածայրերին, — Յալեա՛ն սամար, Գրիգորեա՛ն սամար, Հայկակա՛ն սամար… Երեք հատ սա՛մար, սա՛մար և սա՛մար՝ երեք լէշե՛ր, հասկացա՞ք. հը՛, ի հա՛րկէ չհասկացաք, դուք ինչ գիտէ՛ք որ հասկանաք…

Տիրեց մի պահ լռութիւն. ոչ ոք չէր համարձակւում խօսել, մի բան ասել. տիրացու Խէչօն, փրփրած, նրանց էր նայում կարմրած աչքերով և հիւանդագին հայեացքով. վերջապէս Մկօն խզեց լռութիւնը՝ անհամարձակ երկիւղածութեամբ.

— Հըլա եավաշ… էդ Կիրքորեան սամարը մեր սուրբ Կիրքոր Լուսաւորչայ (մեռնեմ իրա զօրութեանը) հագադած սամարն ա՞…

— Ը՛խ… լուեց Կակօի հաստատող բացագանչութիւնը։

— Ար ա՛սում եմ յիմար է՞ք… յիմար է՛լի. յիմար. դաշտում արածող սա՛մար… Տօ՛, փէրիու է՛չ, ի՞նչ «ը՛խ», հա՞, ի՞նչ «ը՛խ»… միթամ դու բան գիտե՞ս, — ասաց Խէչօն երկու ձեռները ծնկներին, կռացած դէպի Կակօի քիթը, — ա՛մեն Կիրքոր Լուսաւորիչ ա՞, հը՞, դէ ա՛սա է՛լի, ա՛սա… քու աներձագի անունն էլ Կիրքո՞ր ա, համա դէ ո՞վ կասի որ էդ ականջը բրդաիշի դլուխը Լուսաւորիչ ա․․ Գրի՛-գո՛ր-եա՛ն սա՛-մա՛ր։ Հա՛մի պա՞պն ա է՞, անբեխ-անմօրուք, ակնոցները աչքե՛րին, թա՛սակը գլխին, փարաջան հա՛գին. «պոչը կարածնե՛րի» պապը, հասկացա՞ր, — և այս ասելով՝ տիրացուն կարծես թէ ուզում էր մըտնել Կակօի քիթն ու բերանը, այնքան էր մօտեցել նրան։

Զաքօն և Մկօն, կոլլի հայեացքով և անշարժ դիմագծերով, անհամբեր նայում էին Կակօին և Խէչօին. նրանց աչքերի խորքում վախ կար, որ հիմա դրօնը կարող էր ուղղուել իրենց դէմ, բայց այդպէս չեղաւ. Խէչօն շակեց, բաց թողեց Կակօի օձիքը, նրա քթի ծայրին նկատել էր մի քանի կաթիլ քրտինք. նա յետ ցատկեց մի քայլ և կանգնելով երեքի դիմաց՝ հանդիսաւոր ձեռով արտաբերեց.

— Յիմարնե՛րին ա՛սում եմ. տո՛մարը քելեխ չի, որ իրար ոտ կոխ տալով և իրար կմշտելով ձեռից-ձեռ խլէք, ո՛չ էլ հագեհացի ա՛րաղ ա, որ ներս գլորէք և կատարներդ տաքացնէք, (այս խօսքի վրա Ջաքօն, Մկօն և Կակօն թուքները կուլ տուին և իրար նայեցին կարօտի հայեացքով), տո՛մարը գիտութիւն ա... գիտո՛ւթիւնը՝ իմաստո՛ւթիւն ա. ա՛մէն տաւար չի կարայ իմաստուն ընի... Յուլեան տոմար՝ Յուլիոս Կեսարի, Գրիգորեան տո՛մար՝ Գրիգոր Պա՛պի, Հայկական տո՛մա՛ր՝ Հայոց մեծ թուական, — ապա աւելի խորհրդաւորութիւն տալով իր խօսքին, Խէչօն ձգւեց, չոկեց, գլուխն և ուսերը վեր՝ ցուցամատը օդի մէջ յայտարարեց, — 365 օր... 6 ժամ... 11 րոպէ և 10 վայրկեան... ահա՛ երկրագունդը, որ պտտում ա արեգակի չուրջ...

Ջաքօն, Մկօն և Կակօն այս խօսքից ցնցւեցին և երեքը մէկէն իրենց հայեացքն ուղղեցին տիրացուի մատի ուղղութեամբ՝ արեգակին, տեսնելու համար երկրագունդը նրա չուրջ պտտելիս...

Ամբունին, Մակարեանն ու Վարուժանը, հազիւ ծիծաղները զսպելով, մօտեցան նրանց.

— Ի՞նչ էք փնտռում երկնքում, տի՛րացու, — հարցրեց Ամբունին:

— Ահա՛ երեք յիմարներ, որոնց շարժում եմ մի մատով. սա՝ գիտութիւն ա և գիտութիւնը՝ իմաստութիւն ա. աշխա՛րհի գա՛ղտնիքը ձեռումս ա. ուզե՛նամ՝ կը բաց անեմ ա՛յ, այսպէ՛ս, — և նա բաց արաւ իր ձեռքի ափը լոյս արևի տակ, ապա աշխոյժով աւելացրեց, — պարոն Ամբունի, սրբազանին համոզէք որ ինձ քահանայ օծի, էն ժամանակ կը տե՛սնէք թէ ինչպէ՛ս բաց կանեմ աշխա՛րհի գա՛ղտնիքը, ա՛յ այսպէ՛ս...

— Տեսնե՛նք, թերևս հնարաւոր լինի սրբազանին համոզել, բայց դու որ այդքան հմուտ տոմարագէտ ես և այժմ էլ մեր դպրոցը փակել է, լաւ չէ՞ր լինի որ մի քանի հոգու հաւաքէիր և հէնց եկեղեցու սենեակներից մէկում տոմար սովորեցնէի՞ր, — ասաց Ամբունին՝ քմծիծաղով և իր աչքի պոչով Մակարեանին նայելով:

— Հա՛, իսկապէս, տիրացո՛ւ, համա լաւ բան կանէիր հա՛. սրանք մի բան հասկանո՞ւմ են քո բացատրածներից, — ասաց Մակարեանը՝ տիրացուներին և ժամկոչին ակնարկելով:

— Սրանց գլուխը՝ ըհը՛, էս պատը ձեզ օրինակ, — ասաց տիրացու Խէչօն պատը ցուցնելով և շանթիչ հայեացքով այնպէս

նայեց տիրացուներին, որ կարծես թէ ուզում էր նրանց գետնին մեխել, այս հայեացքից տիրացուներն ու ժամկոչը կծկուեցին, մէկն անցաւ միւսի յետեւը, ապա տիրացուն շարունակեց խանդավառութեամբ.

—Ես գիւղո՛ւմ առաջին աշակերտն էի. նստում էի դասարանի մէջտեղում. աշակերտներ կային նստած ինձնից առա՛ջ և ինձնից ետև: Մի օր մեր վարժապետը մի երգ ուզեց սովորեցնել մեզ. երգեց. երբ նա երգում էր ես ծածուկ գրում էի՝ ա՛յ այսպէ՛ս. երբ երգը վերջացրեց, վարժապետը դարձաւ դասարանին հարցրեց. «ո՞վ կարող է երգել»: Ե՛ս մատ բարձրացրի. ո՛չ ինձնից առաջ մատ բարձրացնող եղաւ, ո՛չ ետև.. Ե՛ս էի և ինքս՝ իմ մատս հետ, հէնց այս միևնոյն մատս. այն ժամանակ վարժապետն ասաց. «Հապա՞ փոքրիկ, հապա՞ խէպօ, երգիր տե՛սնեմ»... Եւ ես երգեցի...

—Չէ՛, չե՛ղաւ, պէտք երգես այնպէս, ինչպէս որ երգել էիր դասարանում, երգի՛ր և մեզ համար. մենք կարօտ ենք քո երգին, ասաց Մակարեանը:

Տիրացուն շոյեց, ապա ձիգ կանգնեց իր տեղում, ուսերը վեր ցցեց և լուրջ կերպարանք ընդունելով՝ ասաց, աչքերը արագ թարթելով.

—Այսպէ՛ս կանգնեցի և այսպէ՛ս երգեցի...

«Զարթի՛ր, մանո՛ւկ իմ սիրասուն,

Բաց այդ պայծառ աչերդ»...

Երգի պահուն Ամրունին, Մակարեանն ու Վարուժանը հազիւ էին զսպում իրենց ծիծաղը, որ պատրաստ էր պայթելու՝ մի չնչին պատրուակով. երբ տիրացուն վերջացրեց՝

—Պարոննե՛ր, լսեցի՞ք չէ՞, հէնց այսպէս երգեցի ես դասարանում, օրը ցերեկով, լոյս արևի տակ, ո՛չ ինձնից առաջ երգող եղաւ, ո՛չ ինձնից ետև: Վարժապետն ասաց՝ «Ապրի՛ս փոքրիկ, ապրի՛ս խէպօ... դու՝ իմաստուն ես»...

—Չէ՛, այդ արդէն չեղաւ, ես համաձայն չեմ, մի երգ երգելով մարդ իմաստուն չի՛ դառնայ, տիրացո՛ւ, կը ներես, այդ խնդրում ես աւելի խստապահանջ եմ. տիրացու Կոմօն հարիւր երգ է երգել, Կոմօն՝ հարիւրից աւելի՝ և սակայն նրանց իմաստուն չեն կոչել մինչև այսօր, մինչև այս կարևոր օրը. ինչպէ՞ս կարելի է, որ քեզ մի երգի համար վարժապետդ իմաստունի կոչում տայ,

չէ՛, ես համաձայն չեմ, —ասաց Մակարեանը և դառնալով Ամբունուն և Վարուժանին՝ աչքով արաւ ծիծաղը խեղդելով, —պարոննե՛ր, դո՛ւք ինչ կարծիքի էք. —հարցրեց։

—Ես համաձայն եմ ձեզ հետ, պ. Մակարեան. առածն ասում է՝ «Մի ծաղկով գարուն չի գայ», հետևաբար՝ մի երգով էլ մարդ իմաստուն չի դառնայ. որքա՜ն աւելի խոր պատճառներ պիտի փնտռել տիրացու Խէչօի իմաստութեան մէջ, —ասաց Ամբունին։

Տիրացուն հողմերին բռնուածի պէս ցնցուեց և մօրուքը ձեռքով բռնելով՝ յայտարարեց.

—Այս մազերս չափ իմաստուն մարդե՞ր կան իմ գիտում. դուք ասում էք թէ ես իմաստուն չե՞մ, —ապա արհամարհական հայեացք նետելով դէպի տիրացուներն ու ժամկոչը՝ «Հապա սըրա՞նք են իմաստուն. հա՛, հա՛, հա՜», քրքջաց։

—Ո՛չ, մենք չասացինք թէ դու իմաստուն չես. մենք ասացինք որ մի երգով մարդ իմաստուն չի՛ դառնայ, ասացինք նաև, որ քո իմաստութեան մէջ աւելի՛ խորը պատճառներ պիտի փնտռել, —առարկեց Մակարեանը։

—Ա՜յ այդպէս. իմ իմաստութիւնը՝ աշխարհի գաղտնիքի մէջն ա, որ ձեռիս ա. ուզե՛նամ կը բաց անեմ ա՞յ, այսպէ՜ս... Ես գի՛տեմ թէ ինչո՞ւ են փակել մեր դպրոցը, գի՛տեմ թէ... ինչպէս պիտի բաց անել, բայց դա գա՛ղտնիք ա և գա՛ղտնիքը՝ աշխարհի մէջն ա, և ա՛շխարհը՝ իմ բռանս մէջն ա, ուզե՛նամ՝ կը բաց անեմ, ուզե՛նամ՝ կը փա՛կեմ, ա՞յ, այսպէ՜ս... Պ. Ամբունի՛, համո՛զիր սրբազանին որ ինձ կահանայ օծի՝ ես աշխարհի գաղտնիքը բաց անեմ...

Մինչդեռ տիրացուն բարբառում էր, երիտասարդ Վարուժանը շշնջաց Ամբունու և Մակարեանի ականջին «Ուզո՞ւմ էք ես սրան մի հատիկ խօսքով փակցնեմ». Նրանք համաձայնութիւն տուին.

—Տի՛րացու, —ասաց Վարուժանը, —էդքան որ իմաստուն ես՝ ասա տեսնեմ աշխարհիս վրայ կնիկներն են շատ թէ՞ տղամարդիկ։

Ասես կայծակ ընկաւ տիրացու Խէչօի վրայ. նա նախ՝ ձըգւեց իր կանգնած տեղում, ոլորեց դէպի վեր, ապա շարշանւած կերպարանքով և վախ արտայայտող աչքերով յետ-յետ գնաց բացագանչելով՝

—Դա քո բերնի խօսքը չի… դա քեզ վա՛յել չի… կանա՛յք… կանայք տե՛րև են ծառի վրայ, ղէ՛րօ են մէկից առաջ… զո՛ւ… զո՛ւ…

Եւ նա նահանջերով յանկարծ շուռ եկաւ կրնկի վրայ, ունքը վեր, խոշոր քայլերով թեթեւօրէն սլացաւ դէպի բակի դուռը և պարտակեց փողոցում։

—Հա՛, հա՛, հա՜… պայթեց Մակարեանի և Ամբունու ծիծաղը,—Տղա՛յ, ո՞րտեղից գտար այդ հնարը. կանայք դրա համար կարմիր թաշկինակի դեր են կատարում, ինչպէ՞ս կատաղեց ու փախաւ, ա՜յ քեզ գեղեցկերատ,—բացագանչեց Մակարեանը։

—Գնա՛նք,—ասաց Ամբունին,—սա մեր ազգային ողբերգութիւնն է. և զարմանալի է, թէ ինչպէս մեր ազգային նաւը առաջ է գնում՝ մարդկային այսպիսի տարօրինակ ախտերով բեռնաւորուած… Հանելուկ է մեր ժողովուրդը, հանելո՛ւկ… եկեղեցու գաղափարն է կապում մեր ժողովրդին նրա հետ և ո՛չ թէ եկեղեցու իրական վիճակը, որ շատ անմխիթար է։

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՁՐՈՅՑ

—Պարոն վարժիչ, չի լինում, շատ յամառ է, հպարտ. ինչքան առիթներ եմ ստեղծում որ ինձնից դրամ վերցնի՝ իբրև պարտք, չի վերցնում, բերան անգամ չի բանում, երբէք չի խոստովանում թէ կարիքի մէջ է. գիտեմ որ վերջին անգամ ծախեց իր հարսանեկան մատանին. ո՞վ գիտէ ինչ չնչին գնով, այժմ այդ դրամը պէտք է որ ծախսուած լինի, կամ շատ փոքր գումար պիտի մնացած լինի, մարդ մեղքանում է, ինքն էլ ղարիբ է, էստեղ մայր ու քոյր, եղբայր ու ազգական չունի, նրա միակ բարեկամը դուք էք. ամուսնու ընկերներից ոչ ոք չի երեւում, ոչ ոք չի հետաքրքրւում նրանց վիճակով. սիրտս մղկտում է այս կնոջ համար, ջահել է, անմեղ, մաքուր, կեանքի փորձութիւններից անտեղեակ, հազիւ երկու տարի է որ ամուսնացել է և ահա՛ կեանքը մեկը միւսի յետեւից հարուածներ է տեղում խեղճ կնոջ գլխին. ի՞նչ կը լինի սրա ճարը, եթէ ամուսնուն չազատեն բանտից… Աստուած չանի, Տէր Աստուած, դու օգնութեան հասիր խեղճ ղարիբին…

Եւ տիկին Մարիամը ձեռները խաչեց կրծքին, երկիւղած աչքերը երկինք ուղղելով։ Այս խօսքերը Վաղինկի վրայ այնպէս ազդեցին, որ քիչ մնաց ցաւից ու յուսահատութիւնից ճըչար, նրա աչքերն արդէն թրջւեցին, երբ տիկին Մարիամը աչքերը երկինք ուղղած արտասւեց։

Վերջին ժամանակները Վաղինկը խիստ զգայուն էր դարձել, յատկապէս այն օրից, երբ Բլուրան արգելեց իրեն պաշար ուտեցնել Արմէնի ճաշի վրայ. յաճախ առանձնանում էր սրճարանի մի անկիւնը, անձնատուր լինում մաշող խոհերի, ապա յանկարծ անդրադառնում էր, որ արցունքներն հոսում են, յետոյ նա վրդովւում էր, սրտնեղում այդ թուլութեան վրայ և դուրս նետւելով սրճարանից՝ խառնւում էր փողոցի ժխորին՝ այդպիսով մարելու համար իր մէջ բորբոքւող հրդեհը։ Այժմ էլ նա զգաց, որ նոյն յոյզերը սկսեցին ծփալ իր ներսում և փոթորկի պիտի փոխարկւէին՝ եթէ գերագոյն ճիգով չզսպէր իրեն։

— Սիրելի տիկին Մարիամ, — ասաց նա խուլ ձայնով, — ձեզպէս բարի և փորձւած կնոջ պարտականութիւնն է անընդհատ Բլուրային պատմել մարդկային կեանքի ելևէջների մասին, յաջողութեան և նրան յաջորդող ձախորդ օրերի մասին, յոյս պիտի ներշնչէք իրեն, կրօն, պիտի խրախուսէք, պիտի թելադրէք չյուսահատել. պիտի բացատրէք, որ մարդիկ այս աշխարհում փոխադարձ օգնութեամբ են ապրում, գործում և առաջ են գնում, որ բնութեան ծայրայեղ հպարտութիւնը սեփական կործանման պատճառ կարող է դառնալ, որ պարտք վերցնելը անպատւութիւն չէ, այլ պարտքն ուրանալն է անպատւութիւն. ճիշտ է, Բլուրան մտածում է թէ պարտք վերցնէ՝ ժամանակին կարող է ի վիճակի չլինել վճարելու և այդպիսով անպարտաճանաչ մակդիրին արժանանալ, բայց այդ դէպքում էլ նրան պիտի բացատրել, որ երբ պարտք տուողը ժամանակով չի սահմանափակում իր պահանջը, դա նշանակում է, ուրեմն, որ անպարտաճանաչութեան և պարտաւորութեան հարցը լուծւում է հէնց սկզբից։ Վերջապէս պիտի բացատրել նրան, թէ մարդ չկայ այս աշխարհում որ պարտք վերցրած չլինի, բայց քչերն են, որոնք անպարտաճանաչ և անբարեխիղճ անունն են վաստակել։ Մարդը

հասարակական էակ է, հասարակութիւնն ինքը փոխադարձ օգնութեան կազմակերպութիւնն է. վերջապէս չի կարող նա այս հասարակութեան մէջ իբրև Ռոբինզոն ապրել. նրա ծայրայեղ մաքրութիւնը, պարտաճանաչութեան բարձր գիտակցութիւնը և հըպարտութիւնը իրեն նետում են անհեթեթութիւնների և կղզիացման գիրկը: Ձեր պարտականութիւնն է մեղմել նրա ծայրայեղութիւնները և բացատրել իրական կեանքը. այո՛, ինչպէս դուք էք ասում, նա ջահել է, նրան փորձառութիւն և խրատ պիտի տալ: Չգիտէ՞ք, ո՞ր բժշկի մօտ տարաւ երեխային:

—Չհարցրի բժշկի անունը. խեղճ կինը ամբողջ գիշերը չը քնեց. ես էլ միառժամանակ մօտը մնացի, հանգստացնում էի իրեն, սիրտ էի տալիս, բացատրում էի, որ երեխան ատամ հանելիս ուշագնաց կարող է լինել, դա սովորական բան է. բայց նա չէր հանգստանում, նրան տանջում է նաև այն միտքը, որ ամուսինը բանտում է և ինքը երեխայի կեանքի համար պատասխանատու է ամուսնու առաջ. «Ի՞նչ պատասխան պիտի տամ Արմէնին, երբ երեխայիս մի դժբախտութիւն պատահի», —անընդհատ կրկնում էր նա և բարոյական պատասխանատուութեան միտքը նրան խենթացնում էր: Չէք կարող երևակայել թէ ինչպէս ճչաց, երբ երեխան ուշագնաց էր եղել ու կապտել... Ես անկողնուցս սարսափահար դուրս ցատկեցի, տներս սկսեցին դողալ, ծնկներս ծալուեցին, դռանս մօտ ընկայ ցած, բայց շուտով ուժերս հաւաքեցի, այն մտքից, որ եթէ մի վայրկեան ուշանամ՝ ո՞վ գիտէ ինչ դժբախտութիւն կը պատահի, ոտքի վազեցի և երբ ներս ընկայ սենեակը՝ նա ինքն էլ համարեա ուշաթափ վիճակում էր՝ երեխան գրկին սեղմած. ես մի վայրկեան ինձ կորցրի. ապա բնազդաբար ձեռքս նետեցի կուժին և ջուր սրսկեցի Փշաբայի գլխին. յետոյ երեխային վերցրի իր գրկից և սկսեցի տըրորել ուսերն ու ականջատակերը, շփել թևերը, մինչև որ երեխան սկսեց վրայ գալ, մայրն էլ մեռելի պէս անգոյն՝ յարձակուեց երեխայի վրայ և խելագարի պէս համբուրում էր ու լալիս... Սա էլ իմ բախտից է, որտեղ որ գնամ՝ պէտք է ուրիշների ցաւով տանջուեմ. հերիք չէ իմ միակ զաւակիս ցաւը, որ մինչև գերեզման ինձ պիտի տանջի, էս էլ մէկ ուրիշը...

Ցիկին Մարիամը չկարողացաւ շարունակել, արցունքներն

Առատօրէն գլորւեցին նրա այտերն ի վար և Վաղրիկը նրան երևաց մշուշների մէջ։

—Հանդարտւէք, տիկին Մարիամ, դուք յիշեցնում էք իմ մայրիկիս, որից տասը տարի է ինչ բաժանւած եմ. երբ լալիս էք, ինձ թւում է թէ մայրս է լալիս, նա էլ ձեզ պէս տանջւած կին է, նա էլ իր զաւակի կարօտն է ապրում, այնպէս որ դուք մենակ չէք. ճիշտ է, ձեր զաւակը անդառնալիօրէն մեկնել է այս աշխարհից, բայց ես, որ կենդանի եմ, չգիտեմ թէ երբևէ կը տեսնե՞մ իմ մայրիկիս… Եւ մայրս չի՞ մեկնի այս աշխարհից՝ իր զաւակի կարօտը սրտում… Այժմ թողնենք այս տխուր մտքերը, ես ձեզ յատկապէս խնդրում եմ, որ ամեն կերպ աշխատէք այն գումարը Կլարային տալ, այժմ որ նրա երեխան հիւանդ է. նա անհրաժեշտ կարիք կունենայ դրամի. պէտք է ամեն գնով այդ գումարը իրեն տալ՝ թէկուզ ժամանակաւոր փոխառութեան անւան տակ…

Նա դեռ չէր վերջացրել իր խօսքը, որ լսեց դռան բանալիի աղմուկը. մէջանցքում՝ կանացի կրունկների ձայն. Տիկին Մարիամն ու Վաղրիկը ընդառաջ վեր թռան տեղներից և սենեակից դուրս եկան.

—Ի՞նչպէս է փոքրիկը… ի՞նչ ասաց բժիշկը,—հարցրեց տիկին Մարիամն անհամբեր։

—Լաւ է, ասաց որ ատամ է հանում և ուշագնացութիւնը դրանից է,—ասաց Կլարան ուրախութիւնից շառագոյն։

—Տեսա՞ր ես ասում էի ատամից է, աղջի՛կս, իզուր ես այդքան անհանգստանում,—ասաց տիկին Մարիամը և երեխային առնելով Կլարայի գրկից, սկսեց փաղաքշական խօսքեր ասել, բայց երեխան անտարբերացել էր, թօշնած տեսք ունէր և կարօտ էր քնի։

Վաղրիկը մերթ նայում էր երեխային, մերթ՝ Կլարային և խորհում էր այն մասին, թէ ինչպէս այդ երկու էակների դէմքին գիշերւայ տառապանքը իր կնիքն էր դրել.

—Ուրախ եմ, Կլա՛րա, որ փոքրիկը լաւ է զգում իրեն,—ասաց Վաղրիկը,—տիկին Մարիամը պատմեց, թէ ինչպէս վախեցել էք գիշերը…

—Այո, ներողութիւն, տիկին Մարիամ, ես էլ ձեզ շատ վախեցրի, յիշում եմ ինչպէս դողում էր խեղճ կինը, ես չգի-

տեմ ի՞նչպէս շնորհակալ լինեմ այս բարի կնոջը, որին մայրիկիս շատ սիրում եմ,—ասաց Բլարան Վաղրիկին նայելով։

—Երբ նրան մայրիկից շատ սիրում էք՝ ուրեմն պէտք է լսէք նաև նրա բարի խորհուրդները. ամէն մարդու չէ վիճակուած տիկին Մարիամի պէս հարեւանուհի ունենալ. նա արտակարգ բարի և անձնուէր սրտի տէր կին է, Բլա՛րա. նրան տեսնելիս՝ ես էլ իմ մայրիկիս եմ յիշում,—ասաց Վաղրիկը պատեհ առիթ գտնելով։

—Ի հարկէ, ի հարկէ,—ասաց Բլարան չանդրադառնալով նրա ակնարկին,—այժմ տիկին Մարիամը յոգնութիւն կը կրի երեխայիս քնեցնելու, իսկ ես էլ նախ մի գաւաթ սուրճ կը տամ ձեզ որպէսզի զբաղուէք, յետոյ կը գնամ գնումներ կատարելու, որպէսզի Արմէնի համար ճաշ պատրաստեմ...

—Այդ արդէն չեղաւ, Բլա՛րա, դուք այսօր բժշկի գնալու պատճառով բաւական ուշացել էք. ճաշն էլ, մինչև որ պատրաստէք, շատ ուշանայ և Արմէնը շատ անհանգստանայ և մտածի, թէ ինչո՞ւ է ճաշն ուշացել, երևի տանը մի դժբախտութիւն է պատահել. ուստի լաւագոյն միջոցն այն է, որ թոյլ տաք ինձ այսօր ճաշարանից մի բաժին ճաշ վերցնել և ամերիկան կապոցի ձևով տանել Արմէնին. ի՞նչ կասէք, տիկին Մարիամ,—դարձաւ Վաղրիկը տիկին Մարիամին, առանց սպասելու Բլարայի պատասխանին։

—Շատ խելօք առաջարկ է, Բլա՛րա,—այլևս առարկելու տեղ չկայ. դէ այժմ, աղջիկս, գնա՛ և սուրճ պատրաստիր մեզ համար,—յարեց տ. Մարիամը։

Բլարան խօսք չգտաւ առարկելու, միայն թէ թեթև յանդիմանական հայեացք նետեց Վաղրիկի վրայ, կարծես ուզում էր հասկացնել թէ՝ «վերջապէս ուզածդ արիր» և դուրս եկաւ սենեակից առանց որևէ բառ արտաբերելու։

Վաղրիկն ու տիկին Մարիամը նայեցին միմեանց ու ժպտացին, նրանց փորձը յաջողութեամբ էր պսակել։

Տ. Մարիամն արդէն քնեցրել էր երեխային, երբ Բլարան սուրճ մատուցեց նրանց. նա արդէն հանդարտուած էր երևում գիշերուայ յուզումներից յետոյ, նոյն իսկ՝ տրամադիր. սուրճի հաճելի հոտը տոգորեց սենեակը. այժմ արդէն խօսակցութիւնը դարձաւ աւելի ուրախ նիւթերի շուրջ.

—Վաղրիկ, գիտե՞ք որ տիկին Մարիամը սուրճի գաւաթի վրայ գուշակում է, —ասաց Բլարան։

—Է՞, տիկին Մարիամ, ի՞նչ է ասում Բլարան…

—Ես ոչ… հէնց այնպէս, երբեմն զբաղմունքի համար, — խոստովանական պատասխան տուեց տիկին Մարիամը։

- Մեզ էլ այժմ զբաղեցնելու համար պիտի գուշակէք, — ասաց Բլարան, —մանաւանդ որ Վաղրիկն էլ այստեղ է. նրա համար երբէք չէք գուշակել։

—Լա՛ւ, գնա խմէք ձեր սուրճը, յետոյ կը տեսնենք, —ասաց տ. Մարիամը։

Նրանք ֆուֆուացնելով խմեցին Թիւրքական սուրճը փոքրիկ գաւաթներով. ապա Բլարան շուռ տուեց իր գաւաթը պնակի մէջ և պատուիրեց Վաղրիկին նոյնն անել. գաւաթն այդպէս պիտի մնար, մինչև որ սուրճի դիրտը իջնէր և սառելով ձևաւորուէր գաւաթի պատերին։

Տ. Մարիամը նրանց էր նայում բարի ժպիտով և կարծես պատրաստւում էր, դեռևս բաժակները չտեսած, գուշակել.

—Դեռ մի խմ ը նայէք, —ասաց Բլարան անհամբեր, —մինչև որ Վաղրիկի գաւաթը սառի։

Տ. Մարիամը իր ձեռքն առաւ գաւաթը և սկսեց ուշադիր դիտել. նա ուսումնասիրում էր այն խառնիխուռն պատկերները, որոնք գծւել էին գաւաթի պատերին, ապա թեթև հազաց ու սկսեց։

—Աղջի՛կս, սիրտդ շատ բացուած է… տե՛ս, գաւաթի յատակը, որ ամբողջովին սուրճով է պատած. բայց ծայրում մի սպիտակ կէտ կայ, որ նշան է թէ շուտով պիտի անցնեն մտահոգութիւններդ և սիրտդ պիտի բացւի. այդ ուրախութիւնը գալիս է այս մարդուց, որի գլխին, տե՛ս լոյսի մի ճառագայթ է իջել և այդ ճառագայթը նման է մի թռչունի, թևերը բաց, վերևում սաւառնելիս. հաւատացնում եմ, որ այդ մարդը պ. Արմէնն է և նա շուտով պիտի ողջանի. լոյսը և թռչունը այդ են ցոյց տալիս. նրա դիմաց կանգնած եմ տեսնում մի կին, որի ձեռքին մի ինչ որ բան կայ, որ և՛ կապոյտի է նման, և՛ երեխայի. այդ դու ես, որ երեխայով մեկնում ես դէպի ամուսինդ։ Երկու նամակ է երևում, որ քո ձեռքդ պիտի հասնի. մէկով պիտի ուրախանաս, միւսով թեթև տխրելու ես։ Այստեղ երևում է նաև մի գումար, որ շուտով քո ձեռքդ պիտի գայ…

ահա՛, այ՛ս է, տեսէ՞ք, այս գնդիկները, որոնք բռնել են գաւաթիդ շուրջը: Ուրիշ բան չեմ տեսնում, շնորհակալութիւն չը յայտնես, —վերջացրեց տիկին Մարիամը:

—Ա՛խ, ո՞ւր էր թէ Արմէնն ազատուէր, —մրմնջաց Բրաբան վշտով ու կարօտով:

Տ. Մարիամը վերցրեց Վաղրիկի գաւաթը:

—Շուտով մեծ գործ պիտի գայ ձեռքդ, զաւա՛կս, հեռաւոր մի ճամբի վրայ. քեզ շրջապատել են բազմաթիւ մարդիկ. ծառոտ տեղ է, խոտներ են, մի ուրախութիւն էլ այդ ճամբի վրայ. բայց քո սիրտդ շատ է բացուած, աւելի քան Բրաբայինը, տես՝ գաւաթի ամբողջ յատակը բացուած է, նոյն իսկ սուրճը թումբի նման կուտակել է. չեմ հասկանում, ինչո՞ւ այդպէս բացուած է սիրտդ. ոչինչ չի ուրախացնում քեզ. նոյն իսկ ճամբի վրայի այն գործը, մի ինչ որ բան քեզ տանջում է: Հեռուում մէկ կին ձեռները մեկնել է դէպի քեզ, երևի մայրդ է՛, խեղճ կին... շուտով նամակ կը ստանաս. բարեկամներդ քիչ չեն, միայն թէ մի հոգի կայ, որ քո վատն է ցանկանում. բայց ոչինչ անել չի կարողանում, քանի որ մէկը կայ քո թիկունքում, տես՝ քեզ պաշտպանում է. զգուշացիր անտառներից... Շատ դրամ պիտի գայ ձեռքդ, բայց չպիտի պահես, շռայլում ես. քեզնից շատերը պիտի օգտուեն. երկու-երեք բարեկամներ ունես, որոնք յաճախ մտածում են քո մասին: Շնորհակալութիւն չյայտնես, վերջացաւ:

—Իսկ ինչո՞ւ համար չյայտնել, —հարցրեց Վաղրիկը զարմացած:

—Եթէ գուշակողին շնորհակալութիւն յայտնէք՝ գուշակութիւնը կոչնչանայ, այդպէս է ընդունուած կարգը, —բացատրեց Բրաբան:

Վաղրիկը վեր կացաւ, խնդրեց Բրաբային բերել Արմէնի անձնագիրն ու ալիւմինիումէ կաթսան, որի մէջ պիտի դնել տաք ճաշը, և երեխային առողջութիւն մաղթելով՝ շտապ դուրս եկաւ Բրաբայի մօտից: Նա այսօր աւելի թեթև և ուրախ զգաց իրեն. նրան հաճոյք էր պատճառում այն միտքը, որ ճաշ պիտի գնի ճաշարանից և տանի Արմէնին, որ վերջապէս գէթ մի օր խնայեց Բրաբայի ծախը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Աբրահամ Նազարին մի յատուկ բնակարան ունէր Բ. փողոցում. դա մի առանձին թաղ էր՝ ծառախիտ պարտէզով, մըշակուած, ընտիր ծաղիկներով և աւազանով, որի կենտրոնում ցայտում էր շատրւանը՝ արևելեան ճաշակով կերտած մի հրեշտակի բերնից։ Կէչիները, սօսիները ու եղևնիները պահակ էին կեցել պարտէզի անկիւններում, իսկ ծառուղին կազմող չինարիներն իրենց բարձրացել, հարթ և ճերմակի վրայ տեղ-տեղ գորշ բծերով իրենց բներով ու վեցանկիւնանի հովանոցաձև տերևներով յատուկ հմայք էին տալիս արևելեան փարթամութեամբ օժտուած այգուն։

Ամրան եղանակին Նազարին սիրում էր այդտեղ անենալ իր ժամադրութիւնները. բայց այժմ ձմրան սկիզբն էր. ծաղիկները թառամել էին, իսկ ծաղկամանների մէջ եղածները փոխադրել էին ջերմոց. փչում էր պաղ քամի և երկինքն ամպամած էր։ Նա իր այցելուին սպասում էր բնակարանի ներսը, որ կահաւորել էր արևելեան մեղկութեան յատուկ յարմարութիւններով։ Հագել էր Քերմանի շալից կարուած մի պարեգօտ, ոտներին՝ նոյն շալից կարուած հողաթափներ, դէմքն ածիլել էր և դուխով օծել։

Կլոր սեղանը ծածկուած էր ուտելիքներով և գոյնզգոյն խմիչքի շիշերով, իսկ բազմոցի մօտ դրուած էր փոքր կլոր սեղան, որի վրայ դալարուն կարմիր օձի պէս հանգչում էր նարգիլէն, գունաւոր մարգարիտներով և կապոյտ մարջաններով պատուած։ Սենեակի յատակն ու պատերը թանկագին գորգերով պատած, իսկ պատի գորգերի արանքներում խայտառական մեղկատեսիլ նկարներ՝ կին, գինի և հեշտանք պատկերող։

Ժամի ութն էր. փողոցում հնչեց ինքնաշարժի ծանօթ ազդանշանը։ Նազարին շտապով անցաւ միջանցքը, բաց արաւ փողոցի դուռը և արագ ակնարկելով ինքնաշարժի ներսը, կանգնեց նրա առաջ, «Ժամի 11-ին կը գաս».— ասաց մեքենավարին, ապա բացաւ ինքնաշարժի դուռը։

Դուրս եկաւ մի գէր, կանացի մարմին. երկայն մուշթը սև, խոշոր ղունդուզի տեսք էր տալիս նրան. Մեքենան հեռացաւ արագ, Նազարին թևանցուկ ներս տարաւ այցելուին։ Ներ-

սից փողոցի դուռը փակեց բանալիով և երբ միջանցքումն էին՝ «Հիմա Աֆիաթունն էլ չի կարող ներս գալ», —ասաց և անցան սենեակ։

Հազիւ էր կինը նստել բազմոցին, երբ Նազարին գրկեց նրան և՝ «ձէկ մի կարօ՛տս առնեմ, ջա՛նամ», —ասաց ու սկսեց համբոյրներ տեղալ նրա դէմքին և ուսերին.

—Համա անհամբեր մարդ ես հա՜, Աբրահա՛մ, —ասաց կինը, —ասնի էդքան ինձ սիրո՞ւմ ես։

—Հա՛ վայրահ, խուդայումն իր սիրուհուն էնքան չի սիրացել՝ ինչքան որ ես եմ քեզ սիրում. սալոն սադրազամի քեաբաբից էլ համեղ ես, չեմ իմանում ի՞նչ անեմ որ կշտանամ… էսօր, Մագդա, ջա՛նամ, էլ ինչ որ մաքերովս անցնում ա՝ պտի անենք. կարող ինձ էրել ա, քանի վախտ ա որ չես եկել ինձ մօտ. էս էլ ասեմ, որ որոշել եմ Պօղոսին զարկեմ Բերմանշահ, զարմերս կառավարելու. էս կողմից էլ՝ արխային բաշ, բադ ազ ին՝ վար հա վար[1] ենք անելու ես ու դու. սաս տեսնեմ, խանո՛ւմ ջուն, լու եմ ֆիքր արել թէ՞ չէ.

—Հա՜, հիմա հաւատում եմ որ ինձ սիրում ես. խոսք եմ տալիս՝ Պօղոսին որ գործով ղրկես Բերմանշահ, շաբաթը մէ անգամ գամ քեզ մօտ, քէֆ անենք որ չտեսնուած, էնէնց մէ քէֆ տամ քեզ, որ խուդայումի սիրուհին զարմ ա արի, —ասաց Մագդան, թեւն անցկացնելով Աբրահամի վզով։

—Ջանեմուրը տալի[2] նման ծծում ես մարդու, —ասաց Մագդան ձեռքի ափով Աբրահամի դէմքը յետ մղելով, —էլ չես նայում որ ռուժ ու փուդրս տարար, գնա՛ մէ հայելուն նայիր. հա՛, հա՛, տես քիթ ու մռութդ ի՞նչ ա կարմրել…

Աբրահամն էլ սկսեց ծիծաղել.

—Ասլան քո ամեն բանդ խմ վրայ լու ա գալի… ռուժդ էլ, փուդրդ էլ, էս լէքը-լէքը… —ասաց նա հեւալով և ձեռքը դէպի կնոջ կուրծքը մեկնելով։

—Անշնո՛րհք, էս սեղանն ընչի՞ ես բացել, թամաշայի՞ համար ա. ալայլան[3] մէ բան առաջարկի. Աբրահա՛մ, էսօր որոշել եմ քեզ հետ մէ լու խմեմ, քէֆ անեմ։

—Ղորբա՛նէդ բըլամ[4], ա՜յ էտէնց, քէֆս եկաւ մարդը մարդանա խօսելուցդ. սադրազամի քեաբաբին շարաբ օ արաղ

---

1) Սռանից յետոյ վայելելու ենք: 2) Մեղու: 3) Վերջապէս: 4) Մատաղ լինեմ:

ա պէտք. ե՛կ, եկ սեղանի մօտ նստենք,— ասաց Աբրահամն և Մագդային նստեցրեց սեղանի մօտ, ինքն էլ տեղ բռնեց կողքին։

Նրանք սկսեցին ախորժակով ուտել ու խմել, նախ՝ մխ-եանց կենացը, յետոյ իրենց սիրոյ, յետոյ այն գործի, որի վրայ Աբրահամը պիտի ուղարկէր Մագդայի ամուսնուն՝ Պօղոս Մաշալեանին. առաջին աշխարհը պիտի գովէր Աբրահամի մարդասիրական քայլը, նրան պիտի կոչէր բարեգործ, որ գործ էր տուել, մի լաւ պաշտօն՝ Մաշալեանին, նոյն իսկ ամանք պիտի նախանձէին Մաշալեանին այդ պաշտօնի համար, իսկ ներսում ինքը և Մագդան գիտէին այդ պաշտօնի իսկական տասաւը, իրենք մշտապէս հանդիպելու և, ինչպէս իրենք էին ասում՝ «քէֆ քաշելու» յարմարութիւն և ազատութիւն պիտի ունենային, ամուսնու կասկածոտ աչքերից հեռու, այս բնակարանում, որ Աբրահամ Նազարին յատկապէս պահում էր իր սիրային հանդիպումների համար։ Պօղոսի պաշտօնը գոհ պիտի թողնէր և՛ Պօղոսին, և՛ Մագդային, և՛ Աբրահամին։

Քանի ուտում և խմում էին՝ այնքան աւելի ջերմ ու բաց էր դառնում նրանց խօսակցութիւնը, արևելեան յատուկ հեշտախտան դարձուածքներով համեմուած, պարսկական արտայայտութիւնների ծոր բառամթերքով։

Աբրահամը, գլուխը տաքացած, վեր կացաւ և լոյսերը հանգցնելով, թողեց միայն կարմրագոյն ճրագը, որ կարմիր փոշիի պէս ողողեց արևելեան խորհուրդներով զարդարուն սենեակը։ Խայեամն ու իր սիրուհին առաւել սուզուեցին կարմիր քօղի տակ և աւելի մօտեցան մէկը միւսին. գինու փոշը հպում էր Խայեամի շուրթերին և թփի վրայի սոխակը դայլայլում էր սիրոյ մեղկանոյշ մեղեդիներ... Խայեամի ատրփածուն պատկերը աւելի խորհրդաւոր ու նկատելի դարձաւ կարմիր լոյսից, կարծես աշխարհի մեղկ աչքն էր որ պատում էր հեշտասէր ցնծութեան կենտրոնում։

— Մա՛գդա,— ասաց Աբրահամը դողդոջուն ձայնով,— տե՛ս Խայեամին և իր սիրուհուն. էս անիրաւի պարար իմ խելքս թռցրել… Եարն ա գլխիցս. համա քէֆ ա քաշել Խայեամը հա՛… Երանի քո պարզ տեսնողին…

— Մարդըքէ [1], լափ խարար ես էլէ. պարան ի՞նչ որ գա…

1) Մարդուկ։

էդքան մայել[1] ես…—ասաց Մագդան աչներն հառած եղանակով,—չեմ չանց տայ, մինչև որ…

—Մինչև որ ի՞նչ… ղուրբա՛նէդ… ինչ որ սիրտդ ուզում ա, ասա՛,—ասաց Աբրահամն անհամբեր։

—Դու անհնիկ մարդ ես. չես իմանում կնկայ աղեքէն[2]… դու հէնց քո մասին ես ֆիքր անում, որ Պօղոսի ղարկես դուրսերը՝ ինքդ քէֆ քաշես նրա կնկայ հետ… Մէ նայի ուրիշների կնիկներին, տես նրանք ի՞նչ թանր են զարդարւած. տեսա՞ր խօջամալեանի կնկան. էն բրիլլեանտ մատնիքը որ դրել էր, կարծում ես ամուսնու հանա՞րն ա… ուրիշներն էլ են սիրական պահում՝ դո՛ւ էլ… սկի ֆիքր չես անում քո սիրականիդ զարդարելու մասին, հէնց թողնես մէ բաշ ընկնես վրես ու՝ ջանամ ասելով՝ փչացես… ի՜հ, դու էլ սիրական ես, եղնէկ ինձ…

—Ղո՛ւրբան. բա Պօղոսին որ ղրկում եմ էդ՝ հէսաբ չի՞…

—Պօղոսին ղրկում ես քեզ համար, որ ընձի ունենաս, հասկացա՞ր. բա ես սոխի կլոխ եմ բանե՞լ, իմ սիրտս բան չի ուզո՞ւմ,—ասաց Մագդան լացակումած և աչքերը սրբեց թաշկինակով,—էսքան սան, տեղ, դովլաթ… էգուց-էլը կընկնես կը մեռնես՝ հետդ Գուլաբ[3] ես տանելո՞ւ… ազայլան մէ քիչ նգահդարի[4] արա, դու էլ քո աչ բարով սիրականիդ զարդարի, որ ուրիշ կնիկների մօտ խջալաթ[5] չմնայ. չտեսա՞ր էն գիշեր քո անումդ ի՞նչ թանր էր ձեռքը պատացնում էն բաղը, որ ամէնը իրա բրիլլեանտ մատնիքը տեսնեն. ետնի է՞շ ենք, չենք հասկանում որ դա իրա մարթի հանարը չի՞, որ սիրականն ա տւե՞…

—Ջա՛նամ, «դար ինմօղէ[6]» ես ո՞րտեղից բրիլլեանտ մատնիք գտնեմ,—տարկեց անճարացած Աբրահամը, միաժամանակ վախենալով որ որսը ձեռից պիտի թռչի։

—Բա մարդը մարդանս խօսքդ ընձի համար մատնիք ա…

—Հա՜, ի՞նչ եմ ասել, ղուրբա՛նեդ բերամ… ասում եմ ախր դու էն լաչառ կնիկներից չես որ երկու ոտդ մէ քօշի մէջ դնես ու՝ էս կէս գիշերին բրիլլեանտ մատնիք ուզես. բէ՛չաշմ[7], քո մատնիքդ էլ, թազա չարերդ էլ… դիգար փարմայիշ դարի՞[8], ջա՛նամ,—ասաց Աբրահամը թեթևացած։

1) Սիրամիր: 2) Կարծիք: 3) Թեհրանի հայոց գերեզմանոց: 4) Ուշադիր եղիր; 5) Ամօթով: 6) Այս պահուն: 7) Աչքիս վրայ: 8) Ուրիշ հրաման ունիս:

— Հալա միբինամ քէ ~~թո~~ դուստ դարի 1), ջա՛նամ, — ասաց Մագդան և երկու թևերով գրկեց Աբրահամի պարանոցը:

Աբրահամը ցնծաց հաճոյքից. երկու ձեռներով գրկեց Մագդայի լիքը գիսերը և մի րոպէ նրանք այսպէս մնացին…

Բազմոցի վրայ նետուեց կանացի շրջազգեստ, ճերմակեղէն. մի տղամարդու խալաթ. նրանք ինչպէս որ ընկան՝ այնպէս էլ մնացին իրենց տեղում. կարմիր լուսափոշիով ողողուած սենեակում երևացին մարդկային մերկ մարմնի ձևեր. մի այրական ձեռք դարձրեց ուղնայի կոճակը և եգիպտական պարդաղարի եղանակը հնչեց ոսկէներով լցրեց սենեակը: Այժմ հայ Խայամը հրճւում էր, որ կինն ու գինին ձեռքից ձեռք էին անցնում և կանացի ստուերքով որմնայնի կենտրոնում իշխում էր կարմիր լուսափոշիով ողողուած հեշտական պարը…

*

* *

—Միւս օրը Պօղոսին ղրկիմ Քերմանշահ, դու կը գաս էլքի օրը, ժամը 7-ին. չմոռանա՛ս, ջա՛նամ…

—Մատանիս հօ չե՞ս մոռացել… հագուստ…

—Էն օրը կը տամ. հագուստիդ համար էլ կերթաս մագազ «Փարվանէ»-ի մօտ, ինչ որ սիրտդ ուզում ա՝ կա՛ռ ի՛, խարջը իմ գեարդանիս 2)…

- Աբրահամ…

—Մագդա…

Ինքնաշարժը գղրդաց և սուրաց փողոցի խաւարը ճեղքելով:

ԹՌՉՆԱԿԻ ԲՈՅՆ

Իր խաղընկերը յաճախ թռչունների ձուեր էր բերում. նրանք փոքր էին, նուրբ կեղևով. ոմանց կեղևներն ամբողջովին ճերմակ էին, ոմանց կեղևները՝ կանաչ բծերով. նրանք այնքան ձևաւոր էին, այնքան փոքր ու գրաւիչ, որ նա մեծ զգուշութեամբ էր բռնում իր մատների մէջ և դիտում, ու չէր կշտանում դիտելուց, մի քնքշական զգացում խաղում էր նրա սրտում և նա մեծ զգուշութեամբ ու վախով, որ չփշրի, ձուերը դնում էր ընկերոջ

---

1) Այժմ տեսնում եմ որ ինձ սիրում ես: 2) Վզիս:

ափը։ Նա մեծ ցաւ զգաց, երբ մի անգամ ձուերից մէկը փշրուեց ընկերոջ մատների մէջ. «Է՜հ, սա փչացաւ» ասաց տղան անտարբեր ու շպրտեց կոտրուած ձուն։

Եւ մի օր նա որոշեց բարձրանալ ու անձամբ գտնել թռչնի բոյնը, անձամբ ձեռք բերել ձուիկներ և ցոյց տալ իր ընկերներին։ Պատի քարերը բռնած՝ նա ճարպիկօրէն մագլցեց վեր և կանգ առաւ բնի դիմաց. ծակ մի բոյն էր դա՝ ծղօտներով ու փետուրներով հիւսուած. պարզ, անպաճոյճ, բայց՝ զարմանալի արուեստով. բնի մէջ երեք փոքրիկ ձուեր հանգչում էին քով-քովի. Նրան թւաց թէ դրանք քոյր ու եղբայրներ էին՝ քնած բնի յատակին։ Մայր թռչունը այնտեղ չէր և մի խորհրդաւոր խաղաղութիւն իշխում էր բնի մէջ... «Ծիտիկները քնած են ձուիկների մէջ», — խորհեց նա. մէկ ուզեց ազատ ձեռքը մեկնել, բայց զսպեց իրեն, մի բան շարժուեց իր կրծքի տակ, ասես սիրտը աքարեց ու անցաւ։ Այդ պահուն մի յուսահատ ճիչ ու ծլվլոց լսեց իր գլխավերև, մի ծիտ թևերը արտակարգօրէն թափահարելով, խուճապահար թռվռալ սկսեց բնի վերև, մերթ դէպի բոյնը նետուելով ու ապա վախով յետ նահանջելով. Նրան թւաց թէ մի ամպրոպ էր պտտում իր գլխի վերև, մի հզօր ոյժ՝ ամփոփուած ծտի փոքրիկ մարմնի և թևերի մէջ... «Մայրն է»... — մտածեց նա և զգաց որ գունատւեց. մի աստիճան ակամայ իջաւ. այդ պահուն մայր ծիտը իրեն նետեց բնի մէջ և թևերով իր ձուիկները ծածկելով՝ շարունակեց խուճապով ճչալ ու ծղրտալ... Նա իջաւ երկրորդ աստիճանը՝ քարերը բռնած. մայր ծիտը շարունակում էր ծղրտալ. Նա աւելի արագ իջաւ և ահա գետնին էր. ափով խփեց իր փոշոտուած հագուստներին և գունատ՝ քաշուեց ծառերի խորքը։

Նա խորհում էր իր ընկերոջ մասին, այն մասին՝ թէ ինչպէս նա ամէն օր ականատես է լինում մայր թռչունների խուճապին, ողբ ու կոծին և սակայն ձեռք է մեկնում ու հաւաքում ձուերը. Նրան թւաց՝ թէ լսում է մայր-ծիտիկի լացը. աչքերը արցունք ցայտեցին. ամօթ զգաց, որ փորձել էր նմանել իր չար ընկերոջը և ատելութիւն զգաց դէպի իր ընկերը. վճռեց այլևս երբեք չտալ նրան, արգիլել թռչունների բները աւերել և եթէ չանսայ՝ նոյն իսկ ծեծել։

Նա գոհ էր, որ բոյնը չաւերեց, բայց իրեն չէր ներում, որ մայր-ծիտիկի վախի և անհանգստութեան պատճառ էր դար-

ձեր. «Այսուհետև երբե՛ք ձեռք չեմ տայ թռչնի բնին»; — ասաց իւրովի և այս եղաւ նրա կեանքի նշանաբանը։

* * *

Ամեն անգամ, երբ Վազրիկը Բրարայի մօտ էր լինում՝ նրա աչքի առաջ պատկերանում էր իր մանուկ օրերին տեսած թռչնակի բոյնը՝ պարզ, անպաճոյճ, բայց զարմանալի արհեստով հիւսուած... Մանկական մահճի մէջ ննջում էր մանուկը՝ ասես ձւից նոր ելած ճուտիկի պէս. նրա թաթիկները հանգչում էին փոքրիկ վերմակի վրայ, գանգուրներն ասես մի կախարդական ձեռքի անփոյթ շարժումով, սակայն արհեստով, ցրւել էին կլորիկ ճակատի վրայ. դէմքը շառագոյն էր և աչքերն հանգարտ՝ ծածկել էին իրենց կոպերը. մահճակալի քով դրուած էին իր զարմանալիօրէն փոքր հագուստները, որոնց վրայ մի զոյգ մանկական գուլպայ, բայց այնքան փոքր, որ թւում է տիկնիկի գուլպաներ լինէին...

Այս գուլպաներն ամենից աւելի գրաւում էին Վազրիկի ուշադրութիւնը. նա մի արտակարգ, անբացատրելի խանդաղատանք էր զգում յատկապէս դէպի այդ մանրանկար իրերը։ Երբ Բրարան, գործի բերումով, սենեակից բացակայում էր, Վազրիկի ձեռքը ակամայից մեկնւում էր դէպի այդ գուլպաները. նա շոյում էր քնքշօրէն և ապա ձեռքը յետ տանում՝ ասես կրակի դիպչած լինէր. այդ պահուն նա յիշում էր ծառի բոյնը, յիշում էր արտակարգօրէն փոքր ու քնքոյշ ձւիկները, աչքերի առաջ պատկերանում էր մայր-ծիտը իր տարերային սիրով և բոյնը պաշտպանելու անձնուիրութեամբ և Վազրիկի հոգում հնչում էր իր մանկութ օրերի որոշումը՝ «Այսուհետև երբե՛ք ձեռք չեմ տայ թռչնակի բնին»...

Մի արտակարգ խաղաղութիւն էր իջնում նրա հոգուն, երբ ամեն անգամ աչք էր պտտեցնում Բրարայի սենեակի պարզութեան վրայ. դա նա էր՝ այն բոյնը, իր անպաճոյճ պարզութեամբ, բայց և զարմանալիօրէն առինքնող։ Այդ պարզութեան մէջ նա զգում էր մի սրբազան վեհութիւն։ Այս հոգեվիճակը նրան այնքան հաճելի էր թւում, որ կուզենար ժամեր շարունակ մնալ և ըմբոշխնել.

* * *

Այսօր նա բարձրանում էր Բլարայի բնակարանի աստիճաններով և նրան թվում էր դարձյալ, որ պատն ի վեր մագլցում է՝ թռչնակի բույնը գտնելու անդոհով. Նա անհամբեր էր դառնում ամեն անգամ, երբ ուղղվում էր դեպի նրա բնակարանը. Բլարան, շուակը և սենեակը... «Թռչնակի բույնը», այդպես էր բնորոշել նա իր հոգու խորքում և ո՛չ ոք գիտէր այդ մասին, ո՛չ իսկ Բլարան. դա Վաղրիկի սրբազան գաղտնիքն էր, մի գաղտնիք, որ մարդիկ գերեզման են տանում՝ առանց որևէ մեկին յայտնելու։

Այսօր, սակայն, նրա ուշադրությունը գրավեց մի այլ երևույթ. առաջին իսկ աստիճանը կոխելուն պես նրա ականջին դիպավ երգի ձայն. Նա կանգ առավ քարացած ու սկսեց ունկնդրել՝ արտակարգօրէն լարելով իր լսողութիւնը։ Բլարան էր երգողը, Բլարան, որի երգը երբէք չէր լսել Վաղրիկը. լսել էր միայն նրա լացը, տխրութիւնը, բայց երբե՛ք չէր լսել նրա երգը և խիստ զարմանում էր, որ Բլարան երգել գիտէ։ Նրա մէջ ջերմ ցանկութիւն առաջացավ երգը մոտից լսելու և բառերը ջոկելու. Նա ոտների ծայրերի վրայ զգուշութեամբ բարձրացավ ու կանգ առավ միջանցքի ծայրում և նրա ականջին դիպան ժողովրդական երգի հետևեալ բառերը՝

«Կանաչ արտը մի՛ կոխիր,
Քեզի՛ մեռնիմ...
Սիրած եարըդ մի՛ փոխիր,
Եարն անո՜ւշ...
Եարն անուշ է, եարն անո՜ւշ,
Քեզի՛ մեռնիմ,
Սիրած եարըդ մի՛ փոխիր...
Եարն անո՜ւշ»...

Երգի մէջ մի արտակարգօրէն քաղցր շեշտ կար՝ կանացի զգայնութեան և նուրբ ձայնի երանգով։ Այդպես չեն երգում տղամարդիկ, այդպես չեն երգում նաև այլ կանայք. դա նա է, միայն նա, որ այդպէս քնքշութիւն գիտէ դնել իր շարժումների, իր վերաբերմունքի, իր ձայնի մէջ. Եւ Վաղրիկը լսում էր շունչը

քնած, վերացած, ինքնամոռաց վիճակում. Նրան թւում էր թէ ունկնդիր է մի խորհրդաւոր, մի կախարդիչ մեղեդիի, թւում էր թէ գտնւում է ճերմակաթև հրեշտակների թևերին, որոնք տանում են իրեն ամպերի վրայով, օդի բարձր օլորտները, դէպի պայծառ աստղերի բոյլը և նա լսում է աստղերի երգը…

Չգիտէր որքան տևեց իր այս վիճակը, միայն թէ երբ երգը դադարեց, նա մի պահ և անշարժ մնաց, ապա նոր զգաց, որ փակել էր աչքերը. մէկը, ասես, նրա հոգում մրմնջաց «ափսո՜ս» ու անցաւ. միջանցքի խոնաւութիւնը նրան թւաց դաժան ու կոպիտ, երբ աչք ածեց գաճէ պատերին, որոնք տեղ-տեղ ճաքճաքել էին։

Յանկարծ դուռը ճռնչաց ծխնիի վրայ և շէմքում երևաց Բլորան՝ երեխան գրկին. Վաղրիկը շփոթւեց։

— Վաղրիկ, ինչո՞ւ էք կանգնել միջանցքում, ինչո՞ւ ներս չէք գալիս,— հարցրեց նա զարմացած և ուշադիր դիտելով։

— Ներեցէք… Բլո՛րա… Ես չուզեցի խանգարել ձեր երգը,— ասաց նա դեռևս շփոթւած։

— Ա՛խ… ես այնպէս… երեխայիս զբաղեցնելու համար,— ասաց նա խիստ կարմրելով,— ապա շփոթութիւնը թաքցնելու մտօք յարեց,— այսօր դուք մի քիչ ուշացաք, այսինքն… ընդամէնը հինգ րոպէ և ես անհանգստացայ, որ մի բան պատահած չլինի ձեզ, չէ՞ որ դուք շատ ճշտապահ էք և այդ է պատճառը որ դուրս եկայ սենեակից…

Վաղրիկին թւաց, թէ հիմա ինքը գետին կը տապալի երջանկութիւնից, լաց կը լինի և շնորհակալութիւն կը յայտնի Բլորային, որ իրեն սպասել է, որ անհանգստացել է իրեն համար, բայց իր վրայ իշխեց գերմարդկային ճիգով ու ներս մտաւ «թռչնակի բոյնը»։

— Տիկի՛ն Մարիամ,— կանչեց Բլորան միջանցքում,— եկէ՛ք, պարոն Վաղրիկը եկաւ։

Ապա ներս մտնելով՝— Վաղրի՛կ,— ասաց ժպտալով,— փոքրիկիս պահէք, մինչև որ ես Արմէնի ճաշը եփեմ. կարող էք, չէ՞, կը վարժւէք, չէ՞ որ դուք էլ մի օր հայր պիտի դառնաք…

Վաղրիկը գիրկն առաւ փոքրիկին. Նա այնքան քնքոյշ թւաց իրեն, այնքան փխրուն, որ յիշեց նորէն «թռչնակի բոյնը»,

յիշեց այն փոքրիկ ձեռքը, որոնց բռնում էր զգուշութեամբ. երկիւղածով, որ չփշրէր. «Սա էլ մի ծիտիկ է,—մտածեց նա,—քնքոյշ, փխրուն ու անպաշտպան ծիտիկ». այս մտքի վրա մի տարօրինակ խանդաղատանք զգաց, ակամայից շրթունքներն հպեց փոքրիկի այտերին, դա հաճելի թուաց իրեն, նորէն համբուրեց, յետոյ սկսեց խօսել, զբաղեցնել մանկանը։

Փոքրիկի տրամադրութիւնը փոխուեց. նա նախ՝ մի զննող, զարմացած հայեացք նետեց Վաղրիկի դէմքին, ապա յանկարծ թաթիկը նրա դէմքին խփելով ժպտաց ու կանչեց՝ «Պա՛...պա՛»...

«Խեղճ երեխայ, պապադ բանտումն է,— մտածեց Վաղրիկը,—դու այժմ որբի վիճակումն ես. պապադ՝ հոգսի ճիրաններում, մայրիկդ՝ վշտի ու կարիքի»...

Եւ այս մտքի վրայ նրան այնքա՜ն անպաշտպան երեւաց այս ընտանիքը, որ Վաղրիկը ծայրայեղօրէն կարեկցեց. ապա մանկանն սկսեց զբաղեցնել քնքոյշ խօսքերով.

—Օհո՜, Վաղրիկ ջան, Դիանայի՞ն ես զբաղեցնում,—ասաց տիկին Մարիամը ներս մտնելով.—Աստուած մի օր էլ քեզ արժանի անի էդպիսի մի երեխայի, զաւա՛կ...

Ապա շտապ ու ցած ձայնով վրայ բերեց արագ.—Վերջապէս համոզեցի Բլարային դրամը վերցնել իբրեւ պարտք։

—Շատ շնորհակալ եմ, տիկին Մարիամ, թոյլ տուր այսուհետեւ քեզ «մայրիկ» կոչել,—ասաց Վաղրիկը խնդրական եղանակով։

—Իմ անուշ զաւակիս կորստից յետոյ ինձ մի զաւակ պէտք է, որ մխիթարուեմ. քեզնից լաւին ո՞րտեղից կը գտնեմ. հէնց առաջին օրից, որ քեզ տեսայ և քո անձնուիրութիւնդ ու սրտացաւութիւնդ դէպի այս անպաշտպան ընտանիքը, ես քեզ սիրեցի իմ զաւակիս պէս. շատ ուրախ եմ, որ մեր միջև պաշտօնականութիւն չի լինելու. ես քո մայրդ, դու՝ իմ զաւակս։

Եւ այս ասելով՝ տիկին Մարիամը համբուրեց Վաղրիկի ճակատը։ Վաղուց էր, ամբողջ տասը երկար ու ձիգ տարիներ, որ Վաղրիկը հեռացել էր իր մօրից, հետեւաբար և զրկուել մայրական գուրգուրանքներից. և ահա այժմ նա մի հաճելի զգացում ունեցաւ հին, մանկական օրերի, երբ իր մայրը յաճախ խանդաղատանքով գգուում ու համբուրում էր իրեն։

Բլարան ներս մտաւ սուրճի մատուցարանը ձեռին այն պահուն, երբ տիկին Մարիամը համբուրում էր Վաղրիկին.

—Ի՞նչ, այդպե՞ս էք մայր ու որդի դառնում. պայմանը լաւ չէ, տիկին Մարիամ, Վաղրիկն էլ, իբրև ձեր զաւակը, ձեզ պիտի համբուրի.—ասաց նա և յարեց.—Ես ուզում եմ տեսնել, թէ ի՞նչպէս է համբուրելու Վաղրիկը:

Այս անելով՝ նա երեխային առաւ Վաղրիկի գրկից: Տիկին Մարիամը ժպտում էր երջանիկ սպասումի մէջ, նա իր զաւակի մահից յետոյ առաջին անգամն էր այդպէս երջանիկ ժպտում և այդքան մօտ զգում մէկին, որ իր զաւակին էր յիշեցնում:

Յանկարծ Վաղրիկը իր երկու թևերով փարեց տիկին Մարիամին, այնպէս, ինչպէս զաւակն ընդառաջում է իր մօրը՝ ճամբորդութիւնից վերադարձին, և պինդ համբուրեց.

—Բրա՛ւօ,—բացականչեց Բլարան ակամայից, և շիկնեց իր խանդաւառութեան համար:

Փոքրիկ Դիանան էլ մօր գրկում սկսեց թափահարել իր թևերը և բացականչեց՝ «պա՛... պա»...

—Վա՜յ ջա՛նիկս, սա առաջին անգամն է որ «պապա» է կանչում,—ասաց Բլարան և համբոյրներով ծածկեց իր զաւակին,—ապա դարձաւ տիկին Մարիամին,—այժմ հաւատացած եմ որ գուշակութիւնս պիտի կատարուի. Արմէնը շուտով պիտի ազատուի, քանի որ Դիանան «պապա» կանչեց:

—Աստուծով, Աստուծով,—ասաց Մարիամը և ինքն էլ համբուրեց երեխային:

Վաղրիկը լուռ մնաց, նա չասաց, որ Բլարայի բացակայութեան, երբ ինքն համբուրել էր Դիանային, երեխան «պապա» էր բացականչել:

Քիչ յետոյ Վաղրիկն իջնում էր աստիճաններով, Արմէնի ճաշի կապոցը ձեռին. այսօր նրա ստացած տպաւորութիւններն ու ապրած յոյզերը շատ աւելի ճոխ էին, աւելի այլազան քան երբևէ: Նրա հոգում մէկը միւսի յետևից փայլատակում էին արտայայտութիւններ. ահա՛ Դիանան, որ կանչում է «Պա-պա», ահա՛ Բլարան, որ ասում է ժպտալով՝ «Չէ՞ որ մի օր էլ դուք պիտի հայր դառնաք», «Ես ուզում եմ տեսնել, թէ ինչպէս է համբուրում Վաղրիկը», ահա՛ և տիկին Մարիամը որ ասում է՝ «Զաւակս, ես քեզ սիրեցի իմ զաւակիս պէս»... Եւ այս բոլոր

տրամադրութիւնների վրայ տարածւում էր Բլարայի երգը նուրբ, յուզիչ ելևէջներով, Բլարայի կանացի քնքշութեան յատուկ երանգով։ Նրան զարմանք պատճառեց այն միտքը, որ «մի օր էլ ինքը պիտի հայր դառնայ», ապա զարմանքի միջից գլուխ բարձրացրեց վիշտը՝ անբացատրելի ու անիմանալի։ Վազ-րիկը հոգոց հանեց այս մտքի վրայ, յետոյ նրա վրայ իր թեւերը փռեց «Թռչնակի բոյն»-ի արտակարգ, անպաճոյճ պարզութիւնը և խաղաղութիւնն իշխեց նրա հոգուն։

ԵՐԿՈՒՆՔԻ ԽՈՀԵՐ

Բանտի սովորական օրերից էր, այն օրերից, երբ ո՛չ մի բանտարկեալի մտքով չի անցնում թէ յատկապէս այդ օրը կարող է ազատւել. բայց կեանքը, անիմանալի և խորախորհուրդ, իր անակնկալներն ունի. անսպասելին և պատահականը յաճախ երջանիկ բովանդակութեամբ են լցնում մեր կեանքը։

Ձմեռնամուտի օրեր էին. առաւօտեան ժամը տասն էր, որ միջանցքից Արմէնի ականջին հասաւ հերթապահի ձայնը որ ասում էր՝ «Աւանեսեա՛ն, հրամեցէք, եկէք»... Երբ քաղաքավար է ոճը, նշան է թէ մի դրական բան է կատարւելու։

Աւանեսեանը դուրս եկաւ միջանցքի երկաթաճաղ ծանրանիստ դռնից. այդ տեսաւ Արմէնը իր խցիկի դռան կլոր անցքից։ Քիչ յետոյ հերթապահը կանչեց նաև Սիրունեանին. սա էլ դուրս եկաւ։ Արմէնի սիրտը սկսեց տարօրէն բաբախել. «Հիմա հերթը իմն է, ինձ էլ կը կանչեն», — մտածեց նա և վերարկուն հագաւ։ Անցաւ հինգ րոպէ, տաս րոպէ, բայց Արմէնին չէին կանչում. սկսեց կասկածել. «Արդեօք հարցաքննութի՞ւն է թէ՞ ազատում են», — այս երկու հարցերն զբաղեցրին նրա միտքը այնքան, մինչև որ Աւանեսեանն ու Սիրունեանը միմեանց յետևից վերադարձան և իրերն առած՝ արագ մեկնեցին բանտից։

Տիրեց խորը լռութիւն. մերթ ընդ մերթ միայն լսւում էր պահակի քայլերի ձայնը միջանցքից դուրս, ծանրանիստ դըռան յետևում։ Արմէնը խորասուզւեց մտածմունքների մէջ. մէկ կողմից նա ուրախ էր, որ գոնէ երկուսը ազատւեցին, բայց միւս կողմից տխուր էր, որ տեսուչն ու ինքը դեռևս պահւել էին. «Արդեօք մեզ երկա՞ր պիտի պահեն», — խորհում էր նա, «բայց

վերջապէս ի՞նչ է մեր յանցանքը, յատկապէս իմ յանցանքս, որ առաջին բանտարկութիւնից յետոյ որևէ քայլ չեմ արել. որ հակապետական կամ հակաօրինական լինէր. ո՞ւր է օրէնքը, վերջապէս արդարութիւն կա՞յ այս աշխարհում. մեղք չե՞ն մեր կանայք, երեխաները, որ տառապում են գուցէ և մեզնից աւելի, ի՞նչ է նրա՛նց յանցանքը»,—այս և նման մտքեր անընդհատ գրոհում էին նրա ուղեղում և նա չէր կարողանում պատասխան գտնել. յետոյ նրա աչքերի առաջ պատկերացաւ Երաբուն՝ զաւակը գրկած... մանուկը թափահարում է իր թևերը; մերթ ճչում, մերթ՝ ժպտում, նորաբաց վարդի պէս, որից արև է ճառագում տաք և յստակ, մանկական աչքերը փայլում են ցօղի կաթիլների պէս՝ վարդի թերթերին։ Արմէնը ժպտաց. նրա դէմքը պայծառացաւ, աչքերը փայլեցին սիրով ու կարօտի հուրով և ակամայից մեկնեց ձեռները. մանկանը գրկելու համար, բայց ձեռները մեկնուած մնացին օդում և պատկերը չքացաւ... Նա զարմանքի ու ցաւի արտայայտութեամբ նայեց իր շուրջը, շփոթւեց, խցիկի կիսախաւարն ու մերկ իրականութիւնը տեսնելով. նրան թւաց, որ իր ձեռից թռաւ կապոյտ թռչունը, որին այլևս երբէ՛ք, երբէ՛ք պիտի չտեսնէր...

Այդ օրը ևս, սովորականին պէս, Վաղրիկը ճաշ բերեց և հերթապահի միջոցով բարև ուղարկեց Արմէնին, բայց ազատութեան մասին՝ ո՛չ մի խօսք. Արմէնի տագնապը խտացաւ, մղձաւանջը ճնշում էր նրա հոգին, ապա ժամեր անցնելուց յետոյ նա տակաւ առ տակաւ սկսեց վերագտնել իր նախկին հոգեվիճակը և դարձաւ անձնապաստան ու խոհուն։

—Պէտք է նախ պարզօրէն որոշել,—խորհում էր նա,—այս հալածանքի միտ բանին և ապա ըստ այնմ կազմել գործունէութեան ծրագիր. կրթական վարչը մէկը միւսի յետևից փակում է մեր ազգային դպրոցները. աշակերտները պիտի ցրուեն պետական դպրոցներում, ուր չկայ հայոց լեզուի և պատմութեան դասաւանդում. ուրեմն մեր երեխաները պիտի զրկուեն մայրենի լեզուից և մշակոյթից... Նրանք աստիճանաբար, տարէց-տարի պիտի իւրացնեն տիրող ազգի լեզուն և մշակոյթը, պիտի ուծանան և տասնամեակներ յետոյ գաղութը պիտի կերպարանափոխուի, մեր դարերի ճիգը՝ վառ պահելու մեր մայրենի լեզուն

և մշակոյթը՝ ի գերև պիտի ելնի. մենք ամօթով պիտի նայենք մեր նախորդ սերունդներին, որոնք հրի, սրի և հալածանքների միջով իսկ կարողացան անմար պահել մեր լեզուական ջահը և փոխանցել մեզ։ Ի՞նչ պիտի անել, ուրեմն, մեր լեզուն և նոր սերունդը փրկելու համար կորստից, ամօթը սրբելու՝ մեր ճակատից. պէտք է կազմակերպել հայոց լեզւի և պատմութեան գաղտնի դասաւանդութիւն, այնպէս, սակայն, որ հակակառավարական ըմբոստութեան բնոյթ չկրի, որ զուտ մշակութային ինքնապաշտպանութիւն դառնայ, մանաւանդ որ այս երկրում հայութիւնը քաղաքական նպատակ չի հետապնդում, այլ ապրում է իբրև կրօնական և մշակութային մի համայնք։

Այս եզրակացութիւնն հանելով՝ Արմէնը մաքում որոշեց ազատութեան մէջ հետամուտ լինել այդ նպատակի իրագործման։ Պէտք է փրկել նոր սերունդը այլասեռումից և ուծացումից, պէտք է մոլեռանդ քուրմի պէս նուիրուել նոր սերնդի դաստիարակութեան։ Երեխաների ապագան դարբնել. ահա՛ նուիրական մի գործ, որ բոլոր քաղաքակիրթ ազգերին զբաղեցնող էական հարցերից մէկն է։

Նա մտովին սկսեց թերթել մեր ստեղծագործ ժողովրդի պատմութեան էջերը։ Ահա՛ հինգերորդ դարը, երբ դեռ նոր էր գտնել հայկական այբուբենը, երկիրը ծածկուած էր դպրոցական ցանցով, հայ մանուկները արտակարգ եռանդով ու յափշտակութեամբ սովորում էին մայրենի լեզուն, պատրաստում եկեղեցական և մշակութային կոչման համար։ Ահա՛ ս. Մեսրոպը, տառերի գիւտարարը, որ մեծ եռանդով ու անձնուիրութեամբ դպրութիւն է ուսուցանում Գողթանում և այլուր։ Ահա՛ նրա բազմաթիւ աշակերտները ցրուած Հայաստանի ամեն կողմերը՝ անդուլ ու անդադար սովորեցնում են, կրթում ու դաստիարակում, այս ձևով դարբնելով հայ ազգայնութիւնն ու մշակոյթը, որը պիտի դառնար մի հզօր պատնէշ օտարի նուաճող և ձուլող քաղաքականութեան դէմ։ Հայ պետականութեան անկումից յետոյ մեր մշակոյթն էր որ դարձաւ ինքնապահպանման միջոց։ Ոսկեդարեցին մատենագիրներ, որոնք Վարդանանցը ներբողեցին, հայոց մատենագրական պատմութիւնը կերտեցին, մշակեցին քրիստոնէական հաւատքի հիմքերն ու պաշտպանութիւնը՝ մազդեական ձուլող և հայ ազգայնութիւնը ջնջող կրօնի դէմ։ Այսպէս եղաւ սկիզբը։

Այնուհետև արշավանքներ տեղի ունեցան, օտար տիրապետություններ հաստատվեցին Հայաստանում, այդ արշավանքներն ու տիրապետությունները դարեր տևեցին, բայց մեր ժողովուրդը տոկաց և մեր մշակույթի սրբազան ջահը ձեռքէ-ձեռք՝ անցու- լեռից-լեռ, վանքից-վանք, խուցից-խուց և Ոլիմպիական անմար կրակի պէս հասավ մեր ձեռքը։ Մի՞թե մենք անզոր ու ապիկար ենք այնքան, որ չպիտի կարողանանք այդ սրբազան ավանդը փոխանցել մեր հետագայ սերունդներին...

Նրա մտքերն ընդհատվեցին, երբ միջանցք մտավ հերթապահը։ Քիչ յետոյ նա բացեց Արմէնի խուցի դուռը. «Թող մի քիչ օդը փոխուի», —ասելով։

—Հասէյն աղա, —ասաց Արմէնը, —մեր երկու հայրենակիցներն այսօր ազատվեցի՞ն։

—Այո՛, կէսօրւայ մոտ էր, որ նրանց կանչեցին, —ասաց Հասէյնը։

—Տեսուչը նստած է դեռևս, ի՞նչ է անում։

—Տեսուչը քեզ բարևում է, ասում է մի՛ մտածիր, ինչպես մի օր էլ հերթը քեզ կը հասնի։

—Բարևիր իմ կողմից էլ, ասա որ արդար բանտարկեալը միայն անարդարութեան մասին կարող է մտածել, ուրիշ ոչինչ։ Եթէ մի բան արած լինէինք՝ նստելը ցաւ չէր։

—Իշխանութիւնը մտավախ է, որ դուրսը խռովութիւններ կը լինեն, ա՛յս է պատճառը ձեր բանտարկութեան. պիտի համբերէք։

—Բայց, Հասէյն աղա, զուր է իշխանութեան մտավախութիւնը. հայ համայնքը երբէ՛ք մտադիր չէ ըմբոստութեան. Մենք 350 տարի ապրել ենք Իրանում և երբեք ըմբոստութեան քայլ չենք արել. Շահ Աբբաս մեծը հայերին բերեց Իրան, այս երկրի առևտուրն ու արհեստները ծաղկեցնելու նպատակով. այդպէս էլ եղաւ և Իրանի իշխանութիւնները միշտ գոհ են եղել հայերից։

—Ի հարկէ, ի հարկէ, հայերը օգուտ տուող մարդիկ են, բայց այս ձեր նստելը նրա կարգադրութիւնն է, —ասաց Հասէյն աղան ձայնը զգալիօրէն իջեցնելով և բութ մատով իր ուսի վերեւ ցուցնելով, ապա նիւթը փոխելու նպատակով շտապ հարցրեց, — որեւէ բանի կարիք ունե՞ս...

—Ո՛չ, —ասաց Արմէնը. —սպասում եմ որ ինձ էլ ազատեն։

—Ինչպէս, ինչպէ՞ս, —բացագանչեց Հասէյնը և բանտալին դարձրեց։

Արդէն մութն էր. միջանցքում մի խուցի դուռ բացեց. լսուեց շղթայի չխկոց. Տէր Ալին էր, նրան թողին միջանցքում շրջելու։

Նա դարձեալ սկսեց մանր քայլերով վազել միջանցքի մի ծայրից միւսը, ինչ որ բառեր մրմնջալով։ Նա մերթ կանգ առնելով միջանցքի լապտերի աղօտ լոյսի առաջ՝ աչքերը կիսախուփ՝ արագ թարթելով թւաբանական բազմապատկութիւններ էր անում։

Արմէնը իր դռան աչքից դիտում էր խեղճին. նրա մարմնով սարսուռ անցաւ. երբ ակամայ մտածեց թէ՝ «իսկ եթէ ինձ երկար պահեն այս բանտո՞ւմ... ի՞նչ կը լինի երեխայիս և կնոջս վիճակը, ի՞նչ կը լինեն մեր մշակոյթի պաշտպանութեան իմ ծրագիրները»... Նա պատասխան չգտաւ այս հարցերին. հոգին խուճապի էր մատնել այս յանկարծակի, մռայլ հարցերից։

Շառաչում էին Տէր Ալիի շղթաները, լսում էր նրա մանրիկ, բոկոտն քայլերի քուքոցը. «Ահա՛ քո ապագան. եթէ բանտարկութիւնդ երկար տեւի», —հնչեց մի ձայն իր հոգում և սարսուռը թափառեց իր մարմնի մէջ...

«Եահո՞ւ»... կանչեց յանկարծ Տէր Ալին. նրա այս բացագանչութիւնը ասես շարունակութիւնն էր Արմէնի մտքերի։ «Եահո՜ւ... եահո՜ւ»... կանչեցին այս ու այն մասից և հեռաւոր խուցերից, ծաղրելով խեղճին։ Արմէնը փշաքաղւեց. նա թափով յետ գնաց դռնից և թիկունքը տալով պատին՝ սկսեց հեւալ. դէմքը պատի գաճի պէս անգոյն էր։ Մի քանի վայրկեան այսպէս մնաց նա. ապա յիշեց իր ազատութեան մասին Հաւէյնի բարեմաղթութիւնը՝ «Ինշալլա՜հ... ինշալլա՜հ»... Բայց արեւելքում ամէն հարց լուծւում է ճակատագրականութեան ըմբռնումով, ամէն անելանելի վիճակ լուծւում է նախախնամութեան ապաւինութեամբ. դեռեւս խոշոր հարցական էր իր ազատւելը։

Գիշերի խաւարը ծանրօրէն իջել էր բանտի վրայ. լապտերների տամուկ լոյսի իշխանութեան սահմանները խիստ փոքր էին, նեղ. և խաւարն աւելի՛ էր ճնշում հոգիների վրայ. աւելի՛ մռայլում նրանց խոհերը, սև շղարշով պատում նրանց յոյսերը։

Արմէնը չքնեց այդ գիշեր. ծանր ու յուսահատ մտքերի անձնատուր՝ նա եկաւ այն եզրակացութեան, որ ինքն այլեւս չը պիտի ազատուէր, որ իշխանութիւնը ուզեցել է պահել իրեն և

տեսչին այս մութ բանտում՝ ի սաստ և ի վախ դրսում եղածների. այս ձևով կրթական վարիչը աւելի՛ գիտութեամբ պիտի կարողանար փակել այս ու այն դպրոցը, կրճատել մշակութային դարաւոր իրաւունքները, շուտով հայ փոքրամասնութեանը սեղմել եկեղեցու չորս պատերի մէջ, իբրև լոկ կրօնական համայնքի. ու թերևս մի օր էլ այդ եկեղեցուն մեկնել իր ձեռքը. չէ՞ որ նորազարթ ազգայնական իշխանութիւններն աշխատում են սեղմել կրօնական մոլեռանդութիւնը. հարթել այդ գետնի վրայ եղած ծայրայեղ խտրութիւնները՝ վերացնելով կանանց ծածկոցը, տղամարդկանց գնելով միևնոյն տեսակի գլխարկի տակ, նոյն իսկ մահմեդական կանանց թոյլատրելով յարաբերել քրիստոնեայ տղամարդկանց հետ։ Եւ այսպէս, նոր քաղաքականութիւնը միտում է հարթել բոլոր պատնէշները և ստեղծել մի ձոյլ, միատարր ազգ. նա իր ազգայնական վազքի մէջ մոռանում և անտեսում է փոքրամասնութիւնների մշակութային ու պատմական առանձնայատկութիւնները, նրանց ուրոյն կերպարանքը, նրանց յատուկ շաղախը և վերջապէս նրանց բնական դիմադրողականութեան ոյժը. նա չի տեսնում այս բոլորը՝ իր ազգայնական տենդի մէջ և կարծում է երկաթէ ձեռքով հարթել ոգեկան կարողութիւնները։

Լուսացաւ։ Բանտի միջանցքում սկսեց ամենօրեայ միօրինակ անցուդարձը. դռներ բացւեցին ու փակւեցին, թէյ բաժանեցին խուցերին, որից յետոյ դարձեալ լռութիւն իշխեց ամենուրեք։

Արմէնի աչքերն անքնութիւնից կարմրել էին, դէմքն այրւում էր անախորժ ջերմից. մէկ գիշերում նա նիհարել էր աւելի՛ քան բանտարկութեան միւս օրերը միասին առած։ Պէտքարանի ծորակի ջրով նա շփեց իր դէմքը ղղւանքով. մի քիչ թարմացաւ. ձեռները լւաց օճառով մի քանի անգամ. սրտախառնութիւն ունէր թէ՛ հացից և թէ՛ անքնութիւնից դժուարութեամբ խմեց թէյը, բայց չկարողացաւ ոչինչ ուտել։ Նրա միակ մխիթարիչն ու մտերիմը ծխախոտն էր, որի ծուխը ներս շնչեց ագահութեամբ։

ԱՆՍՊԱՍԵԼԻՆ

Կէսօրւայ մօտ է. Արմէնը քայլում է իր խուցում և ծըխում, երբ հերթապահը կանչում է նրա անունը, Արմէնը մի

պահ չփոխում է, մի թեթև դող է անցնում նրա մարմնով՝ «ազատո՞ւմ են, թէ...» անցնում է նրա մտքով։ Հերթապահը թեթև ժպտում է, դա նշան է որ մի լաւ բան պիտի կատարուի. մի՞թէ, իրօք, իրեն ազատեն պիտի. ո՜հ, ինչ լա՜ւ կը լինի... Բյուրան, Դիանան... կը սեղմի կրծքին իր սիրելիներին... և վերջապէս իր ծրագիրները... Այս մտքերով նա հետևում է հերթապահին. բանտի գրասենեակում նրան յանձնում են մի այլ հերթապահի. այս անգամ զինւոր ևս չեն դնում նրա հետ, դա լաւ նշան է, խստութիւնը մեղմել, հսկողութիւնը թեթևացնել՝ նշանակում է վիճակի մեղմացում, գուցէ և ազատութիւն։

Քննիչի սենեակը։ Դէմքերը մռայլ չեն։

—Համեցէք, նստէք,—ասում է քննիչը։

Արմէնը նստում է սպասողական վիճակում. նրա հայեացքն ընկնում է անկիւնում դրած իր ճամբրուկին... Որբացած, խեղճացած է երևում ճամբրուկը. ամեն ճամբորդութիւն նրա վրայ մի հետք է թողել. նա քերծուածքներ ունի, անկիւնները մաշուած են... «խեղճ, խեղճ ճամբրուկս»,—մտածում է նա,— «ի՞նչ ես արել իմ բացակայութեան. հաւատարի՞մ ես մնացել ինձ, թէ՞ դաւաճանել ես. ո՜հ, եթէ այսպէս է՝ նզովում եմ քեզ, իսկ եթէ ոչ՝ օրհնում եմ, օրհնում»...

Քննիչը խօսում է մի այլ պաշտօնեայի հետ. ապա նա դառնում է Արմէնին.

—Մօտեցէք այս սեղանին. կարդացէք այս թուղթը և ստորագրէք. ձեզ ազատում ենք. սակայն այս թուղթը պիտի ստորագրէք։ Գիտենք թէ դուք ո՛վ էք. բայց մեր օրէնքների դէմ չպիտի գործէք։

—Խնդրում եմ դուք կարդացէք, ծանօթանամ բովանդակութեանը,—ասում է Արմէնը շտապելով, մի անգամ ևս զգալով, որ պետական լեզուն չգիտէ։

Քննիչը կարդում է։

«Ես, ներքոյ ստորագրողս, խոստանում եմ դէմ չգնալ երկրի օրէնքներին, լինել օրինապահ և երբէք այլևս չզբաղուել դպրոցական հարցերով։»

—Բայց մի՞թէ փաստ ունէք ապօրինի քայլերիս, մի՞թէ առաջին բանտարկութիւնից յետոյ ես զբաղուեցի՞ դպրոցական գործով,—առարկում է Արմէնը։

—Մի՛ վիճէք. սա ձեւական մի բան է, ձեր միւս ընկերներն էլ ստորագրեցին. իսկ ձեզ ասում ենք, որ եթէ երբեւէ զբաղ-ւէք դպրոցական հարցով՝ ապա կընկնէք այստեղ ու այլեւս դուրս չէք գայ,—ասում է միւս պաշտօնեան։

«Թէեւ ապօրինի քայլ չեմ անել, բայց ստորագրում եմ»,—գրում է Արմէնը թղթի տակ և ստորագրում։

—Այժմ մի քանի հատ էլ նուշով հիւրասիրեմ ձեզ,—ասում է քննիչը՝ բռնով նուշ առաջարկելով.—ապա վերցրէք ձեր ճամբրուկը և ազատ էք։

«Վերցրէք ձեր ճամբրուկը և ազատ էք»,—ա՛յս խօսքն է որ իրապէս ուրախացնում է Արմէնին. նա խանդաղատանք է զգում դէպի իր անշունչ ընկերը, դէպի իր ճամբրուկը,նա իրեն ազատեց մեծ մտահոգութիւններից…

Նա վերցնում է մի-երկու նուշ, առ ի քաղաքավարու-թիւն, ձեռքն է առնում ճամբրուկը և հրաժեշտ տալիս քննիչին։

—Ինչպէ՞ս ազատուեցիր,—ասում է հերթապահը դռան մօտ։

—Այո՛, գնանք իրերս վերցնելու,—ասում է Արմէնը շտապ։

Նա նուէրներ է տալիս բանտի այս ու այն պաշտօնեային, առնում է իրերը և քարշ տալով անկողինն ու ճամբրուկը, ել-նում է փողոց…

193… թուի Դեկտեմբեր ամսի 12-ն է։ Երկինքը մռայլ ամպերով է պատած. Ալբորզը կորել է մշուշների մէջ և տե-ղում է մեծ փաթիլներով առաջին ձիւնը, որ գետնին չհասած՝ հալւում է, մայթերը թրջելով։ Արմէնը կառք է նստում, կառքի ծածկոցը քաշած է, բայց ձիւնի փաթիլները մերթ ընդ մերթ նետւում են ներս և զարկում նրա դէմքին։ Այժմ միայն նա զգում է, որ թարմ օդում է գտնւում, բանտային խուցի անա-խորժ հոտը դեռեւս զգում է իր հագուստեղէնի մէջ, ասես թէ հի-ւանդանոցից նոր է դուրս եկել։

Նա նայում է փողոցի անցուդարձին, փնտռում է ծանօթ դէմքեր, բայց իզուր, մարդիկ շտապում են ձիւնից պատսպար-ւելու, որ աւելի թրջում է քան սառեցնում։

Կառքը կանգ է առնում. Արմէնն իրերը քարշ տալով՝ բարձրանում է աստիճաններով. զանգահարում է։ Սիրտը, բռնը-ւած թռչունի պէս, թպրտում է կրծքի տակ, ահա՝ հարազատ, ծանօթ քայլերի ձայնը…

—Բյո՛րա... Գիա՛նա...

—Պա՛-պա՛...

—Հրեշտա՛կս, դու արդեն խօսո՞ւմ ես, պապա՞ ես կանչում... Գրկում և համբուրում է իր զաւակին, իր փոքրիկ, իր փխրուն զաւակին, և ահա ցնդում են բանտային տառապանքները, մոռանում է ամեն վիշտ ու հոգս։

ԸՆԿԵՐԸ

—Չես կարող երևակայել, Արմեն, թե քո բանտարկութեանդ ընթացքում ինչպիսի անձնուիրութիւն յայտ բերեց Վաղրիկը. նա ինձ ստիպեց որ Գիանայի մօտ մնամ, ճաշը ինքը բերի բանտ. և ամեն օր, վայրկենական ճշտապահութեամբ, նա գալիս էր և ուտելիքը բերում... Չեմ կարող նկարագրել, թե ինչպես էր տառապում քեզ համար, ինչպես էր յուզւում. աչքերը լցւում էին արցունքով ամեն անգամ, երբ հարց էի տալիս՝ թե ե՞րբ կազատուի Արմենը։ Նա, այդ պահերին, ամեն կերպ աշխատում էր ինձ յուսադրել, խրախուսել, և մինչև իսկ մի անգամ ասաց, որ եթե հնար լինէր՝ ինքը պատրաստ էր քեզ փոխարինելու բանտում... Ահա՛ մի ճշմարիտ ընկեր. զարմանալիօրէն անձնազոհ. զգայուն սրտի և բարձր բարոյականի տեր. ինչպե՞ս մինչև այժմ մենք նրան չէինք ճանաչել հարկ եղածին պես։ Նա արհամարհում էր բոլոր վտանգները, ուշք չէր դարձնում մեր փողոցում հսկող գաղտնիների վրայ և ինձ յանձնարարեց ասել ի պահանջել հարկին, որ մեր ազգականն է, ուստի օգնում է բանտարկեալ հարազատին։ Տիկին Մարիամը ամեն պահ վկայ է եղել Վաղրիկի արտակարգ սրտացաւութեան. այժմ նրան իր զաւակն է համարում և Վաղրիկն էլ նրան մայրիկ է կոչում. սա մեծ մխիթարանք է երկուսի համար էլ, քանի որ տ. Մարիամն իր զաւակին վաղաժամ կորցրել է, իսկ Վաղրիկն էլ իր մօրից տաս տարի է որ հեռացել է... Երբ Վաղրիկը գայ՝ դու յատուկ շնորհակալութիւն յայտնիր նրան՝ մեզ ցոյց տուած թանկագին աջակցութիւնների համար.—ասում էր Բյորան։

—Բնական է. բանտային հերթապահից իմացայ, որ Վաղրիկն է ճաշ բերողը. երբ կաթսայի տակը գրել էի, որ այդքան ուտելիք չուղարկէք, այն ժամանակ դեռևս չգիտէի, որ նա էր

ճաշ բերողը. բայց երբ իմացայ, շատ զգացւեցի և միշտ մտածում եմ՝ թէ ինչպէս պիտի երախտահատոյց լինենք այդ անգին ազային։ Բո՛յրս, չէ՞ որ իսկական ընկերն ու բարեկամը յայտնւում է մարդուս դժբախտութեան օրերին։ Դու գիտես որ ես շատ բարեկամներ ունեմ, բայց դրանցից քանի՞սը կան այսօր հրապարակում, մեզ՝ աքսորեալներիս կողքին... Բացի Վաղրիկից, Վահրամից և մէկ-երկու ուրիշներից. նրանք էլ խօսքով են բարեկամ, բայց ո՛չ գործով։

Վաղրիկն ինձ էլ բանտում խրախուսում և յուսադրում էր հերթապահի միջոցով, որին նուէրներ էր տալիս և յանձնարարութիւններ անում. չգիտես, Բո՛յրս, թէ այսպիսի վարմունքը ի՛նչ խոշոր դեր է կատարում բանտարկեալի կեանքում, երբ նա հոգեկան մխիթարանքի և ամրապնդման կարիքն ունի. Նման դէպքերում զգում ես, որ դրսում յոյսի մի խարիսխ ունես, որին կարող ես անվերապահ կերպով ապաւինել. և ի՛նչ կը լինէր մեր կեանքը, եթէ նման հազւագիւտ խարիսխներ, յենարաններ չունենայինք։ Գիտե՞ս թէ որքան երախտապարտ եմ նաև քեզ, դու որ և՛ երեխայիս մօր դերումն ես, և՛ ընտանիքի տղամարդու, երբ նա բացակայ է, և՛ ընկերոջ, երբ նա վտանգի մէջ է...

Այս անգամ՝ Արմէնը գրկեց Բոյրային և մինչդեռ նրանք համբուրւում էին՝ հնչեց մուտքի զանգը։

—Վաղրիկը կը լինի, ասաց Բոյրան հապճեպով և դուրս նետւեց սենեակից։

—Վաղրի՛կ, հնչեց Բոյրայի ձայնը նախասենեակից.—մի անակնկալ ունեմ ձեզ համար, տեսէք ո՞վ է եկել մեզ մօտ...

Վաղրիկը հետաքրքրւող հայեացքով ներս նայեց և, Արմէնին տեսնելով՝ մի պահ չգիտցաւ անելիքը... Ինչպէս որ անակնկալ էր իրեն համար, ապա սթափւեց և գրկեց ժպտացող Արմէնին։ Նրանք երկար այդպէս մնացին՝ իրար գրկած համբուրւելիս։ Իսկ Բոյրան ժպտում էր արցունքների միջից և մտածում. «երկուսն էլ իրար արժեն... երկուսն էլ»...

—Զարմանալի է,—ասաց Վաղրիկը Արմէնի գրկից ազատւելով,—Բոյրան գիտէ, որ ես այս ժամերին երբէք չեմ եկել ձեզ մօտ. գալիս եմ սովորաբար առաւօտները. բայց քիչ առաջ կարծես մէկն ինձ ասաց. «Վեր կաց և գնա՛ Արմենենց»... զարմանալի է,

բնազդս ինձ չխաբեց։ Ուրախ եմ, որ ազատեցիր, շնորհաւորում եմ, Բյա՛րա։—

—Վաղրի՛կ, ես և Բյարան չգիտենք ինչ ասելով և ինչպէս շնորհակալ լինենք քեզ՝ անձնուէր և ընկերական վերաբերմունքիդ համար. կը ներես, որ քեզ այդքան յոգնութիւն ենք պատճառել,—ասաց Արմէնը։

—Ես իմ պարտականութիւնս եմ կատարել, այն էլ չնչին չափով միայն,— ասաց Վաղրիկը ճնշելով հայեացքը գետնին,— քո բանտարկութիւնդ անձնական գործերից բղխած չէր, այլ հանրային պարտականութեան, մեր մշակոյթի և մեր ժողովրդի համար. հետևաբար մեզնից ամէն մէկը պարտաւոր է իր հնարաւորին անել նման դէպքերում՝ մեր հանրային գործիչների տառապանքը թեթևացնելու համար. ես պարտաւո՛ր էի անելու և պարտաւո՛ր եմ զգում ինձ այսուհետև աւելի՛ն անելու։ Իսկ թէ ինչո՛ւ ուրիշները անտարբեր են՝ դա էլ մեր ժողովրդի դժբախտութիւնն է, մենք պարտաւոր ենք այդպիսիներին գիտակցութեան բերել և գործի ու զոհաբերութեան մղել։ Մեր այս աշխատանքների ու զոհաբերութեան պտուղն վարձատրութեան չը պիտի սպասենք. մեր ժողովուրդը վարձատրել չգիտէ, նա մեծ մասամբ մահուանից յետոյ է որ գնահատում է իր գործիչներին։ Այժմ մենք լրջօրէն պիտի խորհենք մեր լեզուն և մշակոյթը ոտնահարումից պաշտպանելու մասին։

Նրա խօսելու պահուն Արմէնը զարմանքով և հիացմունքով լսում էր և միաժամանակ մտածում. «Ինչ յստակօրէն և խորատեսութեամբ արտայայտում է իր մտքերը, որ միաժամանակ իմն են. ու կարծես կարդացել է իմ հոգին. որքա՞ն հասունացել է այս տղան, որքա՞ն հաճելի է լսել սրան»…

Ներս մտաւ տիկին Մարիամը, որ արդէն տեսել էր Արմէնին։ Վաղրիկը ոտքի կանգնեց և իր տեղն առաջարկեց նրան։

—Վաղրիկ, տեսա՞ք տիկին Մարիամի դաշնակութիւնն ինչ շատ կատարեց, յիշո՞ւմ էք, սուրճիս գաւաթը դաշնակեց,—ասաց Բյարան։

—Այո՛, տիկին Մարիամի ո՛չ միայն բերանն է տաճար, այլև սիրտը,—պատասխանեց Արմէնին,—հա՛ մէկը, Արմէն, որին արժէ շնորհակալ լինել. մեզ համար նա իր անձնական ցաւն ու վիշտը մոռանում է,—ասաց Վաղրիկը։

— Դուք բոլորդ էլ իմ զաւակներս էք. ես այժմ շնորհակալ եմ Աստուծոյ. նա. ճիշտ է, իմ զաւակս խլեց իմ ձեռից, բայց ձեզ տուաւ՝ այժմ ինձ մխիթարում է. Մեռնեմ իր գառնուկին, — և տիկին Մարիամը երկիւղածութեամբ խաչակնքեց իր երեսը։

Բրաւոն սուրճ բերեց։

— Այս անգամ, — ասաց նա, — Արմէնիս համա՛ր միայն գուշակեմ, տիկին Մարիամ, տեսնենք գործ կը գտնի՞ շուտով։

Վաղրիկի աչքերը լցւեցին, նա թևերով ծնկներին յենւեց և գլուխը թեքեց ներքև, որպէս զի իր յուզումը չնկատեն. Բրաւոյի մտահոգութիւնն իր մտահոգութիւնն էր. նրա վիշտը՝ իր վիշտը։ «Այսպիսի ընտանիքը կարիքի մէջ լինի՜, — խորհում էր նա, — իսկ անգին մարդ-գազաններ խաղաղ ապրում են... Ո՞ւր է արդարութիւնն այս աշխարհի, սա ի՞նչ աշխարհ է»...

Արմէնն էլ, Վաղրիկի նման, չէր հաւատում գուշակութիւններին, բայց Բրաւոն ու մանաւանդ տիկին Մարիամը կանանց յատուկ նախապաշարումներ ունէին։ Բրաւոն զգում էր, որ Դիմանային ունենալով, այնուհետև Արմէնի բանտարկութիւններից յետոյ սկսել էր նախապաշարել, հաւատ ընծայել մանաւանդ տիկին Մարիամի երազահմայութեան։ Գիտակցութիւնն իրեն թելադրում էր, թէ դա անիմաստ է և սուտ, բայց բընազդը, անըմբռնելի զգայական տարրեր և մի անորոշ ուժ նրան մղում էին հաւատ ընծայելու գուշակութիւններին։

— Շուտով գործ պիտի ունենաս, — ասում էր տիկին Մարիամը Արմէնի սուրճի գաւաթին նայելով. — շատ գլուխներ են երևում քո գլխից, դու խօսում ես նրանց հետ, ո՛րդիս, ձեռներդ շարժելով...

Եւ մինչդեռ տիկին Մարիամը գուշակում էր, Արմէնն ու Վաղրիկը ժպտում էին բարեկամօրէն ու գլխով հաւանութեան նշան անում, խրախուսելու ու նաև չվիրաւորելու համար տիկին Մարիամին։

«Մինչև Արմէնի գործի անցնելը պէտք է նիւթապէս ու բարոյապէս նեցուկ հանդիսանալ այս ընտանիքին. — խորհում էր Վաղրիկը, — Բրաւոն տագնապ է ապրում, նրա հպարտութիւնը թոյլ չի տալիս արտայայտելու և ուրիշների մօտ պարզելու իր ընտանեկան տագնապալի վիճակը. նա թերևս Արմէնից էլ է թաքցնում իր հոգեկան վիճակը», և այս խորհելով՝ նա այնպէս խղճահարւեց, այնպիսի մի կարեկցութիւն ծփաց նրա հոգում, որ որոշեց

ամէն, ամէն ինչ զոհել այս ընտանիքը երջանիկ դարձնելու համար, նա պատրաստ էր օրուգիշեր աշխատել. միայն թէ Բարբարային կարիքի ճիրաններում գալարուելիս չտեսնէր, նրա զուսպ հառաչանքը չլսէր, նրա դէմքին ամպի պէս անցնող թախիծը չնշմարէր։ Բայց ի՞նչպէս անել. նրանք այնքան հպարտ էին, որ չէին ընդունի իր դրամական օժանդակութիւնը, ինչպէս որ արդէն պատահեց մի անգամ, երբ տիկին Մարիամը օրեր շարունակ չէր կարողանում համոզել Բարբարային թէկուզ իբրեւ պարտք վերցնի այն գումարը, որ տուել էր։ Նա չարչարում էր իր ուղեղը, երբ յանկարծ մի միտք ծագեց իր գլխում. դարձեալ տիկին Մարիամի միջոցով էր, որ նա պիտի կարողանար օգտակար լինել. նա կը խնդրէր տիկին Մարիամին՝ իր երկու սենեակներից մէկը տրամադրել իրեն, կը փոխադրուէր այնտեղ, յետոյ կը վարձէր մի աղախին՝ ընդհանուր ճաշ պատրաստելու, իսկ թէ տիկին Մարիամի մօտ գիշերօթիկ է, եւ Բարբարային ու Արմէնին էլ կտանէն իրենց հետ. այս ձեւով նրանց ծախսերը զգալի կրճատում կունենան, տիկին Մարիամին կը թելադրէր որ նրանցից չնչին վճար վերցնի, իսկ իրեն համար այդ ծախսը առանձին ծանրութիւն չի ունենայ, քանի որ դուրսը ուտելով ծախսեր շատ է անում, երբ մենակ է ապրում, իր տնտեսած գումարը կը ծախսի միառժամանակ, մինչեւ որ ինքն էլ, Արմէնն էլ գործի կանցնեն. այնուհետեւ դիւրին կը լինի ամէն ինչ եւ Բարբարայի հոգսերը կը վերանան»…

Այս որոշումով՝ նա հրաժեշտ ուզեց տալ, յաջորդ օրը տիկին Մարիամի հետ խօսելու մտադրութեամբ։

—Վաղրի՛կ, —ասաց Բարբարան, —Արմէնի բանտարկութեան ժամանակ այնպէս վարժուեցինք ձեզ, որ թէ՛ ես եւ թէ՛ տիկին Մարիամը պիտի տխրենք, եթէ ամէն օր չայցելէք մեզ. Դիանան էլ կը մտածի, եթէ չգաք. նա էլ ձեզ ընտելացել է…

Վաղրիկը շառագունեց, դէմքը պայծառացաւ, աւելին ինքն իրեն էր ներկայանում, ուստի եւ յարեց.

—Եթէ մայրիկս բարի լինի իր սենեակներից մէկն ինձ տրամադրելու, ապա ամէնքս կը լինենք միեւնոյն յարկի տակ եւ, իսկապէս, Դիանային դժուար է մի օր իսկ չտեսնելը, ես այս փոքրիկի հետ շատ կապուեցի, —եւ նա ինքնաբերաբար շոյեց քընած երեխայի մահճակալին գցած փոքրիկ գանգուրները, որոնք այնքան խանդաղատանք էին առթում իրեն։

— Իմ տունս քեզ փեշքաշ, ո՛րդիս, — ասաց տիկին Մարիամը պարսկական հիւրընկալ առատաձեռնութեամբ, — երբ որ ուզես՝ իմ դուռս բաց է քո առաջ. հարազատ զաւակիս պէս կը պահեմ քեզ։

— Այս արդէն հրաշալի եղաւ, — ասաց Արմէնը անկեղծ ուրախութեամբ, — Վաղրի՛կ, քեզ հետ շատ անելիքներ ունենք, պէ՛տք է միասին լինենք։ Հէնց վաղն և եթ փոխադրուիր. տիկին Մարիամը անգին է. Բլարայի համար նա փրկարար հրեշտակի դեր է կատարում։

Եւ երեքը սիրաշեղ ժպիտով նայեցին տիկին Մարիամին, որ ձեռները երկինք մեկնած՝ արցունքոտ աչքերով, դողդոջուն շրթներով մրմնջում էր՝ «Փա՜ռք քեզ, Աստուա՛ծ, հազար փա՜ռք»։

ԺԱՄԱՆՑ

Վաղրիկը մէկն էր այն հազուագիւտ նկարագիրներից, որոնց համար «իմն ու քոնը» գոյութիւն չունէր։ Նա պատրաստ էր իր շապիկն հանել և տալ կարիքաւորին, առանց խտրութեան. և մեծ հաճոյք ու հոգեկան բաւականութիւն էր զգում այդպէս վարուելիս։ Ցուցամոլ ու փառասէր չէր և իր օգնութիւնները կատարում էր յաճախ թագուն, աննշմար։

Այսօր անսպասելի կերպով նա յաջողութիւններ ունեցաւ. Արմէնն ազատուեց բանտից, Բլարայի այս մտահոգութիւնը վերացաւ, մնաց միայն նիւթականի հոգսը՝ ա՛յն էլ Վաղրիկը լուծեց միանգամայն անսպասելի կերպով, երբ Բլարան ի՛նքը խօսք բացեց ամէն օր այցելու մասին և տիկին Մարիամը գրկաբաց ընդունեց իրեն։

Այսօր նրա քայլերը թեթև էին, հոգին ուրախ. այսուհետև ամէն օր, ամէն ժամ պիտի լինէր ա՛յն յարկի տակ, ուր Բլարան էր ապրում, պիտի լինէր «Թաշնակի բոյն»-ի հարևանութեան մէջ և իր հոգու վրայ խաղաղութիւնը պիտի իջնէր ա՛յն պարզ ու անպաճոյճ մթնոլորտից, որ այդ բոյնն ունէր։ Ապա նաև Արմէնի հետ պիտի կազմակերպէին հայ մշակոյթի պաշտպանութեան գործը, անշուշտ, այս խնդրում Վաղրիկը պիտի ստանձնէր նիւթական օժանդակութեան և տեխնիկական կազմակերպչի դերը, բովանդակութեան և ղեկավարութեան հարցը թողնելով Արմէնին։ Առայժմ իր ունեցած գումարը կը ծախսէր,

միաժամանակ կը հետապնդէր մի շահաւէտ գործ գտնելու խնդիրը և երբ գտնէր, այնուհետև գիւղին կը լինէր ամէն ինչ. իր համար ամենամեծ երջանկութիւնը կը լինէր Բրալային տեսնել հոգսերից ազատուած և ներուած իր ընտանիքին. Վաղրիկ: այլևս չէր տեսնի այն թախիծի ամպը, որ մերթ ընդ մերթ անցնում էր Բրալայի դէմքով և փոթորկում իր հոգին... «Ես ամէն զոհաբերութիւն յանձն կառնեմ, միայն թէ դու երջանիկ լինես».—մրմնջում էին նրա շրթունքները։

Նա պահանջ զգաց մէկի հետ խօսելու, մէկին հիւրասիրելու, թէկուզ դա լինէր Վահրամը։

Այս մտածումներով՝ Վաղրիկը բաղխեց Վահրամի բնակարանի դուռը. Վահրամը տանն էր բարեբախտաբար.

—Գիտե՞ս որ Արմէնն ազատուեց,—ասաց Վաղրիկը.

—Վա՛հ, ես քո հո՛գին սիրեմ, ուրեմն նուէրս կը տանեմ...—բացականչեց Վահրամը,—ապա անմիջապէս շփոթուեց ու յարեց,—դէ գնա՛նք տեսնենք իրեն... Վաղրիկ ջան, ներս արի մի կտոր բան ուտենք, գնանք։

—Մ՛րսի. ես քեզ կը հիւրասիրեմ. Արմէնն այժմ տանը չէ, բաղնիս պիտի գնար,—ասաց Վաղրիկը.

—Էս բալէխ...—ապա դառնալով կնոջը,—Վա՛րդուշ ջան, ես կուշանամ, ներգևարան չմնաս,—ասաց ու բեխերը շոյելով դուրս եկաւ Վաղրիկի հետ։

Նրանք խօսակցելով հասան Լալեզար. Վաղրիկը քայլերն ուղղեց դէպի «Աստորիա» ճաշարանը։

—Վա՛ղրիկ ջան, Աստորիա ենք գնո՞ւմ. ես քո հո՛գին ուտեմ... Ադա, լաւ բաները հէնց էսպէս պատահական են լինում, տանը քիչ էր մնում պառկէի քնէի, սիրտս նեղացել էր...—սկսեց շատախօսել Վահրամը։

—Ես վախ ունէի, որ Արմէնին երկար կը պահեն. իսկապէս որ լաւ բաները պատահական են, հիմա որ ազատուեց, մենք պիտի խմենք նրա կենացը։

Աստորիայի ընդարձակ սրահը, իր բաղմաթիւ սեղաններով, լեցուն էր, օդը ապրուած էր ծխով և երաժշտախումբը նուագում էր տանգօ. մի քանի տասնեակ զոյգեր ինքնամոռաց հաճոյքով պարում էին և շշնջում միմեանց ականջի. Նրանց մէջ Վաղրիկն ու Վահրամը ճանաչեցին մի քանի հայ կանանց և տղամարդկանց։

Վաչրիկն ու Վահրամը տեղ գրավեցին բեմի առաջ.

—Վա՛հրամ,—ասաց Վաչրիկը.—ինչ որ սիրտդ ուզում է՝ պատվիրիր. այսօր ծախսից վախ մի՛ ունեցիր. նախ ասա ի՞նչ ենք խմելու։

—Եհ...ագա՛յ,—դարձավ Վահրամը սպասավորին,—ի՞նչ ունեք խմելու որ ինձ լայեղ լինի. կոնյա՞կ, էլի... ազնվազարմ խմիչք...

—Պարո՛ն, շամպայն, ֆրանցուզակի, անգլիական վիսկի ունենք սոդայով, ջին...

—Ա՛դա եդ ինգլիզ,—ֆրանցուզի խմիչքներն ինձ ի՞նչ կանեն: Մեր Ղարաբաղում ամեն օր հինգ վիսկի ու շամպայն էք խմո՞ւմ. բա՛ն ասա որ բա՛ն հասկանանք...

—Գինի ունենք Կախեթինի շահանի. Ջուղայի քաղցր գինի, Ծիրաղի գինի, վոդկա «Արարատ», վոդկա «Արգօ»... իրար յետևից գնդացիրի պէս շարեց սպասավորը։

—Հա, ինչ եմ ասել հա՛, ազատիր կը սաղի Դաղեինի շահանի. մի լավ կարաֆ խաղողած, հետն էլ աղաղ-մալաղ, ինչ որ ունես ետևից բանիր բեր շարի։

—Ինձ համար վոդկա կը բերես և բիֆշտեկ,—ասաց Վաչրիկը։

Սպասավորը անյայտացավ. Քիչ յետոյ սեղանի երեսը բանեց աղանդերքով, պնակներով ու շշերով։

Վահրամը յաղթ դիրքով էր նստել, ազատ մարդու ազատութիւն գործելու նպատակով... այս պարագան Վաչրիկին հրճուանք էր պատճառում. նա ժպտալով երևութապէս նայում էր պարողներին, բայց մերթ ընդ մերթ աչքի տակով Վահրամին էր դիտում, նրա մասնաւորութիւնն ուսումնասիրում։

Վահրամն սկսեց ախորժակով ուտել. նա քիչ էր հետաքրքրւում պարողներով. սպասաւորն իրար յետևից բերեց խորովածները, գինին ու վոդկան բաժակների մէջ լցրեց և պատրաստ կանգնեց մի կողմի վրայ.

—Ա՛դա սպասաւորս ես հաչո՞ւմ,—դարձաւ Վահրամը սպասաւորին,—գնա՛ հեռուն կանգնիր, թող մի հանգիստ հաց ուտենք...

Վաչրիկը հրճւում էր, նա աչքով նշան արաւ շփոթւած սպասաւորին, ուզում էր հասկացնել, որ չվիրաւորւի, ասիս գտա-ցու Վահրամին

—Ծօ՛, մա՛րդ Աստուծոյ, ինչո՞ւ ես կոպիտ վարւում ծառայողի հետ. նա քեզ ինչո՞վ է խանգարում։

—Էդ մարդը քէն կա՛նգնել ա ու իր զարմացած աչքերը պշել վրաս. քիչ էր մնում պատառը կոկորդս թռչէր. ես չեմ սիրում երբ ուտելիս ինձ նայում են. էսպէս ընթրիքն էլ որ հարամ չանեմ՝ ի՛նչ լողաթ,—ասաց Վահրամը և մի խոշոր պատառ խորոված գցեց բերանը։ Նա մէջընդմէջ ագահօրէն կոնծում էր կարմիր. չաշանի գինին և ապա շրթունքները ծծում հաճոյքից։

—Այս բաժակը խմենք Արմէնի ազատութեան և իր ընտանիքի կենացը,—ասաց Վաղրիկը բաժակը վերցնելով,—դու մոռացար, մաք Վահրամ, այսօրուայ մեր ընթրիքի շարժառիթը։

—Վա՜յ հա՛ է, հա՛, ախար Արմէնի ազատելու ուխտն էր էս խրախճանքը, դէ՛, կենա՛ցդ, Վաղրիկ ջան…

—Ծօ՛, իմ կենացը չէ, Արմէնի՛ կենացն է, նաև իր ընտանիքի,—ուղղեց Վաղրիկը։

—Հա՛, ըղորդ, դէ՛, Արմէնի, Բլորի և իր զաւակի կենացը, Աստուած էսպէս ուխտները առատ բերի մեզ…

—Այսինքն ի՞նչ, Արմէնը միշտ բանտարկուի և ազատուի, որ դու էլ էսպիսի ընթրիքի ուխտ անենա՞ս. ա՜յ քեզ մարդ,—ասաց Վաղրիկը շարաճճիութեամբ։

—Չէ՛ է՞, չէ՛, եանի ուզում եմ ասել՝ էսպէս ուրախ ուխտներ, որ դու ինձ հիւրասիրես էսպիսի փառաւոր ընթրիքով, քո հա՛զար մատաղ. Վաղրիկ ջան, թէկ աղայ ես համա հա՜…

Արդէն Վահրամի գլուխը տաքացել էր ընտիր կարմիր գինուց. նրա այտերը կարմրել էին, աչքերը կաչ եկել, հեւում էր և խորովածը ուտում։

Խորովածը կերել ու լաւ խմել էին, երբ բեմի վրայ հնչեցին շեփորները. սկսւում էր Եւրոպայից եկած կիսաշխարհիկ պարուհիների և իրենց համանինների ներկայացումը։ Վահրամը նայում էր պլշար հայեացքով, նա համարեա հարբել էր, երկու շիշ գինի խմելով. Վաղրիկն էլ համարեա դատարկել էր կէս շիշ վօդկան և դէմքը փայլում էր ճրագների լոյսի տակ։

Սրահի լոյսերը հանգցրին. բեմը լուսաւորուեց լուսարձակով. հնչեց Ռավէլի «Բոլէրօ»-ն. բեմի անկիւնի վարագոյրների արանքից մի գեղատամուհի, նեղ ու երկայն շրջազգեստով, թե-

ւերն ու կուրծքը հոլանի, սկսեց ալիքաձև շարժումներով առաջ գալ նուագի կշռույթին համապատասխան և որքան առաջանում էր՝ այնքան Վահրամին թւում էր, թէ մշուշների լուսեղէն ծաւից մի յաւերժահարս է ելել և շարժւում է դէպի իրեն. «Ադա»… Կամաց բացագանչեց նա և մի անհանգիստ շարժում գործեց.

Հը՛, ի՞նչ պատահեց, մօր Վա՛հրամ,—հարցրեց Վաղրիկը հրճուանքով:

—Ադա, Վաղրիկ ջան, տես էդ հուրի-փէրին դէպ ինձ ա գալիս հը՞… Ադա եկաւ է՞…

—Եկաւ՝ դու էլ խաթի-պաթի, էլ ի՞նչ ես չարում, ադա՛մորդ չե՞ս—ասաց Վաղրիկը:

—Ադա, խաբար կիրթայ Վարդուշին կը հանի, դէ յետայ նկ ու էշը ցեխից հա՛նի. չէ՛, տեղէր, ես դարմի եմ տեղ,—ասաց Վահրամն ու փորձեց տեղից վեր կենալ ու հեռանալ, բայց Վաղրիկը բռնեց ու նստեցրեց. տեղով.

—Ձեռ ազամ՝ մի՛ խառնի, քեզ տեղում չկայ. նայի՛ր միայն ու համ տա:

—Շան աղջիկը տես ո՞նց ա շարժում մարմինը, տես օձ ըլի. ա՛դա, մեր կնիկներն էլ կնիկ են, սրա՞նք էլ…

Բոլերոն վերջացաւ սրտաբնդաստ ծափերով, որոնցից Վահրամը ցնցուեց, նա կարծեց թէ առաստաղը փուլ եկաւ. Վաղրիկն սկսեց քա՛հ-քա՛հ խնդալ Վահրամի վախի վրայ:

—Ես սրանց մորթ տաղի… ա՛դա, էս էլ սրախանդար ձև ա՞,—գժգժեց Վահրամը:

Պարուհին ձեռքձեռքերով գլուխ տուեց. օդային համբոյրներ ուղարկեց աջ ու ձախ, ծափերն հնչեցին և նա անյայտացաւ անկիւնի վարագոյրի յետև:

Նորէն հնչեցին ծափերը. այս անգամ բեմի վրայ յայտնուեցին մի այր և մի կին՝ արտակարգօրէն շպարած դէմքերով, այրը հագել էր կրկէսի ծաղրածուի հագուստ, իսկ կինը՝ լայն և ուռուցիկ շրջազգեստ, ներսից լարերով բռնած. իրանը խիստ սեղմ ու բարակ, կուրծքն ամփոփած պինդ հագուստի մէջ, ուսերին՝ ցցուն երիզներ, բայց ինչ որ յատկապէս Վահրամի ուշադրութիւնը գրաւեց՝ այդ զոյգի շարժուձևերն էին. նրանք քայլում և ձեռները շարժում էին մեքենայի պէս, ճիշտ նման

այն պատի ժամացոյցներին, որոնց զանգահարման պահուն դուրս է ցատկում մի յոպոպ, կանչում և նորէն ներս քաշւում և կամ մի տիկնիկ՝ բեկբեկուն շարժուձևերով։ Եւ ահա բեմի վրայի այրն ու կինը բեկբեկ շարժումներով քայլում էին ու պտտում միաժամանակ, աչքերն անշարժ և ապակեայ հայեացքով, նրանց կոպերը բնաւ չէին շարժւում, արտևանունքները չէին թարթում…

—Ապա, սրանք շարաւյր բաղորդի «բիբի-ջան խանում»ներ են, հը՛, մի տես, տե՛ս ինչպէս են խրճիկի մէջ շարժւում, վա՜յ եա ձեր մարդ. տաղի…

Եւ Վահրամը խփեց իր ծնկանը, աչքերը յառած բեմի պարողներին։ Վաչիկը լայնաժուք ծիծաղում էր, տեսնելով Վահրամի միամիտ զարմանքը։

Այս տեսարանը եւ անցաւ ծափերի տարափով։

Ծափերն հնչեցին, բեմը քիչ մթնեց և ահա վայրագ շարժուձևերով բեմ խոյացան երկու հոգի. մէկը-դառաղ մազերով, թուխ դէմքով և նիհար ու ճկուն մարմնով մի աղջիկ, միւսը կէպկան թեք դրած, բաճկոնի օձիքը վեր քաշած, ծխախոտը բերնին և մի ձեռին դաշոյն բռնած մի աւազակ։ Աղջիկը հալածւում էր աւազակի կողմից, պարզ երևում էր, որ նա կասկածում էր իր սիրուհու հաւատարմութեան մասին, ատում և հալածում էր նրան, ապտակում, մազերից քաշում, մերթ փորձում էր դաշոյնով հարւածել, բայց իրեն զսպում էր և աղջկան թափահարում, ուզում էր նրան խոստովանեցնել իր դաւաճանութիւնը, բայց աղջիկն ընդդիմանում էր և այս բոլորը տեղի էր ունենում անձայն, միայն ռիթմիկ շարժուձևերով, նուագի տակ…

Վահրամը նայում էր ապշած ու սարսափած. և տղայի ամեն մի շարժումի հետ նա էլ շարժւում էր՝ պաշտպանողի պէս, կարծես թէ հարւածներն ու յարձակումը ինքը կրէր իր աղջկայ փոխարէն. այնպէս նա անհանգիստ և յուզւած վիճակ ապրեց, մինչև որ տղան վճռական հարւած տալով աղջկան՝ անշունչ գետին փռեց. ապա խորին զղջալով իր արարքի համար՝ ընկաւ աղջկայ դիակի վրայ, ապա և իր ձեռների վրայ վերցնելով տարաւ բեմի յետև։

—Տե՛ղն էր… անպիտանը ինչո՞ւ էր դաւաճանել տղային, թէ ա՛չքը դուս, թող էգպէս մեռնի՛, —բացագանչեց Վահրամը։

—Մի՞թե աղջիկն ազատ չէ սիրելու՝ ում որ կամենայ, մի՞-թէ սիրելու համար մարդու պիտի սպանել, —բացագոչեց Վաղրիկը։

—Նա այս աղայի սիրուհին է և դաւաճանել է նրան, բա չսպանե՞ր… ասաց Վահրամը։

—Ո՛չ, սիրել է աղային՝ այժմ այլևս չի սիրում. ո՞վ իրաւունք ունի բռնանալու նրա զգացմունքների վրայ. զոռով կարելի՞ է սիրել, հարց եմ տալիս քեզ. կարելի՞ բան է մէկին ստիպել, որ սիրի, —վրայ բերեց Վաղրիկը արագօրէն։

Վահրամը զարմացական հայեացքով նայեց Վաղրիկին. չկարողացաւ պատասխան գտնել նա շշմեցուցիչ հարցերին. գինին էլ իր գործը արել էր, ուստի և չանդրադարձաւ, որ այս խօսակցութիւնը շօշափում էր Վաղրիկի ամենանուրբ զգացմունքները։ Չէ՞ որ Վաղրիկը սիրել էր Բրարային, մերժուել նրանից և սակայն շարունակում էր սիրել՝ Բրարայի լիակատար իրաւունքը նկատելով սիրել ում որ կուզէր, այս դէպքում՝ Արմենին։

Ծխփողների ձայնը ընդհատեց նրանց խօսակցութիւնը. այժմ մի խումբ կիսամերկ կանայք էին պարում՝ պլաստիկ շարժումներով։ Վաղրիկը խորասուզուեց մտածմունքների մէջ. «Որքա՜ն մեծ տարբերութիւն կայ. կնոջից կին… Բրարայի պարկեշտութիւնն ու բարոյական բարձր ըմբռնումներն ուր, այս կանանցն ուր», և Բրարան նրա աչքին այնքան բարձրացաւ, որ նա լցուեց մի երկիւղածութեամբ դէպի այդ պաշտելի կինը։ Ապա նրան թւաց, որ Բրարայի աչքերն իրեն հետևում են և կշտամբում, որ եկել է այսպիսի տեղ և դիտում է կիսաշխարհիկ կանանց պարը… Նա ամօթ զգաց. կարմրեց. ձեռքով ակամայ ճակատը շփեց, աչքերը փակելով, բայց Բրարայի սև հմայիչ աչքերը նրան հալածում էին. «Ներիր», —մրմնջաց նա, ապա սթափուեց, նայեց Վահրամին, որ յափշտակուած դիտում էր կանանց պարը բերանբաց և կենդանական հայեացքով։

Ծխփողների ձայնը սուր ճչոցի վեր կտրուեց. Վաղրիկը ծափ տուեց.

—Մեր հաշիւը, —ասաց նա հապճեպով մօտեցող սպասաւորին։

Աստորիայի սրահը դեռ ևս թնդում էր նուագի ձայնից, երբ Վաղրիկն ու Վահրամը դուրս եկան։

—Համա լաւութ-տարի հա՛, —ասում էր Վահրամը, —սրանք էլ են կին, մեր կիններն էլ են…

—«Մեր կնիկները» հազար անգամ բարձր են սրանցից. խելքդ գլուխդ հաւաքիր. մարմնական գեղեցկութիւնը ոչինչ է բարոյական բարձրութեան առաջ, սրանք իրենց մարմինն ու բարոյականը վաճառքի են հանում և դու սրանց համեմատում ես մեր կանանց հե՞տ, — ասաց Վաղրիկը վրդովված:

—Դէ լսիր է, սրանք հօ՛ ընտանիքի կին չեն դառնալ. համա անիրավներն տես. մարմարից լինեն թափած. մարդ մի անգամ սրանց պաչի՝ արքայութիւն կերթայ, ասաց Վահրամը բեխերը չփելով:

—Սրանց պաչողը նախ հիւանդանոց, յետոյ էլ գերեզմանատուն կերթայ, ա՞յ խելօք, — ասաց Վաղրիկը, դու ի՞նչ միամիտն ես եղել:

—Հապա սրանք որ էդպէս են, ինչո՞ւ են թողել որ էստեղ գան. մեր թագաւորը խելօք մարդ ա...

- Մեր թագաւորը սրանց թողել է գան, որ նախ՝ դրամ խաղայ հրապարակում, երկրորդ, որ ինձ ու քեզ նման մարդիկ հաճոյքով ապրեն և քաղաքականութեամբ չզբաղւեն, հասկացա՞ր:

—Վալլա՛հ էդքանին իմ խելքս չէր հասնում, ինչ որ դրուստ ա. դրուստ ա, — ասաց Վահրամը զարմանքով:

Փողոցի երթևեկը համարեա դադարել էր. Վաղրիկն ու Վահրամը անցան Լալազար փողոցը և Ստամբուլ պողոտայի անկիւնում միմեանց հրաժեշտ տուին:

«Ի՞նչ համեմատութիւն Արմէնի և սրա միջև, — խորհում էր Վաղրիկը, — ճիշտ է Արմէնն էլ, իբրև մարդ, որոշ թերութիւններ ունի, բայց ունի նաև այնպիսի կուռ հասկացողութիւններ, որոնք գլխով բարձր են պահում նրան իր շրջապատից: Այդ ընտանիքը ինձ համար ավելի դեր է կատարում այդ բարոյական անկայութեան միջավայրում»:

Նա աչք ածեց իր անկողնին՝ մտածելով. «Վաղը փոխադրւեմ և սա թող մի շրջադարձ լինի իմ կեանքում. գուցէ վիշտս ու մտածմունքս թեթևանան Բերդայի ներկայութեամբ, այդպէս կեանքն իր հրապոյրը կորցնում է իմ աչքում»...

ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏԸ

Այդ օրը փոքրիկ Մարտիկի կեանքի ամենաերջանիկ օրն էր. հայրը իրեն համար նոր կօշիկ էր գնել. սրճագոյն, փափուկ

կոշկից կիսակոշիկներ էին, այնքա՜ն սիրուն ու հաճելի։ Մարթիկն առաջին անգամն էր այդպիսի կոշիկներ ունենում. չքավոր ընտանիքի զավակ՝ նա միշտ հագել էր էժանագին հասարակ կոշիկներ, միշտ կարոտով էր նայել իր տարիքից բարեկեցիկ երեխաների կոշիկներին ու հագուստներին։ Այն օրից, երբ դպրոցը փակվեց ոստիկանական ուժերի միջոցով և երեխաների խուճապի ժամանակ փոքրիկ Մարթիկը կորցրեց իր կոշիկը, նա փակված մնաց տանը, կամ բոբիկ էր շրջում և կամ հագնում էր իր հոր ամառային հնամաշ, մեծ կոշիկները և խաղում իրենց փողոցի բակում։ Հայրը, իր զավակից լսելով դպրոցի փակվելու և կոշկի հատը կորցնելու մասին, նրան հանգստացրել, յորդորել էր լաց չլինել և խոստացել էր գեղեցիկ կոշիկներ գնել. բայց օրեր էին անցել և հայրը չէր կարողացել կատարել իր խոստումը։ Մարթիկի հայրը բեռնակիր էր, հազիվ հազ կարողանում էր օրայ ապրուստի դրամ վաստակել. օրեր պիտի անցնեին, որպեսզի նա իր ընտանիքի բերնից կտրելով՝ կարողանար մի քանի թուման անտեսել և իր զավակի համար կոշիկ գնել։ Ժամանակ եղավ, երբ Մարթիկը նույն իսկ կասկածեց, որ հայրը մոռացել է իր խոստումը. սակայն մի օր, երբ հայրը տուն եկավ ծանր աշխատանքից յոգնած, Մարթիկը հոր հնամաշ կոշիկները շրջած դրեց մուտքի մոտ. ամեն մի կոշկի յատակին երկու խոշոր ծակեր էին բացվել՝ կոյր աչքերի խոռոչների պես. որոնք կարծես լալիս էին խեղճությունից. նրանց կողքին կուչ էր եկել Մարթիկի կորցրած կոշկի հատը։

Հոր հայացքն ընկավ կոշիկների ծակերին, նաև փոքրիկ կոշկի հատին, ապա ակամայից նա շուռ եկավ ու նայեց իր երեխային, որ յատակին նստած՝ աղերսական ու պաղատական հայացքով նայում էր հորը։

—Մի քանի օր էլ համբերիր, բալա՛ ջան, քոշերդ կառնեմ. քեզ չեմ թողնի էտպես բոբիկ. աղքատությունն երեսը սև ընի…

Եւ Մարթիկն սպասել էր յուսով ու կարոտով։ Նա նկատել էր նաև, որ դպրոցը փակվելու օրից հայրը արտասովոր կերպով մեղմ էր վարվում իրեն հետ, «բալա ջա՛ն» էր կոչում իրեն, այլևս չէր ծեծում, բարկությունն էլ մեղմ էր արտայայտում, երբ Մարթիկը որևէ անկարգություն էր անում.

Մայրն մեռած էր.

—Տեսնո՞ւմ ես, ո՛րդիս, Հէրդ քեզ սիրում ա, էլ քեզ չի ծեծում, դու էլ խելօք պահի քեզ ու համբերիր՝ քօշերդ կառնի։

Եւ ահա հասաւ այն երջանիկ օրը երբ հայրն ասաց Մարտիկին.

—Բալա՛ ջան, էԹա՛նք քեզ համար քօշ առնեմ…

Կօշկակարը զարմացաւ, որ համբալ Մուկուչը իր տղայի համար նոր և լաւ կօշիկ էր ուզում։

—Ա՛դա, Մուկուչ, չհաւդի միջ ես կարէ՞, դու ո՞ւրդյաւ քօշնո՞ւր…

—Չաղա՛ղլ ա՛չքը դուս… բեխեն քօշի հաար ուսումնարանի փողւելու օրը կուզըմաւ. ես էլ ջգրու՝ լաւ քօշ եմ առնելու նրա համար… Թող մի օր էլ ասլած նստենք։

—Ա՛ղ օլ,—ասաց կօշկակար Կարապետը,—որ էդպէս ա՝ քեզնից փող չեմ վերցնի. քօշերը քեզ փէշքաշ…

—Չէ՛, ընդդիմացաւ Մուկուչը,—էս քօշերը մուֆտա չեմ վերցնի. էս քօշերը պէտք ա փողով առնեմ, աղէս քօշը ուսումնարանի ուղուրին ա կոխի, ես էդ ուսումնարանին մատաղ…

Կօշկակար Կարապետը զգացւեց։

—Տղե՛րք,—դարձաւ իր աշկերտներին, որոնք զարմացած էին,—տեսէ՛ք, համբալ Մուկուչն ա, բայց մարդ ա, մա՛րդ. մեր հարուստների մէջ քանի՞սին կը գտնէք, որ էսպէս գտնի. ա՛ղ օլ, Մուկուչ ախպէր, ա՛ղ օլ… ապա եռանդով հարցրեց, աղէդ դասագիրք ունի՞, հայկեան դասագիրք։

—Չէ՛, չունի… աղքատութեան երեսը սև, իրա հընգերոջ գրքերն էր կարդում,—ասաց Մուկուչը հառաչելով։

—Դէ որ էդպէս ա, աղէդ գիրքն էլ ի՛մ պարտքը. քո փողն ես ուտել չեմ կարա… առը փող ա, քրտինքի փող ա… քանի՞ օրում ես խնայել,—հարցրեց.

—Տասներկու օր, ղա՛ւղ…

—Աստ եկ,—ասաց Կարապետը Մարտիկին.—էս քօշերը հագի՛ր, ա՛դա, ո՞ր գրքերն ես կարդում։

—Նոր ուսում Մեսրոպի պատկերով ու երրորդ գիրքը,—ասաց Մարտիկը [illegible]։

—Նոր Մեսրոպի պատկերով ու երրորդ գիրքը,—կրկնեց Կարապետը,—[illegible]

—[illegible],—ասաց Մարտիկը [illegible]

Աշկերտները ժպտում էին և իրար հրում արմունկներով։

—Աստուած քեզ խէյր տայ, գործիդ աջողութիւն... ասաց Մուկուչը և 3 թուման դրեց սեղանի վրայ,—ապա Մարտիկի ձեռից բռնած՝ դուրս եկաւ Կարապետի խանութից։

—Եթէ ամեն հայ համբալ Մուկուչի նման ըլնի՝ մենք դարդ չենք ունենայ,—ասաց Կարապետը իր աշկերտներին,—նայեք էդ համբալին՝ մա՛րդ դարձէք, մա՛րդ...

* * *

Երեք օր յետոյ Մարտիկը մտաւ կօշկակար Կարապետի խանութը։

—Հա՛, եկա՞ր. եկ նստի՛ր, քեզ համար մի նախշուն գիրք եմ առել. էն ուրբ Մեսրոպի պատկերովը. համա կը կարդաս հա՛... թամբալութիւն չանես։

Այս ասելով՝ նա դղրոցից հանեց դասագիրքը. կազմած, չխտած, անկիւնները կաշեպատ։

Մարտիկն ուրախութիւնից իրեն կորցրեց. իր հարուստ դասընկերների գիրքն անգամ այդպէս կազմած չէր։

—Էս էլ քեզ տե՛տրակ, էս էլ քեզ մա՛տիտ,—ասաց Կարապետը,—էլ ի՞նչ կուզես...

—Ոչինչ...—ասաց Մարտիկը երկչոտ։

—Դէ՛հ էս խնձորն էլ վեր կալ որ նաշ էնես ու գնա՛։ Հա՛, հօրդ կասես որ գայ՝ բեռը ունենք, տանի։

Մարտիկը դուրս նետուեց խանութից. գիրքը թևի տակ, խնձորը ձեռին. նա քայլերն ուղղեց դէպի դպրոց. նա մերթ ընդ մերթ կանգ էր առնում ու նայում իր կօշիկներին. ահա աջ կօշկի քիթը փոշոտուել է. նա կռանում է ու ձեռքի ափով մաքրում փոշին. չի գոհանում դրանով, ձեռքի ափը թքոտում է ու քսում կօշկի քթին. այժմ լաւ է, փայլը վերականգնեց. բայց կարծես ձախ կօշկի քիթն էլ փոշոտ է և փայլը պակաս. նա թքոտում է մատները և շփում ձախ կօշկի քթին. փողոցով անց ու դարձ անողները նայում են նրան և քմծիծաղով անցնում. երեխան ամաչում է իր անզգուշութեան համար. կարող էր մի անկիւնում կանգնել, մաքրել այնպէս, որ չնկատեն. բայց չէ՞ որ այդ դէպքում չէին տեսնի իր կօ-

չիկները։ Եւ այս գեղեցիկ, նոր կօշիկներն այնքա՜ն լաւն են, այնքա՜ն հանգիստ։

Նա արդէն մօտ է դպրոցի դռան. Երանի թէ բաց լինի, աշակերտներն իրեն տեսնեն նոր կօշիկներով և նոր, ընտիր կազմած գրքով… բայց դպրոցի դուռը փակ է, ներսից՝ ո՛չ մի ձայն, ասես մեռելատուն լինի… Նա յիշում է դպրոցական օրերը, երբ դեռևս փողոցի անկիւնին չմօտեցած՝ ականջին էին հասնում երեխաների ճիչն ու աղմուկը. չնայած նա ուշ եկողներից էր լինում, որպէսզի մէկին ու մէկի գրքով դասը սովորէր, բայց միշտ էլ նկատել էր, որ իրենից աւելի ուշ եկողներ կային։ Այժմ, երբ նա գիրք ունի և նոր կօշիկներ՝ դպրոցը փակ է նրա չար բախտից։ Երեխան ակամայ հոգոց հանեց։ Նա յետ դարձաւ և այն է, ուզում էր անկիւնը շուռ գալ՝ մէկը կանչեց իր կողքից.

— Տղա՛յ, ինձ նայիր տեսնե՛մ, դու էն բոխէն չե՞ս որ քօշ-կորցրել իր դպրոցի փակման օրը…

— Հա՛… ասաց Մարտիկը մի քիչ շփոթւած։

— Էդ ի՞նչ լաւ քօշեր ես հագէ, էդ ո՞վ առաւ էդ քօշերը։

— Հայրիկս, — ասաց Մարտիկը։

— Բա ես չասի՞ թէ ե՛ս կառնեմ քօշ համարդ, հայրիկդ ո՞վ ա, ումանցից ա, ի՞նչ արհեստ ունի, — վրայ բերեց խանութպանը։

— Հայրիկս մշակ ա, համբալ Մուկուչ են ասում… ասաւ՝ ուսումնարանը որ փակել են, ե՛ս քօշ կառնեմ համարդ, ե՛ս…

— Էդ գի՞րքն ումն ա, նոր ես առե՞, երեխայ…

— Հա՛, էս էլ կօշկակար Կարապետը առաւ, ասաւ «էս էլ իմ փէշքաշը… համա թամբալութիւն չանես հա՜, կա՛րդաս»…

— Բա՛ ե՛ս ինչ առնեմ համարդ… դէ ասա տեսնեմ սիրտդ ինչ ա ուզում. ե՛կ ներս, — ասաց խանութպանը և երեխայի ձեռից բռնած՝ ցոյց տւեց վաճառասեղանի վրայ դրւած երշիկ, խաղամրիս և այլ ուտելիքներ, — ո՛րից սիրտդ ուզում ա՝ առ, մի՛ ամաչի…

Մարտիկն իր կեանքում չէր կերել ո՛չ երշիկ և ո՛չ էլ խաղամրիս. իրենց տան կերածը կա՛մ հաց ու պանիր էր, կա՛մ խաղող ու հաց, երբ պտուղ կար և կա՛մ խաշած գետնախնձոր. Նրանք շաբաթներով միս երես չէին տեսնում, հազւադէպ դէպքերում միայն, երբ հայրը մի քանի ղրան աւելի էր աշխատած լինում, մի քանի սեր միս էր առնում, մայրը միսը և մի

քանի կտոր գետնախնձոր լցնում էր պարկի մէջ և տալիս մօտակայ հացագործի փուռը. այդ օրերին ամենահաճելի և շատ ճաշն էր որ նրանք անում էին։

Եւ ահա այժմ չքաւոր երեխան նայում էր կարմիր, գլանանման երշիկներին և զարմանում, թէ դրանք ի՞նչ են և ի՞նչ համ ունեն։

—Նստիր տղեկ,—ասաց խանութպանը Մարտիկին, աթոռը ցոյց տալով, երբ տեսաւ որ երեխան դժուարանում է մտնել,—ապա անցաւ սեղանի յետև և սկսեց քթի տակ ինչ որ մրմռալով կտրել երշիկից, ապա խոզամսից և պնակի մէջ շարելով, հացի հետ դրեց երեխայի առաջ, սեղանակի վրայ,—կե՛ր, ղո՛ւրբան,—ասաց,—կե՛ր, մի՛ ամաչի…

Մարտիկը քաշւելով, անվստահ շարժումներով սկսեց ուտել երշիկից, մերթ ընդ մերթ հացից կծելով։ Խանութպանը նայում էր նրա նիհար մատներին, բարակ դաստակներին, որոնց վրայ իջնում էին հնամաշ բաճկոնի գզգզւած թևերը և մտածում էր.

—Խեղճ երեխայ, ո՞վ գիտի, կեանքումը երշիկ, խոզամիս չի կերել, չէ՞ որ համբալի երեխայ ա… էս ի՞նչ զուլում աշխարհք ա, բա մենք մինչև հիմա հէ՞ր չենք տեսե էս ամենը։

Մարտիկն ուտում էր և մտքում զարմանում այն զանազան համեմների համը առնելով, որ խառնւած էր երշիկին. այդ բոլորը նրա քիմքին օտար էին, բայց խիստ հաճելի. որքա՜ն բան ունէր պատմելու մօրը, իր քոյրերին՝ Նաղիկին և Արփիկին… Այս մտքի վրայ նա ցաւ զգաց, որ նրանք զրկւած են այս բարիքից, ինչ որ ինքը վայելում է, և մտքում որոշեց կօշկակար Կարապետի տւած խնձորը տանել իր քոյրերին. մեղք են, նըրանք էլ թող մի բան ուտեն…

Մարտիկն այս մտքերի մէջ էր, երբ խանութպանը հարցրեց.

—Բա՛լես, քանի՞ հոգի էք տանը։

—Հայրիկս, մամէս, Նաղիկը, Արփիկը, ես,—ասաց Մարտիկը մեղմ ձայնով։

—Էդ Նաղիկը, Արփիկը քեզնից մենձ են եա՞ փոքր,—նորէն հարցրեց խանութպանը։

—Նաղիկը Արփիկից փոքր ա. ես երկուսից մեծ եմ…

«Խեղճ երեխէք… հէրը համբա՜լ, հինգ հոգու ընտանի՜ք, դէ ե՛կ ու պա՛հիր»… մտածեց խանութպանը։

—Թա որ ուսումնարանը փակել են, դու ի՞նչ ես անում,— շարունակեց խանութպանը։

—Ոչի՛նչ. տանը նստում եմ։

—Լա՛վ, հայրիկիդ կ՚ասես, որ գայ ինձ տեսնի. ինձ մէ աշկերտ ա պէտք էս դուքանում. քեզի նման մէ աշկերտ, հասկացա՞ր. ինձ հետ կուտես, կը խմես, գիշերւան կողմն էլ երեշկից բանից կը տամ՝ կը տանես Նազիկին ու Արփիկին։ Էդ շորերդ էլ քօշերիդ չեն սազում, քեզ համար շոր էլ կառնեմ։ Հիմա սպասի մէ կապոց տամ, տար քուրիկներիդ։

Մինչդեռ խանութպանը քթի տակ մրմռալով երշիկ ու խաղամախ, խաշած գետնախնձոր, չոր ձուկ և ալանդերք էր կապում, Մարտիկը շշմած մտածում էր, թէ ինչպէս մի օրում ունեցաւ և՛ կօշիկ, և՛ գիրք, տետրակ ու մատիտ, և՛ երշիկ ու խաղամախ, նաև կարմիր խնձոր... յետոյ հագուստ, նոր հագուստ պիտի ունենար. «Ափսոս որ դպրոցը փակ է, ընկերներս չտեսան իմ նոր քօշերս, գիրքս, տետրակս, մատիտս»... մտածում էր նա։

Խանութպանը թղթի մէջ փաթաթած կապոցը նրան յանձնեց պատուիրելով.

—Դէ հիմա գնա՛, հայրիկիդ հետ էգուց կը գաս, չմոռանաս հա՛։

Մարտիկը, մէկ անութի տակ գիրքն ու տետրակը, միւս անութի տակ կապոցը, արագ քայլեց դէպի տուն։ Ուրախութիւնից չբռնող երեխայի ոտները կարում էին գետնից. նա վայրկեան առաջ ուզում էր տուն հասնել և իր հարազատներին մասնակից դարձնել իր երջանկութեան։ Ինչքա՜ն կուրախանան Նազիկը և Արփիկը, երբ նա բաց կանի կապոցը և նրանց առաջ կը շարի բոլոր ուտելիքները. խնձորը սկզբում ցոյց չի տայ, վերջում ա՛յն էլ կը հանի գրպանից և քոյրերի ուրախութիւնը կատարեալ կը լինի։

Այս մտքերով նա մտաւ իրենց աղքատիկ խրճիթը։

Նազիկն ու Արփիկը յատակի խսիրի վրայ ծալապատիկ նստած՝ հնամաշ լաթերից խրձիկ էին պատրաստում. նրանք մի խաչաձև փայտիկի վրայ կապել էին մի կտոր գունաւոր լաթ, իբրև շրջազգեստ. այժմ զբաղւած էին խաչի թևերին լաթեր հագցնելով, իսկ գլուխը պիտի պատրաստէր մայրը։

—Նազի՛կ, Արփի՛կ, մամէն ո՞ւր ա,— անհամբեր հարցրեց Մարտիկը։

—Գնացել ա Նաղանենց, —ասաց Նաղիկը և հայեացքն ընկաւ եղբօր նոր կօշիկներին, ապա հայեացքը բարձրացաւ ու կանգառաւ Մարանիկի ձեռքի գրքին, —ա՛պի, էդ գիրքը տեսնեմ, պատկերք ունի հա՞։

—Չէ՛, կը ճղես, էս յետոյ քեզի ցոյց կը տամ. դուք էն ասէք, մամէն հաց տուե՞լ ա։

—Չէ՛, ասաւ էթամ Նաղանից պօպոք վերցնեմ, հաց տանեմ, —ասաց Արփիկը։

—Պէտք չի՛, —ասաց Մարանիկը և այն է ուզում էր դուրս նետուել սենեակից, երբ մայրը ներս մտաւ։

—Մա՛մա ջան, էկ տես ինչեր եմ բերէ, —ասաց Մարանիկը անհամբերութիւնից հևալով — և անմիջապէս ծալապատիկ նստեց յատակին, գիրքն ու տետրակը դրեց մի կողմ, կապոցը՝ գլխացը և ուզեց արձակել թելերը, —էդ գիրքն ու տետրակը, մամա, կօշկակար Կարապետը փէշքաշ արաւ, ասաւ՝ «համա թամբալութիւն չանես հա՛, կարդա», —յետոյ էս կապոցն էլ ուսումնարանի մօտի դուքանչին տուաւ, ասաւ տար Նաղիկին ու Արփիկին. էդուց էլ ընձի գործի ա վերցնում իրա դուքանը, —ասաց Մարանիկը համարեա՛ մի շնչով։

—Կօշկակար Կարապետը՝ էդ իմանում եմ, հէրդ տուել ա, բա էդ դուքանչին ո՞վ ա, որ քեզ կապոց ա տալի. հալա մէ թա՛ղ... մի՛ բացի. մինչև հէրդ տան չգայ՝ էդ կապոցը բացել չէա, —ասաց մայրը խստութեամբ։

—Մամա ջա՛ն. էս էն դուքանչին ա, որ·· որ երբ ուսումարանը փակւում էր, քշա կերցրած, էդ դուքանչին ասաւ «մի՛ լաց լլի, ես քեզ քօշ կառնեմ», համա հայրիկն ասաւ՝ «Չէ՛, էդ քօշը ես կառնեմ, ես»...

—Հայրիկդ ասաւ ես կառնեմ, պրծա՞ւ գնաց, ասաւ՝ դու հագար... էլ էդ կապոցը ի՞նչ ա. էդ օտար մարդը ինչ գործ ունի որ քեզ կապոց ա տալիս, —շարունակեց մայրը նոյն խստութեամբ:

Մարանիկը մի պահ չխօսեց, մաքերը խառնուեցին, նա չգիտէր ո՞րտեղից սկսէ. և ինչպէս վերջացնէ, որ մայրն հասկանար բանի էութիւնը։ Նրա աչքերը լցւեցին, անզօր կզգար իրեն և վախ՝ մօր առաջ պատասխանատուութեան զգացմից. մայրը կանգնել էր իր գլխաց անձկ դատաւորի նման և բացատրութիւն էր պահանջում։ Մարանիկը նայել սկսեց իր թուղթ,

կարծես այդ հաւաքելու համար, թեւքով սրբեց աչքի արցունքը և յուզումից փոխուած ձայնով սկսեց մի առ մի պատմել անցած դարձածը։

Այդ երեկոյ, անպաճոյճ պատմութեան ընթացքում մօր դէմքը մերթ մեղմանում, դառնում էր դալուկ, մերթ խըռ-ոովում, դառնում էր մռայլ, անհոյս. Մարտիկի հոգին ապ-րում էր մօր հայեացքի բոլոր փոփոխութիւնները, բայց նա իրեն անմեղ էր զգում և ամէն ճիգ գործ էր դնում ապացուցել մօրը, որ ինքը դատապարտելի ընթացք չի ունեցել։

—Էգուց ինձի գործի ա մեկնելու... սատա հայրիկից. հէտ ե՛կ... էս կապոցն էլ տար Նազիկին ու Արփիկին... որոնց համ ամէն օր կապոց կը տամ... կը տանես քոյրիկներիդ...

Եւ Մարտիկը փղձկաց։

—Լա՛ւ,—ասաց մայրը զգացուած,—համա մինչև որ հերդ չը գայ, էդ կապոցը բացել չկայ. ինքն ա իմանում, ինչ ուզում ա թող անի...

Այս խոստովանութեան վրայ, Մարտիկի բախտից, ներս մը-տաւ մշակ Մուկուչը։ Դիլբարը ամուսնուն ցոյց տուեց կապոցը և Մարտիկին պատուիրեց պատմել ինչ որ եղել էր։

Մուկուչն համբերութեամբ լսելուց յետոյ ասաց.

—Էդ դուքանչին պարոն Մաթոսն ա. ուրախ կնիկ ա, հա-մա սիրտը փափուկ ա... նրա համար բեռն եմ տարել. ինձի սենց կը ճանաչի. փոքր Ասոն, որ Մարտիկին ուզում ա մեղցնի չա-գիրդ. առաւօտից մինչի իրիկուն էշի նման բեռն եմ կրում՝ է՛լը ծերը-ծերին չի հասնում. դէ՛ որդիս, ճար չունենք. աւամա-րանք հեղացն էդ անիրաւները. է՛լը բա ա որ դու հօրդ պէս համբալ չես դառնայ, դուքանչի կըլնես. էս խեղճ բոխերն էլ ամէն օր մսի խելս կը ուտենն. չարաթներով հարսն չեն քաշի մէ՛ քիչ ամալ կը գան։

Մարտիկը աղաս չու՛նչ քաշեց և սիրտ առնելով, ոգեւոր-ւած ասաց.

—Հա՛յրիկ, կոշկակար Կարապետն էլ ասաւ, որ ինքը իրա մօտ, բեռը կայ. էս գիրքը, ակարակն ու Մաթխան էլ ասաւ, ասաւ՝ «համա թամբալութիւն չանես հա՛, կը՛րդար»...

—Լա՛ւ, հիմա, Դի՛լբար, էդ կապոցը բաց արա, նայենք ի՞նչ կայ մէջը։

Նաղիկն ու Արփիկը դէն չդրանցին իրենց խրձիկները և հետաքրքրուած մօտեցան կառքին։

—Հայրի՛կ,—հարցրեց Նաղիկը,—ուտելու բան ա՞։

—Հա՛, ջա՛ւրբան, ուտելու բան ա,—ասաց Մուկուչը և Նաղիկին նստեցրեց իր ծնկան. Արփիկը տեղ բռնեց հօր կողքին։

Գիլբարը բաց արաւ կառքը. Թափանցիկ թղթերի մէջ առանձին փաթաթուած էին՝ երշիկ, խոզամիս, ձուկ, գետնախնձոր ու աղանդերը. Մաթէկարը չէր մոռացել նաև մի քանի թթու վարունգ և հաց դնել կառքի մէջ։

Նաղիկն ու Արփիկը ուրախութեան ճիչեր արձակեցին։

—Փա՛ռք քեզ, Աստուած,—բացականչեց Գիլբարը,—բախտաւոր ուղին հասցրեց,—այս դառնոտ ամառանն.—էսօր գնացի Նաղանու մօտ, որ դարակ վերցնեմ, հաց առնեմ բերելու համար. Նաղանին տանը չէր, փոր-փոշման եւ եկամ՝ էս ա որ Մարթիկը կառքը բերել էր։

Երեխաները զարմանքով և հիացմունքի ճիչերով ուտում էին ու շատախօսում. Մուկուչը ժպտալով դիտում էր, ապա որքան կարող էր՝ պատասխանում էր նրանց հարցերին։

—Էս կա՛յրա ու էս էլ խաղի մէջ ու էս խառնած բաներն էլ... չեմ իմանում ինչ ա, մէ խօսքով չիմացայ։ Մարթիկն առաջին աշխատանքն ա, Աստուած աջողութիւն տայ, ո՛րդիս։ Բայց դու չե՞ս ուտում,—յանկարծ անդրադարձաւ նա, Մարթիկին դիմելով։

—Հա՛յրիկ, ես կերել եմ, էս ձեր բաժինն ա. էն մարդն էլ տուաւ, որ էս ձեր բաժինն ա...

—Թէ որ իշխան ամեն՝ կէ՛ր. մենք էսքանը ուտողը չենք,—ասաց Մուկուչը։

—Չէ՛, հայր ես Նաղիկին ու Արփիկին մէ ուրիշ բան էլ եմ տալու,—ասաց Մարթիկը խորհրդաւոր կերպով։

Նաղիկի և Արփիկի աչքերը լայնացան և հարցական գծուեց նրանց դէմքերին։

—Ի՞նչ,—հարցրին երկուսը միաբերան։

—Խնձո՛ր, կարմիր խնձո՛ր...—բացականչեց Մարթիկը գրպանից խնձորը հանելով,—կօշկակար Կարապետը տուաւ. մաքրած՝ էս էլ էր տամ Նաղիկին ու Արփիկին։

Երեխաները ծափ տուին ու ճչացին խնձորի տեսքից։

Քիչ մնաց կախ ծառերն նրանց մէջէն՝ խնձորի չափ. ամէն մէկն ուզում էր վերցնել հասունցած խաղող։ Մուկուչը գրպանից հանեց իր հին զմելին և խնձորը չորս մասի բաժնելով՝ տուեց Նազիկին, Արփիկին, Մարթիկին և կնոջը. ինքը հրաժարուեց ուտել։

*
* *

Յաջորդ առաւօտեան Մուկուչը, Մարթիկի ձեռից բռնած, գնաց Մատթէոսի խանութը։

—Աղա, Մո՛ւկուչ, էս քո թեխնն ա՞. պա՛ քո տունը չքանդուի, էս ինչ լաւ թեխայ ունես՝ ամանչկոտ, աչքը կուչս. հէնց ինչ որ տամ եմ՝ «հայրիկիս տանեմ՝ կեսայ», պատասխան ա տամ։ Դէ՛, գո՛ւրբան, ինձի մէ աշկերտ ա պէտք. հէնց էս թեխի պէս. ինձի հետ կատի կը խմի, բիզանն էլ կոլբասից բանից կը տամ տուն կը բերի թեխէքին համա, տարեկան մէ ձեռք էլ շոր կառնեմ համարը, թէ որ Աստուած դարձի աջողութիւն տայ՝ էրկու ձեռք կառնեմ. թեխայ ա, աչքը կը բացի, տաստարի մաշկալ կէնի, էն անիրաւները որ ուսումարանը չը կոզգին, ես որան ուսումարան էլ կը ղրկի, ամա դէ գի՛տես, է՛լի, մեր խեղճ թեխերքն տարդարդան որան...

—Պարոն Մաթոս, հրամանքդ խօսքը ինձի համա օրէնք ա. աղէս մեր քեզի՝ ակերն ինձի. թող մարդ դառնայ, տաստարի մաշկալ էնի. ինձի նման համբալ չդառնայ...

Եւ փոքրիկ Մարթիկը, փախստական դպրոց մանկութ. և կրթութիւն տանողը, մտաւ Մատթէոսի խանութը, կեանքի դպրոցը։

*
* *

Մատթէոսը Մարթիկի համար նոր հագուստ կարել տուեց «Վալթանի»-ի կարից. նաև մի ճերմակ վերնազգեստ, որ հագնում էր խանութում, աշխատանքի ժամերին։ Այդ բացատրեց Մարթիկին այն բոլոր աշխատանքները, որ պիտի կատարէր. կրկնել տուեց, որոշ բաներ ցոյց տուեց, որպէս զի երեխան հաստատօրէն ըմբռնի և սխալ չգործի. այնպէս մի ամբողջ շաբաթ ամէն օր նա կրկնել տուեց իր պատուէրներն ու աշխատանքները յատուկ ուշադրութեամբ ու խնամքով։ Մարթիկը, ի բնէ աշխոյժ երեխայ՝

անմիջապէս խրացնում էր պատուէրը և կատարում ճշտութեամբ։ Մի թերութիւն միայն ունէր, որ յաճախ նայում էր իր նոր կօշիկներին ու հագուստին և կարծես գոհ չէր, որ հագուստի վրայից ճերմակ գոգնոց էր հագել։ Մաթէոսն այս նկատեց ու ասաց.

—Որդի՛, էդքան մի՛ նայում ես քոշիդ ու շորիդ, մարդիկ որ տեսնեն՝ կասեն գեօրմամիշ ա. էդ պակասութիւնդ ուղղի. եա՛յ՝ կանգնած վախտդ վիզդ մի՛ ծռի. կա՛ղնի տղամարդու պէս, որ չասեն խեղճ ա ու համողը գլխիդ բա՛մփի,—ապա աւելացրեց ախրութեամբ,—առանց էն էլ հայերս շատ ենք խեղճ, մէ քիչ էլ որ խեղճանանք՝ եախի հատար կըլնենք։

Երբ առաջին շաբաթն անցաւ և Մարտիկը վարժւեց խանութի իր պարտականութիւնների մէջ, Մաթէոսն ասաց.

—Արանից եդը ամէն օր գիրքդ կը բերես. աշտա վախտ դու կը կարդաս՝ ես անդաջ կը կախեմ. հասկացա՞ր։

Մարտիկն ուրախացաւ, որովհետև երեկոները, երբ խանութից տուն էր գնում, այլևս ժամանակ չէր ունենում գրքին նայելու. բացի այդ, ճրագ էլ չունէին որ կարդար…

Յաջորդ օրը ճաշից յետոյ, երբ խանութում համեմատաբար խաղաղ էր և յաճախորդները նուազ էին, Մաթէոսը Մարտիկին պատուիրեց նստել սեղանակի մօտ և գիրքը բանալ։

—Կարդա՛ էն սուրբ Մեսրոպի մասին,—ասաց նա։

Մարտիկը բաց արաւ այդ էջը և սկսեց հեգելով կարդալ.

«Մը-րա-նից հա-զար հինգ-հարիւր տա-րի ա-ռաջ մենք ո՛չ գիր ու-նէ-ինք, ո՛չ էլ գը-րա-ւոր լե-զու»…

Մաթէոսը բերանբաց, իր խոշոր քիթը ցցած, աչքերը լայն բացած ունկնդրում էր փոքրիկ Մարտիկի բերնից ելնող ծեծւած բառերին և կարծես մէկ-մէկ հաւաքում էր բառերի կըտորները և դարսում իր ուղեղում։

«Ե-թէ եր-կար ժա-մա-նակ զուրկ մը-նա-յինք սե-փա-կան տա-ռե-րից, պի-տի ձու-լո-ւէ-ինք ու-րիշ ազ-գե-րի մէջ»… կարդաց Մարտիկը.

—Հա՜, տեսնում ես,—բացականչեց Մաթէոսը,—հիմա որ մեր դըպրոցը փակեցին, եանի ուզում են մեզի հալ անել (ձուլել) իրանց մէջը. ամա դէ իրանց անդաջի եաւը կը տեսնեն,

սուրբ Մեսրոպի տառերը գտել ա... մենք զ՛այն պէտի պաշտենք էդ. տառերը, մէ՛ բաշ պէտի կ՛ըղանք։

«Մի հա-մեստ հայ գիւ-ղա-ցի փրր-կեց մեր ազ-գը կո-րըս-տից. այդ գիւ-ղա-ցին սուրբ Մես-րոպ Մաշ-տոցն էր», կար-դաց Մարանիկը։

—Հա՛, տե՛սնում ես, —ասաց Մատթէոսը, —էն որ գեղցի անզամը սա՛ հնարեց, դու որ քաղաքի մէջն ես ծնե՞լ, ունէ՞ս պէտի տեսա. հասկացա՞ր, մէ՛ բաշ պէտի կա՛րդաս ու գրես։

«Սուրբ Մես-րոպ, սուրբ Սա-հակ և ի-րենց ա-շա-կերտ-նե-րը հա-յե-րէ-նի թարգ-մա-նե-ցին Աստ-ուա-ծա-շուն-չը»։

—Աստ-ուա-ծա-շո՛ւն-չը... հա՛, մեռնեմ իրա զօրութեանը, բա էն էլ նա ա թարգմանե՞լ... հա՛, ղո՛չաղ, ղո՛չաղ սուրբ Մես-րոպ, —բացագանչեց Մատթէոսը և կարծես քիթն ուելի մեծացաւ։

«Սուրբ Մես-րո-պը թաղ-ուած է Հա-յաս-տա-նի Օ-շա-կան գիւ-ղում», —վերջացրեց Մարանիկն ու թեւքով սրբեց ճակատի քրտինքը։

—Օշա՛կան... Օշա՛կան... էդ գեղի ա՛նունը լսել եմ, ամմա չեմ տեսե... բա ա՛սում ես էնտեղ ա թաղուած հա՞, սուրբ հայրը, —ասաց Մատթէոսը և երկիւղածութեամբ խաչակնքեց մի երեք, —ապա աւելացրեց. —

—Սրանից եդը ամեն օր էն վախտ ամենից առաջ էլ կա՛րդաս էս սուրբ Մե՛սրոպը, հե՛տոյ ուրիշ բան. հասկացա՞ր, ո՛րդի։

Մարանիկը գլխով հաստատական նշան արաւ։

Մատթէոսը խորասուզուեց մտքերի մէջ։

«Էս բէխէն ըլըլել ա, Ծիրանի ըլըլել... բաները ըն-նից մաքրիան նման թախում ա»... ասում էր նա իրան։

Այս մէկէն շատ եկաւ և ուղիղ նայեց Մարանիկի դէմքին՝ իր խոշոր քիթը ցցած և աչքերը պլշած։ Երեխան շփոթւեց՝ վախ զգաց այդ յանկարծակի շարժումից և տարօրինակ հայեացքից. Մատթէոսը դիտում էր ապշած հայեացքով, ասես առաջին անգամն էր տեսնում տղային. այդ պահին Մարանիկի վիզը սովորականից աւելի բարակ երևաց Մատթէոսի աչքին, դէմքը աւելի տանջուած, ականջները՝ դեղնած... Մատթէոսը ընդոստ վեր թռաւ տեղից. Մարանիկը վախից կուչ եկաւ անկիւնում, երկու ձեռներով իր գիրքը գրկած, բայց Մատթէոսն անցաւ վաճառասեղանի յետև, դողդոջուն ձեռներով վերցրեց

երշիկ, խաղամիս, ինչ որ հասաւ ձեռքը և պնակի մեջ շարելով՝ բերաւ ու դրեց Մարտիկի առաջ.

—Կե՛ր, ո՛րդի, կեր որ ամայ գաս. սրանից եդք որ էդպես լաւ բաներ կա՛րդաս, աւելորդ. բան կը տամ՝ ուտես…

Մարտիկը աւելի հնազանդութեան զգացմունքից քան թէ քաղցից, սկսեց մեքենայօրէն ուտել. ու մինչդեռ նա ուտում էր. Մատթէոսը գէմքը շուռ էր ածել և ինքն իրեն մրմնջում էր. «Տէր Աստուա՛ծ, փառք շա՛տ, ինձ զաւակ չտուիր… ամա դէ էս բախէն փառքը ա. խեղճ ա. էս իմ զաւակն էրնի. պառաւիս հետ կը մխիթարուենք»… և երկու կաթիլներ թրջեցին նրա աչքերի առջևի աղխարը։

Այդ օրից Մարտիկը դարձաւ Մատթէոսի որդեգիրը։

ԴԷՊԻ ԳՈՐԾ

—Մեր մշակոյթի պաշտպանութեան գործը անկազմակերպ է, նա ենթակայ է պատահականութեան. ճիշտ է, մեր դպրոցների փակումը հակազդեցութիւն ունեցաւ, ամենաանտարբեր հայն անգամ յուզուեց, վրդովուեց և ազգային ինքնապաշտպանութեան բնազդը արթնացաւ իր մէջ. բայց սա բաւական չէ. պէտք է այդ բոլոր բարի ցանկութիւններն ու նախանձախնդրութիւնը օգտագործել, ձեւ տալ դնել, մի խօսքով՝ կազմակերպել լեզուի ուսուցման և ուրեմն նա՛և յարատեւման գործը. պէտք է կազմակերպուած պայքար մղել, խաղաղ միջոցներով, այլասերման և ձուլման դէմ։ Ամեն հօտի մի հովիւ է պէտք և ամեն գործի՝ մի ղեկավար. դժբախտաբար մի ընդհանուր ղեկավարութիւն չունենք մենք. Համայնական խորհուրդը, ճնշումների և ձերբակալութիւնների վախից՝ սմքել է ու քաշուել իր պատեանի մէջ. նա անկարող է այդ գործը կազմակերպել։ Մեր քաղաքական ազգայնական կազմակերպութիւնը, որը լեգալ չի, մի որոշ շրջանակում և որոշ չափով միայն մշակութային աշխատանք է կատարում, քանի որ ազատ չէ իր գործունէութեան մէջ, ապա՝ լինելով քաղաքական կազմակերպութիւն, նրա գործունէութեան շեշտը դրուած է աւելի քաղաքական քարոզչութեան. դաստիարակութեան վրայ քան թէ մշակութային։ Եւ վերջապէս Նրա դերը հրահանգչի դեր է։ Կանանց «Զարթօնք» միու-

թիւնն ի վիճակի չէ այդ ամբողջ ծանր բեռը իր ուսերին կրելու. հետեւաբար նրա գործունէութիւնը եւ սահմանափակ շրջան է ընդգրկում։ Կան մասնաւոր անձինք և խմբակցութիւններ, որոնք նախանձախնդիր մեր լեզւի ու մշակոյթի պահպանման, ինքնաբեր մղումով մասնաւոր դասեր են տալիս, բայց այս եւ բաւական չէ։ Խիստ դժւար է մի ընդհանուր յայտարարի բերել այս բոլոր ճիգերն ու վաստակ եռանդը, մանաւանդ որ խմբական պարագաների նկատմամբ հետադիմում կայ։ Հետեւաբար միակ միջոցը, որ ներկայ պայմաններում կարող ենք գործադրել, այն է, որ ամեն մի հայ իր սրբազան պարտականութիւնը համարի մեր լեզւի և մշակոյթի քարոզիչը դառնալ. բոլոր ընտանիքներում, բոլոր երեխաների մօտ, նոյն իսկ իրենց լեզուն նոր բացող մանուկների շրջանակում պէտք է այժմ տալ մեր լեզուն, սիրել տալ մեր լեզուն, մշակոյթը, և այս ձեւով հակազդել այն ձուլող քաղաքակրթութեան, որ տարում է մեր նկատմամբ, իբրև ազգային փոքրամասնութեան։ Այս բոլորը՝ սակայն, դարձեալ մնում են իբրև կիսամիջոցներ, քանի որ դպրոցաց չունենք. այս պայմաններում ծայրագոյն ճիգ պիտի գործ դնենք՝ նուազագոյն արդիւնքի հասնելու… Այսպէս եթէ շարունակի, ապա մի տասն տարի յետոյ նոր սերնդի մէջ հայերէն գրել-կարդալ գիտցողների թիւը խիստ նւազ պիտի լինի. նոր սերունդը պետական դպրոցներում հայերէն չպիտի սովրի, այլ՝ պետական լեզուն. բոլոր ծնողները հնարաւորութիւն չունեն իրենց երեխաներին հայոց լեզւի մասնաւոր դասեր տալու, այդ ծնողների մի մասը նոյն իսկ անհոգ է ու անտարբեր, մի մասն էլ կարծես գործնականութեան հաշւառութեամբ տարւած, ցանկանում է իր երեխային պետական լեզուն իւրացրած տեսնել՝ ապագայում իր պաշտօնի և նիւթական ապահով վիճակի հասցնելու նպատակով, այդպիսիների մէջ հայրենասիրութիւնը վայրկեանի սպառւում և մաշւում է, մնում այդ վայրկեանը՝ մոռացւում է նաև ամեն ինչ…

Մեր կարծիքով՝ ողբալի վիճակ ենք տալիս լեզւի դասագրքերի տեսակէտից։ Այդ դասագրքերը հրատարակւած են տարիներ առաջ, այժմ մեծ մասամբ սպառւած են և գզգզւած. նոր դասագրքեր հրատարակելու հնարաւորութիւն չկայ, քանի որ հայոց լեզւով գրքերի տպագրութիւնն արգիլւած է։ Ինչո՞վ պիտի ու-

Շամրիկ Դարբինեան
Շաւարշ Թունեան
Իրան-Թաւրիզ

վարեն մեր երեխաները, երբ դասագիրք անգամ չունենք… Ինձ թւում է, որ միակ միջոցը գաղտնի դասագիրք տպագրելն է, բայց դրա համար էլ հարկ եղած նիւթական միջոցները չկան, — ասում էր Արմէնը։

—Դիտողութիւններդ ճիշտ են, — ասաց Վաղրիկը, — բայց չպիտի այդքան յուսահատ լինել. այն որ ամէն հայ մարդ մեր լեզուի քարոզիչը պիտի դառնայ, այս պայմաններում լաւագոյն միջոցն է. պէտք է նախանձախնդրութեան մի մթնոլորտ, մի համաճարակ ստեղծել՝ նախ բանաւոր քարոզչութեամբ, ապա նաև տպագիր. այս վերջինը, ի հարկէ, գաղտնի կերպով։ Ես կը մտածեմ այն նիւթական միջոցների մասին, որոնցով պէտք է «Այբբենարան» հրատարակել. դու այժմէն մտածիր այդպիսի մի գրքի բովանդակութիւնը կազմելու մասին։ Միւս կողմից, ես լսեցի, որ «Զարթօնք» միութիւնը խմբական գաղտնի դասերի համար սեղմ և վստահելի շրջանակում հանգամանակութեան է ձեռնարկել և որոշ յաջողութիւն ունի. ես տեսակցեցի այդ միութեան վարչութեան մի անդամուհու հետ, իմ բարեկամներս ու ես իմ կողմից խնդրեցի միաժամանակ, որ քեզ և Բրարային ի նկատի ունենան դասընթացքի համար, իբրև պատրաստուած ույժերի. Նրանք ուրախութեամբ կընդունեն այդ առաջարկը. միայն թէ շատ զգոյշ պիտի լինես յատկապէս դու, քանի որ քեզնից բանտում ստորագրութիւն են վերցրել դպրոցական խնդրով չզբաղուելու…

—Այդ ո՛չինչ. ի հարկէ ես զգոյշ կը լինեմ. բայց եթէ նայելու լինեմ այդ ստորագրութեան. այդ դէպքում ձեռներս պիտի ծալեմ ու նստեմ, կամ մանեմ մի այնպիսի գործի ասպարէզ, որ մեր լեզուն և մանուկ սերնդի կրթութիւնն ու դաստիարակութիւնը տեղ չունեն. ա՛յդ հնարաւոր չէ. ես չեմ կարող այդպիսին լինել. ուրեմն մնում է որ Բրարայի հետ ձեռք-ձեռքի մենք նուիրենք մեր իսկական կոչումին։ Ինչ վերաբերում է «Այբբենարան»-ին, ես արդէն ծրագրում եմ և շատ ուրախ եմ, որ մտածում ես հրատարակութեան միջոցների մասին. Վա՛ղրիկ, առանց քեզ ես չեմ կարող աշխատանք տանել, ճիշտ է ասում մեր ժողովուրդը թէ «մի ձեռքը ծափ չի տայ», — ասաց Արմէնը։

Այս խօսակցութեան միջոցին ներս մտաւ Բրարան։

—Բրա՛րա, — ասաց Արմէնը, — պատրաստուիր որ շուտով ուսուցիչ պիտի դառնանք «Զարթօնք» միութեան խմբական դասըն-

թացքում․ Վաղրիկն արդէն խօսել է վարչութեան մի անդամուհու հետ և նրանք ուրախութեամբ պիտի ընդունեն մեզ։

—Այո՛․ մեծ ուրախութեամբ… չէք կարող երևակայել, թէ մեր դպրոցները փակելուց յետոյ ի՛նչ բուռն ցանկութիւն է առաջացել իմ մէջ՝ վարժուհի դառնալ․ ես յաճախ մտածել և մեթօդներ եմ խորհրդել՝ դաստիարակութիւնը հաճելի դարձնելու համար։ Այժմ պէտք է մտածել, թէ պարապմունքիս ժամերին Գիանային ո՞ւմ խնամքին յանձնեմ՝ տիկին Մարիամին ես շատ յոգնութիւն եմ պատճառել, այժմ ամաչում եմ նրան նոր պարտականութեան դնել,—ասաց Բրարան կարմրելով։

—Այդ մասին կը մտածենք,—ասաց Վաղրիկը․—նախ՝ տիկին Մարիամը հաճոյքով է պահում երեխային և հարկ չկայ ճնշելու․ այդ խնդրի կարգադրութիւնը թողէք ինձ․ բայց այդ՝ կարելի է դասերն այնպէս դասաւորել, որ Արմէնի և ձեր ժամերը չզուգադիպեն, այլ իրար յաջորդեն․ այդ դէպքում Արմէնը և կը հսկի Գիանային, ձեր բացակայութեան։

—Վաղրի՛կ, դուք բոլոր դժուարին խնդիրները չափազանց դիւրութեամբ լուծում էք, ես զարմանում եմ ձեր մտքի ճկունութեան վրայ,—ասաց Բրարան։

Վաղրիկը գլուխը կախեց․ «մի անգամ միայն ճկուն չեղաւ միտքս, մի անգամ միայն՝ և ահա հեղեղն ինձ քշում-տանում է»,—խորհեց նա և ակամայ հառաչեց։

Արմէնը նկատեց թախծի այն ամպը, որ անցաւ Վաղրիկի դէմքով․ նա շտապեց խօսակցութեան նիւթը փոխել։

—Գիտե՞ս, Բրարա, Վաղրիկն արդէն ազախին է վարձել՝ տիկին Մարիամին օգնելու․ այժմ նա իր տնային գործերից թեթևանում է, հետևաբար աւելի դիւրութեամբ կը զբաղուի Գիանայով, նոյն իսկ կը ձանձրանայ, եթէ չզբաղուի…

—Այդպէս, ուրեմն, Վաղրիկի շնորհիւ բոլոր դժուարութիւնները մէկ առ մէկ լուծւում են․ ես չգիտեմ թէ մենք երբևէ, ինչո՛վ երախտահատոյց պիտի լինենք Վաղրիկին, Արմէն,—ասաց նա։

—Մտերիմ ընկերների մէջ, Բրա՛րա, նման հարցերի մասին խօսելն անգամ վիրաւորական է․ իմ արածները չնչին և սովորական բաներ են, մի՞թէ արժէ դրանց համար երախտահատոյց լինելու մասին մտածել։ Ընկերներ կան, որոնք իրենց կեանքը զոհում են ընկերոջ համար․ այսպիսի զոհաբերութեան

համեմատութեամբ՝ ընդունենք որ իմ արածը չնչին բան է։ խնդրում եմ այս մասին այլեւս չխօսենք. այլ ինքնաբերաբար անենք այն, ինչ որ մեր խիղճն է թելադրում, — ասաց Վաղրիկը, ապա նիւթը փոխելով, աւելացրեց. — մենք ամէն մի հայ մարդու պիտի թելադրենք եւ յորդորենք, որ իր երեխաներին եւ իր շրջապատին սովորեցնի մեր մայրենի լեզուն. սա ո՛չ միայն ազգային, այլեւ համամարդկային պարտականութիւն է. որովհետեւ հայ ժողովուրդը հազարաւոր տարիների պատմութեան ընթացքում իր բաժին լուման է նետել մարդկային քաղաքակրթութեան գանձարանի մէջ. հետեւաբար նա իրաւունք ունի ապրելու, իրաւունք ունի իր լեզուն, իր մշակոյթը պահպանելու. պէտք է համբերութեամբ եւ յամառ աշխատանքով պահենք մեր ազգային ինքնութիւնը, մինչեւ որ մի գեղեցիկ օր ի սփիւռս աշխարհի ցրուած հայութիւնը համախմբուի իր հայրենի հողի վրայ, ուր՝ մեծ քաղաքակրթական արժէքներ ստեղծելու լայն հնարաւորութեամբ։

Մինչդեռ Վաղրիկը խօսում էր այսպէս, Բյուրան լսում էր յափշտակութեամբ ու խորհում. «Ի՜նչպէս մարդ. մանաւանդ կինն իր կեանքում, երբեմն առանց լուրջ խորհելու՝ ճակատագրական սխալներ է գործում. եւ, դպրոցից նոր ելած՝ առանց երկար խորհելու, միայն օրիորդական քմահաճ նախասիրութեամբ մերժեցի Վաղրիկի առաջարկը հէնց միայն նրա համար, որ անձամբ չէր կատարել այն Վաղրիկի կողմից, այլ՝ ընկերուհու միջոցով… մի՞թէ արժէր նման անլուրջ պատճառաբանութեամբ մերժել, վիրաւորել ա՛յսպիսի հոգի ունեցող մի երիտասարդի։ Եւ, այդուամենայնիւ, ի՜նչ վեհանձնութիւն նրա կողմից, ինչ անձնուիրութիւն… Դժուար է ինձ համար նայել նրա աչքերին. նա ամենաթեթեւ չափով անգամ զգացնել չի տալիս ինձ, որ իրեն վիրաւորել եմ. արդեօք, նրա այս անձնուիրութիւնը ապացոյց չէ՞ այն բանի, որ նա ինձ նախապէս եւ խորը սիրել է»…

Եւ Բյուրան իրեն անզօր ու փոքր զգաց Վաղրիկի սրբազան զգացմունքի առաջ. ապա նրան թւաց, որ իր սիրտը ճեղքուել է երկու մասի, որոնցից մէկի վրայ գրուած է Արմէն, միւսի վրայ՝ Վաղրիկ, նա սարսուռ զգաց այս մտքից, ընդոստ վեր կացաւ եւ ակամայ մօտեցաւ Դիանայի մահճակալին։

Մանուկը քնած էր խաղաղ ու արդար քնով. Բյուրան իրեն

անբաժանելիօրէն շաղկապուած զգաց Արմէնի հետ, Գիտնան այն հզօր շաղախն էր, որ միացրել էր երկուսին. Նրա դիմագծերի մէջ տեսնում էր և Արմէնի դիմագծերի համադրութիւնը, անբաժանելի և խորախորհուրդ։

—Մեր ժողովրդի հայրենասիրական վիճակը,—ասում էր Արմէնը,—տարբեր ժողովուրդների և տարբեր մշակոյթների միջավայրում, ուր այլասերման և ձուլման վտանգն անխուսափելի է, մանաւանդ կուլտուրապէս մեզնից բարձր ժողովուրդների գրկում, մեզ պէտք մի լրջօրէն ծրագրուած գործի. Մեր ժողովրդին պէտք փրկենք ձուլումից և մեր մշակոյթը կարողաց. յամենայն դէպս պէտք դանդաղեցնենք այդ ձուլումը, մինչև որ բոլորիս երազած հայրենիքի դռները բացուեն։

Նայեցէք ձեր շուրջը. մեր գաղութահայերից քանի՞սը մաքուր հայերէն գրել ու խօսել գիտեն. Մեր լեզուն, օտար բառերով ու դարձուածքներով ծանրաբեռ, դարձել է բաբելոնեան խառնակ լեզու, կիսակիրթ և կամ օտար կրթութիւն ստացած հայ մարդկանց արտայայտած ամէն մի նախադասութեան մէջ գերակշռողը պարսկերէն, թուրքերէն, ռուսերէն, ֆրանսերէն կամ անգլերէն բառերն են. Հայերէն բառերի արտասանութիւնն ու շեշտն անգամ օտար լեզուների և ժողովուրդների լեզուական շեշտն ունի։ Այսօր, ու վաղն առաւել, մեզնից կուլտուրապէս բարձր ժողովուրդների ծոցում ամփոփուած մեր գաղութների հայ նոր սերունդն այլևս իր մայրենի լեզուն պէտք մոռանայ և դնո-րով առել՛ և՛ս պէտք ուծանայ։ Ի՞նչ է ֆրանսահայ և ամերիկահայ գաղութների մեր նոր սերնդի լեզուն՝ ֆրանսերէն և անգլերէն. մի անդունդ է բացուել մեր նոր և հին սերնդի միջև—լեզուական և մշակութային. Վաղուայ մեր նոր սերունդն այլևս չպիտի ճանաչի մեզ. Մենք խորթ պիտի երևանք նրա աչքին և փոխադարձաբար. Մռայլ եմ տեսնում հետևանքը. եթէ միայն քաղաքական նոր վերիվայրումներ, մի նոր պատերազմ չգայ և այդ սպառնալից վիճակը չփոխի։

Արմէնն ու Վաղրիկը խօսում էին այսպէս մինչև ուշ գիշեր. Ֆլորան լսում էր նրանց. Նա դժուարանում էր նախընտրութիւն տալ մէկին կամ միւսին. երկուսն էլ խօսում էին տրամաբանուած, նոյն մտահոգութեամբ և նոյն զգացմունքներով տոգորուն։ Եւ Ֆլորային հաճելի էր և՛ նրանց ներկայութիւնը, և՛ զրոյցը։

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԴԱՍ

Շաբաթներ էին անցել այն օրից, երբ Վաղրիկը Արմէնին ու Բիբարային յայտնել էր, որ կանանց «Զարթօնք» միութիւնը խմբական դասեր պիտի սկսի և նրանց հրաւիրի պարապելու։ Առաջ կանայք սենեակ էին տրամադրել, յատկապէս տան ներքին գետնայարկում, այդ պարապմունքների համար, որպէս զի դրսից չլսուէին դասերի ձայները։ Ամեն մի խմբակի հետ պարապում էին շաբաթը երկու կամ երեք օր. աւելին հնարաւոր չէր, քանի որ արդէն պետական դպրոց մտած աշակերտներն ամեն օր մինչև երեկոյեան ժամի 4-ը զբաղուած էին դպրոցում, ապա 4-ից յետոյ պիտի հանգստանային տան, վերցնէին իրենց հայոց լեզուի գիրքն ու տետրակը և գնային գաղտնի դասընթացներին, այս է պատճառը, որ դասընթացքի ժամը նշանակուած էր երեկոյեան ժ. 5-ը։ Բացառութիւն կազմում էր ուրբաթ օրը, երբ դպրոցներն արձակուրդի մէջ էին՝ իբրև պետական կիրակի. այդ օրերին դասընթացքը նշանակուած էր առաւօտեան ժ. 9-ը։ Ասել ժամեր նշանակելը հնարաւոր չէր, քանի որ պետական դպրոցներում աշակերտներին այնքան էին ծանրաբեռնում դասերով, որ այլևս ժամանակ չէր մնում մայրենի լեզուով զբաղուելու. Երեխաների ամբողջ օրը անցնում էր դպրոցական և արտադպրոցական զբաղմունքներով։ Գնալով՝ պետական լեզուն նուաճումներ էր կատարում, մինչդեռ մայրենի լեզուն նահանջում էր արագօրէն. պէտք էր այդ նահանջը կանգնեցնել, գրաւէտ դարձնել անգրագէտներին, իսկ գրագէտներին վարժեցնել և սիրել տալ իրենց մայրենի լեզուն. ահա՛ դասընթացքի նպատակը։

Այն օրերին, երբ Բիբարայի ու Արմէնի դասաժամերը զուգադիպում էին, Գիտանային հսկելու գործը մնում էր տիկին Մարիամի վրայ. Նա այս պարտականութիւնը կատարում էր սիրով ու հաճոյքով, քանի որ արդէն կապուել էր այդ ընտանիքին, մանաւանդ փոքրիկ Գիտանայի հետ, որին իր թոռնիկն էր համարում։ Տիկին Մարիամը գոհ էր այս հարևանութիւնից, չափազանց գոհ. երբեմն նա, մենակ եղած պահուն, փառք էր տալիս Աստծուն, որ իրեն մխիթարում է լաւ մարդկանց ընկերակցութեամբ. Նա համոզուած էր, որ Աստուած է կարգադրում, իրար մօտ բերում մարդկանց, և ահա իրեն ա՛յսպիսի մտերիմներ էր

տել, որպէս զի իրեն մխիթարի իր զաւակի կորստից յետոյ…

Գիանան հառաչ էր նետում. այժմ արդէն կրճատում էին նրա քնի ժամերը, անցք տալով արթնութեան. մանուկն ուզում, նոյն իսկ պահանջում էր որ իրեն զբաղեցնեն և տիկին Մարիամը հաճոյքով կատարում էր նրա ցանկութիւնները։ Երեխան էլ իր հերթին այնպէս էր կապուել այդ տարիքոտ կնոջ հետ, որ երբ նա, Բրարան գործից յետոյ փորձում էր դուրս ելնել սենեակից, Գիանան փակչում էր նրա փէշերին և չէր ուզում թողնել։

* * *

Դասընթացքի երեխաները գիտէին, որ իրենց դասերը են-թակայ են որոշ վտանգների. գիտէին որ իշխանութիւնը հետա-պնդում է. գիտէին նաև, որ սովորական խօսակցութիւններով, հարցերով ու հետաքրքրութեամբ կարող են իրենցից խօսք կոր-զել թաքուն դասերի մասին. այս բոլորը գիտէին երեխաները և արտակարգօրէն զգոյշ էին. պէտք էր տեսնել, թէ ինչպէս նրանք դասընթացքներին յաճախում էին իրենց գրքերը հագուստի ծոցի մէջ թաքցրած, պարզ դէմքով, զուարթ և լուռ, մտնում էին գետնայարկը ստուերի պէս, անաղմուկ. պարապմունքների ժամանակ միայն բացւում էր նրանց լեզուն, ինչպէս թռչնակ-ները իրենց բնում՝ մօր ներկայութեամբ։ Որևէ վտանգ եղած դէպքում նրանք անմիջապէս իրենց հագուստի տակ թաքցնում էին իրենց գիրքն ու տետրակը և ցրւում։ Դժուար ոչ ոք կարող էր նրանցից որևէ գաղտնիք կորզել. նրանց մանուկ հոգին զգում էր աւելի բնազդօրէն քան գիտակցաբար, որ մի որոշակի աւանդ է պահում իր խորքում, մի աւանդ, որի կորուստը հաւասար պիտի լինէր իրենց ազգային ինքնութեան։

* * *

Վաղրիկը, գործի բերումով, պիտի հանդիպէր իր ծանօթ-ներից անուանի կապալառու Արմենակին. նա կտրեց Բահրամի փողոցը, ապա անցաւ երկու նեղ փողոց ևս և կանգ առաւ Ար-մենակի բնակարանի առջև։ Նրան ներս ընդունեց ծառան, խնդրեց քիչ սպասել, մինչև որ պարոնը կը գայ։

Վաղրիկը նստեց բազմոցին և խորասուզւեց մտքերի մէջ։ Սենեակի պատուհանները բացւում էին բակի վրայ, որա ձախ կողմում ընկնում էր մի շէնք, որի պատուհանները ծածկւած էին թանձր վարագոյրներով. իսկ շէնքի գետնայարկը թւում էր թաղւած մթութեան մէջ, որը էլ աւելի թանձրանում էր բակի խիտ ծառերով, որոնցից ոմանք՝ կանաչ էին, ոմանք՝ տերևաթափ։ Այդ շէնքն ու բակը այն տպաւորութիւնն էին թողնում, որ կարծես շունչ ու կենդանի չկայ. մանաւանդ որ ձմեռ էր և շէնքերի պատուհաններն ընդհուպ փակւած էին։

Երեկոն իջնում էր, մութը թանձրանում, ձմռան հողմերը տատանում էին ծառերի և եղևնիների ճիւղերը։ Մի սարսուռ անցաւ Վաղրիկի մարմնով. նրան թւաց, որ բակի ցուրտը թափանցում է իր հոգին և իր յոյզերը նոյնպէս սրսփում են բակի ծառերը տատանող սառնաշունչ հողմերից։ Նա քայլեց սենեակի երկայնութեամբ ու նորէն կանգ առաւ պատուհանի առաջ. այդ պահուն նրա ականջին հասաւ մի նուրբ կանացի երգի ձայն ու նրան թւաց, թէ այդ ձայնը ծանօթ է իրեն. նոյն իսկ հաւատաց, այնքան, որ նա նուրբ ելեւէջներն անգամ իր հոգուց էին բղխում... Նա բացեց պատուհանը՝ աւելի որոշ լսելու համար և ահա նրա ականջին հասան նաև երգի բառերը.—

«Եկէ՛ք փոքրի՛կ, խմբովին,
Այբուբենը սովրենք,
Երբ որ հարցնեն՝ «ի՞նչ գիտէք»
Ծայր է ի ծայր այն կրկնենք»...

Երգը մի պահ դադարեց. Վաղրիկը շունչը պահած՝ լարւած ուշադրութեամբ ունկնդրում էր. ապա նոյն երգը կրկնեց մի խումբ մանկական ձայներով, որից յետոյ դարձեալ նոյն կանացի նուրբ ձայնը երգեց՝

«Այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, է...
Ինի, լիւն, խէ, ծա, կէն, հօ, ձա՛...

Կասկած չունէր այլևս. դա Բրաբոյի ձայնն էր, որ գալիս էր գետնայարկի խորքից, փակւած դուռ ու պատուհաններից դուրս թափանցելով, ձմռան հողմերի թևերին...

Նրան թւաց, թէ իր հոգում ինչ որ բան խլրտաց. ապա դադարեց, վիրաւոր թռչունի պէս թրթռաց ու հեւում էր հա

դեմարդի հանդիման։ Նրա աչքերի առաջ բակը, ծառերն ու շենքը պղտորվեցին, կորցրին իրենց հաստատուն ձևը, ասես մի տեղատարափ անձրև ջրի քողով պատեց ամեն ինչ և ծառերը լողացին հեղուկ քողի լուսում...

«Այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, է՛»...

Կրկնում էին մանկական ձայները։ Վիրավոր թռչնակն սպասում էր հեռվից իր հոգու ձայնին, այն նուրբ ձայնին, որ կենսարար զեփյուռի շունչն ունի, գարնան առաջին յուղերի և զարթոնքի ձայնը, ծաղիկների ու տերևների սոսափյունը և հավերժական առու որոգի հծծյունը..

«Ղաթ, ճէ, մեն, յի, նու, շա, ո՛...

Չա, պէ, ջէ, ռա, սա, վեվ, տի՛ւն..

Երգեց թռչնակի հոգին։ Նրա աչքերի առաջ գծագրվեցին երկու սև աչեր, որոնց վերև նրբաձիգ յօնքերը կամար են կապել մարմարակերտ ճակատի վրայ և այդ երկու կողմերից յորձանուտ գետի պես ալիքաձև թափվում է սև վարսերի ջրվեժը։

«Բյուրա»... մրմնջում է վիրավոր թռչնակի հոգին և պարտէզն աւելի է պղտորում։

Հնչում է փողոցի դռան զանգը։ Վաղրիկը սթափվում է, արագ փակում է պատուհանը և խորհում։ «Այսպես շարունակելն անհնարին է. կա՛մ պիտի հեռանամ այս քաղաքից, կա՛մ պիտի վերջ դնեմ այս զգացմունքից. անիմաստ է, անիմաստ... դու չես կարող խախտել բարոյական սկզբունքները, չես կարող դավաճանել քո մոտ ընկերոջը. ուրեմն՝ երկուսից մեկը — հեռանալ կամ՝ մեռնել»..

Ներս է մտնում Արմենակը, որ լավ համբավ ունէր իբրև կապալառու։

— Կը ներես, սիրելիս, որ քեզ սպասեցնել տվի. հենց մեր գործի կապակցությամբ էր որ ուշացայ. այո՛, ուրախ եմ յայտնելու, որ երեսուն կիլոմետր գիծ մնաց ինձ և ես քեզ խնդրել եմ ինձ մոտ գալու, որպեսզի միասին մտածենք գործի մասին։ Մազանդարանի երկաթուղին է, այդ 30 կիլոմետրից, ես մտածում եմ, տասը կիլոմետր առաջարկել քեզ, նաև ամբողջ 30 կիլոմետրի կառավարչի պաշտոնը. ես գիտեմ որ դու նախաձեռնող, ճարպիկ և գծի գործին ծանոթ մեկն ես, քեզ հետ հաճելի է աշխատելը, բացի այդ, գիտես որ ես այսպես հազար ու մի

գործեր ունեմ, չեմ կարող ամբողջ ժամանակս յատկացնել գը-
ծին... Գէչ, ի՞նչ է քո կարծիքդ...

«Հեռանալ կամ՝ մնալ»... հնչում էր Վաղրիկի հոգում. «Հեռանալ... հեռանալ»...

— Ես համաձայն եմ, — ասաց նա վճռականօրէն, — և ուրախ եմ որ ձեր ընկերութեան հետ գործ պիտի ունենամ, և ո՛չ ուրիշ մէկի. գիտէք որ ընկերութիւններ կան, որոնց հետ գործ ունենալը տանջանք է, հազար ու մի անախորժութիւններ են ծագում՝ ընկերութեան անդամների անպատասխանատուութեան պատճառով։

— Ձեզ քաջ ծանօթ են այդ բոլորը։ Ձեր դէմքին չեմ ասում և գիտէք որ շողոքորթ բնաւորութիւն էլ չունեմ, ձեր ընկերութիւնը լաւ համբաւ ունի. ձեզ հետ աշխատելը իրօք հաճելի է, միայն թէ հէնց այժմից խնդրում եմ, որ պատասխանատու լինէք, ինչպէս միշտ, որպէս զի ես էլ իմ գործի մէջ չկաշկանդուեմ և ծրագիրներս չխախտեն. ուրիշ խօսքով՝ ակամայից անպատասխանատու չդառնամ. որոշ ծախսեր են պէտք, որոնց առաջ չպիտի կանգ առնենք՝ գործի օգտուներն ի նկատի ունենալով. օրինակ՝ առաջին պայմանն այն է, որ մենք օրավարձով աշխատող բանուորներին աւելի վճարենք ժամանակին և ըստ արժանւոյն գնահատենք և իրենց վարձը վճարենք ժամանակին և չզրկենք նրանց իրաւունքներից. երկրորդ՝ երբեմն դէթ փոքրիկ նուէրներ տանք՝ նրանց խրախուսելու համար. խրախուսելու և մեզ հետ սիրով ու վստահութեամբ կապելու համար. մի քանի հազար և վերջապէս դա խելք գործ է միմժամանակ. մենք վստահութիւն և բարի համբաւ ձեռք բերելով՝ աւելի մեծ գրամագլուխ է, քան նիւթական շահերը, որը շատ աւելի մեծ գրամագլուխ է, քան նիւթական շահերը. երրորդ՝ մատակարարները պիտի վճարեն կանխ գրամագլուխը։ Եւ երրորդ՝ գործի ծրագիրը չխախտել և առհասարակ ընդհանրապէս ժամանակին, որպէս զի գործի ծրագիրը չխախտուի և աւարտուի ընժամանակին, որպէս զի պայմանները որ ճշտիւ կատարեն՝ միացած լինեն։ Այս երեք պայմանները և ձեր գիտութեամբ, — ինքնին գլուխ կը գայ իմ ջանքերով և ձեր գիտութեամբ, — ասաց Վաղրիկը։

— Երբ ես քեզ ի նկատի ունեցայ երբեւ կառավարիչ, այդ գիտեմ որ առում ես իմ մտքովս՝ — գիտեմ որ առում ես մեզնից բոլորն անցաւ իմ մտքով. գիտեմ որ ամբողջ ժամանակ վստահ եղիր, դաւթինք և գործին նուիրում ամբողջ էութեամբ. վստահ եղիր, որ այդ բոլոր պայմանները կը կատարեն ճշտութեամբ, — ասաց Արմանեանը և ուրախացած, — վաղն և եթ անցի՛ր մեր գրասենեակը. Արմանեանը և ռեհւգգինց, — վաղն և եթ անցի՛ր մեր գրասենեակը. Արմանեանը և ռեհւգգինց յանձնարարութիւններն և բոլոր պլաններն ու գործի վերաբերեալ յանձնարարութիւններն

տացին. գործակիցներ դու՛ պէտք ընտրես, ամեն կարգադրութեան մէջ լիազօրած ես։

Վաղինակը հրաժեշտ առեց Արմանեանին։ Նա քայլում էր մտքերի մէջ խորասուզուած. «Հեռանալ... այդպէս շարունակել անհնարին է», խորհում էր նա. ինչ պայմաններ էլ առաջարկէր Արմանեանը՝ պէտք համաձայնէր, դա մի յուսահատ քայլ էր, որ առնում էր։

—Վաղինա՛կ... —Հնչեց սիրելի ձայնը նրա թիկունքից։

Սարսուռ անցաւ Վաղինակի մարմնով. նա ցնցուեց իր տեղում, ապա դանդաղ շուռ եկաւ և տեսաւ Քնարային։ Քամին խաղում էր նրա մազերի հետ, որոնք սև ջրվէժի պէս գահավիժում էին ճակատի երկու կողմով, և աչքերը ժպտում էին վաղորդեան արևից փայլող ցօղի կաթիլների պէս, և յօնքերը կամար էին կապել նրանց վրայ...

—Վաղինա՛կ, այս կողմերը ինչ գործ ունէք, —հարցրեց Քնարան։

Քնարայի ձայնի անմեղը նրա ականջին հնչեցրեց քիչ առաջ լսած երգը. նա մի պահ կարկամեց, սակայն անհետանում էր, ապա երազից արթնացածի պէս ասաց.

—Շուտով պէտք մեկնեմ... Արմանեանը գործ է յանձնում ինձ, Քնա՛րա։

—Ո՞ւր... Ափսոս էմ որ գործի էք անցնում. բայց... մեր կողմից...

—. . . ...

—Մեզ համար տխուր կանցնի առանց ձեզ, Վաղինա՛կ, —ասաց նա շառագունելով։

Վաղինակը դողաց. նա չգիտէր ինչ ասել. նրա հոգին լցուեց երախտագիտութեան զգացմամբ. «Չնորհակալ եմ, որ ինձ համար տխրում ես, որ իմ ընկերակցութիւնը փնտռում ես», —ասում էր նա իր մտքում և գորովալից հայեացք ձգելով Քնարայի վրայ, ասաց մեղմիւ.

—Ես լսեցի ձեր տաղը, Քնա՛րա, լսեցի ձեր երգը. այդ գաւռի սիրուն ես պէտք մեկնեմ. մեզնից ամեն մէկը պարտականութիւն ունի...

—Հաւանեցի՞ք իմ տաղը. ինչպէս լսեցիք, —հարցրեց։

—Արմանեանի սենեակից. ես բաց արի պատուհանը, ձայնը

գալիս էր նկուղից. Դուք մեծ գործ եք բռնել, Բյո՛ւրա, և նոր սերունդը երախտապարտ պիտի լինի ձեզ,— ասաց.

Բյուրայի դեմքով ժպիտ անցավ. սակայն մի ակնթարթ մի ամպ հաջորդեց նրան և նա հարցրեց.

—Վաղրի՛կ, երբեմն կգրե՞ք մեզ. չե՞ք մոռանա։

—Իհարկե,— ասաց նա երազուն և ավելացրեց.— իմ բարեկամներին ես երբեք չեմ մոռանում, երբե՛ք...

Բյուրան շառագունեց. նա կախեց իր գլուխը և լուռ մնաց։ Այսպես նրանք քայլեցին ամայի փողոցով։ «Բարեկամներին երբեք չեմ մոռանում, երբեք»,— հնչում էր Բյուրայի ականջին։ Աչքերը լցվեցին. և ինչ պիտի ճչար աղեխարշ, աղաչական ձայնով։ «Վաղրի՛կ, ներե՛ք ինձ»... ձյունի փաթիլներն ընկան նրա ջերմից այրվող դեմքին, նա հազիվ իշխեց իր վրա։

—Բյո՛ւրա, դուք առանց գլխարկի, այս եղանակին,— ասաց Վաղրիկը,— եկեք կառք նստենք։

—Ո՛չ, այսպես հաճելի է... ես գյուղական աղջիկներս էլ սիրում էի դաշտերով քայլել, երբ ձյունն էր իջնում։

«Այդ ձյունն իջնում էր իմ վրա... ես երկար սպասում էի փողոցի անկյունում՝ քեզ տեսնելու համար... այդ ձյունն իջնում էր իմ վրա»... խորհում էր Վաղրիկը։

Յանկարծ Բյուրան զգաց, որ Վաղրիկի ձեռքերն էր գրկում. նա շփոթվեց, զսպվեց ու զղջաց իր անզգուշության համար։

—Ե՞րբ պիտի մեկնեք,— հարցրեց նա երկչոտ։

—Ամենաուշը մինչև մի շաբաթ. վաղը պիտի սահմանեմ գործը, ապա նախապատրաստական աշխատանքներ կատարեմ ու մեկնեմ,— ասաց։

—Երկա՞ր կը տևի,— հարցրեց նորեն։

—Առնվազն մի տարի... գուցե և երկու...

Բյուրան լռեց. դեմքը շուռ տվեց հակառակ կողմը և Վաղրիկին թվաց, թե նա չը լսեց իր պատասխանը։

Ապա ասես երազի մեջ՝ Բյուրան մրմնջաց.

—Դիանան էլ մեռավ. նա այնպես սիրում է ձեզ...

«Վերջապես մեկը որ սիրում է ինձ. վերջապես»... խորհեց Վաղրիկը խռովելի և նրա աչքերի առաջ պատկերացավ շնուկ Դիանան, որ թաթիկը դեմքին խփելով ասում էր՝ «Դա՛-դա՛»։

Վաղրիկը ակամա հառաչեց.

—Ես ձեզ վշտացրի՞,—հարցրեց Բիլլան։

—Ա՛խ, ո՛չ,—ասաց նա շփոթված։

—Վալլի՛կ, մեկնելուց առաջ գոնէ ներեցէք ինձ… Ես ձեզ վշտացրել եմ… Ես անփորձ էի. խօսքը չմտածող մի դպրոցական,— ու կանգ առաւ, ասես ներման էր սպասում։

Բի՛լլա, չարժէ մտածել այդ մասին. դուք իրաւացի էիք. և ձեր վարմունքի մէջ՝ ազատ,—ասաց. գլուխը կրծքին կախած՝ մեղապարտի պէս։

«Աստուա՛ծ իմ, ու ի՞նչպիսի մարդ է. այդքան վեհանձնութի՞ւն»,—խորհեց Բիլլան յուսահատ հիացումով. «Այդքա՜ն խորը զգացում… Եւ ինչպէս չեմ գուշակել. և ինչպիսի թեթևամտութեամբ ես փշրել եմ այս բիւրեղի սիրտը»,—և այս խորհելով՝ նրա հոգին ճչաց յուսահատ, աղեկտուր ճիչով. նա այլևս չկարողացաւ զսպել իր արցունքը։

—Հանգստացէք, խնդրում եմ, Բի՛լլա, հասկացէ՛ք, դուք ինձ չէք վիրաւորել… դա ձեր իրաւունքն էր. Ես ձեզ չեմ մեղադրել երբէք… Ես էլ անփորձ էի ձեզ պէս, ահա՛ բոլորը… դուք իրաւացի էիք։

Այդ պահին փողոցով շտապ անցնում էր Վալլիկի երբեմնի ծանօթներից Զոլլագեռնը. նա զարմացական հայեացքով նայեց, անցաւ, ապա Վալլիկն զգաց, որ նա շուռ եկաւ, նորէն նայեց ու շարունակեց ճամբան։

Նրանք մօտեցել էին իրենց բնակարանին։ Ձիւնը տեղում էր խոշոր փաթիլներով, ճերմակ մարմարի պէս ծածկելով շէնքերն ու սալայատակները. լոյսերը կորել էին մշուշների մէջ. փողոցով անցնող մարդկանց վրայ իջել էր ճերմակ, սառնաշունչ ձիւնը։

ՄԵԿՆՈՒՄ

Ամբողջ մի շաբաթ Վալլիկը լուռ աշխատեց. նա իր ընկերներից օգնականներ և պաշտօնեաներ վարձեց գծի համար. գնեց մեծ քանակութեամբ բահ, բրիչ, մուրճ, ձեռնասայլեր, երկաթէ ձողեր, մաղեր և այն բոլոր գործիքներն ու պարագաները, որոնք պիտի գործածւէին գծի վրայ։

Երեկոները, մինչև ուշ գիշեր իր սենեակում փակուած, նա ուսումնասիրում էր նախագծերը, ամ ու գործի մանրամասն ծրագիր և հաշիւ էր կազմում։ Այդ մեկ շաբաթուայ մէջ նա խուսափեց Բլուրային և Արմէնին շատ հանդիպելուց, չնայած միևնոյն յարկի տակ էին ապրում։ Նա մի քանի անգամ նոյն իսկ ճաշերին բացակայեց, պատճառաբանելով իր զբաղումները։ Այս ձևով նա նախապատրաստում էր և՛ իրեն, և՛ միւսներին։

Երբեմն նա անցնում էր Արմէնի մօտ՝ Գիտանային տեսնելու համար, գրկում էր մանկանը, խօսեցնում, զբաղեցնում, ներքուստ ցաւ զգալով, որ շուտով պիտի զրկուէր նրա տեսքից, բայց միևնոյն է, գործից յետ կենալ չէր կարող։ Վերջապէս սա մի առիթ էր հետամտում, իր վիշտը պատմելու լեռների և արձակ դաշտերի հովերին, գուցէ և մոռանար... գուցէ...

Բլուրան, փողոցի խռովկութիւնից յետոյ դարձել էր մտածկոտ, թախծոտ։ Արմէնի սիրող աչքերից չէր վրիպել այդ պարագան։ Նա սկզբում փորձեց զբաղեցնել Բլուրային, ուրախ նիւթերի շուրջ զրոյց բանալով, բայց Բլուրան չարունակում էր տխուր մնալ։

—Բլո՛ւր, — ասաց նա վերջապէս, — այս քանի օր է որ տխուր տեսք ունես. ի՞նչ է պատահել, տկա՞ր ես զգում քեզ, թէ՞ գործերն են յոգնեցնում։

—Գործե՞րը, ո՛չ. մի քիչ տկար եմ զգում ինձ, երևի ցրտառութիւն ունեմ. վերջապէս՝ ինքս էլ չգիտեմ, — պատասխանեց։

—Ուշադիր եղիր դէպի առողջութիւնդ. կուզե՞ս բժշկի գընանք, — ասաց։

—Օ՜, ո՛չ, դատարկ բան է, կանցնի. այդ մասին չարժէ մտահոգուել, — և այս ասելով՝ գրկեց երեխային և տարօրինակ գորովանքով համբուրեց։

* * *

Օրերն անցնում էին դաշտերի սրընթաց քամու պէս. ե՞րբ և ի՞նչպէս անցաւ մեկ շաբաթը՝ Վազգէնը չիմացաւ, միայն թէ որքան շաբաթը մօտենում էր իր վախճանին, այնքան աճում

էր նրա հոգեկան տագնապը։ Նրա սիրտն ասես առել էին ափի մեջ և սեղմում էին. ափ նետած ձկան պես նա երբեմն բաց էր անում իր բերանը և ագահօրէն օդ ծծում, մերթ հառաչում էր ցաւագինօրէն և ո՛չ ոք ունէր այնքան մտերիմ, որին պատմէր իր վիշտը։ Նրա համար ծանր էր բաժանել մայրիկից. Արմէնից. Գիանայից... բայց մանաւանդ Ֆլորայից. գիտէր, տեսնում և զգում էր, որ Ֆլորան չէր հանգստացել իր յորդորներից, չէր բաւարարուել իր կեղծած այն յայտարարութիւնից, որ ինքը վիրաւորուած չէ, որ դա Ֆլորայի ազատ խրատներն էր, որ ինքը հաշտուել է իրականութեան հետ։ Ֆլորան զգում էր նոյնև երբեմն նկատում, որ Վարդիկը տառապում է. նա չէր կարողանում մի ելք գտնել, մի միջոց՝ թեթևացնելու համար նրա տառապանքը. թերևս աւելի՛ տառապեցնում էր, սակայն ինքը՛ էլ աւելի էր տառապում։

* * *

Վարդիկի մեկնման նախօրեակին նստեցին ընթրիքի. տիկին Մարիամը ոչինչ չէր խնայել այդ երեկոյ. նա պատրաստել էր Վարդիկի սիրած կերակուրներից. հարազատ մօր ուշադրութեամբ։ Գիանան քնած էր իր ննջարանում. Ֆլորան մերթ ընդ մերթ բացակայում էր՝ մանկան քունը ստուգելու համար։

Ո՛չ ոք բերան չէր բաց անում խօսելու, մինչև որ սեղան նստեցին։

—Այս երեկոյ, Վարդիկիս մեկնման առթիւ, —ասաց տիկին Մարիամը [illegible] խղճով, —պատրաստել եմ այն կերակուրներից, որ նա սիրում է, և աչքերը լցւեցին։

—Շնորհակալ եմ, մայրի՛կ, —ասաց Վարդիկը, —ամեն անգամ, երբ դպրոցական արձակուրդին տուն էի դառնում, մայրս ինձ համար պատրաստում էր այն կերակուրները, որ ես սիրում էի. սա հարազատ մօր յատկութիւն է։ Դժուար է ինձ համար ձեզնից, իմ ամենամտերիմ ընկերներից բաժանուելը, բայց ի՛նչ արած, կեանքն այդպէս է պահանջում։

Բաժակները լցրին. դարձեալ տիրեց ճնշող լռութիւն. ապա Արմէնը խզեց այն։

—Վարդի՛կ ջան, —ասաց նա, —ինչպէս որ դժուար է քեզ մտերիմ ընկեր գտնելը, այնպէս էլ դժուար է նրանից բաժան-

ւելը։ Այս լաւ. ճնշուած վիճակը դրանով պիտի բացատրել. ար-դէն այս քանի ամիսների, յատկապէս իմ բանտարկութեան ըն-թացքում, քո յայտ բերած անձնուիրութիւնն ու ընկերական սրտա-ցաւութիւնը այնպէս կապեցին մեզ միմեանց, որ այժմ քեզ-նից բաժանուելը մեզ համար այնքան ծանր է գալիս։ Բարի ճա-նապարհ և յաջողութիւն եմ մաղթում քեզ, նաև բարի վերա-դարձ. գիտցի՛ր, որ այս քաղաքում, յանձինս մեզ, ունես ամե-նամտերիմ և միշտ քո լաւը կամեցող ընկերներ. շատ ուրախ ենք, որ յաջող գործ ունեցար, գիտեմ նաև, որ այդ գործը պիտի նպաստի այն մեծ նպատակին, որի սպասարկուներն ենք բոլորս։ Համոզուած եմ, որ երբ դու հարստանաս նիւթով, նման չպիտի լինես ա՛յն անձանց, որոնք դրամի տէր դառնալով մոռանում են ամեն հանրային պարտականութիւն և մարդու արժէքը դրա-նում են միայն դրամի մէջ։ Երանի թէ դու հարստանայիր և մենք հպարտութեամբ ասէինք, «ահա՛ մէկը, որին դրամը չը փչացրեց, ահա՛ ճշմարիտ մարդը, որի բարոյական սկզբունք-ները չխախտեցին նիւթի գայթակղութիւններից»։ Մէկը, որ իր վերջին շահերը գիտէ ուրիշին զոհել, որ պատրաստ է իր շապիկն ուրիշին տալ, նրա մէջ պիտի տեսնել իսկական մար-դուն։ Քեզ շողոքորթելու կամ հպարտութիւնդ շոյելու համար չէ որ այս ասում եմ, գիտես որ ես շողոքորթներից չեմ և ոչ էլ դու՝ հպարտներից. այս օրերին, երբ մեր լեզուն ու մշա-կոյթը կապանքների տակ են, մեծ մխիթարութիւն է քեզպէս երիտասարդներ ունենալը. մեր ժողովուրդը կարող է վստահ լի-նել, այս դէպքում, որ իր արդար դատը չի կորչի, որ իր լեզուն ու մշակոյթը գտնում են հաստատուն և կորով ձեռների մէջ, որոնք դրօշակակիր անձնազոհութեամբ գիտեն կատարել իրենց պարտականութիւնը։ Քո կենացդ, սիրելիս, և բարի ճանապարհ։

Նրանք խմեցին՝ բաժակներ խփելով։ Բյարան լուռ էր [illegible] մէջ. Արմէնի ամեն մի բառը իր հոգուց էր բղխում, ինչպէ՞ս կուզենար նման խօսքեր ասել. բայց մի անըմբռնելի ոյժ նրան կաշկանդում էր։

—Վազրիկ, զաւա՛կս, —ասաց տիկին Մարիամը, —քո մեկ-նելուց յետոյ ես կարծում եմ այլեւս տանուորդ կը լինի ազատին պահել. ես կը պատրաստեմ ճաշը և Բյարայի բացակայութեան՝ կը հսկեմ Դիանային։

—Ո՛չ, մայրիկ, ինձ վիրաւորած կը լինես,—ասաց Վաղարշիկը դժգոհութեամբ,—իմ բացակայութեան ժամանակ այնպէս ասեք՝ թէ ես ներկայ եմ. իմ սենեակս և իրերս մի մասը պիտի մնան. սենեակը կարող էք օգտագործել ինչպէս որ ցանկանաք. մեկնում եմ, ճիշտ է, բայց հոգով ձեզ հետ եմ լինելու... դուք էլ ինձ բացակայ մի՛ համարէք. խնդրում եմ. ես այս ընկերակցութեան պիտի մասնակցեմ ինչպէս մինչև այժմ։

Եւ այս վերջին ակնարկով նա հասկացրեց օրիորդ Մարիամին, որ մասնակից պիտի լինի նախկին ծախսերին այնպէս, ինչպէս որ ամիսներ առաջ պայմանաւորուել էր։

—Մեր այս երեկոն սառն է անցնում,—ասաց Արմէնը,—պէտք է բարեխառնել երգերով. մենք Վաղարշիկին այսպէս չոր կերպով չպիտի ճամբենք։ Ֆլո՛րա,—դարձաւ նա կնոջը,—դու երգել գիտես, այժմ յարմար առիթ է որ դու երգես Վաղարշիկի կենացի վրայ։

—Այո՛, ի հարկէ,—մէջ մտաւ օրիորդ Մարիամը,—ես լսել եմ Ֆլորայի երգը. նա չի մերժի, մանաւանդ որ Վաղարշիկի կենացի վրայ է։

Ֆլորան մատնուեց անել դրութեան. նա չգիտէր ո՞ր երգը երգել, որ Վաղարշիկին չվշտացնէր. իր գիտցած երգերը վշտոտ բովանդակութիւն ունէին։

—Ես բախտ եմ ունեցել Ֆլորայի երգը լսելու, բայց հեռուից, անցողակի. յոյս ունեմ նա կերգի,—ասաց Վաղարշիկը Արմէնին և օրիորդ Մարիամին նայելով։

Մերժելն անհնար էր. մանաւանդ որ Վաղարշիկը պիտի մեկնէր. Նրան առանց երգի ճամբու դնել, դա նշանակում էր մի անգամ ևս վիրաւորել. բայց և երգել՝ դա նշանակում էր մի անգամ ևս, մեկնելու նախօրեակին, հրահրել նրա վիշտը։

—Ես, ի հարկէ կերգեմ Վաղարշիկի կենացի վրայ,—ասաց,—բայց լաւ կերգեմ թէ ո՛չ չգիտեմ, ուստի և սկզբից ձեր ներողամտութիւնն եմ խնդրում։

Վաղարշիկն զգաց, որ նա վախենում է վշտացնել իրեն, մի անգամ ևս փոթորկել իր յոյզերը, նա սրտադող՝ սպասեց երգին. Մեղքն իրենն էր, ինքն էր ցանկացել...

Եւ Ֆլորան երգեց «Կանաչ սարը»։

Դարձեալ Վաղրիկի ականջին հնչեցին գարնան շեփորներն այն նրբերանգներով, որ Բրաբային էին միայն յատուկ, այն յոյզերով, որ նրա հոգուց միայն կարող էին բղխել և նա սարսափով ու միաժամանակ մի անըմբռնելի անդոհով զգաց, որ իր հոգու խորքերում բարձրանում էր մի մռայլ ամպ. բարձրանում էր մօտալուտ փոթորկի երկունքով. նրա ականջին արդէն հասնում էր փոթորկի մռմռոցը և ահա՛ պիտի պայթէր. պիտի պայթէր շառաչով ու ճայթիւնով. նրա հոգին գալարւում էր ահաւոր, հրաբխային յոյզերի սրբում, մղկտում էր, լալիս ու ճչում, աղերսում, աղաչում էր խնայել իրեն...

«Կանաչ արտը մի՛ կոխիր,
Բեղի՛ մեռնեմ,
Սիրած եարդ մի՛ փոխիր.
Եարն անո՛յշ»...

Նա ձեռքով շփեց իր ճակատը և անցաւ մազերի վրայով. նրա սև գանգուրները կախւեցին ճակատին. Բրաբան երգում և միաժամանակ դիտում էր Վաղրիկին. այդ պահին նրան թւաց, թէ երբէք. երբէ՛ք Վաղրիկն այդքան գեղեցիկ չէր եղել, այդքան հմայիչ՝ իր սևագանգուր մազերով...

Վաղրիկը գերմարդկային ճիգ գործ դրեց իր վրայ իշխելու, իրեն չմատնելու. Արմէնը կիսախուփ աչքերով դիտում էր բաժակի կարմիր գինին, իսկ տիկին Մարիամը իր ժպտուն, գորովալից հայեացքն ուղղել էր Բրաբային։

Երգը վերջացաւ։

—Էրաարս Բրաբայի կենացը,—բացականչեց Արմէնը քնից արթնացածի պէս։

Նրանք բաժակները բաղխեցին Բրաբայի բաժակին. մի պահ Վաղրիկը լուռ մնաց, ապա խուլ ձայնով ասաց.

—Շնորհակալ եմ, Բրա՛բա. ես գիտէի, որ դուք լաւ էք երգում... չէի սխալւում...

Եւ այս անգամ՝ նրա հայեացքն ընկաւ Բրաբայի սև վարսերի յորձանքին, որ ալիքաձև գահավիժում էր ճակատի կողքից վար, և փրփրոտ խառնաշփոթ ալիքներ ծեծեցին նրա հոգու ափերը՝ օրհասական, յուսահատ կանչերով՝ «հեռանա՛լ... ա՛խ, հեռանա՛լ»...

Յետոյ խմեցին տիկին Մարիամի կենացը. գովեցին նրա բարի, մայրական սիրտն ու վերաբերմունքը. և ահա Արմէնն ասաց.

—Տարիներ առաջ մի հաւաքոյթում ես առիթ ունեցայ լսելու Վաղրիկի երգը. այն ժամանակ դեռևս մենք ծանօթներ չէինք, բայց նրա երգն ինձ այնքան դուր եկաւ, որ մօտեցայ և շնորհաւորեցի. և ահա այդ պահից սկսեց մեր ծանօթութիւնը, որ յետոյ մտերմութեան փոխուեց։ Այժմ խիստ պատշաճ է, Վաղրիկ ջան, որ տիկին Մարիամի կենացի վրայ դու երգես «Երազ»ը։

Բյուրան զարմացաւ. «ուրեմն նա երգում է», — մտածեց, — «տե՛ս մի արժանիք ևս, որ ես չէի նկատել»...

Վաղրիկը չթողեց, որ իրեն երկար խնդրեն, մանաւանդ որ Արմէնն էր խնդրողը, կենացը մայրիկինն էր, և Բյուրան՝ ունկնդիրը։

«Ես լսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մօր մօտ էր...
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր»...

Եւ նա այնպիսի կարօտ շեշտ էր դնում իր երգի մէջ, այնպէս զգացուած էր երգում՝ «ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր», որ Բյուրայի և տիկին Մարիամի աչքերն արցունք ցոլացին, նրանք իրենց դէմքը ծածկեցին ձեռների ափերով։ Արմէնը ևս զգացուեց. նրա աչքերում ևս արցունք ցոլաց և երբ երգը վերջացաւ, նրանք նկատեցին Վաղրիկի արցունքները, որ գլորւում էին այտերն ի վար...

—Իմ զարիք զաւակներս, — ասաց տիկին Մարիամը հեծեծալով, — բարեկ. մայրերն հեռու են... սա էլ մեր ճակատագիրն է։

Տիրեց խորը լռութիւն, նրանցից ամէն մէկը խորհում էր իր մօր մասին. պատկերացնում նրան բաժանման ժամին՝ անհուն վիշտը դէմքին, արցունքն աչքերին, դողդոջուն և կարօտավառ։

Յետոյ նրանք դրուագներ պատմեցին իրենց մօր կեանքից և նրանց յիշատակը քաղցրացրին երախտագէտ, գորովալից խօսքերով։

Վաղրիկն ասաց.

—Այժմ պիտի խմենք մի թանկագին կենաց, — ապա դարձաւ տիկին Մարիամին, — մայրի՛կ, արդէն բաւական ժամանակ է որ դու հարեւան ես Արմէնին ու Բյուրային. այդ միջոցում դու այնպէս կապուած ես զգում քեզ այս ընտանիքին, այնքան

ես սիրում, որ հարազատից չես տարբերում։ Պատճառը ո՛չ միայն քո բարի սիրտդ ու լաւ բնաւորութիւնդ են, այլև այն, որ այդ ընտանիքը իդէալական է. այդ ընտանիքի անդամներ իրար հետ կապւում են սիրով, այս ընտանիքի անդամները՝ Արմէնն ու Բրաբան՝ իրար հետ կապւած են ո՛չ միայն սիրով, այլև՝ իդէալով։ Նրանց իդէալը մեր ժողովուրդն է, նրա լեզուն, մշակոյթը, անեղծ ազգածական բոլոր կարգութիւնները. և վերջապէս այն բոլորը որ ամփոփւում են ժողովուրդ և հայրենիք բառերի մէջ։ Ծառայելով մեր ժողովրդի մշակոյթին, նրանք պատրաստ են լինում նո՛և համայն մարդկութեան, որովհետև վերջիվերջոյ համամարդկային քաղաքակրթութեան մասն են կազմում ազգային քաղաքակրթութիւնները։ Ես վստահ եմ, որ նրանք իրենց Վաչակին՝ Գիտոյին եւ նոյն ոգով պիտի կրթեն ու դաստիարակեն. ո՜ւր էր թէ մեր բոլոր ընտանիքներն այսպիսին լինէին, մենք այլևս հոգս չէինք ունենայ։ Զուր չէ, սիրելի, մայրիկ, որ դու և ես այսպէս կապւել ենք այս ընտանիքի հետ. ուրախանում ենք նրա ուրախութիւններով և տխրում նրա տխրութիւններով...

Նա խօսում էր սրտի խորքից, անկեղծ, և իր բոլոր արտայայտութիւնների մէջ դնում էր մի արտակարգ գորովանք ու սէր։ Նրա բնորոշումը Արմէնի ընտանիքի մասին Բրաբայի համար պարզում էր այն խորը պատճառները, որոնք մղել էին Վաղրիկին այդքան մօտից շնչելու նրանց ընտանեկան մթնոլորտը. լինելու այդքան անձնւէր, այդքան հոգատար, այդքան նրբանկատ։ Իր, Բրաբայի ընտանեկան վեհութիւնը մղել էր Վաղրիկին վեհ քոյրերի։ Բայց... մի՞թէ միայն այդ. մի՞թէ միաժամանակ նաև Վաղրիկի զգացմունքները չէին մղել այժմ դեր կատարել... Եւ Բրաբան իր մաքում անգամ խուսափում էր կրկնել բուն խիկ բառը։

Վաղրիկը վերջացրեց. բաժակները բաղխեցին, ապա նա ասաց.

—Այժմ ես պիտի երգեմ ձեր կենացի վրայ։

Եւ հայեացքն իջեցնելով, որ չհանդիպի Բրաբայի հայեացքին, Վաղրիկն սկսեց երգել Վահան Տէրեանի «Հրաժեշտի գազելը».

Եւ այնտեղ, ուր երգի մէջ ասում է՝ «Հեռացի՛ր. մոռացի՛ր, մի՛ յիշիր... ինձ այդպէս քրոջ պէս մի՛ գթա», —Վաղ-

բեկի ձայնն այնպիսի սրբերգական և սրտակտուր ներէջ էր ունենում, որ սառը հեծեծում էր սրտի քնարի լարերի վրայ...

Վայրկեան եղաւ, երբ քիչ մնաց Բրօրան պայթէր յուզումից. նա հաշիւ չանէր իրեն. Երգը յեղյեղւում էր ցաւագինօրէն, սիրոյ ու կարօտի կանչերով, մերթ հպարտութեան վերելքով, մերթ յուսահատութեան վայրէջքով։

Եւ ահա Բրօրան ընդոստ ելաւ տեղից. անցաւ Դիանայի ննջարանը. Արմէնն ու տիկին Մարիամը կարծեցին, թէ մանուկն արթնացել էր. Վաղրիկը միայն կառչեց նրա յաղմունքը զգաց, որ սխալ էր գործել, եղել էր դաժան՝ դէպի Բրօրան. ինքը սխալ հաւանար՝ մայրանալու համար, քանի՜ սխալ փորձե՜ր մայրանալ սխալ փորձե՜ր...

Ժամեր անցան, սակայն Բրօրան չէր վերադառնում։ Տիկին Մարիամն անհանգստացաւ և դուրս ելաւ սենեակից. երբ մտաւ Դիանայի ննջարանը, Բրօրան չոքել էր Դիանայի մահճակալի մօտ, աջ թեւը տարածել մանկան վրայ, իսկ գլուխը թաղել էր նրա վերմակի մէջ։

—Բրօ՛րա, հո՛գիս, ի՞նչ պատահեց քեզ, —հարցրեց տիկին Մարիամը տագնապով։

Բրօրան շարունակում էր այդպէս մնալ, նրա ուսերը ցնցւում էին...

Տիկին Մարիամը քնքշութեամբ բռնեց նրա ուսերից և զգուշութեամբ յետ քաշեց։

—Զաւա՛ծ իմ, նա լաւ է... ի՞նչ պատահեց քեզ, հո՛գիս...

—Ո՛չինչ, —ասաց Բրօրան աչքերը կարմրած, արցունքների մէջ, սաքի կնդներով, —ինձ վատ եմ զգում... քանի օր է... չուզեցի միւսներն իմանան... ո՛չինչ, կանցնի...

Քիչ հանգիստ առնելուց, աչքերը սրբելուց յետոյ, նրանք անցան ճաշարան։ Վաղրիկը կարդաց Բրօրայի դէմքին փոշմանում յուզմունքը. նա զղջացաւ ինքն իր վրայ, հոգին տանջւեց, որ վշտացրել էր Բրօրային իր երգով, և կարծես ներման հայցերը մարդու համար՝ նա բաժակով օղին պարպեց մէկ շնչով։

* * *

Առաւօտեան վաղ, նրանք խմբով ելան փողոցի դռան առաջ, ուր կանգնած էր կառքը։ Վաղրիկը համբուրեց տիկին Մարիամի

ձեռ. նայս մօտեցաւ, համբուրեց Քլարայի ձեռքը, շնորհակալութիւն յայտնեց նրանց կրած յոգնութիւնների համար: Տիկին Մարիամը, արցունքոտ աչքերով, աւանդական սովորութեամբ ջուր ցանեց հայելիի վրայ, իբրեւ շուտափոյթ վերադարձի մաղթանք: Արմէնը պիտի ուղեկցէր Վաղրիկին մինչեւ գարաժ: Նըրանք կառք նստեցին, Վաղրիկը մի վերջին անգամ նայեց Քըլարայի յորձանուտ մազերի վայրէջքին, նրա սեւ, հմայիչ աչքերին եւ ճակատի վրայ կամար կապած ոլոցիկ յօնքերին. մի ամբողջ տարի, գուցէ եւ աւելի, չպիտի տեսնէր Քլարային...

Կառքը շարժուեց, Քլարային թուաց թէ մէկը ձգում էր իր սրտի լարերը՝ պայթեցնելու սահման. նա խորը հառաչեց եւ ակամայ մօտ տիկին Մարիամի թեւը:

ԳԾԻ ՎՐԱՅ

Արդէն երեք ամիս էր անցել այն օրից, երբ Վաղրիկն հեռացել էր Թեհրանից: Գծի վրայ աշխատանքները կանոնաւոր հունի մէջ էին մտել, հարիւրաւոր բանուորներ էին գործում օրն ի բուն. աշխատանքի կազմակերպչական մեքենան գործում էր ժամացոյցի ճշտութեամբ: Վաղրիկն անձամբ հսկում էր, ցուցմունքներ տալիս, կարգադրութիւններ անում: Քանի որ անձրեւները դադարել էին, աշխատանքը եռում էր:

Վաղրիկն իրեն հետ վերցրել էր մի քանի գործազուրկ ընկերներ. ուսուցիչ Արմենակին վարձել էր իբրեւ հաշուապահ. Վահրամին վերցրել էր տնտեսական մասի վարիչ, պարզապէս նրան նիւթապէս օգնած լինելու համար: Իբրեւ գծի գործերին հմուտ անձանց՝ վերցրել էր Կարօին եւ Տրդատին:

Վահրամն աշխատում էր պարենաւորման բաժնում. նա գտել էր իր տեղը, քանի որ ուտել-խմելու սէր ունէր. ամեն ճաշի, որեւէ կերակրի հետ՝ խորովածն անպակաս էր. նա բեխերը սրբելով ասում էր.

—Վա՛ղրիկ ջան, քո հո՛գուդ մատաղ, խորովածը մի ո՛ւրիշ բան ա. մարդու աչքերին լոյս ա տալիս, մարմնին՝ պնդութիւն. էս սար ու չոլում խորովածը մի առանձին լա՛զաթ ունի.

Վաղրիկը ժպտում էր ներողամտաբար:

—Իհարկէ,—ասում էր Արմենակը.—դասարանների չնչին կուճախուշից և տան ամենօրեայ արդուշակից[1]) յետոյ որ քեզ բերեն դնեն էս լեռնային օդի մէջ և խորոված կողքին, օդը ծծես, խորովածն ուտես օջախի գլխին և կարմիր գինին էլ չըշով գլուխդ քաշես՝ հենց եդպէս եղան նման կը չաղանաս. ինչպէս որ չաղանում ես, վարժապետն ո՞ւր, ամեն օր խորովածն ու կարմիր գինին ո՞ւր...

—Հա՜ ղը՛րթ... հենց կասես մեր կեանքում էլ խորոված չէինք կերել... միայն տարբերութիւնն էն ա, որ մենք, վարժապետներս, քաղաքում խորովածն ուտում էինք ամիսը մէկ անգամ, էն էլ պատառաքաղով, ա՛ լա Փրանկա... Տօ՛, մինչև որ խորովածը կրակի վրայից չվե՛րցնես ու՝ մատներովդ ճզմելով չծա՛մես ու՝ բերանդ դնես, ի՞նչ լաղաթ, հա՞, Վաղրիկ ջան...

Եւ ազատ ժամերն անցնում էին այսպիսի զւարճախօսութիւններով, որոնք թարմացնում էին նրանց։

«Գծերի վրայ պէտք են Վահրամի նման մարդիկ, որոնք գործով չը մաշուած՝ խորհում են աշխատանքը համեմել հաճոյքով. եթէ այս ձևով կարելի է մի հայ ուսուցչի բնութիւն փոխել՝ ինչո՞ւ չանել»,—խորհել էր Վաղրիկը և վարձել Վահրամին, նրան համապատասխան պաշտօն տալով։ Եւ Վահրամը խիստ գոհ էր իր պաշտօնից, թէ՛կուզ ուրիշները նրան արժանի չհամարէին նոյն իսկ ա՛յս պաշտօնին։

Արմենակը, աւելի գիտակից ու գործունեայ, բարեխղճօրէն տանում էր իր հաշւապահի պաշտօնը և Վաղրիկը խիստ գոհ էր նրանից. բացի այդ, իր ընկերների վրայ վստահ էր, որ կեղծիք չեն կատարի և այս պարզ գործի յաջողութեան գրաւականներից մէկն էր։

Տրդատն ու Կարօն գործնական մարդիկ էին և գծի աշխատանքների մէջ փորձուած ու հմուտ։ Բացի այդ, քաղաքում ունեցած իրենց մտերմութիւնը Վաղրիկի, Արմենակի և Վահրամի հետ, մեծ դեր էր կատարում համերաշխութեան հարցում. և բոլորը, Վաղրիկի մաքրութեան ու ընկերասիրութեան ծանօթ պատրաստ էին նրա համար զոհաբերութեան, թէև միշտ զոհաբերողը Վաղրիկն էր։

1) Մաացուր;

Վաղրիկը բանուորների պետ էր նշանակել Ահմեդին. սա մազանդարանցի գիլաք էր, բարեսիրտ, մեղմ բնաւորութեան տէր, գործի մէջ մաքուր, որով օժտած են գիլաքներն առհասարակ։ Կարճ միջոցում Ահմեդն այնքան էր սիրել Վաղրիկին, որ նրա ձայնը լսելիս կամ նրան հեռուից տեսնելիս վեր էր ցատկում որևէ կերպ ծառայելու։ Միաժամանակ, ինքնաբերաբար, Ահմեդը դարձել էր Վաղրիկի պրոպագանդիստը.

—Գիտէ՞ք ով է Վաղիր աղան (այսպէս էր կոչում նա Վաղրիկին), — ասում էր նա իր ձեռքի տակ աշխատող բանուորներին, — նա մի ուրիշ մարդ է, մի ուրիշ սրտի տէր. նա Վաղի՛ր է, Վաղի՛ր-աղա մարդ է, նա մեր աղաներին նման չէ, որոնք մեր կաշին են քերթում՝ ու է՛լի դժգոհ են, մեր տան մաշուած փալասն են տակներիցս քաշում, մեր եզն ու կովն են գրաւում՝ հարկ ու տուրքի անուան տակ, մեզ մտրակի տակ են չորացնում և է՛լի չեն գոհանում... Վաղիր աղան սուտ չինող է, նրա սրտի մէջ բոլորս տեղ ունենք, միայն թէ չի սիրում ծուլութիւնն ու կեղծիքը. ինչքան որ բարի է աշխատասէր և պարտաճանաչ մարդու նկատմամբ, նոյնքան անողոք է ծոյլ ու կեղծ մարդկանց վերաբերմամբ. մենք որ լաւ լինենք՝ նա մեզ կը լիացնի և կը հշտացնի. ուրիշ բաժնի բանուորներին հարցրէք, տեսէք ի՞նչ են չարչարւում և օրավարձն էլ դեռ լրիւ չեն ստանում... կարում են, կարում նրանց հաքկը.[1] թա Վաղիր աղան էգպէս բան կանի՞... Նա խիղճ ունի, խի՛ղճ. Մի էյբ[2] ունի միայն մեր Վաղիր աղան, որ մուսուլման չի... Բայց կրօնը, Աստուածը մարդուս ինսաֆն[3] է, մէկը որ ինսաֆ ունեցաւ՝ խուդաւանդ Ալլահը հենց նրա մէջն է նստած. ի՞նչ անենք որ քրիստոնեայ է։

Բանուորները լսում էին Ահմեդի այս խօսքերը, գլխով հաւանութեան նշան անում, ապա օրհնում էին Վաղրիկի եկած ճամբան, երկար օրեր մաղթում նրան. «Թող Ալլահը նրան հազար բարիք տայ, որ մենք էլ ապրենք նրա շնորհիւ», — ասում էին նրանք։

Յաճախ պատահում էր, որ գծի վրայ յանկարծ երևում էր Վաղրիկը։ Ահմեդն ընդառաջ ցատկում էր տեղից.

---

1) Իրաւունք, վարձ: 2) Պակասութիւն: 3) Խիղճ:

—Վազիր աղան եկա՛ւ… Վազիր աղան եկա՛ւ.—ճչում էր նա,—դէ մի սալաւաթ ձգեցէք… սալաւա՞թ…

—Սալաւա՞թ… սալաւա՞թ… ա՞թ… ա՛թ…

Հնչում էր հարիւրաւոր բանւորների կրծքից. անտառը կրկնում էր արձագանգը և բահերն ու բրիչները այնպիսի թափով էին գործում, որ փոշին ամպի պէս բարձրանում էր երկինք.

—Վազի՛ր աղա,—ասում էր Ահմէդը սպասարկելու պատրաստ գլխով,—մենք բոլորս ղուրբան քեզ… հրամայի՛ր.

Վազիրն աչք էր ածում աշխատանքի վրայ, բանւորների քէ՛ֆն էր հարցնում, դիտում նրանց դէմքերը, գովում, խրախուսում, կարիքներն էր հարցնում. ապա դառնալով Ահմէդին, ասում էր.

—Երեկոյեան հարեւան բաժնից բուժակը պիտի գայ. բանւորներից ով որ տկար է՝ թող ներկայանայ, դեղեր ստանայ:

Կէսօրուայ դադարին բոլորին թէյ տւէք:

Եւ այսպէս, ամէն այցելութեան, աշխատանքից գոհ մնալով, կա՛մ օրավարձի յաւելում էր տալիս, կամ՝ այլ օգնութիւն ընձեռում:

Նրա մեկնելուց յետոյ Ահմէդն ասում էր բանւորներին.

—Տեսնո՞ւմ էք ինչ մարդ է. խեյրն իր ոտքին է բերում, մի անգամ էլ է դատարկ ձեռքով չի գալիս. փա՛ռք Ալլահին, իսկական մարդ ենք տեսնում այս աշխարհում:

Մազանդարանն յայտնի է իր խոնաւութեամբ և ճահճային կլիմայով. ամենուրեք հրաշագեղ անտառներ, յաճախակի տեղատարափ անձրեւներ ու ճահիճներ. ճահճատենդը համաճարակի բնոյթ ունի և այդ չքնաղ երկրի դժբախտ բնակիչները տառապում են այդ անողոք, հիւծող հիւանդութեամբ. Հետեւաբար, բանւորների մէջ հիւանդներն անպակաս էին. քինինն սպառւում էր անհաւատալի քանակութեամբ. բայց մարդկային կեանքեր փրկելու համար Վազիրը չէր կարող դրամ խնայել, և նրա ծախսերի մէջ դեղօրայքի դրամը զգալի տեղ էր գրաւում:

Վազիրի գծի աշխատանքներն ընթանում էին աւելի արագ ու կանոնաւոր, քան միւս բաժիններինը. գծի քննիչ յանձնախումբը զարմացաւ, նրա բաժինը տեսնելով, շնորհաւորեց իրեն և խոստացաւ Թեհրան վերադառնալուն պէս կարգադրել մասնավճարի հարցը:

Գիշերը, երբ իր սենեակն է քաշւում և անկողին մտնում, Վաղրիկը ժամեր շարունակ մտածում է. Նրա աչքերի առջևով անցնում են մայրիկը, Արմէնը. Գիանան և… Բլարան: Կառքը շարժւում է և Վաղրիկը մի վերջին հայեացք է նետում Բլարայի դէմքին, որի երկու կողմերից սև վարսերի յորձանուան է ձգւում վար… Բլարան նայում է նրան թախծոտ. աչքերն արցունքոտ. «մեզ չէ՞ք մոռնայ, Վաղրիկ. կը գրէ՞ք չէ՞»… հնչում է նրա ականջին Բլարայի վերջին խօսքը: «Ո՛հ, բոլորը սիրեցին ինձ, բացի մէկից»… հառաչում է և արցունքները թրջում են բարձը:

Յաջորդ օրը ճաշին Վահրամն ասում է.

—Վա՛ղրիկ ջան, ինչպէս երևում է դու մալարիա ունես. առաւօտները բարձր խոնաւ է լինում. ա՛րագ պիտի խմես և քինին գործածես, ղո՛ւրբան. միակ ճարն էդ ա: Աստուած չանի թէ դու հիւանդանա՛ս, բա գործն ի՞նչ կը լինի. մենք կը կորչենք կերթանք…

—Գործից կաց. Աստուած ինձ մոռացել է. ես մեռնողը չեմ… ասում է Վաղրիկն անտարբեր. Ապա խորհում է՝ «Յաւի՛տ անտեղեակ, վշտի՝ անտարբեր… ո՞ւր էր թէ մեռնէի… Երանի քեզ»…

Ապա յայտարարում է Վահրամին.

—Ինչպէս որ ձեզ ասել եմ նախօրօք՝ ձեր ռոճիկներից հինգտոկոս յատկացրել եմ Հայոց լեզւի դասերին. մեր մշակոյթի պաշտպանութեան ֆոնդին. վաղը երեք ամսուայ ընթացքում գոյացած այդ գումարը փոխադրում եմ Արմէնին. էսօր խորովածդ շատ արա, որ նրանց կենացը պիտի խմենք:

—Աչքիս վրայ. է՛հ, նրանք էլ մերն են, թող վայելեն…

—Նրա՛նք չեն վայելողը, այլ՝ մեր նոր սերո՛ւնդը, մեր ժողովուրդը, ա՛յ մարդ,—ասում է Վաղրիկը վրդովւած:

—Վա՛, ես ի՞նչպէս ասի որ… թող ամենը վայելեն, ես նրանց հո՛գուն մատաղ…

Եւ Վահրամն իր մատներն անց է կացնում բեխերի վրայով:

ՄՏԵՐԻՄ ՔՐՈՋՍ

Աշխատանքի ազատ ժամերին Վահրամն ու Արմէնակը զըրոյցի էին նստում. Վահրամի խօսակցութեան մեծագոյն մասը պտտում էր ստամոքսի շուրջ. այդպէս չէր, սակայն, Արմէ-

նակը, որ մասնաւոր բնական պատրաստութիւն ունէր, բարոյական կայուն հասկացողութիւններ, թէև աւելի գործնականութեան էր հակամէտ քան՝ տեսութեան։

Այդ օրը, ինչպէս Վաղրիկն էր պատւիրել, լաւ խորոված էին կերել, խմել էին Արմէնի և իր ընտանիքի կենացը, որ Թեհրանում լծուած էր հայ լեզուն ու մշակոյթը պաշտպանելու սըրբազան գործին։ Վաղրիկը բաժակաճառ էր առել և գովել Արմէնին, ասել նրա բարոյական դիմագիծը, մասնաւոր բարձր յատկութիւնները և իր ժողովրդի հանդէպ ցուցաբերած զոհողութիւնները։ Սրանց խմել էին նրա և Ֆլորայի կենացը, չէին մոռացել նաև տիկին Մարիամին։

—Ես մի բանի վրայ եմ զարմանում,—այժմ ասում էր Վահրամը Արմենակին,—էդ յիմար աղջիկը, էդ Ֆլորան երեքչորս տարի առաջ չգնաց Վաղրիկին, մերժեց նրա առաջարկը պատճառաբանելով թէ՝ (և Վահրամը բարակ, կանացի ձայնով արտաբերեց) «ինչո՞ւ համար է ընկերուհուս միջոցով առաջարկ անում, ինչո՞ւ տղամարդու նման անձամբ չառաջարկեց»… Հըլա մի տես թէ ինչ յիմար պատճառաբանութեամբ ա մերժել էս մեր անման Վաղրիկին, ես նրա հօ՛գուն մատաղ, հըլա մի տես թէ ո՞վ ա խօսում տղամարդութիւնից… Եանի Վաղրիկի պէս տղամարդ կա՞յ։ Հա՛, էն էի ասում որ, բա՛ւ հասկէյի՝ ինձ զարմացնում ա է՛ն վեհանձնութիւնն ու զուրգուրանքը, է՛ն մտերմութիւնը որ ցոյց ա տալիս Վաղրիկը էդ Ֆլորային ու իր ընտանիքին, է՛ս մէկն ա որ չեմ հասկանում. ես լինէի՝ վրէժխնդիր կը լինէի…

—Դպրոցը թողնելուց յետոյ, Վահրամ, դու թէ՛ հայերէն գրական լեզւով խօսելն ես մոռացել (առանց առաջ էլ մի բան չէիր այդ տեսակէտից), թէ՛ առողջ դատողութիւնդ կորցրել որ չունէիր… Գինին ու խորովածը, այդ՝ օրը օրին հատուցող փորդ, քեզ փչացրել են։ Ցօ՛, կնոջ մերժումն ի՞նչ է որ տղամարդը դրա համար վրէժխնդիր լինի. այդպէս որ լինէր՝ բոլորս պիտ մարդասպան դառնայինք, որովհետև ո՞ր տղամարդն է որ կնոջից չի մերժուել. եթէ կանայք էլ տղամարդկանց բոլոր ցանկութիւններին և առաջարկներին ընդառաջ գնային, չըմերժէին, այլևս կինը անբան կենդանուց չէր տարբերուի. էն

ծնքան կենդանիները նոյն իսկ անմիջապէս չեն ենթարկւում դրսի ցանկութեան. սա բնութեան օրէնքն է։ Գուրալ Բրարայն, նրա մէջ առաջին հերթին խօսել է կինը. յետոյ պէտք է նկատի ունենալ, որ դպրոցից նոր եկած և կեանքի փորձութիւններին չենթարկւած օրիորդ էր, վարդագոյն ամպերի վրայ սաւառնող. և ինչպէս որ յատուկ է նման աղջիկներին. երեւի նա էլ սպասելիս է եղել իր սրտի իշխանին, որ երկնքից ցած պիտի գար ոսկէ կառքի մէջ նստած, ճերմակ, փրփրաբաշ ձիեր լծած իր կառքին, և ասէր. —«իմ սրտի իշխանուհի, ահա՛ եկել եմ, քեզ միայն իմ պալատն է վայել, հրամմեցէ՛ք»…

—Հա ղը՛րթ… ոսկէ կա՛ռք, փրփրալոշ ձիե՛ր… իշխանուհի՛… պա՛լատ… հէնց քաղ՛ցած Արմէնն էդ բոլորը ունի, ո՞նց չէ… մի նւէր խոստացաւ ինձ, է՛ն էլ չկարաց տալ…

—Հա՛, հա՛, հա՜, որ ասում եմ դպրոցը թողնելով բոլորովին մոռացել ես գրական լեզուն. ոչ՜, «փրփրալոշ» չէ. փըրփըրա-բա՜շ ձի, —ասաց Արմենակը սրտանց խնդալով. —հա՛, հիմա գանք Արմէնին. Բրարան ընտրել է Արմէնին, դա իր ազատ կամքն է. վերջի վերջոյ սիրոյ հարց չէ՞ նրա՛ն է սիրել. ի՞նչ կանես. վաշրիկը շատ բնական աղայ է, բայց սէրը նման բաներ չի նայում, մեր ժողովրդական առածն ասում է. «Սէրը կպաւ աթարին, ինչ արին—չարին՝ պոկ չեկաւ»… բայց, ինարկէ, չեմ ուզում ասել թէ Արմէնը արժանիքներ չունի. նա թէ՛ բարձր մտաւորական է, և թէ՛ իսկական մտաւորականին յատուկ բարոյական կուռ սկզբունքներ ունի. մի՛ մոռացիր, որ նա մեր լեզուի և մշակոյթի սիրուն, մե՛ր սիրուն, երկու անգամ բանտ է նստել և դեռ տասներկու անգամ էլ պատրաստ է նստելու։ Արմէնը միայն դրամ չունի. է՛, ի՞նչ անենք, մեզնից ո՞ր մէկը դրամ ունի. նրա յատկութիւնները վեր են նիւթական բոլոր հարստութիւններից. միլիոնատէրերից ո՞ր մէկը կարող է, թէկուզ իր միլիոնները ծախսելով, Արմէնի յատկութիւններն ունենալ. ո՛չ մէկը, բայց Արմէնը մի օր կարող է միլիոնատէր դառնալ, շնորհիւ իր գրչի և մտաւոր բարձր յատկութիւնների. Միայն թէ նա փոքր ազգի զաւակ է, մեր ժողովուրդը չի կարող իր մտաւորականներին նիւթապէս հարստացնել այնպէս, ինչպէս որ այլ ժողովուրդներն են անում. Ուրեմն, Բրարան նիւթի՛ն

չէ որ գնացել է, այլ՝ մտաւոր ու բարոյական ա՛յն բարձր յատկութիւններին, ով Արմէնն ունի. մէկ խօսքով՝ Բլրան ընտրել է մարդո՛ւն և ոչ թէ մարդ բառի տառադարձ՝ գրամին։

—Ես ուզում եմ ասել, որ մեր Վաղրիկը Արմէնից պակա՞ս ա,—ասաց գժգոհութեամբ Վահրամը։

—Ինձ չհասկացար. Վաղրիկը պակաս չէ, գուցէ որոշ կողմերով էլ գերազանցի Արմէնին, բայց Բլրան նրան է սիրել, ի՞նչ կանես. և Վաղրիկն ա՛յնքան գիտակից է, ա՛յնքան վեհանձն, նրա մարդկային ըմբռնումներն այնքա՛ն բարձր են, որ նա ո՛չ միայն չի մտածի վրէժի մասին, այլ ճի՛շտ հակառակը կանի։ Ես լիովին հասկանում եմ Վաղրիկին և այդու՝ նա իմ աչքում բարձր է։

—Բա մենք թո՛ղնենք, որ մեր էս հոգի ազան էսպէս տա՛նջվի՞... չե՞ս տեսնում ինչ ա փոխւում դէմքը, երբ ա՛մեն անգամ էդ քո Բլրայիդ անունն ա տալիս,—բողոքեց Վահրամը։

—Ժամանակը ամէն ինչ կը հարթի. Վաղրիկը մարդկային այն տիպերից է, որ ամենածանր զոհողութեան գնով իր մէջ կը խեղդի այդ զգացմունքը. նա չի կարող ուրիշ կերպ լինել՝ նա բարոյական մեծութիւն է.—եզրափակեց Արմենակը։

—Ը՛հը, ես մեռած՝ դու սաղ,—ասաց Վահրամը իր բեխի ծայրը բռնելով,—թէ որ մի օր էդ քու Բլրադ չփոշմանեց իր արածի վրայ՝ ուրեմն ես Վա՛հրամը չեմ, այլ տխմար մէկն եմ...

Արմենակը պայթեց ծիծաղից.

—Ա՛րի, Վահրա՛մ, հէնց այժմւանից քեզ այդպէս կոչեմ. ա՜յ մարդ, դու ո՞ւր, սէրն ո՞ւր...

—Վա՛հ, բա ես իմ Վարդուշին չսիրեցի՞ առաջ... Ես նրա սրտին մատաղ...

Եւ գինուց կարմրած զգայուն Վահրամի աչքերում արցունքներ ցոլացին։

ՋԱՐԱՆՑԱՆՔ

Ճամբի աջակողմում ձգւող լեռնաշղթան ծածկւած է մուգ կանաչ անտառներով, որոնք իրենց մութ ծոցում հմայքներ ունեն թագցրած։ Երբեմն մի հով է անցնում անտառների գլխով

և կանաչ ծովի պէս նրանք ալեկոծւում են ու խորհրդաւոր շշունջներով լցնում միջոցը։ «Անտառը խօսում է», —ասում է նա։

Մի ուժգին հողմ է սուրում անտառի գլխով և տերևախիտ ծառերն իրարով են անցնում, հեծում ու ճռնչում։ «Անտառը կանչում է», —ասում է նա։

Հողմը սուրում է զմրուխտ արտերի վրայով, արտերի կանաչը խոնարհւում է ու տժգունում, ծաղիկները ճօճում են իրենց գլխիկները. «Արտը երգում է»… —ասում է նա և ահա ականջին հնչում է՝ «կանաչ արտը մի՛ կոխիր, քեզի՛ մեռնիմ»… Նա, ասես կրակից այրւած, յետ է վերցնում իր ոտքը. հեւում է, շունչը ծանրանում, մինչ այնտեղ, ճամբի շուրթին, արտի մէջ ծփում է սև մազերի ալիքաձև յորձանուտը… «Սիրած եարդ մի՛ փոխիր, եարն անո՛ւշ է»… Ու սև, նիրհուն աչքերը ժպտում են թախծով…

Խուճապահար՝ գնում է հեռու, հովը խլում է նրա ցայտող աչքի արցունքները, խառնում գանգուրների հետ. «Կանաչ արտը մի՛ կոխիր», կանչում է անտառը նրա թիկունքից, «Մի՛ կոխիր… մի՛ փոխիր»… հազար բերնով անտառն է արձագանգում։

Տենդը այրում է նրա աչքերը, դէմքը, ձեռներն ու մարմինը, ականջներում՝ խժալուր ճիչեր ու կանչեր, նա վազում է հեւասպառ…

—Ի՞նչ է պատահել, Վաղրի՛կ ջան, հիւա՞նդ ես…

Նա նետւում է իր սենեակը, մահճակալի վրայ և աչքերի առաջ իջնում է խաւարի քօղ։

—Տէ՛ր Աստւած, տաքութիւնից այրւում է, հիւանդ է, —բացականչում է Վահրամը և դուրս նետւում սենեակից։

Մի վայրկեան յետոյ վերադառնում է Արմենակի հետ.

—Տե՛ս թէ ի՞նչ ջերմի մէջ է, հիւանդ է մեր Վաղրիկը…

Կանչում են բժշկին. Նախնական միջոցներ ու խնամք. հանում են հագուստները և անկողին դնում։ Այժմ նա զառանցում է տենդի մէջ. կանաչ արտերի մասին է խօսում, մերթ երգում է ու մերթ ծանր հառաչում։

Ու սև մազերի ալիքաձև ջրվէժը ծփալով գահավիժում է… Նիրհուն աչքերը, ուլացին յօնքերի տակ, թախծոտ ժպտում են…

Ողջ գիշեր, Աննէգը նստած նրա անկողնի մօտ, հսկում է։

Յաջորդ օրը թոյլ է զգում իրեն. մարմինը կոտրատւում է. դէմքը նիհարել ու աչքերը փոս են ընկել. Աննէգը զբաղեցնում է նրան գիւղական կեանքի իր պատմութիւններով. մերթ ընդ մերթ ներս է մտնում Վահրամը, հարցնում հիւանդի վիճակի մասին, կարգադրութիւններ է անում ու դուրս ելնում։

Այսպէս անցնում է ցերեկը։

Երեկոն իջնում է իր թախծոտ թևերով. մթնշաղը վըշտեր է ծնում իր գորշ ծալքերից։ Նա յիշում է թուրք ժողովրդական երգը երեկոյի մասին՝ «Երեկոյ եղաւ, մոմեր վառւեցին, հին ցաւերս նորոգւեցին»...

Թանձրացող խաւարի ծալքերում այն ի՞նչ դէմք է որ բարձրանում է՝ նիրհուն աչքերի հմայքով և ծփուն վարսերի յորձանուտով... Այդ դո՞ւ ես, իմ հին օրերի ընկեր. քո վարսերիդ իջել է կանաչ արտերի ցօղը... «Ա՜խ, զգոյշ, սիրելիս, չտրորես կանաչը»...

Նա նայում է պղտոր, տենդահար հայեացքով. մոմը լալիս է և արցունքները գլորւում ու սառում են իր կրծքին. խե՞ղճ մոմ, նա լալիս է ինքն իր վրայ, իր կեանքի վրայ... Ու սև, նիրհուն աչքերը ժպտում են թախծով. «Վահրիկ, մեզ կը գրե՞ս չէ՞, չէ՞ք մոռանայ»...

—Ո՞վ է,—կանչում է նա ընդոստ անկողնում նստելով,—ո՞վ է կանչում...

—Պառկի՛ր, տէ՛ր իմ, պառկի՛ր, ոչ ոք չկայ։

Նա պառկում է հառաչելով. և տենդը նոր թափով համակում է նրան։

*

Տենդահար գիշերը լուսանում է. զառանցանքներից սթափւում է նա։ Արևի շողը ոսկեզօծում է լուսամուտը։ Դուրսը խլըրտում է նոր կեանքի հևքով. բոլորն աշխատանքի են, բացի նրանից։

Անկողնում անցնում է ցերեկը։ Երեկոյեան, ծառան չոքած նրա անկողնու մօտ, պատմում է գիւղական ցաւերից։

—Մեր աշխատանքը մերը չէ,—ասում է նա,—մեզ կեղեքում են՝ կալւածատէրը, մուրաշիրը և այն բոլորը, որոնք կանգ-

նած են գիւղացու գլխին. մեր աշխատանքի երկու հինգերորդը, որոշ տեղերում նոյն իսկ երեք հինգերորդը աղան է տանում. ա՛յս է պատճառը, որ մենք մերկ ենք ու տկլոր. մեր ձեռներով, մեր արիւն-քրտինքով դատածը մենք չենք վայելում. անցնում էք մեր գիւղերով, տեսնում էք թշուառութիւն անծայր ու անսահման. և որքա՜ն ընտանիքներ են քայքայւում այսպէս, կարիքի, սովի և հիւանդութեան ճիրաններում. հազուագիւտ են այն մարդիկ, որոնք տենդ չունեն. սա էլ բնութեան չարիքն է, որին ենթակայ ենք։ Կարիքն ու թշուառութիւնը մարդկանց դարձրել են եսասէր ու չար. շատերին զրկել ինքնասիրութիւնից ու պատւից. կմախքանում ու ստուերի պէս են դառնում մարդիկ՝ քաղցից ու հիւանդութիւններից. երբ բանւորները լաւ չեն աշխատում, աղբար, չպիտի մեղադրել. ի՞նչ են ուտում այդ թշուառները, որ ոյժ ստանան և աշխատեն. կերածները մեծ մասամբ ցամաք բրինձ է, հասարակ սեակ. նկատած կը լինէք. երևի. որ ես չեմ ծեծում, չեմ ստիպում, որ աշխատեն, այլ՝ թասիբի եմ գցում. ճիշտն ասած՝ մեղքանում եմ, ինքս էլ նրանց պէս թշուառութիւնը ճաշակած մարդ եմ... մանաւանդ որ թշուառութիւնից բացի մի մեծ դարդ է ինձ մաշում...

Եւ Ահմէդը հառաչում է սրտի խորքից։

Վազրիկը նստում է անկողնում. այդ հառաչանքն ասես իրենն էր, այնքան հարազատ էր ու ծանօթ...

«Այդ ի՞նչ դարդ է մաշում սրան, այս պարզ գիւղացուն»... հարց է տալիս իրեն. —«չլինի՞ թէ սա էլ ինձպէս»... անցնում է նրա մտքով։

—Դարդդ պատմիր ինձ, —ասում է նա անդոհով։

Եւ Ահմէդը պատմում է.

—Ես մի չքաւոր գիւղացի եմ, ոչինչ չունեմ՝ բացի իմ ձեռներից, բայց հինգ հոգի ուտող ունեմ. մայրս, այրիացած քոյրս իր երկու երեխաներով. և ես... գլուխս պատէ պատ եմ խփում, ա՛ղա. օրն ի բուն աշխատում. որպէսզի հարազատներս սովից չմեռնեն. եթէ այս գծի աշխատանքը չլինէր՝ մենք կորած էինք. Ալլահը խնայեց մեզ. գթաց, և քեզ ուղարկեց մեզ փրկելու. օր չի անցնում, որ քեզ չօրհնեն մեր տանը. բոլոր գործաւորների տանը։ Մենք չէինք տեսել կանոնաւոր վճար. մենք

տեսել էինք, որ ծանր աշխատանք կատարենք և մեր վարձքը կուլեն, մեր աշխատանքի տէրը չլինենք. դու եկար և մեր հախկը ուիր, մեզ հետ մարդու պէս վարուեցիր, մեր աշխատանքը գնահատեցիր. այս է պատճառը, որ հիմա քո գործաւորները քեզ փրկիչ են կոչում. Դու որ մեր ցաւերին հասար, ես այժմ պարտաւոր եմ պատմելու քեզ իմ դարդը, որ ուտում, մաշում է ինձ…

Եւ Ահմէդը նորէն հառաչում է.

Մեր գիւղում մի աղջիկ կայ, անունը Զուլֆի. ուրիշներն ասում են, որ նա գեղեցիկ չէ, բայց իմ աչքին նա գեղեցիկ երևաց, մանաւանդ իր մազերը, որոնք իջնում են մինչև կրունկները. Երբ Բաղդադի խալիֆան տեսաւ Լէյլիին, դարձաւ ասաց Մաջնունին. «Իմ աղախիններիս մէջ Լէյլիի պէս շատերը կան, նոյն իսկ աւելի գեղեցիկները»… Մաջնունը պատասխանեց ու ասաց. «Կարող է, տէ՛ր իմ, բայց Լէյլիին Մաջնունի աչքո՛վ դու նայիր»… Եւ ահա Զուլֆան իմ սրտում հրդեհ վառեց, որ գնալով բորբոքւում է և ինձ տանջում օր ու գիշեր… Հայրը չի ուզում ինձ տալ իր աղջկան, ասում է.—«Ահմէդն անկուշտ է, հինգ ստամոքս պիտի կշտացնի. իմ աղջիկս իմ տանը գոնէ մի կտոր հաց ունի, ես ի՞նչպէս թոյլ տամ, որ նա գնայ Ահմէդի տանը սոված նստի. կա՛մ Ահմէդը իր տնից պիտի հեռացնի քրոջը և երկու զաւակներին, կամ պէտք է մի զոյգ լծկան ունենայ, մի գութան, որ աղջիկս իրեն տամ. ուրիշ ո՛չ մի կերպ չեմ համաձայնի»: Այսպէս է ասում Զուլֆոյի հայրը և վառում է հոգիս: Ահմէդն ի՞նչ սրտով քրոջը իր երկու որբերի հետ դուրս անի տնից. ի՞նչպէս նրանց կենդանի թաղի… Քոյրս մի օր ասաց. «Ահմէդ ջան, եթէ մի մարդ գտնէր թէկուզ մեզպէս աղքատ, որ ինձ հետ ամուսնանար, ես պատճառ չէի դառնայ քո դժբախտութեան»: Բայց ո՞վ կը մտնի երկու որբ երեխայի բեռան տակ. այս համատարած թշուառութեան մէջ. ո՛չ ոք. և Ահմէդն էլ կը տանջւի Զուլֆոյի դարդից…

Վաղրիկը մի պահ կարկամեց. այս պարզ, անգրագէտ գիւղացին ես տառապում էր նոյն ցաւով, որով ես տանջում էին յորձանուտ վարսերը… միայն թէ սա աւելի երջանիկ էր իրենից. քանի որ խնդրի հանգոյցը միայն դրամն էր, մի փոքրիկ գումար. ա՜խ. իր ողբերգութիւնը ո՛չ դրամով կլուծէր. ո՛չ համաձայնութեամբ…

—Լսիր.—ասաց նա սթափվելով.—հագուստներս ինձ տո՛ւր։

Ահմեդը չշարժվեց, ապա աչքերի գոյով՝

—Ղո՛րբան, հիւանդութիւնդ կը ծանրանայ, ի՞նչ ես ուզում անել, հրամայի՛ր ես կատարեմ։

—Քեզ ասում եմ հագուստներս տո՛ւր, իսկ ինքդ գնա՛ և ինքնաշարժի մօտ սպասիր ինձ։—ասաց Վազրիկը վճռական։

Ահմեդը հնազանդուեց։

Վազրիկն սկսեց հագնել. նա այժմ միայն զգաց, թէ որքան էր թուլացել երկօրեայ տենդից, անհաստատ քայլերով նա դուրս եկաւ բակ. Ահմեդն սպասում էր մեքենայի մօտ։

—Նստի՛ր,—պատուիրեց Վազրիկը,—Ահմեդը տեղ բռնեց նրա կողքին, ղեկի մօտ։

Տաս րոպէ յետոյ ինքնաշարժը կանգ առաւ Ահմեդի գիւղի մօտ։

—Այժմ ինձ առաջնորդիր Զուլֆայենց տուն,—ասաց նա Ահմեդին,—միայն թէ ինձ ասա ճշմարտութիւնը՝ Զուլֆան էլ քեզ սիրո՞ւմ է։

-Աղա, ղո՛րբան, հայրը ինձ չի՛ ընդունի… նա չի ուզում անունս լսել… իսկ Զուլֆան ինձ ասաց աղբիւրի մօտ.—«Ահմեդ, աշխատիր յեկան ունենալ, և եթէ այդ դէպքում էլ հայրս յամառի՝ ես կը փախչեմ քեզ հետ»…

—Լա՛ւ, որ այդպէս է, այժմ գնա՛ և Զուլֆայի հօրն ասա, որ գծի կառավարիչն ուզում է իրեն մօտ թէյ խմել…

Ահմեդը, շշմած ու դողդողջուն, քայլեց գիւղի մութ փողոցով. Վազրիկն հետևում էր նրան ջերմի մէջ։ Գիշերուայ ժամի 9-ն էր և գիւղը քնած էր օրուայ ծանր աշխատանքից յետոյ։

Նրանք կանգ առան գիւղական մի խրճիթի առաջ. Ահմեդը բախեց դուռը նախ՝ անվստահ, ապա հաստատուն հարուածներով։

—Ո՞վ է,—լսեց ներսից մի խուլ. առնական ձայն։

—Գծի պարոն կառավարիչն է, ուզում է մի ժամ հանգստանալ ձեզ մօտ,—ասաց Ահմեդը ձայնը փոխած։

Ներսից լսեց մի խուլ իրարանցման ձայն. ապա նոյն առնական ձայնն ասաց.

—Մի քիչ սպասէք… այս րոպէիս։

Քիչ յետոյ դռան շէմքում գծագրուեց մի գիւղացու ստուեր, ձեռին ձէթի ճրագ բռնած. հիւրերը ներս մտան։

Թշուառութիւնն իր դրոշմն էր դրել այդ խրճիթի վրայ՝ յատակին, պատերին և նոյն իսկ առաստաղին։ Յատակի փռուածքը յայտնի չէր. ժամանակին գո՞րգ էր եղել, կարպե՞տ թէ չուլ, այնքան մաշուել ու աղճատուել էր, կեղտոտուել ու շուրջը գզգզուել, ձևից դուրս եկել։ Պատի մօտ մի նոյնքան հնամաշ ու կեղտից գոյնը փոխած օթոց. Վաղրիկը նստեց այդ օթոցի վրայ, յատակին, և մէջքը յենեց պատին. Անմէգը չոքեց դռան մուտքի մօտ. գիւղացին ոտքի վրայ էր. իբրև յարգանքի նշան.

—Թող Ալլահը քեզ երկար կեանք տայ, ա՛ղբար, որ շնորհ ես արել, եկել նուաստիս տունը. խէյր լինի, — ասաց գիւղացին.

—Նստի՛ր, — ասաց Վաղրիկը, — խէյր է, գիշերուայ այս ժամին չար գործերի համար չէի գայ ձեր տունը։

Գիւղացին նստեց Վաղրիկից բաւական հեռու, իր ծընկների վրայ։

—Ճանաչո՞ւմ ես Անմէգին, — հարցրեց Վաղրիկը, ակնարկելով։

Անմէգը գլուխը կախել էր կրծքին, մեղապարտի պէս.

—Հրամանք ես, ի՞նչպէս չէ... մեր գիւղից է...

—Անմէգը իմ հաւատարիմ և աշխատասէր ծառան է, այժմ գործը լաւ է և ապագայում աւելի՛ յաջողութիւն պիտի ունենայ՝ գիտես որ գծի կառավարիչը մէկից որ գոհ եղաւ՝ նրան կը բարձրացնի։ Մարդս այս աշխարհն է գալիս որ իրենպէսներին կեանք տայ և բարձրացնի, երջանկացնի։ Երբեմն պատահում է որ մարդը՝ իր յամառութեամբ կամ յիմարութեամբ, իր բախտին քացի է տալիս։ Ես գիտեմ որ Անմէգը խնդրել է քո աղջկայ ձեռքը և դու մերժել ես, առարկելով որ նա ծանրաբեռնուած է ընտանիքով, որ նոյն իսկ լծկան ու գութան չունի, որ նա անչքաւոր է. ճի՞շտ է...

—Հրամանք ես, ա՛ղբար, — անհամարձակ ասաց գիւղացին՝ Անմէգի կողմը երբէք չնայելով։

—Մարդկանց մեծ մասը կեանքում առանց դրամ ունենալու ամուսնանում է, յետոյ սկսում է աւելի եռանդով ու անձնուիրութեամբ աշխատել և ահա յաջողութիւնը գալիս է. դու աւելին ունե՞ս Անմէգից, որ նրան անկուաւի ես համարում։

—Ո՛րբար, զո՛րբան, աղջիկս իմ տանը գոնէ մի կտոր հաց ունի ուտելու. դաշտային աշխատանքների մէջ էլ օգնում է մեզ. գնայ օտարի տանը սովա՞ծ նստի։

—Փառք Աստծոյ՝ Ահմէդի բնութիւնը մինչև հիմա պարզ է, դրանից յետոյ ուսէլ՛ լաւ պիտի պարզի. դու մի՛ մոռացիր, որ Ահմէդը ընդունակ, աշխատասէր երիտասարդ է. կարելի՞ է պահանջել մէկից, որ իր քրոջը և երկու զաւակներին դուրս անի տնից. դա խղճի գո՞րծ է։ Քեզ ասում եմ, որ Ահմէդը կունենայ լծկան, գութան և դեռ շատ ուրիշ բաներ. համաձա՞յն ես աղջիկդ Ահմէդին տալու։

Ահմէդը կուչ էր եկել ու չէր հաւատում իր ականջներին. նրա վրայ ասես եռման ջուր լցրին, երբ Վաղրիկն հարցրեց Ջուլֆայի հօրը. «համաձա՞յն ես աղջիկդ Ահմէդին տալու». Ահմէդի համար վճռւում էր իր կեանքի ու մահուան հարցը. նրա մէջ պայքարում էին Ջուլֆային տիրանալու հրճւանքը և նրան կորցնելու սարսափը։

Գիւղացին լուռ էր։

—Գիտե՞ս որ Ջուլֆան էլ սիրում է Ահմէդին. դու, իբրև հայր, կուզենայի՞ր քո աղջկադ երջանկութիւնը փշրել.—հարցրեց նորէն Վաղրիկը։

—Քեզպէս սրբութիւն ես կարո՞ղ եմ մերժել.. ես որ չպատասխանեցի քո առաջին հարցումիդ, ո՛չ թէ նրա համար, որ ուզեցի խօսքդ կտրել, ո՛չ, այլ որովհետև մենք այնքա՛ն թշւառութիւն ենք տեսել և այնքան չարիքներ, որ մարդկանց այլ կերպ ենք ճանաչել, ես մտածում էի՝ մա՞րդ է խօսողը թէ փէյղամբար. քեզ ղուրբան, ա՛ղա, աղջիկս էլ, տունս էլ, տեղս էլ... դու մաքիլ[1] ես,—ասաց գիւղացին երկիւղածութեամբ։

Ահմէդը, դռան մօտ ծալապատիկ նստած, ազատ շունչ քաշեց, ձգւեց, չոքեց և յանկարծ ճակատն ու ձեռքի ափերը գետնին հպելով՝ երկրպագութիւն անեց անելով. «Է՜յ խո՛դա, է՜յ խո՛դա. երկար կեանք տուր իմ Վաղրիկ աղային... ես մեռնում եմ երջանկութիւնից»... Ու Ահմէդը լաց եղաւ երջանկութիւնից։

Վաղրիկի աչքերը լցւեցին այս սրտաբուխ պատկերից։

1) Խելօք։

նա այդ աղքատիկ գիւղական խրճիթում տեսաւ մարդկային երջանկութիւնը որ խայտում էր արցունքների մէջ։

—Ուրեմն վերջացած է,— ասաց նա,— այսօրուանից Ահմեդը քո փեսան է, Զուլֆան նրա նշանածը։ Թող երջանիկ լինեն։— Ապա աւելացրեց. —Ահա, այս նուէրն էլ քեզ, որ սրանից յետոյ երբ տունդ գանք, գոնէ թէյ ունենաս ինձ և Ահմեդին հիւրասիրելու։

Գիւղացին օրհնելով վերցրեց դրամը և աչքերին չէր հաւատում. Նա չկարողացաւ յիշել, թէ ե՞րբ է այդքան գումար ունեցել իր կեանքում։

Երբ Վաղրիկը դուրս էր ելնում Զուլֆայի հօր տնից, զգաց որ իր կողքից քայլող Ահմեդը դողում էր երջանկութիւնից։ Բակով անցնելիս մի թուփ խլրտաց և Վաղրիկը լսեց կանացի մի քնքոյշ ձայն որ շշնջում էր՝ «Թող Ալլահը եկածդ ճամբան օրհնի, թող քեզ երկար կեանք տայ»...

Յետոյ նրա ականջին հասաւ՝

—Զուլֆա՛...

—Ահմե՛դ...

ՏԱԳՆԱՊ

Տենդի մէջ գիշերային այդ ճամբորդութիւնը ծանր անդրադարձաւ Վաղրիկի հիւանդութեան վրայ. Նրա ջերմը աւելի բարձրացաւ և գիտակցութիւնը մերթ ընդ մերթ կորցնելով՝ նա ընկնում էր խոր ղառանցանքների մէջ։

Վահրամն ու Արմենակը յուզօրէն մտահոգւեցին. Նրանք չէին կարողանում որոշել, Վաղրիկին Թեհրա՞ն փոխադրել, թէ՛ քաղաքից բժիշկ հրաւիրել։ Վերջապէս, երկար խորհրդակցելուց յետոյ, նրանք որոշեցին հեռագրել Արմէնին, որ անմիջապէս բժիշկ ճամբի գիւղ։

Գիտակցութիւնը վրան եկած պահուն Վաղրիկն շտապեց կարգադրութիւն անել Ահմեդի նկատմամբ. Նա ասաց Արմենակին.

—Իմ անձնական հաշուից երկու հազար թուման անմիջապէս կը գրեք Ահմեդի անուան, որ երբ ուզենայ՝ վճարէ իրեն. Նա այդ դրամով տնտեսութիւն պիտի ստեղծի.

Արմենակը այս մասին ասաց Վահրամին.

—Այս աղան խելքը թռցրե՞լ է. ինքը՝ հիւանդ, գործը՝ երկար

վրայ. երկու հազար թումանի պէս մի զգալի գումար Ահմէդին, եդ չլուս փախչային···—ապա նա ձեռքով բեխը շոյելով աւելացրեց,—Ա՛դա, տես քանի՜ չիշ խորոված կը լինի անել էդ երկու հազար թումանով, հա՜··· վա՛յ ես Ահմէդի մարդ սատղին··· Ջանի Վաղրիկի խելքը գլխո՞ւմն էր թէ ղառանցում էր։

—Ո՛չ, ղառանցանքի մէջ չէր և ես արդէն գումարն անցկացրի տետրակ. Ահմէդին էլ յայտնեցի, որ երբ ուզենայ, կարող է գանձել. չեմ կարող նկարագրել այն երջանկութիւնը, որ նկատեցի Ահմէդի դէմքին. բայց դա մի վայրկեան տեւեց, նա անմիջապէս տխրեց ու ասաց. «Մինչև որ իմ բարերար Վաղիր աղաս բոլորովին չառողջանայ, ես այդ դրամին ձեռք չեմ տայ»։ Տեսնո՞ւմ ես, այս թշուառ մարդկանց մէջ երբեմն այնպիսի բարոյական բարձր հասկացողութիւններ կան, որ քիչ կը գտնէի Գուցէ մեզ պէս ինտելլիգենտների մօտ անգամ··· էլ ո՞ւր մնաց ռամիկների։ Ուրեմն Վաղրիկը չի սխալուել և զուր քայլ չի արել, նա ճանաչել է Ահմէդին։ Ե՛ս անգամ, որ դրամ սիրողը չեմ, մեծ հաճոյք զգացի Ահմէդի երջանկութիւնը տեսնելով,—ապա աւելացրեց ասես երազի մէջ,—մարդկանց երջանկացնելը ամենամեծ հաճոյքն է կեանքի···

—Ուզում էր երջանկացնել՝ թող մի հայ մարդու երջանկացնէր, էլ ո՛չ թէ մի այլազգու,—ասաց Վահրամը սրտնեղած։

—Թշուառութիւնը ազգ ու հայրենիք չունի, մա՛րդ, ո՛չ էլ երջանկութիւնը. բոլո՛ր թշուառները և բոլո՛ր երջանիկները նո՛յն ձևով են տխրում և ուրախանում, ինչ ազգի էլ նրանք պատկանելիս լինեն։

—Բա որ մեր դպրոցները փակեցին, մեր երեխաներին լաց ու կոծով դուրս արին, մեզ չոլերը գցեցին··· բա սա երջանկութի՞ւն էր, որ մեզ պատճառեցին,—բողոքեց Վահրամը։

—Դպրոց փակողը ո՛չ Ահմէդներն էին, ո՛չ պարսիկ ժողովուրդը, որ ի բնէ բարեսիրտ է. քո դպրոցներդ փակողը մի բուռն վարչական մարդիկ էին, իրենց անիմաստ քաղաքականութեամբ. նոյն այդ մարդիկ են որ օրն ի բուն աշխատեցնում են Ահմէդներին և նրանց աշխատանքի արդիւնքը խլում. նրանք աւելի դաժան են վարւում իրենց ժողովրդի հետ. մեզ ճնշում են, այն էլ այս վերջին տարիները, միայն մշակութային գետ-

նի վրայ, իսկ իրենց ժողովրդի ամբողջ կենսական շահերն են քամում: Եթէ այդ վերին, քաղաքականութիւն վարող խաւը փորձում է խրամատ առաջացնել մեր և պարսիկ ժողովրդի միջև, մենք ո՛չ թէ այդ խրամատը պիտի խորացնենք, այլ ընդհակառակը՝ պիտի աշխատենք աւելի մօտենալ պարսիկ բուն ժողովրդին, սիրել նրան և սիրել տալ մեզ. վերջի վերջոյ ռէժիմներն անցողական են, մնայունը ժողովուրդն է. պարսիկ ու հայ ժողովուրդներն այս դէպքում, որոնք միշտ պիտի ապրեն կողք-կողքի. ուրեմն թշնամութեան փոխարէն այս երկու ժողովուրդների միջև պիտի ցանել փոխադարձ սէր և բարեկամութիւն:

Արմենակը խօսում էր խանդով ու ոգևորութեամբ. Վաղրիկի օրինակը նրան համակել էր իր հմայքով:

Վահրամն այս անգամ չառարկեց. նա սրտի խորքում ափսոսում էր, որ այդ երկու հարիւր թումանը Վաղրիկը տուել էր ընդամենը երեք-չորս ամսուայ ծառայող Ահմէդին. ճիշտ է, Ահմէդը անքուն-անդադար գիշերները հսկում էր Վաղրիկին, բայց դա իր ծառայական պարտականութիւնն էր, որը այդքան թանկ չպիտի գնահատուէր:

* * *

Երբ Արմէնն ստացաւ Վաղրիկի հիւանդութիւնն յայտնող հեռագիրը, բարեբախտաբար Բալեան տանը չէր, տիկին Մարիամն էլ զբաղուած էր իր սենեակում:

Նրա տրամադրութիւնն ընկաւ. ապա անմիջապէս Գիլանային յանձնելով տիկին Մարիամի խնամքին, գնաց բժիշկ Բալուեանի մօտ:

Բալուեանն այն բժիշկներից էր, որոնք անձնուիրաբար ծառայում են հանրութեան, այս պատճառով էլ նիւթապէս լաւ վիճակ չունէր, ապրում էր համեստ. անձամբ ճանաչում էր նաև Վաղրիկին, գիտէր նրա առաւելութիւնները, ուստի և պատրաստակամութիւն յայտնեց յաջորդ առաւօտ իսկ մեկնելու:

—Բժիշկ,—ասաց Արմէնը,—գիտէք թէ Վաղրիկն ինչպիսի թանկագին երիտասարդ է, վստահ եմ որ ձեր կարելին կանէք նրան վտանգից փրկելու համար. նրա պէս երիտասարդները մեզ պէտք են:

—Վստահ եղէք, որ ոչ մի ջանք չեմ խնայի. գիտէք թէ որքան համակրանք ունեմ դէպի ձեզ և Վաղրիկը. այդ համակրանքս փոխւում է սիրոյ մանաւանդ այս օրերին, երբ մեր լեզուն ու մշակոյթը սեղմումների են ենթակայ և ձեզ պէս մտաւորականները ջանք չեն խնայում պաշտպանելու այն։

Յաջորդ օրը առաւօտեան բժ. Բալուեանը մեկնեց գիւղ, Վաղրիկի մօտ։ Նա մի ամբողջ շաբաթ մնաց հիւանդի մօտ և արտակարգ խնամք ու ջանք թափեց. վերջապէս Վաղրիկը այնքան լաւ զգաց իրեն, որ կարող էր քայլել սենեակում։

Արմէնն ամեն օր հեռագրով հարցնում էր Վաղրիկի առողջութեան մասին և որպէսզի անեցիները չիմանան, նա այլ հասցէ էր հեռագրել Արմենակին։

Երբ Արմէնն ստացաւ Վաղրիկի ապաքինման լուրը և յաջորդ օրը հանդիպեց գծից վերադարձած բժ. Բալուեանին, իմացաւ որ Վաղրիկի հիւանդութիւնը «տրոպիկ մալարիա» է. մի մահացու հիւանդութիւն, որի արմատական բուժումը շատ դժուարին էր, և սա դեռեւս առաջին աստիճանն էր հիւանդութեան, որ անց էր կացրել Վաղրիկը։

ԽԷՊՕԻ ԴԱՍԸ

Հին Թեհրանահայութեան բնակավայրը Դարվազէ Ղազվինն է, յատկապէս Խիաբանը Արամնէ կոչւած փողոցը, որին կից գտնւում է նաև Ս. Գէորգ եկեղեցին։ Այս եկեղեցու բակում թաղւած են 19-րդ դարու մի քանի երևելի պարսկահայեր։

Ս. Գէորգ եկեղեցու շուրջ ընկած են հին Թեհրանի տները, գորշ աղիւսաշէն, փոքր ու նեղ պատուհաններով ու դռներով, որոնք միևնոյն կապտին սաղ գորշ գոյնի խառնուած ներկն ունեն։

Ահա այդ եկեղեցուն կից աղքատիկ մի տան մէջ էր ապրում ծերացած Խէպօն՝ իր ընտանիքով։ Նա իր տան աղամարդն էր. ածած, քառակուսի ճերմակ մօրուքով, որը բերնի շուրջ արդէն դեղնել էր, իր կանաչ ու սաւն աչքերով և կարմրին սաղ դէմքով։ Մարմնով փոքր էր, բայց՝ արագաշարժ, թեթևասոն, երբեմն նոյնիսկ քայլում էր ստտտտւն։ Հագին ունէր խունացած մի զինւորական փրէնչ՝ մեծ գրպաններով, տարատ ծալ-

բերը սեղմուած էին սրունքների գեղին փաթաթանների տակ։ Նա կաղ ու պառաւ էր, թէև իր պաշտօնը զինուորական ասպարէզից խիստ հեռու էր։ Նա գաղթել էր Թաւրիզ, այնտեղից էլ՝ Թեհրան։ Իրանում մօտեցել էր եկեղեցուն, որովհետև գրագէտ էր ու «տոմարագէտ», այս պատճառով եկեղեցին անմիջապէս նրան առել էր իր գիրկը։ Սակայն իր տոմարագիտութիւնը երբէք չկիրառուեց գործնական կեանքում և նա այս աշխարհից հեռանալիս իրեն հետ տանում էր մի քանի անկատար իղձեր։ Նա փափագում էր քահանայ օծուել՝ սակայն սրբազանն ընդդիմացաւ յամառօրէն. քահանայ օծուելուց յետոյ նա պիտի գործադրէր իր տոմարագիտութիւնը և որ գլխաւորն է՝ պիտի բաց անէր աշխարհի գաղտնիքը լոյս ցերեկւայ մէջ, արևի պայծառ շողերի տակ, այնպէս՝ ինչպէս որ իր ձեռքի ափն էր բաց անում մարդկանց աչքերի առաջ…

Եւ սակայն նրա իղձերն անկատար մնացին, երբ նա ընդմիշտ մեկնեց այս աշխարհից՝ գաղտնիքն իր բռունցքի մէջ սեղմած տանելով։

Այս բոլորով հանդերձ, ոչ ո՛ք կարողացաւ, սակայն, նրան արգելել հայ լեզուի նրա ինքնակամ դասաւանդութիւնը։ Բայց, ներեցէք, մի այլ բանի մէջ էլ նա ազատ եղաւ, որ իր տան պատերի ներսում իրեն յայտարարեց սրբազան, գործադրեց սրբազանի ամբողջ խօսակցութիւնն ու շարժուձևերը, նրա կենցաղը, նիստ ու կացը և տնեցիները համբերութեամբ, հլու կամակատարութեամբ և անմռունչ՝ ենթարկուեցին իրեն ճիշդ այնպէս, ինչպէս որ քահանաներն ու ծառաները ենթարկւում են սրբազանին։

Խէպօն բախտ էր ունեցել ներկայ գտնուելու սրբազանի և կաթնավաճառի միջադէպին. և ահա նա ներկայացնում էր այդ միջադէպը, իր չորս տղաներին կանգնեցնելով կողք-կողքի։

—Դու տիրացուն ես, այսինքն՝ ես,—ասում է իր աւագ տղային,—կա՛գնիր էսպէս։ Դու ժամկոչ Զաքօն ես,—ասում է միջնակին,—կա՛գնիր ինձնից մի քայլ ետև… Դո՛ւ էլ Կա՛կօն ես,—ասում է բէնիամինին,—կա՛գնիր Զաքօյից կէս քայլ ետև։ Դուք՝ տիրացու և ժամկոչ. ես՝ սրբազան. Միշիկս էլ՝ կաթնածախն ա. ապա մի կէ՛պկաց քաշիր ճակատիդ. Մի՛շիկ, կաթնա-

մանդ. էլ գցիր թե՛ւդ. ա՜յ, էդպէս. դէ հիմի գնա՛ էս պատի տակը և եկ. էնպէս բարևիր սրբազանին, ինչպէս որ ա՛սել եմ։

Տիրացու Խէչօն ձեռները մէջքին, վեհապանծ, դանդաղ քայլերով երթ ու դարձ է անում տիրացուների առջև իբրև սրբազան. պատի անկիւնից յանկարծ նրա դէմն է ելնում կաթնավաճառը, որ շփոթւում է՝ սրբազանին տեսնելով և չիմանալով ի՞նչպէս բարևել՝ իր երկու մատով բռնում է կէպկայի արևւակալի ծայրից և երկչոտ ու բարակ ձայնով ասում՝ «Ա՛ստուծ»...

— Տօ՛, հա՛յի տաւա՛ր..., — ասում է սրբազանը որոտալով, — սրբազա՛նին տեսնե՛լիս կասեն՝ Աստուա՜ծ օգնակա՜ն․ նա էլ քեզ կա՛սի՝ Աստուա՜ծ պահապա՜ն... Երբ էս բա՛ները չես իմանում՝ սովորական յիմարի պէս գլուխ տուր ու ա՛նցիր...

— Սա փորձ էր, — ասում է Խէչօն, — հիմի մէ՛կ էլ կրկնենք։

Եւ կաթնավաճառը նորէն անցնում է պատի տակ, ապա դալիս և նոյն ձևով շփոթւում է ու բարևում, նորէն որոտում է սրբազանը տիրացուի բերնով, իսկ դերակատար Խէչօն, Զաքօն և Կակօն նայում են կաթնավաճառին քամահելի հայեացքով, նրան իր ադխտութիւնը զգացնելու համար։

Այս և նման դրւագներ, սրբազանի կեանքից, կրկնւում են ամեն օր՝ տիրացու Խէչօի տանը, և նա հպարտ է իր տան մէջ սրբազան լինելու հանգամանքով։

*

* *

Նրան տանջում է մի տենչ՝ ղեկավարել, իշխել... Աշխարհի գաղտնիքը իր ձեռին՝ նա իմաստունների քթից բռնած կը թափահարի, ապա այդպէս բարձր կը տայ նրանց իր ձեռից, կենթարկէ իրեն՝ որպէս փափկած մոմ. այս գետնի վրայ նա արդէն նւաճել է իր ընկերներին, որոնք ենթարկւում են իրեն անմռունչ կերպով, կարգապահ զինւորի պէս. այժմ նա խորհում է իր իշխանութիւնը տարածել տնից դուրս, արտաքին աշխարհի վրայ, առաջին հերթին փորձեր անելով Զաքօի, Միկօի ու Կակօի գծով։

Դպրոցների փակումը լաւագոյն առիթն էր խմբաւորելու իր տիրակալութեան սահմանները, նոր նւաճումներ կատարելու անկախ

գետիններում, ծուարելու, ընդարձակելու իր իշխանութեան կեն-սատարածքը։ Եւ ահա նա հարեւան տներից հաւաքել էր տասնի չափ երեխաներ, որոնց յայտարարել էր․

—Ես ձեզ կը սովորեցնեմ հայերէն կա՛րդալ ու գրել, յե-տոյ՝ տո՛մար, յետոյ՝ իմաստութիւն…

Եւ երեխաներն ընդունել էին այդ առաջարկը, հմայուած այն երեք բառերով, որ նա պիտի սովորեցնէր իրենց՝ ժամա-նակի և տարածութեան մէջ։

* * *

—Սանր ո՞ւնիս…

—Ոչ…

—Դո՛ւ… դո՛ւ… դո՛ւ…

Երեխաներից ոչ ոք սանր չունի։ Նա հանում է իր մօ-րուքի խոշոր ատամներով, դեղնած սանրը և ասում․

—Տեսնո՞ւմ էք․․

Երեխաները գլխով հաւանութեան նշան են անում։

—Մէկ, երկու, երեք…— և նա ձեռքով բռնում է սանրը այնպէս, որ միայն ծայրի երեք ատամներն են երևում,—տես-նո՞ւմ էք․․ երեք ատամով սանրը կոչւում է Ա… ա՜, ա՜, ա՛։

Երեխաները կրկնում են։

—Դէ հիմի ա-ով սկսող բառեր ասէք․ դո՛ւ…

—Ադամ…

—Ա՛պրես, փոքրիկ․ ի՞նչպէս գտար…

—Էսօր ատամս ընկաւ… փթել էր…

Մի այլ փոքրիկ՝ մատ է ցցել․

—Ալուչայ,—ասում է նա և նայում շուրջը․

—Ա՛պրես, ի՞նչպէս գտար…

—Մամէս ալուչայ դցեց կերակրի մէջը,—ասում է երեխան և ժպտում։

—Ա՜բ-դուշա,—ասում է Խէչօն,—ալուչան դցեցին արդուշ-ափ մէջ,—և շմփացնում է լեզուն։

* * *

«Զ» տառն անցնելիս բարդութիւն մեծ է առաջանում, որը Խէչօն լուծում է իր իմաստութեամբ։

—Հապա՛ Ձ-ով սկսող բառեր ասէք,—ասում է նա։

—Ձու… ձի… ձիւն… ձմեռ… ձմերուկ…

Այս վերջին բառի վրայ առաջանում է վէճ ու բարդութիւն. վէճի առիթը տուողը ինքը Խէչօն է.

—Ձիւն-ձմեռ և՛ ձմերո՞ւկ… ձիւն ու ձմեռն ո՞ւր, ձմերուկն ո՞ւր,—ասում է նա թերահաւատօրէն.

—Ես տեսել եմ խանութում, մրգավաճառի խանութում,— պնդում է աշակերտը։

—Դու երկու ա՛չքով ես տեսել, ա՛կնոց էլ դնէիր՝ չէիր տեսնի…

—Ո՛չ,—պնդում է աշակերտը,—ես և քեռիս էինք, նա ակնոց է դնում, վեց աչքով տեսանք և խօսեցինք ձմերուկի մասին, ձիւն-ձմեռուայ ձմերուկի…

—Տօ՛, ձիւն ձմեռուայ ձմերուկը լղկած կը լինի,—նախանձում է Խէչօն,—արժէ՞ լղկած ձմերուկի մասին խօսել. հա՞, ձեզ եմ հարցնում։

—Ի հարկէ լղկած կըլնի,—հաստատում են երեխաները։

Եւ վէճը փակւում է սրանով. բայց եթէ կուզէք ճշմարտութիւնն իմանալ, թիւրիմացութեան պատճառն այն էր, որ Խէչօն հաստատ չգիտէր թէ ձմերուկ բառը գրւում է ձ-ով. նա կարծում էր, թէ նա գրւում է ծ-ով.—հա թէ ինչու վէճի բռնեց և նախանձեց ճարպիկօրէն, քանի որ կասկած ունէր իր մտքում։

—Ձուաղեղ, պա՛րոն, ձուաղեղ,—ասում է աշակերտներից մէկը.—ձուաղե՞ղ… կրկնում են միւսներն ու շրթունքները լիզում:

Եւ այսպէս քաղցրութեամբ փակւում է ձիւն-ձմեռուայ ձմերուկի վէճը։

* * *

«Ծ» տառն անցնելիս երեխաներն ակնատես եղան հետաքըրքրական տեսարանի. խաղողը, ճանճը, որդն ու փիղը շարւեցին իրար ետև ու քայլեցին դասարանում, տողանցք կատարելով. յետոյ Խէչօն նրանց նստեցրեց ծոծանակի մէջ ու ծծեց…

—Հապա՛, բառեր ասէք ծ-ով,

—Ծիտ… ասում է մէկը։

—Ծանծ… ասում է միւսը։

—Ծիծու… ասում է երրորդը։

—Կնճիթ․․ ասում է չորրորդը։

—Կեցցէք դո՛ւք և ինքներդ,—ասում է Խէչօն,—կեցցեմ և ես. ճօճա՛նակ… և ես ճիթը, ճանճը, ճիճուն ու կնճիթը փիղով միասին գնում եմ ճօճանակի մէջ ու ճօ՛ճում, ո՜յ այսպէս…

Եւ երեխաները խնդում են, արմունկով միմեանց բոթելով։

* * *

Այսպէս, որոշ հայեր, իրենց հասկացած ձևով, երեխաների հետ անցնում էին հայոց լեզուն. և երբ ցատկում էին այբուբենի դժւարին պատնէշի վրայով, այնուհետև լեզւի ազատ դաշտերում վազում էին երեխաները վաւվաւուն ու խանդավառ դէմքերով։

* * *

Մի օր Խէչօն իր աշակերտների հետ գտնւում էր եկեղեցում. Ս. Մեսրոպի նկարը ցուցնելով՝

—Նա ո՞վ է,—հարցնում է Խէչօն.

—Սուրբ Մեսրոպն է, մեր տառերի գտնողը,—ասում են աշակերտները։

—Հը՛մ… է՞, ես չգի՞տեմ։

Ապա քիչ սպասելով՝

—Բայց ես գիտեմ թէ նա տառերն ի՞նչ ձևով ա գտել…

—Ի՞նչպէս…—հարցնում են աշակերտները հետաքրքիր։

—Հը՛մ… դա գա՛ղտնիք ա, և գա՛ղտնիքն իմ ձեռին ա…

ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Դպրոցի տեսուչը նստած էր բանտում. ամիսներ էին անցել և կարծես հայ հասարակութիւնը մոռացել էր նրա գոյութիւնը։ Մերթ ընդ մերթ փորձեր էին լինում իր հարազատների ու նաև Համայնական Խորհրդի Դիւանի կողմից՝ զգուշօրէն չփման մէջ մտնելու իշխանութիւնների հետ, տեսչի վիճակի առնչութեամբ, նրան ազատելու խնդրով, սակայն ամեն անգամ էլ անորոշ պատասխաններ էին ստանում. վերջապէս շատերն իրենց կաշ-

ւից վախենում էին և աշխատում իրենց վրայից նետել որևէ պարտականութիւն։

Համայնական խորհրդին մտահոգում էր դպրոցի շէնքի խնդիրը․ նա կարող էր գրաւուել․ ուստի և պէտք էր շէնքը դնել այնպիսի մի իրաւական ձևի տակ, որ զերծ մնար գրաւումից․ չէ՞ որ նախ մեծ գումար արժէր․ և յետոյ մի օր կարող էր վարչաձևը փոխուել և, ուրեմն, դպրոցը վերաբացուել։ Յոյսը չէր դադարում սրտերի խորքում խլրտալուց։

Դարձեալ Համայնականի դիւանը խորհրդակցութեան էր նստել․

—Գնալով մեր դրութիւնը դառնում է տագնապալի, —ասում էր նախագահ բժ․ Վալթօն․ —Համայնականի մի քանի անդամներ հեռացել ու մեկուսացել են․ հայ քաղաքացիներից շատերը փակ դպրոցի մօտով անցնելիս հոգոց են հանում, ոմանք էլ հաշտուել են իրականութեան հետ․․ հասկանո՞ւմ էք թէ չէ։ Դպրոցի վերաբացման յոյս չկայ այլևս, ուրեմն այժմ մենք պիտի մտածենք դպրոցի շէնքը գրաւումից փրկելու մասին։ Ի՞նչ էք կարծում, ի՞նչ միջոցով կարելի է փրկել շէնքը․ այս մասին արտայայտուէք, հասկանո՞ւմ էք թէ չէ…

—Ես արտասահմանեան թերթերում կարդացի, —ասաց քարտուղար Ալբբիկը, —որ Յունաստանում հալածանք կայ մեր դըպրոցների դէմ, այնտեղ դպրոցական շէնքերը գրաւումից փրկելու հարց կայ և մերոնք մտածում են այսպէս՝ դպրոցական շէնքերը պաշտօնապէս կապալագրել պետութեան մօտ հինգ հոգաբարձուների անունով, իբրև նրանց մասնաւոր սեփականութիւն․ այս ձևով շէնքերը, իբրև մասնաւոր անձանց սեփականութիւն, զերծ կը մնան գրաւումից։

—Դա վատ ձև չէ, բայց մի վտանգ ունի, —առարկեց Ներսէսը, —այն որ վաղը, երբ հոգաբարձուները կամ նրանցից որևէ մէկը մեռնի, նրա ժառանգները կարող են տիրանալ շէնքին և մենք այլևս ո՛չ մի օրինական հնարաւորութիւն չենք ունենայ յետ պահանջելու ազգային ստացուածքը։ Պէտք է լրջօրէն և զգուշօրէն մօտենալ այդ հարցին։

—Կառավարութիւնը մեզ կրօնական գետնի վրայ բնաւ չի հալածում, ուստի և որքան մտածում՝ գալիս եմ այն մտքին,

որ պէտք է մեր դպրոցի շէնքը. այսինքն նրա թատերասրահը, վերածենք աղօթատեղիի. եկեղեցու։ Դուք գիտէք որ հայութիւնն այժմ կենտրոնացած է Նադէրի—Յուսուֆաբադ շրջանում, Ղավամ Դովլէի Ս. Գէորգ եկեղեցին շատ հեռու է և կտրուած՝ հայութեան կենտրոնից. եթէ մենք սրահը վերածենք աղօթատեղիի՝ թէ՛ հայ հաւատացեալ համայնքի հոգեկան պէտքերը բաւարարած կը լինենք և թէ՛ դպրոցի շէնքը՝ փրկած, համաձա՞յն էք թէ չէ.—ասաց դր. Վաթսոն և աւելացրեց.—այս մասին մի քիչ մտածենք։

Մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ, վերջապէս եկան այն եզրակացութեան, որ դպրոցը գրաւումից փրկելու լաւագոյն միջոցը նրան աղօթատեղիի վերածելն է, ուստի և անմիջապէս այդ ուղղութեամբ քայլեր պիտի առնէին, եկեղեցական վարչութեան և քահանաներին համապատասխան հրահանգներ տալով. այս գաղափար յղացան նաև նոյն դպրոցի բակի յետևի հողը գնել և յատկացնել մի նոր, մեծ եկեղեցու կառուցման, որպէսզի այդ միջոցով և՛ հայ զանգուածներին կապեն ազգային ինքնութիւնը պաշտպանող գոյութիւն ունեցող միակ հաստատութեան՝ եկեղեցու հետ և՛ փրկած լինեն ազգապատկան դպրոցական շէնքը բռնագրաւումից։ Այս նպատակին հասնելու համար ի նկատի ունեցան մի երկու անձնաւորութիւնների. որոնք հայ հարուստների մօտ խօսք պիտի բանային նոր եկեղեցի ունենալու մասին և նրանց տրամադրէին եկեղեցի կառուցելու։

* * *

Անցել էր արդէն մօտ մի տարի. 193... թուականն էր, երբ մտնէիք հայոց դպրոցի բակը, կիրակի և տօն օրերին, պիտի տեսնէիք մի հոծ բազմութիւն, որ խռնւում էր աղօթատեղիի վերածուած դպրոցի սրահը. դա հայութեան հանդիպման վայրն էր, կենտրոնատեղին, ուր տեղի էին ունենում սովորական զրոյցներ, տեսակցութիւններ՝ տարբեր քաղաքներից եկած ծանօթների ու բարեկամների միջև, ոմանք մտնում էին եկեղեցի, մոմ վառում, աղօթում, կամ հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ ցաւակցութիւն յայտնում հանգուցեալի պարագաներին. և,

ինչպէս որ սովորութիւնն է լուսաւորչական համայնքի, աղօթատեղիի սրահում եւ զրուցում էին, միմեանց քէֆ հարցնում, ճամբորդութեան մասին խօսում աւելի՛ քան թէ ունկնդրում կրօնական արարողութիւնները, որոնք, ասենք նաև, գրաբար լինելու պատճառով անհասկանալի են մեր հասարակութեան մեծագոյն տոկոսի համար, նոյն իսկ քահանաներից ոմանք լիւըմբռնողութիւնը չունեն իրենց կարդացած աւետարանի կամ երգած շարականների։

Այդ թւին արդէն յամառ կերպով խօսում էր նաև, որ հայ ունեւորներից Ռ. Եսայեան, աչքի ընկած առևտրի և բանկային գործարքների ասպարիզում, մտադիր է նոր եկեղեցի կառուցել հայոց դպրոցի բակում. «Արդէն խոստացել է Համայնական Խորհրդին. եկեղեցի պիտի կառուցի իր մօր յիշատակին», — ասում էին ոմանք. «Առևտրականի խօսք է, կարող է և չկառուցել, կը խոստանայ՝ վաղը կառարկի, թէ գործերն անյաջող գնացին և ո՛չ ոք կարող է պահանջել, որ նա կատարի իր խոստումը», — ասում էին ուրիշները։ Եւ հայ հանրութիւնը բաժանւել էր երկու կարծիքի՝ «Կը կառուցի», — ասում էր մէկը, «Չի՛ կառուցի», — ասում էր միւսը։

Երկար բանակցութիւններից ու ձգձգումներից յետոյ՝ վերջապէս եկեղեցու գետինը հարթւեց և հիմքերն սկսեցին փորել. «Ասո՞ւմ էինք որ կը կառուցի» — բացագանչում էին լաւատեսները. «Հիմքեր փորելը դեռ փաստ չէ, կարող է կիսաւարտ մնալ», — առարկում էին յոռետեսները։

Եւ սակայն եկեղեցին սկսեց կառուցւել, թէև խիստ դանդաղ, երբեմն ընդհատումներով. և ամէն անգամ որ կառուցումը վերսկսւում էր, լաւատեսները ցնծում էին, իսկ յոռետեսները գլուխ ու ձեռք էին թափահարում և անցնում, կրկնելով՝ «Արդէն երկրորդ տարին է թեւակոխել, և դեռ պատերը չեն բարձրացել. էսպէս էլ եկեղեցի շինել կը լինի՞. էդպէս պա՛պս էլ եկեղեցի կը կառուցէր... հը՛մ»։

Մի ժամանակ եղաւ, երբ եկեղեցու կառուցումը կանգառաւ. լաւատեսներն սկսեցին իրենք էլ կասկածել ու տատանւել, այլեւս խուսափում էին յոռետեսներին հանդիպելուց։ Յոռետեսները խմբից-խումբ էին անցնում եկեղեցու բակում. «Ահա՛,

տեսէ՛ք, մանրւում տեսէ՛ք, էս քարերը փթեցին անձրեւի ու ձիւնի տակ, էնքան միայն. էսպէս էլ եկեղեցի շինե՞լ կը լինի. էս ձեւով որ շարունակի՝ եօթ տարում էլ չի վերջանայ»... Ուրիշներն առարկում էին քամահրանքով. «եկեղեցու շինութիւնը որ եօթ տարի չտեւի՝ էլ ի՞նչ սրբազան տաճար. պէտք ա երկար տեւի. որ համ ունենայ, ժողովուրդն անհամբեր սպասի՝ լա՛ղաթ տանի»։

Բայց այնուամենայնիւ, թէեւ կրիայի քայլերով, եկեղեցին բարձրանում էր, ճերմակ. յղկած քարերն իրար վրայ էին շարւում արուեստով, հմտութեամբ, եւ որքան բարձրանում էր, այնքան, տես, նրա աւարտման հաւատքն ամրանում էր հանրութեան մէջ։ Յոռետեսներն սկսել էին իրենց պարտութեան համն առնել օդի մէջ, ուստի եւ խուսափում էին լաւատեսներին հանդիպելուց. այս անգամ նրանք նոր ռազմավարութիւն որդեգրեցին. հրապարակ նետեցին մի նոր հարց՝ «եկեղեցին հայկական ոճով չէ շինւում, ճարտարապետը ռուս է»...

Եւ մարդիկ սկսեցին այս անգամ զննող հայեացքով դիտել կառուցւող եկեղեցու մանրամասնութիւնները. «ճիշտ է, — ասու՛մ էին նրանք. — հայկական ոճին անյարիր են այս լայն ու հաստ սիւները. որոնք աջ ու ձախ մասում բռնում են եկեղեցու համարեա կէսը. կամարներն էլ օտար ոճի կնիքն ունեն. չէ՛, սա մեր ոգուն հարազատ եկեղեցի չէ՛, ա՛խպէր»...

Այստեղ լաւատեսներն առարկում էին. «Թո՛ղ մենք նոր եւ մեծ եկեղեցի ունենանք՝ հոգ չէ թէ ոճը տարբեր լինի. եթէ էդ էլ չլինէր՝ ի՞նչ կը լինէր մեր ճարը. մեր էս աղօթատեղին ինչի՞ նման ա. ասես ախոռատուն լինի... Երբ Սրբազան Մելիք Թանգեանն օծում էր եկեղեցու հիմքերը, տասներկու խաչեղբայրներ շարած խանի շուրջ, իր քարոզի մէջ ասաց. — Ա՛պրի խանը. որ էսպէս փառաւո՛ր եկեղեցի է կառուցում իր մօր յիշատակին. մեր հարուստներից ո՛չ ոք այդպիսի քայլ չարաւ, նրա ղադրը իմացէք»...

— Ախպէր, էսպէս էլ բան կը լինի՞. ճիշտ են ասել որ հայը դաւող ա. հայի մէկը գանել ա մի եկեղեցի ա շինում՝ էլ թուք ու մուր չի մնում՝ որ չլցնեն նրա գլխին. էս օրերին բա չէ՞ք մտածում որ մեծ ու նոր եկեղեցին մեզ կը փրկի, չէ՞ք

մտածում որ հայութիւնը կը կենտրոնանայ, կը կա՛պւի իր տաճարի հետ, կը սիրի իր ազգային աւանդութիւնները, սրբութիւնները…

—Եկեղեցին վաղուց ա դադարել ազգային գոյութեան ազդակ լինելուց. էդ քո ասածդ սա՛նձն ա… մեր ժողովրդի ազգայնութիւնը պահելու համար պէտք ույժ տալ նրա լեզւին ու մշակոյթին. սա՛ է մեր ազգային գոյութեան պատւանդանը. Թէ՛ չէ ժողովուրդը, որի մեծ մասը եկեղեցական չի՛ էլ հաւատում, եկեղեցում խմբւելով ի՞նչ գործ կը դայ, դրանով ա՞զգ կը փրկւի. երնէկ քեզի՛, դրա փոխարէն ույժ պէտք տալ մեր լեզւի և մշակոյթի ուսուցմանը. փոխանակ հարիւր հազարաւոր թումաններ ծախսելու և եկեղեցի կառուցելու, որին շատ քչերն են հաւատում, լաւ չէ՞ր լինի լեզւի ու մշակոյթի տաճար շինէր և դուրսը մնացած մեր հազարաւոր երեխաներին ազգային դաստիարակութիւն տւէր…

—Տօ՛, մա՛րդ Աստուծոյ, ո՞վ ա առարկում դրան. բայց էսօր քո դպրոցդ փակել են, երեխաներիդ անլեզու թողել, էսօր հնարաւո՞ր բան ա «լեզւի ու մշակոյթի տա՛ճար շինելը», դէ գնա՛ ու շինի՛ր, տեսնեմ ո՞նց ես շինում… էսօր միայն եկեղեցի կարող ես շինել, եկեղեցի՛, իսկ վաղը, երբ Աստուծով պայմանները փո՛խւեն, էն ժամանակ քո ասած «լեզւի ու մշակոյթի տաճարը» շինի՛ր. քո ձեռը բռնո՞ղն ով ա…

Եւ այսպէս, վէճը եկեղեցու շուրջ, մերթ տրամաբանական, մերթ անհեթեթ հիմնաւորումներով, թափառում էր ժողովրդական զանգւածի բերանում։ Եւ սակայն եկեղեցին, թէև շատ դանդաղ, բարձրանում էր և պատուարից կերպարանք ընդունում. կարծես նա լուռ ասում էր՝ «Դուք վիճեցէք, իսկ ես կը բարձրանամ»…

Արդէն որպէս հոգևոր ինքնապաշտպանութեան բերդեր. Ղազւինում կառուցել էր Ս. Հռիփսիմէի եկեղեցին՝ Յովհաննէս Բարսեղեանի միջոցով։ Իսկ Թաւրիզում, 1940 թ-ին, անւանի առևտրական Սիմէօն Մանուչարեանը կառուցեց գերեզմանատան քարաշէն Մատուռը՝ իր հանգուցեալ մօր՝ Շողակաթի յիշատակին։

Եւ այսպէս, փակւած դպրոցների փոխարէն բարձրանում էին եկեղեցիները, հաւատքի կոթողները։

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Արդէն մի տարուց աւելի էր, որ Մաշալեանը մեկնել էր Քերմանշահ, Աբրահամ Նաղարի գործերի կառավարչի պաշտօնով: Այդ ժամանակամիջոցում Մագդայի և Աբրահամի հանդիպումները սկզբում դարձել էին աւելի յաճախակի, իսկ հետագայում արդէն պոռթկական բնոյթ էին կրել:

Աբրահամի հանդիպումների յատուկ բնակարանը մինչև երեկոյ նիրհում էր լռութեան գրկում. երեկոյեան ժ. 7-ից այնտեղ նկատւում էր շարժում ու կենդանութիւն. Մագդան ներս էր մտնում հապճեպ քայլերով, դրսում մի պահ լսւում էր հեռացող ինքնաշարժի դղրդիւնը և այնուհետև Աբրահամի բնակարանը լեզու էր առնում, «Շիրազի բլբուլը սկսում էր երգել», —ինչպէս ասում էր Աբրահամը:

Եւ ահա մի ամբողջ տարի «Շիրազի բլբուլ»-ը երգեց իր սիրական վարդի թփի վրայ, նրա արուն թևերի փետուրները քսեց գետնին և պատեց շուրջը, Խայեամն ու իր սիրուհին փակած պատին՝ անշարժ աչքերով դիտեցին ու տեսան այնպիսի սիրաբանութիւններ, որոնք արևելքին յատուկ են: Այսպէս անց մի ամբողջ տարի և Մագդայի մատները, այդ միջոցին, զարդարւեցին թանգարժէք մատանիներով, ականջները՝ ականջագինդերով, պարանոցը՝ մանեակով. մի շքեղ հագուստ փոխարինեց մէկ ուրիշին, դիմայարդարութիւնն ընդունեց այլազան կերպեր, շեշտուած արևելեան ճաշակով. Աբրահամի սենեակը ակնատես եղաւ մերկ մարմնի կրք ձևերին, որոնց կենտրոնում ծեքծեքում էր վայրագ ճաշակներին հաճելի պարը:

Քերմանշահում Մաշալեանը գործին նուիրել էր արտակարգ եռանդով. նա երախտապարտ էր զգում իրեն Աբրահամի հանդէպ. քանի որ իր կառավարչի պաշտօնը և՛ լաւ ռոճիկ էր ապահովում իրեն, և՛ ազդեցիկ դիրք. բոլոր առաջադաս պաշտօնեաները, նոյն իսկ այլ հիմնարկութիւնների, Մաշալեանին վերաբերւում էին յարգանքով և երկիւղածութեամբ. այս պարագան շոյում էր նրա ինքնասիրութիւնը. բացի այդ՝ նա լայն ծանօթութիւններ էր ձեռք բերում գործի ասպարէզում, թէ՛ մասնաւոր և թէ՛ պետական շրջանակներում: Նա արդէն մաս-

ծում էր, որ շնորհիւ իր ունեցած ծանօթութիւնների և վարկի՝ մի օր էլ ինքը անկախ գործի կը ձեռնարկի, կը դառնայ մեծ գործատէր, կը հարստանայ և այնուհետև կանի իր սրտի ուզածը, խելքին եկածը։ Այսպէս, նրա տպաւորութիւնն օրէցօր բարձրանում էր, երբեմն նոյն իսկ աւելորդ յարգանքներն ու մեծարանքները նրան զարմացնում էին. «Ես այսքան կարողութիւններ եմ ունեցել և չեմ իմացե՞լ», —խորհում էր նա. «Դէ՛, Գոզաս, քեզ տեսնեմ, ի՛նչպէս պահիր քեզ, որ տեսնողն ասի թէ սա աղա մարդ է, առևտրականի մեծ ուղեղ ունի, նաև մտաւորական է»... Եւ այսպէս խորհելով՝ նա նախօրօք նիւթեր էր մշակում թամադայութեան համար, ցցուն արտայայտութիւններ, ճռճռուն ոճեր, յուզիչ համեմատութիւններ, որովհետև նա՛ էր Բերմոնչահում պատւի և իր պերճախօսութիւնն էլ գալիս էր լրացնելու նրա աղքատութիւնը, բոլոր խնջոյքներում նրան էին թամադա ընտրում, ինչպէս որ Թեհրանում, [illegible] ի շջանակում Աբրահամ Նազարին էր նրա թեկնածութիւնն առաջ մղում։

Նա արդէն փոփոխութիւն էր մտցրել իր շարժ ու ձևի, նիստ ու կացի և խօսակցութեան եղանակի մէջ. կառավարչին և բարձր կարողութիւնների տէր մարդուն յատուկ ձևեր և խօսելու եղանակ մշակել։ Սովորութիւն էր դարձրել նաև բլթիներ գրելու, չեղած և չլինելիք գործերի առնչութեամբ՝ ուժեղ տպաւորութիւն գործելու և աւելի՛ յարգանք ներշնչելու նպատակով։

Եւ նրան ունկնդրող մարդիկ, այն յոյսով, որ Մաշալեանը մեծ գործի պիտի ձեռնարկի, շատ պաշտօնեաների կարիք պիտի ունենայ և իրենց էլ գործի պիտի վերցնի՝ սկսում էին աւելի՛ յարգանք ցոյց տալ, ծնքծնքել, շողոքորթել, ժպտալ նրա դէմքին և նրա ժպիտին արժանանալ, յետոյ գալիս էին նստում նրա գրասենեակից և պատահած մարդուն պատմում նոր գործի մասին՝ չափազանցեալ ձևերով, և ամէն մէկը նրանցից աշխատում էր ցոյց տալ, որ ինքը ամենից աւելի մօտ է Մաշալեանին, շատ մտերիմ, և գործն սկսելուն պէս վարիչի պաշտօն պիտի ստանայ... Ունկնդիրներից շատերն իրենց հերթին դայթակղւում էին, յոյսեր կապում և խնդրում իրենց չմոռանալ, ոմանք էլ, դառն փորձառութեան բեռն իրենց ուսերին, լսում էին քամահրական ժպիտով, իրենց մտքում խղճալով միամի-

տին՝ անցնում գնում էին, առանց որևէ բառ արտաբերելու։

Մաշալեանը, նման յայտարարութիւններից և խօսակցութիւններից յետոյ, սովորաբար իրեն մօտ էր կանչում մի հոգաբարձուի և մի գումար նւիրում դպրոցին, տալով իր ազգային և մշակութային զգացմունքների հաւաստիքը. լուրը տարածւում էր անմիջապէս, կայծակի արագութեամբ, լրագրերն սկսում էին խօսել ու գովել Մաշալեանի բարեգործական և ազգային գերազանց զգացմունքները, ուսուցիչներն անկորդ ծախսեր էին անում՝ նւէր արւած գումարից ապուսրւած, իսկ հոգաբարձուները գումարը մի առժամանակ ամուր փակում էին սընդուկում՝ նման մի զգալի գումար ունենալու հաճոյքը երկարաձգելու և «գոռող» ուսուցիչներին կախման մէջ պահելու կըրկնակի նպատակներով։

Այսպէս, օրը օրին Մաշալեանի ազդեցութիւնն ու հմայքը աճում էր Քերմանշահ քաղաքում։ Անցել էր արդէն մի տարի, երբ նա հեռացել էր Թեհրանից. Մագդայից յաճախ նամակներ էր ստանում, որոնց մէջ կինը արտակարգ զուրգուրանք ու սէր էր արտայայտում, վստահեցնում ամուսնուն, որ նրանից դուրս իրեն համար աշխարհ գոյութիւն չունի. որ շատ քիչ է դուրս գալիս տնից, դուրսը չի հրապուրում իրեն, որ ամբողջովին նւիրւած է տան հոգսերին և իր երեխաներին։ Մաշալեանն էլ իր հերթին կնոջ գովքն էր հիւսում իր նամակների մէջ և առատ դրամ ճամբում. նա գոհ էր Մագդայից. նրան համարում էր լաւ կին և լաւ մայր. թէև օրիորդական շրջանում նրա մասին շատ էին բամբասել, բայց ամուսնութիւնից յետոյ Մագդան ապացոյցներ էր տւել, որ իր ամուսնուն և ընտանիքին նւիրւած կին է։ Մաշալեանը միայն մի հիմնական թերութիւն էր նկատել Մագդայի մէջ, այն, որ նա չէր կարողանում հանդուրժել, երբ ուրիշների կանայք լաւ զարդարւում էին և սեփական ինքնաշարժով «ֆրֆռում, փող տալիս», (ինչպէս Մագդան էր արտայայտւում) և խիստ նախանձում էր, դժգոհում, թէ ինչո՞ւ ինքը ևս սեփական ինքնաշարժ չունի։ Այդպիսի դէպքերում Պօղոսն համոզում էր կնոջը, որ մի օր էլ իրենք կունենան, չպիտի յուսահատւել. բայց Մագդան չէր համոզւում.

Եւ ահա այժմ հասել էր ժամանակը, երբ Պօղոսը կարող

էր ինքնաշարժ ունենալ, նա Մագդային գրել էր այդ մասին և վստահ էր թէ կնոջը լիուլի բաւարարած կը լինի և հիմնական թերութիւնը՝ վերացրած։

Այս մտադրութեան վրայ էր նա, երբ մի օր նրա դրասենեակն այցելեցին մայրաքաղաքից նոր եկած մի քանի գործատէրեր, որոնց մէջ Մաշալեանը մտերիմ էր բժիշկ Մարուքեանի հետ։ Գործերին առնչւող նիւթերի շուրջ երկար խօսակցութիւններից յետոյ, երբ բժ. Մարուքեանն առանձին մնաց Մաշալեանի հետ, խօսք բացեց Մագդայի մասին։ Մաշալեանը հետաքրքրւեց թէ արդեօք բժիշկը հանդիպո՞ւմ էր կնոջը, ի՞նչպէս էր առողջութիւնը, երեխաներն հօ՛ հիւանդ չէին.

—Մի քանի անգամ հիւրասիրւեցինք Ֆէօդր Կարպիչի և Աբրահամ Նազարչի տանը, մի անգամ Միշա Արտեմիչը մեծ հիւրասիրութիւն տուեց՝ իր և Ֆէօդր Կարպիչի հաշտութեան առթիւ, որ գլուխ է բերել իրաւաբան Վէքիլեանը. ի միջի այլոց՝ նրանք մեծ գործ են սկսել, գուցէ մի քանի տասնեակ միլիոնների հասնող մի գործարք, ինչևէ, սա դեռ խօսակցութիւն է, որևէ հիմնական տուեալ դեռևս գոյութիւն չունի, կամ աւելի ճիշտ է ասել՝ մենք տեղեկութիւն չունենք խնդրի ներքին ծալքերի մասին։ Հա՛, էն էլ ասեմ, որ, սիրելիս, այդ բոլոր հիւրասիրութիւններին ներկայ էր նաև Մագդան, քո գործատէր Աբրահամ Նազարչի հետ. դէ Թեհրան է, գիտես է՞լի, խօսակցութիւններն ու բամբասանքն անպակաս են. մանաւանդ կանանց շրջանում, ուր նախանձն ու փառասիրութիւնը մեծ դեր ունեն. չար լեզուներն սկսել են խօսել, որ իբր թէ Աբրահամը ուխաժիվատ է անում (դարպասում է) կնոջդ. ես այս չեմ ասում, որպէսզի կասկած գցեմ քո սիրտը և կամ քո և կնոջդ միջև սառնութիւն առաջացնեմ, քա՛ւ լիցի, բայց որովհետև քեզ հետ մտերիմ և բարեկամ եմ՝ ասում եմ այն ինչ որ խօսւում է. կանանց շըրջանում խօսւում է, որ այս լուրը դուրս է եկել Աբրահամի մեքենավարից. այս խօսակցութիւնը պատճառ դարձաւ, որ Աբրահամը արձակեց իր շոֆերին... իմ կարծիքով խեղճ մեքենավարը զոհ է գնացել պրովակացիայի. նա ո՛չ նման արտայայտութիւն է ունեցել և ո՛չ էլ կինդ նման բան թոյլ կը տար իրեն... Նախանձը, կանանց նախանձը նման դէպքերում մեծ դեր է կատարում, —եզրափակեց բժիշկը։

Մաշալեանը լսում էր նրան, նրա դէմքը մերթ կարմրում, մերթ գունատւում էր. վերջապէս նա խօսեց.

—Ես Մագդայից այնպիսի նամակներ ունեմ, որ կարող է գրել միմիայն իր ամուսնուն և ընտանիքին ամբողջովին նուիրւած կինը. նա ինձ գրել է այդ հիւրասիրութիւնների մասին. յիշատակել է նաև, որ Աբրահամն ամեն անգամ իր ինքնաշարժն ուղարկում է, որպէսզի Մագդան, իր կառավարչի կինը, ոտքով կամ կառքով չգնայ երեկոյթների հիւրասիրութեանը. դա կարող է դիպչել իր անւան, իր պրեստիժին. և նա հասկանալի է. ինչ վերաբերում է խօսակցութիւններին, դրանք բամբասանքներ են՝ նախանձ կողմից հիւսւած, ինչպէս դու ես նկատում ճըշտօրէն. իմ մասին էլ մի ժամանակ բամբասեցին, որ իբր թէ ինժեներ Հաշումեանի կնոջ հետ եմ... բայց գիտե՛ս, է՛լի, որ ճիշտ չէր, ուզում էին իմ և Մագդայիս միջև սառնութիւն մտցնել. Ես Մագդայի վրայ վստահ եմ, ինչ ուզում են թող խօսեն,—ասաց նա վճռականօրէն և աւելացրեց,—շուտով նա սեփական ինքնաշարժ կունենայ, էն ժամանակ տեսնենք թէ ինչ կասեն չար լեզուները։

Ու թէև խօսակցութիւնը սրանով վերջացաւ, Մաշալեանը վճռականօրէն հերքեց իր կնոջ անհաւատարմութեան կասկածը, բայց իր հերթին մի կասկած արմատ ձգեց նրա սրտում և գնալով ուռճացաւ. աճեց՝ տագնապի և անհանգստութեան մատնելով նրան։

* * *

Օրեր անցան և օրերի հետ աճեց ու զարգացաւ Մաշալեանի հոգեկան տագնապը. այն միտքը, որ կառավարչի իր պաշտօնը արժանիքների բերումով չէր իրեն յանձնւած, այլ իր կնոջից օգտւելու յետին նպատակներով՝ զայրոյթի և վրէժխնդրութեան էր մղում իրեն։ Այս կասկածի հոգեբանութիւնը այնքան զարգացաւ նրա մէջ, որ փոխարկւեց վրէժխնդրութեան. նա սկսեց վնասներ հասցնել իրեն յանձնւած գործերին, միշտ ի նկատի ունենալով՝ թէ այդ վնասները գնում են ի հաշիւ իր ընտանեկան պատւի հետ առևտուր անող Աբրահամ Նազարիի. բայց նիւթական վնասը նրան չէր գոհացնում և ահա նրա մէջ միտք ծա-

գեց նաև բարոյապէս հարուածել իր հակառակորդին. Նա սկսեց ծրագիրներ որոճալ մէկը միւսից աւելի ֆանտաստիկ, մէկը միւսից աւելի դաժան. և վերջոյ վճռեց միանգամայն անտեղեակ ձևանալ իր ընտանեկան ողբերգութեան նկատմամբ իր կնոջ և Աբրահամի մօտ, հակառակորդին որքան հնարաւոր է հարուածել նիւթապէս Բերմանշահում, և ապա մայրաքաղաք գնալով՝ գործադրել բարոյական հարուածի իր այն ծրագիրը, որ արդէն նախընտրել էր։

Նա մի ամիս էլ սպասեց, գործերին այնպիսի ընթացք տալով, որ առերևոյթ շահ էր ցոյց տալիս, բայց էապէս Աբրահամ Նազարին պիտի կրէր մի զգալի վնաս. ապա յանկարծ, առանց լուր տալու, Մաշալեանը մեկնեց Թեհրան։

Նա ճարպկօրէն մտաւ իր նոր դերի մէջ. կնոջն հանդիպեց արտակարգ ջերմութեամբ, բնաւ զգալ չտալով, թէ կասկածներ ունէր և կամ տեղեակ էր նրա անհաւատարիմ ընթացքին։ Աբրահամին հանդիպեց նոյնպիսի ճարպիկ դերակատարութեամբ և իր գալը պատճառաբանեց՝ նախօրօք մտածած ու ծրագրած գործին առնչուող հարցերով, կասկածի տեղիք չտուեց ո՛չ մէկի և ո՛չ միւսի մօտ, և Մագդան ու Աբրահամը կարծեցին, որ Մաշալեանը շուտով, գործի բերումով, դարձեալ պիտի մեկնէր իր պաշտօնատեղին՝ Բերմանշահ, ուստի և իրենք էլ իրենց հերթին արտակարգ սիրալիր ու ջերմ վերաբերմունք ցոյց տուին նրան։

Մաշալեանի առաջին գործը եղաւ ստուգել իր կնոջ զարդերն ու հագուստները. ինքը գիտէր թէ ինչ գումարներ էր յատկացրել կնոջ հագուստ-կապուստին. կինն էլ ամեն անգամ իրեն գրել էր թէ ինչ նոր բան է գնել իրեն համար՝ ամուսնու փոխադրած նուէր գումարով։

Նա մի-երկու անգամ առիթներ ստեղծեց, որ կինը բացակայէր տնից, ու այդ միջոցին սկսեց մէկ առ մէկ խուզարկել կնոջ գզրոցներն ու թաքստատեղերը. Մաշալեանը, ի մեծ ցաւ իրեն, հաստատեց աւելին քան ինքը կարծել էր. կնոջ զարդերի մէջ կային այնպիսիները, որոնց մասին չէր գրել ամուսնուն և գումարը յիսուն հազար թումանն անցնում էր… և այդ գումարը դիզուած էր այս տարիներում ի հաշիւ իր ընտանեկան պատւի… Նա զգաց, որ նուաղում էր, յենուեց պահարանին

և այդպէս մնաց մի պահ. զգաստացաւ և աչքերի առջևով ան-ցան այն բոլոր արկածները, որ իր կինը՝ Մագդան ունեցել էր օրիորդական շրջանում և որոնց մասին լսել էր դեռևս իր նախ-ամուսնական տարիներում. կնոջ հին ախտը շարունակել էր նաև ամուսնական շրջանում, երբ նա համարեա հասուն երեխա-ների տէր էր... Մաշալեանն իրեն խաբուած զգաց անյուսօրէն, ապրեց խաբուած վստահութեան ողբերգութիւնը իր ամբողջ խոր-քով և նրա մէջ սէրը փոխարկեց ատելութեան ու վրէժի.

Սթափուեց իր հոգեկան խռովքից. որոշեց զարդերը թողնել իրենց տեղերում նոյնութեամբ, իր ծրագիրը չխանգարելու մտօք, դուրս եկաւ տնից այլայլուած ու ընկճուած տեսքով. փո-ղոցի թարմ օդը և եռուն անցուդարձը նրան առան իրենց հո-սանքի մէջ և նա կարողացաւ մասամբ վերագտնել իրեն: Նա քայ-լերն ուղղեց այն գարաժը, ուր ենթադրում էր գտնել Աբրահամի արձակած մեքենավարին: Այնտեղ չէր. նա գնաց Դարվալղէ Դող-մէն, որ կենտրոնն է համարւում ինքնաշարժի երթևեկութեան՝ հետևաբար նաև մեքենավարների:

Նա մտաւ առաջին հանդիպած գարաժի սրճարանը. օդը ա-գարուած էր թանձր ծխով և իւղի ու բենզինի իւրայատուկ հո-տով. այս ու այն խարխլած ու հնամաշ սեղանի շուրջ խումբ-խումբ նստած էին մեքենավարներ. խըշտ ու մաղութից աղտո-տուած աշխատանքի հագուստներով. Նրանցից ոմանք նարդի էին խաղում, ոմանք ծխում, ոմանք էլ այս ու այն անկիւնը քաշ-ուած՝ մեքենայի մի փոքրիկ մաս զննում ու տնտղում էին կոշտ ու մրոտած ձեռներով. Նրանք առհասարակ առողջ տեսք ունէին, արևից այրուած դէմքեր, ամրապինդ մարմին և մկանուտ բա-զուկներ. ծանր ֆիզիքական աշխատանքի և բնութեան զաւակ-ներ, ժողովրդի համեստ խաւի մարդիկ.

Թանձր ծխի մէջ Մաշալեանը առաջին պահ չկարողացաւ դէմքերը որոշել, բայց տակաւ առ տակաւ նրա տեսողութիւնը վարժուեց և փնտռող հայեացքով սկսեց խուզարկել սեղանները մէկ առ մէկ. ոմանք նստած էին թիկունքը դէպի դուռը, ուստի և Մաշալեանը քայլեց սեղանների արանքով և հասնելով խորքի անկիւնի սեղանին, նրա մօտ նստած գտաւ Աբրահամի նախկին մեքենավար Կոլիկին: Մաշալեանը մօտեցաւ ու խնդրեց մեքե-նավարին մի քանի րոպէ տրամադրել իրեն:

Մեքենավարը, յանկարծ իրեն մօտ կանգնած տեսնելով Մաշալեանին, շփոթուեց մի պահ. սակայն անմիջապէս զգաստանալով, առանձնացաւ նրա հետ մի սեղանի շուրջ.

—Ես ներողութիւն եմ խնդրում ձեզ անհանգստացնելուս համար,—սկսեց Մաշալեանը,—ու նաև այն մի քանի հարցերի համար, որ ձեզ պիտի տամ... Ես լսեցի որ պ. Աբրահամ Նաշա-րին, իմ գործատէրս, ձեզ արձակել է...

—Ո՛չ,—ընդհատեց Կոլիկը Մաշալեանի խօսքը,—նա՛ չի ինձ արձակել, այլ ես ինքս եմ դուրս եկել...

—Կարելի՞ է իմանալ, թէ ի՞նչ պատճառով դուրս եկաք,—հարցրեց.

—Նա ինձ աշխատեցնում էր առաւօտից մինչև կէս գիշեր, և գոհացուցիչ ռոճիկ էլ չէր տալիս, դրա համար դուրս եկայ,—ասաց մեքենավարը զուսպ կերպով։

—Իսկ ուրիշ որևէ պատճառ չկա՞ր Աբրահամից գժգոհելու, օրինակ՝ վերաբերմունքի, նրա վարքի ու բարքի տեսակէտից.—նորէն հարցրեց Մաշալեանը, ցանկանալով այս ձևով մօտենալ իրեն տանջող փափուկ խնդրին։

—Դէ աղաները էգպէս են. նրանք հազարներ են ծախսում իրենց քէֆերի ու հաճոյքների համար, բայց երբ հերթը գալիս ա իրենց գործաւորներին վարձատրելու՝ ձեռները չի գնում մի քանի թուման աւելի վճարելու. մենք էլ հօ՛ գերի չենք. Աբրահամ չլինի՝ Խասհակ լինի, որտեղ աւելի վարձատրեն՝ էնտեղ էլ կը մտնենք ծառայութեան։

Մաշալեանն զգաց, որ մեքենավարը խուսափում է այլ բացատրութիւն տալու իր հարցին, նա դարձեալ պատասխանեց միայն նիւթական վարձատրութեան նուազութեան վրայ ծանրանալով. «Ա՜խ, եթէ իսկական խնդիրն ինձ պարզես, ես Աբրահամի պէս չեմ վարձատրի քեզ»,—ասում էր Մաշալեանը իր մտքում,—ապա խորհեց իւրովի՝ «Այս մէկը չհաստատուեց. չլինի՞ իրօք բամբասանքի զոհ է Մագդան... բայց թանկարժէք զարդե՞րը»...

—Եթէ ձեր կարիքն զգամ, կը գա՞ք ինձ մօտ ծառայելու,—հարցրեց Մաշալեանը, աւելի իր խօսակցութեան նպատակը ծածկելու դիտաւորութեամբ, քան թէ նրան իրօք վարձելու նպատակով:

Մէկն ինձ գործի խոստում է տուել. եթէ նա չյաջողուի՝ ինչո՞ւ չէ,—ասաց մեքենավարը։

Մաշալեանն զգաց, որ պատասխանը ձեւական էր և կասկածը նորէն լիշխեց իր հոգուն։ Նա ներողութիւն խնդրեց մեքենավարից, նրան անհանգստացնելու համար, և հրաժեշտ տալով դուրս եկաւ գարաժից։

Նա քայլելով անցաւ Դարվազէ Ղազվինի հրապարակը և հէնց այն է, ուզու՛մ էր կառք կանչել, երբ նրան մօտեցաւ միջին տարիքի մի անձնաւորութիւն.

—Ներեցէ՛ք, պ. Մաշալեան,—ասաց մարդը,—դուք թերեւս ինձ չէք ճանաչում, բայց ես ձեզ գիտեմ. ես ձեր գործատիրոջ՝ Աբրահամ Նազարիի զոհերից մէկն եմ...

—Ի՞նչ կարիք կայ ինձ մօտ բամբասելու իմ գործատիրոջը,—ընդհատեց նրան Մաշալեանը վրդովուած.

—Բամբասե՞լ, հերիք չէ որ նա սրա-նրա արդար վաստակն է ուտում, անմեղ ընտանիքներ թշուառութեան ու քաղցի մատնելով, հերիք չէ որ մարդկանց ընտանեկան պատիւն է ոտնատակ անում, դեռ խոսողներն ու բողոքողները բամբասո՞ղ դարձան... վերջապէս պիտի պատռուի այդ անպիտանի դիմակը. չորս տարի է որ ինձ դատարանների դռներն է գցել և ուրանում է իմ արդար պահանջս, այս ու այն մարդուն կաշառելով, ղանազան կեղտոտ միջոցների դիմելով. ընտանիքս դրել է չոր խսիրի վրայ, բայց ահա՛ մի փոքրիկ գումար նուիրելով՝ բարեգործի անուն է վաստակում և մարդիկ խոնարհւում են նրա առաջ, նրան անուանելով մաքուր, ազնիւ, ազգային զգացմունքների տէր և չգիտեմ էլ ինչ...

—Պարո՛ն,—ասաց Մաշալեանը պաղութեամբ,—այդ բոլորն ինձ ասելու ի՞նչ պատճառ ունէք. խօսք ունէք՝ գնացէք իրեն ասէք:

—Ես ձեզ ուզում եմ ասել, որ ձեր գործատէրը մի անբարոյական է, իմացէ՛ք, նա ձեզ Բերմանշահ ուղարկեց կառավարչի պաշտօնով. որպէսզի ձեր ընտանեկան պատի՛ւը ոտնատակ անի այդ գնով...

—Լռի՛ր. անպատկա՛ռ, յե՛տ վերցրու խօսքդ.—գոռաց Մաշալեանը բռունցքը բարձրացնելով,—բայց անծանօթն արդէն անցել էր միւս մայթը և գոռում էր բարձրաձայն.

—Ամէն երեկոյ ժամի 7-ից Բ. փողոցի իր գաղտնի բնակարանն է ընդունել կնոջդ, միամի՛տ, խաբուա՛ծ մարդ. ես քո բարին եմ ցանկանում...

Մաշալեանը սառած—կանգնած մնաց իր տեղում, նրա բարձրացրած ձեռքը թուլացած իջաւ յանկարծ ու նրան թւաց, թէ օդը պակասեց. մինչև որ ուշքի կըգար՝ անծանօթն անյայտացել էր. մի անցորդ բարի պարսիկ բռնեց նրան կարեկցաբար հարցնելով.

—Պարո՛ն, ի՞նչ պատահեց... վա՞տ էք զգում։

—Մի կառք կանչէք, —ասաց Մաշալեանը խորտակւած։

Պարսիկն իսկոյն կառք կանչեց, Մաշալեանին օգնեց նստելու և «բէսալամաթի» անելով, հեռացաւ։

Կառքն ընթանում էր մարդաշատ փողոցներով, բայց Մաշալեանը այնքան խորասուզւած էր իր մտքերի մէջ և այնքան յուզւած, որ ոչինչ չէր տեսնում։

—Ուրեմն ճիշտ է ․․ մեքենավարը թաքցրեց իրականութիւնը. նա երևի չուզեց իմ ընտանեկան կեանքը փոթորկել, չուզեց պատճառ դառնալ մի ընտանիքի քայքայման, թողեց որ ուրիշներն սահմանեն այդ ծանր պարտականութիւնը ․․ Բայց ո՞վ էր այդ դաժան անծանօթը... նա ևս Աբրահամի զոհերից է՞ այլ գետնի վրայ. տես որքան յուսահատութեան է հասցրել այդ մարդուն, կին ու զաւակների տէր ընտանիքի այդ հօրը, որ նա չկարողացաւ իրեն զսպել և իր զայրոյթի մէջ եղաւ այնքան անողոք, որ յայտարարեց մերկ ճշմարտութիւնը։ Ա՜խ, Մագդա, Մագդա... ի՞նչպէս չամաչեցիր քո զաւակներից, ի՞նչպէս թոյլ տւիր քեզ այդքան ստորանալ. և ի՞նչդ էր պակաս. օհօ՞, բայց չէ՞ որ գրել էի թէ այդ էլ կունենաս. զարդե՞ր, չէ՞ որ բաւական դրամ էի փոխադրել այդ նպատակով. սէ՞րն էր պակասում, բայց ի՞նչ սէր կարող է ցոյց տալ Աբրահամի պէս մի տգեղ և գռեհիկ անձ, բացի արևելեան վաւաշոտութիւնից... Իսկ ես, միամիտս, կարծում էի, որ Մագդան ինձ անհունօրէն սիրում է, որ նա դարձել է ընտանիքի տիպար մայր, որ նրա մէջ վերացել է պճնւելու և այլ կանանց այդ հողի վրայ նախանձելու բնաւորութեան վտանգաւոր գիծը... Ուրեմն Աբրահամն ինձ ֆերմանչան ուղարկեց կառավարչի պաշտօնով՝ նախօրօք խորհրդակցելով կնոջս հետ... Ուրեմն սիրային հանդիպումների յարմարութիւն ստեղծելու համար էր այդ բոլորը, և ո՛չ թէ իմ արժանիքների... Ա՜հ։

Եւ Մաշալեանը բռունցքով զարկեց կառքի յենակին։

—Պարոն.—ասաց կառապանը շուռ գալով,—չասացիք թէ ո՞ւր քշեմ...

—Քշիր ջհաննամը, ես ուզում եմ բոլո՛ր սրիկայ մարդկանց կոտորել այստեղ.—ասաց Մաշալեանը զայրոյթով.

—Պարո՛ն, տեսնում եմ որ վշտացած էք. է՛հ, էս անիրաւ աշխարհում վիշտն ու ցաւն է մեզ բաժին. պիտի դիմանանք, շատ չպիտի մաշենք մեզ, մեր թշնամուն չպիտի ուրախացնենք։

Մաշալեանն զգաստացաւ այս խօսքից. իսկապէս որ իր զայրոյթը պիտի խանգարէր այն ծրագիրը, որ գծել էր դեռևս Քերմանշահ եղած ժամանակ. պէտք էր սառնարիւն կերպով գործել, գաղտնի և զգուշաւոր.

—Քշի՛ր Խուէֆաբադ. քշի՛ր, բարեկա՛մ,—ասաց նա կառապանին մեղմօրէն—դու ինձնից աւելի փորձառու ես։

Կառապանը զւարթացաւ. մտրակը շաչեց և ձիերն արագացրին իրենց ընթացքը։

* * *

Տուն հասնելով՝ Մաշալեանը մտաւ իր հին դերի մէջ. նա արտակարգ սիրալիրութիւն ցոյց տւեց դէպի Մագդան. սա էլ իր հերթին չուզեց ամուսնուց յետ մնալ.

—Թէ որքան եմ քեզ սիրում՝ վկայ երեխաներս. օր չէր անցնում, որ անունդ չտայի. քո սիրած կերակուրը ուտելիս՝ աչքերս արցունքով էին լցւում, ասում էի՝ տեսնես Պօղոս ի՞նչպէս ա ճաշում. ո՞վ ա ճաշ եփում իրա համար, է՛հ, չեմ կարծում մեր ճաշերին հասնի ուրիշի եփածը։

—Իհարկէ, Մագդա, քո եփած ճաշերն ուրիշ են, ո՞վ կարող է քեզ հասնել... Դէ Քերմանշահում, շնորհիւ իմ պաշտօնի և դիրքի, լաւ էի ապրում, բոլորի մօտ յարգանք ունէի. միշտ ինձ հրաւիրում էին ճոխ ճաշերի և ընթրիքի, մանաւանդ որ Աբրահամի գործերի կառավարիչն եմ...

—Հա՛, Աբրահամ ասացիր՝ յիշեցի. էսօր ճաշից ետը Աբրահամը գալու ա մեզ մօտ. ծառայի միջոցով լուր էր ղրկել. քեզ հետ խօսելիք ունի գործերի շուրջ.—ասաց Մագդան անցողակի եղանակով։

Ճաշից յետոյ Մաշալեանը դուրս չեկաւ տնից. նա սպասեց

Աբրահամին։ Ժամի չորսն էր, որ զանգը հնչեց և Աբրահամը ներս մտաւ գործաւորոջ վեհութեամբ։ Մաշալեան ամուսինները նրան ընդունեցին յատուկ յարգանքով և սիրալիրութեամբ։

Սովորական նուէրի շուրջ խօսակցութիւն ունենալուց և թէյխմելուց յետոյ, նրանք անցան գործի շուրջ որոշ հաշիւների. Մաշալեանն անցաւ կից սենեակը՝ հաշուեմատեանները բերելու. Մագդան զբաղեցնում էր Աբրահամին։

—Վաղը Պօղոսին ղարկում եմ Քերմանշահ, ժամի 7-ին կը գայ, —ասաց Աբրահամը շշուկով։

—Թող գոնէ մի օր անցնի. միւս օրը, —ասաց Մագդան ժպիտով:

—Չէ՛, ջա՛նամ, վաղը, կարօտել եմ… —Եւ Աբրահամը ձեռը սահեցրեց Մագդայի կրծքով։

Նրանք չնկատեցին, թէ ինչպէս կից սենեակի բանալու անցքից մի աչք իրենց էր դիտում։

Մաշալեանը մի պահ ետ սպասեց, ապա հազաց, դռան բռնակը պտտեցրեց և ներս մտաւ մատեանները ձեռին։

Մագդան դուրս ելաւ սենեակից պատրուակելով նրանց զբաղմունքը։ Աբրահամն ու Մաշալեանը մի ժամի չափ հաշիւները քննեցին, ապա իբրև եզրակացութիւն, Աբրահամն ասաց.

—Ուրեմն դու, ջա՛նամ, հէնց վաղը ճանապարհուիր Քերմանշահ, այս գործը ինչալլահ լաւ վերջացնելուց յետոյ ես քեզ աւելի լաւ գործի կը դնեմ։

—Բէ՛չաշմ, պ. Աբրահամ, վաղը առաւօտեան, ինչպէս որ հրամայում ես, կը մեկնեմ. քիչ յետոյ կը գնամ օթօ վարձելու։

Աբրահամը զւարթացաւ.

—Ես շատ ուրախ եմ քեզպէս կառավարիչ ունենալուս համար, Պօղոս, ոչինչ չեմ խնայի ջանասէր մարդու համար։

—«Ձիլը սայէյը շումա [1]»…ինչպէս ասում են պարսիկները, —մենք էլ ձեզպէս մեծ և բարեգործ մարդկանց շնորհիւ պիտի առաջադիմենք, —ասաց Պօղոսը ակնյայտ շողոքորթութեամբ:

Աբրահամը մեկնեց։ Մաշալեանը կնոջն յայտնեց, որ գնում է ինքնաշարժ վարձելու, յաջորդ առաւօտեան վաղ պիտի մեկնի.

—Ա՜խ, Պօ՛ղոս ջան, գոնէ մէ քանի օր էլ մնայիր, կարօտս

[1]) Ձեր հովանու տակ:

տանիմ. էապէս չո՞ւնէր Աբրահամը շատ փողասէր է երեւում...
—Դէ, սիրելիս, գործս այդպէս է պահանջում, ի՞նչ արած, —ասաց Մաշալեանը։

* * *

Յաջորդ առաւօտեան Մաշալեանը հրաժեշտ տուեց իր կնոջն ու երեխաներին, և իր ծառայի հետ մեկնեց գարաժ.
—Պետրո՛ս, —ասաց Մաշալեանը իր ծառային, —այս երեկոյ ժամի 7-ը չեղած կը լինես խիաբանը Բ.-ի ցոյց տուածս ծառի տակ. նորից կրկնում եմ, որ ո՛չ ոք չիմանայ. հասկացա՞ր. իսկ քո վարձատրութիւնդ լիուլի կը ստանաս։ Դէ հիմա գնա՛. խանումին ասա որ աղան նստեց օթօ և գնաց.
—Բէ՛ չաշմ, աղա ջան, —ասաց Պետրոսը, —քէֆդ քեօք պահի, ինչ որ հրամայել ես՝ կանեմ։
Ծառայի հեռանալուց յետոյ Մաշալեանը կառք նստեց, կառքի վերնամասը իջեցրեց և խորքում տեղաւորւելով՝ պատուիրեց քշել Թեհրանի մի հեռաւոր թաղը։ Նա իջեւանեց պարսից թաղի մի հիւրանոց. առանձին սենեակ վերցրեց. տէրոջը պատուիրեց իրեն չանհանգստացնել, քանի որ յոգնած էր և պիտի քնէր։ Եւ այդպէս, ամբողջ ցերեկը նա փակւած մնաց հեռաւոր հիւրանոցում։
Վերջապէս, ցերեկւայ ձանձրոյթից ու յուզումնալից ապրումներից յետոյ, վրա հասաւ երեկոն։ Ժամի 6 և կէսին Մաշալեանը կառք վերցրեց, իջեցրեց կառքի վերնամասը, թաղւեց խորքում և պատուիրեց քշել Բ. պողոտան։
Ծառայ Պետրոսն սպասում էր պայմանաւորւած տեղում.
—Օթօն չերեւա՞ց, —հարցրեց Մաշալեանը ծառային։
—Հըլա չէ, ա՛ղա ջան, —համա հիմա որտեղ որ ա՝ կը գայ։
Մաշալեանը նայեց ժամացոյցին. դեռեւս երեք րոպէ կար եօթին. Նրա սիրտն սկսեց արտակարգօրէն բաբախել, նա լսում էր իր սեփական սրտի ձայնը և զայրանում էր, որ չէր կարողանում իր սառնարիւնը պահել։ Նա երկու քայլ հեռացաւ ծառայից և մութի մէջ դէմքը դարձրեց, որ ծառան չնկատէր իր յուզումը... իր կնոջ փոխարէն ինքն էր ամաչում, իր կնոջ, որ ստիպել էր իրեն այսպիսի դերի մէջ մտնել։
Այս մտածումների մէջ էր, որ մի ինքնաշարժ, խաւարը

ճեղքելով, սրընթաց եկաւ ու անցաւ. Մաշալեանն ու ծառան թագնւեցին ծառերի բների յետևում։

—Ի՞նչ էր, ա՛ղա, հիմա քիչ վերը կը կա՛ղնի դռան առաջ,— ասաց Պետրոսը շշուկով։

Նրանք պատի տակով, խաւարի մէջ, շտապ առաջ գնացին։

Լսւեց դռան փակւելու ձայնը. ինքնաշարժը դղրդաց ու շարունակեց ճամբան։ Ապա ամեն ինչ սուզւեց խաւարի և լռութեան մէջ։

—Պետրո՛ս,—դարձաւ Մաշալեանը ծառային,—պարկից հանի՛ր թոկէ սանդուխքը և տուր ինձ։

Նա բաց արեց թոկը և կարթերով ծայրը նետեց պատի վրայ, ձգեց, փորձեց և համոզւելով որ լաւ բռնել էր, ծառային պատւիրեց մօտակայ ծառերից մէկի մօտ պահւել այնքան ժամանակ, մինչև որ ինքը կը կանչէր։

Մաշալեանը զգուշութեամբ բարձրացաւ թոկէ սանդուխքով, պատի վրայ արագ շուռ տւեց և իջաւ բակը անաղմուկ ու խիստ յաջող կերպով։

Նա մի պահ կանգնած մնաց բակի պատի տակ, ականջ դրեց. ոչ մի ձայն. միայն թեթև հովից տատանւող տերևների սօսափիւնն էր լսւում։ Նայեց դէպի շէնքը. ձախ անկիւնի սենեակում լոյս կար, թէև վարագոյրները իջեցրած էին, բայց վարագոյրների կողքից նեղ լոյսի շերտ էր երևում։ Նա դէպի ցած վառեց իր գրպանի էլեկտրական ճրագը և զգոյշ քայլերով, մատների վրայ, սկսեց առաջանալ։ Հասաւ լուսաւոր սենեակի պատուհանին, որ բակից շատ բարձր չէր. զգուշութեամբ նայեց պատուհանի ապակու անկիւնից. առաջին պահ ոչինչ չկարողացաւ տեսնել, թերևս յուզւած էր. քիչ շունչ առաւ և նորէն նայեց ուշադիր. նա էր... Մագդան, իր կինը. ահա՛ և Աբրահամը, որի դէմքի մի մասն է երևում... բաժակ են խմում... ծիծաղում են, բայց Մաշալեանի ականջին ձայն չի հասնում... խմեցին և նորից հռհռում են. համբուրեցին...

Նա թողեց պատուհանը, ճակատը յենեց իր թևին և այդպէս մնաց մի պահ. չէր հասկանում թէ ի՞նչ էր կատարւում իրեն հետ. երբէք իր կեանքում այդպիսի վիճակ չէր ունեցել. ստորացած, անարգւած ու անպատւած զգաց իրեն. ասես իրեն տրորում էին ոտների տակ և թքում իր պատւին։

Սթափւեց երաժշտութեան ձայնից. եգիպտական պարի եղանակ էր հնչում ներսում. երբ Մաշալեանը նորէն նայեց պատուհանի նեղ անցքից, սենեակը այս անգամ մխրճւած էր կարմրագոյն լոյսի մէջ և կարծես իրերը լողում էին կարմիր մշուշում:

Բայց ահա՛ նա ականատես եղաւ աւելի ցնցող տեսարանի. մշուշների մէջ երևաց կնոջ մարմին, որ գալարւում էր, ծեքծեքւում, արևելեան պագշոտ շարժուձևերով. դա նա էր... իր կինը, Մագդան որ պարում էր... այլևս չէր կարելի համբերել և իմաստ չունէր ուշանալը: Մաշալեանը շուռ եկաւ դէպի աջ, ձեռքի էլեքտրական ճրագը լուսաւորեց իր ուղին և ոտների ծայրերի վրայ բարձրանալով պատշգամբը, ներս սողոսկեց լուսաւոր սենեակին կից գաւիթ. նա արդէն հարևան սենեակումն էր:

Մագդան պարում էր դալարումներով. նա երբեմն կանգ էր առնում Աբրահամի առաջ և ցնցում սովլայնի գնդերները: Այդ պահերին Աբրահամը, ալքոհոլի և կրքի ազդեցութեան տակ, բացականչում էր վաւաշոտ՝ «Եաման, Վայլա՛հ», — և ձեռքը սահեցնում նրա մարմնի ցցուն ձևերի վրայով:

Յանկարծ շփոթւած բացւեց հարևան սենեակի դուռը և փոթորկի պէս մէկը նետւեց ներս, կանգնեց կնոջ դիմաց և ծափ տալով կրկնում էր՝ «Եամա՛ն Վայլա՛հ»...

Կինը քարացաւ իր տեղում՝ արձանի պէս, չռած աչքերով և այլայլւած դէմքով. Աբրահամի ծափը կիսատ մնաց և ձեռները օդում պղած, կարկամած. գրամաֆոնի նւագը դադարեց, սակայն սկաւառակը պտտում էր և «վա՜յ... վա՜յ» կանչում ու մղկտում...

— Պարի՛ր, կի՛ն, — գոռաց Մաշալեանը. — պարի՛ր, չէ՞ որ ամուսինդ Քերմանշահ է մեկնել շնորհելու իր բարեգո՜րծ արքային... Պարի՛ր քեզ ասում եմ...

Մագդան քարացած էր. ասես քարացել էր նաև իր ուղեղը. չգիտէր իր անելիքը. կանացի նուրբ խորամանկութիւնն ու հնարամտութիւնը անելի էին մատնւել. ո՛չ մի ելք. ո՛չ մի միջոց չկար մերկապարանոց խայտառակութիւնից ազատւելու համար. ամուսինը շարժւել էր արտակարգօրէն ճարպիկ և այժմ ահեղ դատաւորի նման կանգնած էր իր դիմաց: Խօսք չունէր ասելու. միջոց չունէր արդարանալու. փաստերը մերկ էին, յամառ և խօսուն:

—Աբրեմ, չե՞ս ուզում պարել, միայն քո սիրականիդ համա՞ր ես պարում,—գոռաց Մաշալեանն իրենից ելած, և աջ ու ձախ բռունցքներն իջեցրեց միաժամանակ Աբրահամի և կնոջ դէմքին…

Մագդան ճչաց ու փռուեց գետնին լեշի պէս իր մարմնով, Աբրահամը յետ-յետ գնաց հարուածից և ընկաւ բազմոցի վրայ. Մաշալեանը վրայ ընկաւ և սկսեց բռունցքներ տեղալ Աբրահամի դէմքին, գլխին, կրծքին, հայհոյանքների տարափով։

Աբրահամի ճակատի և դէմքի վրայ արեան հետքեր երևւացին. Նա տժգունել էր մեռելի պէս, երբ Մաշալեանը յետ թռաւ բազմոցից և կնոջ զգեստները միւս բազմոցից ճանկելով՝ դուրս նետուեց սենեակից, արագ անցաւ միջանցքը և փողոցի դուռը բանալով՝

—Պետրո՛ս,—կանչեց շնչասպառ։

Մի ստուեր մօտ վազեց խաւարում.

—Հրամմէ՛, աղա ջան,—ասելով։

—Անմիջապէս մի սայլակ կանչիր մօտ չարբաղից[1]. թող վկայ լինի այս սրիկայութեան,—ասաց Մաշալեանը վրդովուած։

—Ի՞նչ է պատահել, պարո՛ն, գողութի՞ւն թէ…

Երկու հայեր էին, որ անցնում էին փողոցով։

—Սպասի՛ր,—ասաց նրանցից մէկը Պետրոսի թևը բռնելով,—թող մի տեսնենք ի՞նչ է պատահել, յետոյ սայլակ կանչելը հեշտ է։

—Եկէ՛ք ներս և ձեր աչքերով տեսէ՛ք,—ասաց Մաշալեանը անծանօթներին ներս հրաւիրելով։

Երկու անծանօթներն ու Պետրոսը ներս մտան։

Տեսարանը քամնելի էր։ Աբրահամը, հազիւ ուշքի եկած Մաշալեանի հարուածներից, դէմքն առել էր ձեռների մէջ և շօշափում էր վէրքերը. Մագդան, տեսնելով որ հագուստներն յափշտակուած են և խօսակցութեան ձայներ են գալիս՝ մերկութիւնը ծածկելու համար վրան էր առել սեղաններից մէկի ծածկոցը և այն է, ուզում էր հարևան սենեակը փախչել՝ երբ Մաշալեանը վրայ հասնելով բռնեց նրա թևից.

—Ահա՛, պարոննե՛ր, իմ կինս, որին դաւաճանութեան մէջ բռնեցի այս պարոնի հետ,—ասաց նա հեւալով։

---

1) Բառուղի:

—Իսկ ո՞վ է այս պարոնը,—հարցրին անծանոթները։

—Այս պարոնը մեր դէմքերից մեկն է. աղայէ Աբրահամ Նազարին...

—Ա՜ա... բացականչեցին անծանոթները. և երբ զարմանքի առաջին պահն անցաւ, անծանոթն ասաց.

—Պարո՛ն Մաշալեան, ես ձեզ ճանաչում եմ. ճանաչում եմ նաև պ. Աբրահամին. ոստիկան կանչելու կարիք չկայ, մեր ցաւը մեր ներսում լուծենք. գիտէք որ «Եկեղեցական վարչութիւն» ունենք, որ զբաղւում է նման հարցերով. եթէ հարկ լինի՝ մենք կը վկայենք մեր աչքերով տեսածը,—ասաց անծանոթը։

—Իհարկէ, այս բոլոր խայտառակութիւններից յետոյ, ես ապահարզան կը տամ իմ կնոջս. և դուք պարտաւոր էք վկայել ձեր աչքերով տեսածը. բայց սրանով խնդիրը չի լուծւի, ես համարեա հասուն երեխաներ ունեմ, չեմ ցանկանում, որ նրանք ականատես լինեն իրենց մօր՝ փողոցներում թափառելուն և անբարոյականութեան, ուստի և պահանջ եմ դնում, որ աղայէ Աբրահամ Նազարին ամուսնանայ կնոջս հետ, նա փրկի անբարոյացումից, հասկանո՞ւմ էք,—ասաց Մաշալեանը վճռականօրէն։

—Ձեր պահանջը իրաւացի է և խնդրին մօտեցումը նոյն իսկ յուզիչ. եթէ ուրիշի կնոջը կարելի է իբրև սիրուհի պահել, ապա այսպիսի բացայայտ մերկացումից յետոյ կարելի է և պարտաւոր է նրան իբրև կին վերցնել,—ասաց անծանոթը, ապա խօսքն ուղղելով Աբրահամին.—պ. Աբրահա՛մ, դուք կա՛մ պէտք ընդունէք այս առաջարկը, կա՛մ պէտք պատճառ դառնաք այս տիկնոջ անբարոյացման և ձեր խայտառակւելուն. ասացէք, ո՞րն էք ընտրում։

Մինչև որ Աբրահամը կը խօսէր, Մագդան հեծկլտում էր սփռոցի տակ կուչ եկած։

Վերջապէս խօսեց նաև Աբրահամը։ Նա նախ իր ձեռքով մի անգամ էլ շօշափեց ճակատի վէրքը, ապա խռպոտ ձայնով ասաց.

—Երբ որ խնդիրը էս տեսակ պտի հալլընէր[1], էլ ի՞նչ ջըհաթ[2] կար մօշտի[3]...

—Դա բնական է, մարդը վրայ է հասել այն պահուն, երբ իր կինը դաւաճանում էր... բացի այդ, դուք մի ամբողջ ըն-

1) Լուծւէր։ 2) Ջհաթ-պատճառ։ 3) Մուշտի-բռունցքի։

Շամրիկ Դարբինեան
Շաւարշ Թունեան
Իրան-Թաւրիզ

տանիքի քայքայման պատճառ էք դառնում և ուզում էք որ խնդիրը մեղրո՞վ վերջանար,—ասաց անծանօթը խստորէն։

Աբրահամը լուռ էր. նրա հպարտութիւնը թոյլ չէր տալիս նման հարկադրանքի ենթարկել. «Ես Աբրահամ Նազարին լինե՞մ, կէս միլիոն կարողութիւն ունենա՞մ և իմ ծառայիս ձեռքով եալխի թալակն ընկնե՞մ»,—խորհում էր նա, բայց միւս կողմից, իբրև գործնական ու փորձած մարդ, նա մտածեց նաև. «բայց եթէ պայմանը չընդունեմ՝ էս փէշգար ուխթէն ¹) ինձ կը խայտառակի և գործերիս էլ վնասի. ի՞նչ կայ որ, պայմանը յետոյ կարելի ա ուրանալ. էս գործում հօ՛ ուստա եմ»,—խորհեց Նազարին և դառնալով անծանօթին՝ ասաց.—

—Իմ տանս մէջ փարմայիշ ²) չեմ ընդունի. թող տիկինը գնայ միւս օթախը, յետոյ նստէք խօսենք։

—Հրամմէ՛ք, տիկին, անցէք միւս սենեակը, մենք դէմքներս շուռ ենք տալիս,—ասաց անծանօթը։

Մագդան սփռոցի մէջ փաթաթուած՝ արագ անցաւ հարևան սենեակը։

Աբրահամն հարցրեց անծանօթներին.—

—Հրամանքներդ ո՞վ էք, ի՞նչպէս ներս եկաք։

Անծանօթը պատմեց եղելութիւնը։

—Եանի դուք էթէֆաղա՞ն ³) ներս մտա՞ք,—հարցրեց նորէն։

—Այո՛, վստահ եղէք, մենք տեղեկութիւն չունէինք, և պիտի վկայենք մեր տեսածը՝ հարկ եղած պարագային։

Աբրահամը տեսաւ, որ աւելին խօսելն ու առարկելը կարող էր աւելի մեծ բարդութիւնների տեղիք տալ, ուստի և խոհեմութիւն համարեց լռել և սպասել, թէ ի՞նչ կասէր Մաշալեանը։

—Պարոննե՛ր,—դարձաւ Մաշալեանը վկաներին,—միևնոյն է, ես այլևս այդ կնոջն իմ տունս չպիտի ընդունեմ, բայց որպէսզի նա փողոցները չընկնի և պոռնկանայ, դուք յօժարութիւն պիտի կրէք տեղի վրայ մի արձանագրութիւն կազմելու այն մասին, որ այս պարոնը կնութեան է վերցնում տ. Մագդային և յանձն է առնում հոգալու նրա բոլոր պէտքերը։

Աբրահամն առարկեց, ընդդիմացաւ, բայց անօգուտ. Մաշալեանն սպառնում էր նրան աւելի՛ խայտառակել և նոյն իսկ

1) Բառացի՝ ճակտի գրած։ 2) Հրաման։ 3) Պատահմամբ։

մահուան սպառնալիք կարդաց. վերջիվերջոյ համաձայնեցին ար-ձանագրութիւն կազմել և ստորագրել, բայց «կնութեան վերցնելը» արտայայտութիւնը փոխարինել «իրեն մօտ է վերցնում ու Մագդային և յանձն է առնում հոգալու նրա բոլոր պէտքերը» արտայայտութեամբ, որովհետև վկաներն առարկեցին, որ կնութեան վերցնելուց յետոյ էլ կարող էր ապահարզան տալ, ինչպէս որ յաճախ է պատահում։

Այլևս անելիք չկար. Մաշալեանը միւս սենեակը նետեց կնոջ զգեստները, ապա վկաների հետ դուրս եկաւ։

—Պարոննե՛ր,— դարձաւ նա երկու անծանօթներին, որոնք արդէն ծանօթ էին դարձել իրենց վկայութեամբ,— շնորհակալութիւն ձեր օգնութեան համար. դրամը այլասերել է նրան, նա միջոցների մէջ խտրութիւն չի դնում իր նպատակին հասնելու համար. քայքայում է ընտանիքներ՝ նիւթական և բարոյական հողի վրա, և իր արածները թագցնելու համար դրամ է նւիրում այս ու այն ազգային հիմնարկութեան և համբաւ շահում. մեր հասարակութեան մի մասն էլ, իր էութեամբ նիւթապաշտ, շլանում է դրամով և մոռանում էականը։ Կինս իր օրիորդական կեանքում բարի համբաւ չէր ունեցել, ես նրան կնութեան վերցրի՝ խորհելով թէ նա կուղղուի, երբ մայր դառնայ. և իսկապէս երկար տարիներ ես այդ համոզման էի. բայց ահա՛ ինձ համար պարզուեց, որ նա դաւաճանում է ինձ այն պահուն, երբ համարեա՛ հասուն երեխաներ ունեմ. ես Փերմանշահ մեկնել կեղծեցի և եկայ իրեն բռնեցի դաւաճանութեան մէջ… Իմ երեխաներս այլևս մայր չունեն… բայց ես ի՞նչպէս յայտնեմ նրանց… ասացէ՛ք, պարոննե՛ր, ի՞նչպէս յայտնեմ…

Եւ Մաշալեանի ձայնը դողաց ու խեղդուեց կոկորդում. գիշերւայ խաւարի մէջ ուղեկիցները չտեսան, թէ ինչպէս երկու կաթիլ արցունքներ գլորուեցին նրա այտերն ի վար։

Նրանցից մէկն ասաց.

—Պարոն Մաշալեան, դուք տղամարդ էք, ուստի և արիութեամբ պիտի կրէք ձեզ վիճակուած դառն բաժակը. վերջերս մեր հասարակութեան մէջ ամուսնալուծութիւնները շատացել են, դուք էլ մէկն էք այդ զոհերից. ինչ արած, մեղքը ձեր կնոջն է, որ խաբուել է այդ սատանայից։ Ինչ վերաբերում է ձեր երեխաներին, ապա նրանց մեղմութեամբ հասկացրէք, որ իրենց

մայրը տգեղ ընթացք է ունեցել և դուք նրան պատժել էք։ Այժմ, երբ մեր ծանր պարտականութիւնը կատարել ենք՝ թոյլ տուէք հրաժեշտ տալու, մեր ճամբաները բաժանւում են. եթէ երբևէ նորէն մեր վկայութեան կարիքն զգացէք՝ մենք պատրաստ ենք վկայելու ինչ որ տեսանք, ցաւօք սրտի…

Նրանք միմեանց ձեռք սեղմեցին և Մաշալեանն ու Պետրոսը անյայտացան փողոցի խաւարի մէջ։

—Տեսա՞ր Աբրահամ Նազարիի վարքն ու բարքը,—ասաց ուսուցիչ Տիգրանը իր ուղեկից դերձակ Արամին,—ինչե՞ր են կատարւում այս քաղաքում. անխօս պատերից ներս, շքեղ ու գաղտնի բնակարաններում… Վա՜յ մեր ժողովրդի ապագային, եթէ այս Աբրահամներն են լինելու այդ ապագան կերտողը…

* * *

Այս դէպքից երկու օր յետոյ նրանք թերթում կարդացին, որ Աբրահամ Նազարին հազար թուման էր նւիրում իր ծնողների յիշատակին. գովում էին նրա ազգասիրական յատկութիւնները և նրան անւանում «լաւ հայ» որ գիտէ յարգել ու գնահատել ազգային աւանդութիւնները…

Այս դէպքից հազիւ վեց ամիս անց՝ Մագդան Բէյրութ փախաւ մի արաբի հետ, իսկ Աբրահամ Նազարին կարճ միջոցից յետոյ սնանկացաւ ու մեռաւ սրտի կաթւածից։

ԱՐՄԷՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ

Արմէնի գործունէութիւնը չէր սահմանափակւում միայն խմբական դասերով. նա մշակութային քարոզիչ էր, այս պատճառով յաճախ դասախօսութիւններ էր տալիս նեղ, գաղտնի շրջանակներում, քանի որ այն օրերին հասարակական հաւաքոյթները տեղի էին ունենում պետական յատուկ թոյլտւութեամբ, իսկ հայերէն լեզւով դասախօսութիւնները միանգամայն արգիլւած էին։

Ահա՛ այսպիսի պայմաններում էր, որ նրան մերթընդմերթ հրաւիրում էին դասախօսելու հայկական մշակոյթի և պատմութեան մասին ա՛յն գաղտնի հաւաքոյթներում, որ սովորաբար կազմակերպւում էր։

թէ՛ ծնողները և թէ՛ մտաւորականներն զգում էին, որ մայրենի լեզուի վրայ դրուած արգելքը ժամանակի ընթացքում ծանր անդրադարձում պիտի ունենար նոր սերնդի կեանքի վրայ. մայրենի լեզուն չսովորելով, երեխաները պիտի խորթանային հայ մշակոյթից, նրանց մտածելակերպն ու զգացումները պիտի փոխուէր և աստիճանաբար պիտի ձուլուէին ու լուծուէին մեծամասնութեան մէջ։ Ինարկէ, այս բոլորը չպիտի կատարուէր միանգամից, շեշտակիօրէն, այլ դանդաղ և աստիճանաբար. Արդ. հարց էր ծագում, թէ տասնեակ դարերի ընթացքում ինչպէս և ինչի՞ շնորհիւ էր հայ ժողովուրդը պահել ու պահպանել իր ինքնութիւնը. ինչպէս էր նա դիմացել այն ահաւոր փոթորիկներին, որոնք պայթեցին հայաշխարհի վրայ արաբների, սելջուկների, մոնղոլների, թաթարների և օսմանցիների արշաւանքների միջոցին։ Ահա՛ այս նիւթի շուրջ էր, որ Արմէնը հրաւիրուած էր դասախօսելու «Զուարթնոց» միութեան մի գաղտնի հաւաքոյթում, 193... թուի նոյեմբեր ամսին, հայ մշակոյթի օրուայ տօնակատարութեան։

Հայրենակիցնե՛ր, — ասում էր Արմէնը, — դուք ինձ հարց էք տուել՝ թէ ինչն է որ թւով փոքր հայ ժողովրդին պահել ու պահպանել է դարաւոր փոթորիկներից, արշաւանքներից ու հալածանքներից. հետեւաբար՝ ինչով և ինչպէս կարող ենք մենք դիմագրաւել նաև այս վտանգը, որ ստեղծուեց մեր խաղաղ գաղութի գլխին. փակեցին մեր ազգային դպրոցները և մեր երեխաները ցրուեցին պետական ու օտար դպրոցներ, իսկ նրանց մի մասն էլ դեռ մնում է դպրոցներից դուրս, անհաղորդ կրթութեան բարիքներին։

Այդ հարցի գաղտնիքը գտնւում է մեր լեզուի և մշակոյթի մէջ.

Հինգերորդ դարու հրաշքը՝ հայկական տառերի գիւտը՝ որ կատարուեց Ս. Մեսրոպի ձեռքով և անմիջական աջակցութեամբ Հայոց կաթողիկոս Ս. Սահակի և Հայոց թագաւոր Վռամշապուհի, ունէր իր խոր պատմական և քաղաքական պատճառները։ Այդ պատճառները պիտի փնտռել նախ՝ այն մրցակցութեան մէջ, որ գոյութիւն ունէր դարերից ի վեր երկու հզօր կայսրութիւնների՝ Պարսկաստանի և յունա-հռոմէական կայսրութեան՝ Բիւզանդիայի միջև։ Այս երկու ահաւոր ոյժերը, հետեւաբար նաև

քաղաքակրթութիւնները, բաղխում էին միմեանց՝ յատկապէս հայկական բարձրաւանդակին տիրանալու համար. մերթ մէկն էր իշխում, իր ազդեցութիւնը տարածում Հայաստանի վրայ, մերթ՝ միւսը։

Քանի դեռ Հայաստանը հեթանոսական կրօնն էր դաւանում և այնտեղ թագաւորում էին Արշակունի Պարթևները՝ Պարսկաստանից սերած, նա սերտ քաղաքական, կուլտուրական և նոյն իսկ ազգակցական կապերի մէջ էր հեթանոս Պարսկաստանի հետ. 400 տարի Արշակունիներն իշխեցին Պարսկաստանում և Հայաստանում. տիրող, պետական լեզուն պարսկերէնն էր գրագրութիւնների մէջ և հայ լեզուի մէջ շատ տարրեր մտան պարսկերէնից:

400 տարուայ գոյավիճակը միանգամայն փոխուեց 226 թուին Քր. յետոյ։ Երբ արևելքից բարձրացաւ պարսից Արտաւան Արշակունու վասալը՝ Արտաշիր Սասանեանը, յարձակուեց Արտաւանի վրայ, սպանեց նրան և գլուխը աչորեց իր ոտների տակ, դա մի վճռական դարձակէտ դարձաւ նա՛և Հայաստանի համար։ Սպանուած և անարգուած Արտաւան Արշակունու եղբայրն էր Հայաստանի թագաւոր Խոսրով Մեծը։ Այդ օրից անհաշտ թշնամութիւն սկսուեց Հայաստանի և Պարսկաստանի միջև։ Խոսրովը երկու անգամ արշաւեց Պարսկաստան՝ Սասանեան Արտաշիրի վրայ, մի անգամ նոյն իսկ նրան փախցրեց մինչև Հնդկաստանի սահմանները. բայց շուտով նա դաւադրաբար սպանուեց իր մի ազգականի՝ Անակի ձեռով, որին գաղտնի յանձնարարութեամբ ուղարկել էր Արտաշիրը։ Այս Անակի ընտանիքը սրածուեց, նրանից ազատուեց միայն մանուկ Գրիգորը, որին փախցրին Կեսարիա, այնտեղ մեծացաւ մի քրիստոնեայ ընտանիքում և վերջը այս մանուկ Գրիգորն էր, որ դարձաւ Հայաստանի Լուսաւորիչը, հայ ժողովրդին, Խոսրովի որդի Տրդատի հետ, քրիստոնեայ դարձնելով։ Այսպիսով Հայաստանը պատնէշւում էր Պարսկաստանի դիմաց նոր կրօնի պարիսպով։ Հայաստանը հակուեց դէպի բիւզանդական քաղաքակրթութիւնը, մանաւանդ որ Տրդատը յունական կրթութիւն ունէր և իր հօր վրէժը՝ Սասանեանների դէմ։

Մեսրոպ Մաշտոցն զգում էր, որ կրօնը դեռ ևս բաւական ամուր շաղախ չէր մի ազգի պաշտպանման՝ օտար քաղաքակրթութեանց յարձակումներից։ Եկեղեցիներում յունարէն և ասո-

րերեն էին կարդում ավետարանն ու Աստվածաշունչը և տեղի վրա թարգմանում. ժողովրդական զանգվածներին անմատչելի մի բան։ Դպրոցներում հայ մանուկները հունարեն և ասորերեն էին կարդում՝ մեծ դժվարությամբ։ Հայաստանը օրեցօր կորցնում էր իր քաղաքական անկախությունը, և արդեն Մեսրոպի կենդանության օրոք, 428-ին, նա կորցրեց իր թագավորությունը։ Ի՞նչ անել, ուրեմն, հայ ժողովուրդը փրկելու համար, որպեսզի նա կուլ չգնար օտար ույժերին, օտար քաղաքակրթությանց։ Մեր մատենագիրներն յաճախ յիշատակում են Բիւզանդիայի մասին, թէ որքան գրավիչ է նրա քաղաքակրթությունը, նույնքան նենգ է նրա դիվանագիտությունը։ Պե՞տք էր, ուրեմն, հոգեւոր անկախութիւն ստեղծել, քանի որ արդեն կորել էր քաղաքական անկախությունը, այս հոգեւոր անկախությունը պետք էր ստեղծել սեփական տառեր ու գրքեր յօրինելով, շաղախել այն լուսավորչական կրոնին և ստեղծել զուտ ազգային մշակոյթ։

Իր այս մտքերին նա հաղորդակից դարձրեց Սահակ կաթողիկոսին և Վռամշապուհ թագավորին, այս է պատճառը նաև, որ նա թողեց պետական քարտուղարի իր պաշտոնը, այսինքն քաղաքական ասպարեզը, քանի որ երկրի անկախությունը վերանում էր, կրոնավորի սքեմ հագավ և նետվեց ժողովրդական զանգվածների մեջ, յատկապես հեթանոսական կրոնը դեռևս պահող Գողթանի շրջանը և սկսեց ուսուցանել ու քարոզել։

Տառերի գիւտից յետոյ, հայկական միտքն ու մշակույթը զարգացնելու համար, երկու խումբ իրար յաջորդող ուսանողներ ուղարկեցին Աղէքսանդրիա, Աթէնք և Բիւզանդիոն, որոնք վերադարձան գիտական մեծ պաշարով։ Աստվածաշունչը հայերենի թարգմանեցին, այդ թարգմանությունը կոչվում է «Թագուհի թարգմանութեանց», ընտիր գրաբարով և հարազատ թարգմանությամբ։ Այդ ուսանող-աշակերտների միջից ելան հռչակավոր դէմքեր՝ Պատմահայր Մովսէս Խորենացի, Դավիթ Անյաղթ փիլիսոփայ, Եղիշէ, Կորիւն, Եզնիկ Կողբացի և շատ ուրիշներ, որոնք մեր ազգային մշակույթի հիմքը դրին և որոնք կերտեցին հայկական Ոսկեդարը։

Յունական քաղաքակրթության պատուաստ կատարեց և ստեղծեց ազգային գոյն ու երանգով, հարազատ հայկական մշակույթ։ Հետագայում, Բաղկեդոնի ժողովում հայ եկեղեցին

բաժանեաց յունականից. այսպիսով լիովին իրագործելով մեր հոգևոր անկախութիւնը, Մեսրոպ Մաշտոցի մեծ իղձը:

Այժմ, խօսք մասնաւորելով մեր՝ պարսկահայ գաղութի մասին, թոյլ տուէք թռուցիկ կերպով անդրադառնալու մեր գաղութի պատմութեան մի քանի բարձրակէտերին. նշելու համար այն քաղաքականութիւնը որ վարել են Իրանի վեհապետները հայ գաղութի նկատմամբ:

1603 թւին Իրանի վեհապետ Շահ Աբաս մեծն արշաւեց Հայաստան. արիւնահեղ կռիւներ ունեցաւ օսմանցիների հետ, որոնց լծի տակ հեծում էր հայ ժողովուրդը՝ անլուր տառապանքներ կրելով: Իր վերադարձին, երբ Շահ Աբասը խուսափեց օսմանեան ուժերի հետ բաղխելուց, մի ահաւոր բռնագաղթ կատարեց Արաքս գետի հիւսիսում ընկած հայկական գաւառներից. հարիւր հազարաւոր հայ գեղջուկներ քշեցին իրենց տներից, նոյն իսկ աշխատանքի վայրերից. և բերեցին Արաքսի ափը. ապա զինուորականները մտրակի և սրի հարւածներով ստիպեցին տարագիր զանգւածներին անցնել Արաքսը, որովհետև Օսմանեան բանակը հասնելու էր: Ահռելի տեսարան պարզւեց գետն անցնելու պահուն. հայ մարդիկ խմբերով գետն էին մտնում՝ կին, երեխաներ և ալամարդիկ՝ քշւում էին Արաքսի յորձանուտ ջրերից. նրանց մի զգալի մասը խեղդւեց. իսկ մի մասն էլ հազիւ հազ կարողացաւ իրեն նետել պարսկական ափը: Շահ Աբասը տեղահան արաւ նաև Արաքսի ափին գտնւող Հին Ջուղայի մեր հայրենակիցներին, որոնք ունևոր առևտրականներ էին, մեծ հարստութեան տէր. բարգաւաճ կեանքով ապրող: Այս միևնոյն հայերն էին, որ Շահ Աբասին. իր արշաւանքի ժամանակ. ընդունել էին չտեսնւած շուքով. ոսկու. արծաթի և թանկագին կերպասների մէջ. և այս հեռատես պետական մարդու մէջ միտք էր ծագել այդ ընդունակ և հարուստ տարրին տանել Պարսկաստան. զարգացնելու համար իր երկրի առևտուրն ու նիւթական միջոցները: Երկու տարի անց. մինչև որ հայկական տարագիր զանգւածներն հասան Սպահան, Իրանի մայրաքաղաքը: Այստեղ Շահ Աբասը որքան խիստ էր վարւել Արաքսի միւս ափում, նոյնքան գուրգուրոտ վերաբերմունք ցոյց տւեց Պարսկաստանում, նրանց հողեր տւեց և հետագայում հիմնեց Նոր Ջուղան. ուր ամփոփեց հայութիւնը. գիւղացիութեան յատկացրեց գաւառական շրջաններ՝

Փէրիան և ապա Չարմահալը։ Շահ Աբասը մեծ աջակցութիւն և հովանաւորութիւն ընձեռեց հայ առեւտրականներին, որոնք իրենց ընդունակութեան և ճարպիկութեան շնորհիւ կարճ միջոցում մեծ յաջողութիւններ ունեցան և հսկայական հարստութիւն դիզեցին։ Միաժամանակ նրանք ձեռնամուխ եղան հայկական հոգևոր մշակոյթի զարգացման. եկեղեցիներ կառուցեցին շքեղ սարքաւորումով և ընտիր զարդանկարներով. միաբանութիւն հաստատեցին և աջակից հանդիսացան հայկական մշակոյթի զարգացման։

1640 թւին էր, որ Նոր-Ջուղայի առաջնորդ Խաչատուր Վարդապետ Կեսարացին հիմնեց առաջին տպարանը Իրանում. Թէ՛ տառերը և թէ՛ տպագրական մեքենան ձեռագործ էին, առաջնորդի, իր միաբանների և ջուղայեցի երիտասարդների տքնաջան աշխատանքով և հնարագիտութեամբ սարքված։ Աւելին. Վարդապետը հիմք դրեց նաև առաջին թղթի գործարանի և տպագրեց իր «Հարանց Վարքը» ստուար հատորը։ Նա դպրոց, գրադարան և համալսարան ևս հիմնեց, և սկսեց մեծ եռանդով աշակերտներ կրթել ու զարգացնել. Նրա աշակերտներից ոմանք հետագայում մեծ դեր կատարեցին մեր մշակոյթի ասպարիզում, նոյն իսկ նրանցից մէկը՝ Յակոբ Ջուղայեցին, կաթողիկոս դարձաւ Էջմիածնում։

Շահ Աբաս Մեծը և իր յաջորդը ֆերմաններով նորանոր իրաւունքներ և արտօնութիւններ տուին հայ առեւտրականներին, խրախուսելու և հովանաւորելու համար նրանց տնտեսական գործունէութիւնը։ Ն. Ջուղայի հայ խոջաները համաշխարհային առևտրի մէջ մեծ համբաւ շահեցին։

Շահ Աբասը կրօնական նեղմտութիւն չունէր, նա յաճախ սիրում էր ներկայ գտնուել հայ եկեղեցու արարողութիւններին և բռնի կրօնափոխութեան մէկ փորձ միայն կատարեց՝ մոլեռանդների ճնշմանը զիջելով, բայց շուտով էլ մեղմացաւ։

Նրա յաջորդները կրօնական հալածանքների քաղաքականութիւն չունեցան, մինչև 1700-ական թւականները։ Այս թւերին է, որ Շահ Սուլթան Հուսէյն, մոլեռանդների ուժեղ ազդեցութեան ենթակայ, ինքն էլ մոլեռանդ, ձեռնամուխ է լինում կրօնական հողի վրայ խիստ հալածանքների, ընդդէմ քրիստոնեայ հայերի և կրակապաշտ գեբրերի։

Արքայի խորհուրդը, հայերին կրօնափոխ դարձնելու, ճարպիկութեամբ յետ մղեց Յովհաննէս Տխեղերայեցի կոչուած Ջուղայեցի վարդապետը, որ հմուտ էր աստուածաբանութեան և որի հետ խօսակցելուն կրօնական վէճի մասին քրիստոնէական հաւատքի հակառակորդները։ Բայց վերջիններս կարողացան թագաւորին ներշնչել մի շարք ճնշումների և սահմանափակումների ենթարկել քրիստոնեայ հայերին՝ կրօնական գետնի վրայ։ Թագաւորն հրաման հրատարակեց, որով պահանջում էր հայերից. 1) իրենց հագուստի օձիքը հակառակ կողմից ծալեն, 2) իրենց թիկունքին դնեն հին կապերտ. 3) ծածկեն պատառոտուն գըլխարկ, որպէսզի տարբերեն իբրև քրիստոնեայ, 4) շուկայից հեծեալ չանցնեն, 5) անձրևի ժամանակ չմտնեն վաճառատուն կամ շուկայ, որպէսզի իրենց թաց հագուստով հաւատացեալներին չփոխեն չպղծեն, 6) հրամայւում էր նաև, որ հայերը պիտի քարշեին մահմետականների դիակները, իբրև անարգ և ամօթալի գործ, 7) հրամայւում էր, որ հայերից գանձէր արքունի հաւերի կամի դրամը։ Այս բոլորից բացի, ամէն ամսամուտին մունետիկ էր շրջում և յայտարարում, թէ հայերից նրանք, որոնք կրօնափոխ կը լինեն՝ արքան նրանց շատ բարիքներ կը տայ և կը կատարի նրանց բոլոր խնդիրքները։

Ինչպէս, գտնւեցին հայեր, որոնք հրապուրւելով, մասամբ նաև վերայիշեալ ճնշումներից նեղւելով, կրօնափոխ եղան և սկսեցին նեղել իրենց նախկին հաւատակիցներին՝ ժառանգական և այլ օրինական պահանջներով։ Ի վերջոյ, տարիներ յետոյ, այս հայերը զղջացին իրենց արարքների համար ու դարձի եկան։

Այնուհետև վրա հասաւ աւղանների արշաւանքը, որ մեծ աղէտների դուռ բաց արաւ Ն. Ջուղայի և գաւառի հայութեան համար։ Բանիցս թալաններ և մահուան սպառնալիքներ տեղի ունեցան, քառասուն կոյս աղջիկներ գերւեցին, հայ գիւղութիւնը ենթարկւեց մեծ տագնապի, նաև պրովակացիայի, իբր թէ հայերը բերած լինէին աւղաններին... Բայց հայ ժողովրդի համար աւելի սարսափելի օրեր էին պահւած՝ Նադիրի տիրապետութեան ժամանակ։ Այդ իշխանութեան օրօք քանիցս Ն. Ջուղայի վանքի ոսկեղէնն ու արծաթեղէնը, նոյն իսկ ոսկեթել շուրջառները քակեցին, ձուլեցին և իբրև հարկ ու տուգանք տարեցին հարկահաններին։ Բանիցս կողոպտելուց յետոյ Ն. Ջուղայի երևելի

մեր բարգաւաճ և հարուստ գաղութը հասաւ չքաւորութեան ծայր աստիճանին. այս թւականներին էր ահա, որ Ն. Ջուղայի հայ առևտրականներից շատերն անցան Բասրա, ապա նաև Հնդկաստան, այնտեղ զարգացրին առևտուրն ու հասան հէքիաթային հարստութեան։ Այդ թւականներին էր նաև, (1736—1747), որ Ն. Ջուղայից դէպի Ռուսաստան գաղթից Լազարեանների հռչակաւոր տոհմը և այնտեղի մայրաքաղաքում ու շրջաններում առևտրի և արդիւնաբերութեան մարզում մեծ յաջողութիւններ արձանագրեց։ Նրանք էին նաև, որ հետագայում, 1815 թւին, Մոսկվայում հիմնեցին հռչակաւոր Լազարեան ճեմարանը, կրթութեան ու գիտութեան լոյսը տարածելով ամենուրեք։

Նադիր Շահի սպանութիւնից յետոյ տաս տարի շարունակ Պարսկաստանը ասպարէզ դարձաւ անիշխանութեան և ներքին արիւնահեղ կռիւների ու ապստամբութիւնների։ Վերջապէս Քեարիմ խան Զանդի օրօք երկիրը խաղաղւեց և ամբողջ քսանհինգ տարիներ Վաքիլն իշխեց տակտով և մարդկայնութեամբ։ Նա փորձեց իրական երաշխիքներ տալով փախստական հայ առևտրականներին՝ Բասրայից և Հնդկաստանից վերադարձնել Պարսկաստան, խոստանալով ամեն դիւրութիւն ընձայել նրանց՝ անաստագործելու և բարգաւաճելու. սակայն հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները խրատւած էին անցեալի աղէտներից, բացի այդ՝ Հնդկաստանում նրանք բարեկեցիկ կեանք էին ստեղծել, ուստի և չվերադարձան, միայն թէ չմոռանալով իրենց ծննդավայր Ն. Ջուղան, Հնդկաստանից նիւթական մեծ օժանդակութիւններ էին ցոյց տալիս և դպրոց ու եկեղեցիներ հիմնում ու շքեղացնում։

Բարեխնամ Քեարիմ խան Զանդի մահից յետոյ դարձեալ անիշխանութիւն և ներքին կռիւներ սկսւեցին Պարսկաստանում։ Ի վերջոյ հասան Աղա Մամադ խան Կաջարի Կովկաս արշաւելու և տիրակալութեան ահաւոր օրերը։ Բազմահազար հայեր սրածւեցին, տասնեակ հազարաւորներ գերի վարւեցին. Նրանց միջից բազմաթիւ երիտասարդների բռնի կրօնափոխ արին և ներքինացրին, բաժանելով խաների միջև ու նաև արքունի պալատները։ Այս գերեվարւած հայ երիտասարդների միջից հետագայում ելան պետական-զինւորական և մշակութային առաջնակարգ գործիչներ, որոնք Պարսկաստանի 19-րդ դարու առաջին

կեսի պատմութեան մէջ խոշոր և նշանակալից դեր կատարեցին։ Ես կը թուեմ այդ գործիչներից մի քանիսի անունները, որոնք Պարսկաստանի ամենակարկառուն պետական դէմքերն էին։ Ահա Ենիկոլոփեանների տոհմը, որ սերած է համարւում մեր Մամիկոնեան նախարարական տնից. իրենց իմաստուն ղեկավարութեան շնորհիւ նրանք ստացել էին «Ենիկոլոփ» տիտղոսը, որ վրացերէն նշանակում է «իմաստութեան տուփ»։ Այս տոհմի ամենակարկառուն ներկայացուցիչը եղաւ Մանուչէր խան Ենիկոլոփեանը, իբրև բարձր պետական-քաղաքական խորհրդական, վարչական ու դատաստանական մարզերում առաջնակարգ դէմք, միշտ Պարսկաստանի Շահի կողքին և նրան խորհրդակից, այս պատճառներով նա արժանացաւ «պետութեան սիւն» տիտղոսին։ Միւս Ենիկոլոփեաններից աչքի էին ընկնում նաև Սուլէյման խան Սըհամ-ուդ-Դովլէ, Միրզա Գուրգէն խան և Աղալար խան Ենիկոլոփեանները։

Զինուորական-վարչական մարզերում յատկապէս աչքի ընկան՝ Իւսուֆ խան Սփահսալար Արաղատանին և որդին, որ յաջորդեց հօրը, Կուրամ Հուսէյն խան Սփահդարը (սպարապետ), որոնք յաջորդաբար վարեցին նաև Արաղատանի նահանգապետի և զինուորական հրամանատարի պաշտօնները։

Մանուչէր խան Ենիկոլոփեանն ու Իւսուֆ խան Սփահդարն էին, որ Ֆաթալի Շահի մահից յետոյ նրա գահի ուզուրպատորին՝ Զիլլի Սուլթանին տապալեցին և իսկական ժառանգին՝ Աբաս Միրզային գահ նստեցրին։

Ներքինապետները Պարսկաստանում խոշոր ու ազդեցիկ դեր ունէին. հայկական ծագումով յայտնի էր ներքինապետ Աղա Եաղուբը (Յակոբ), Թուլթուլի մակդիրով։ Այլև երկու այլ ներքինիներ՝ Աղա Բահրամ և Միրզա Եաղուբ Մարգարեան. այս վերջինն էր, որ յատուկ հաշուապահական սիստեմ մտցրեց պետական հաշուակալութեան մէջ. սա էր նաև, որ նահատակուեց ռուս դեսպան և հռչակաւոր գրագէտ Գրիբոեդովի սպանութեան ժամանակ։

Շահի պալատական բժիշկը հայ էր՝ Դաւիթ խան Մկրտչեան Հաքիմբաշին։

Պալատական արարողապետը ևս հայ էր՝ Ջոհրաբ խան Կուլամ փիշխդմաթ բաշի։

Պետական հրետանիի և զինապահեստի պետերն ևս յաջորդաբար հայեր էին՝ Մովսէս Խան Թոփչիբաշի, Իւսուֆ Խան Թոփչիբաշի, Իւսուֆ Խան Ամիր Թոփխանէ, Ջաֆար Խան Ամիր Թոփխանէ։

Պետական-վարչական մարզում մեծ պաշտօնի և համբաւի էր տիրացել Խոսրով Խան Վալի Գայթմազեանը, որ Գիլանի նահանգապետ եղաւ և իր անունով չափ ու կշիռ հաստատեց։

Պետական զինագործն ևս մի հռչակաւոր հայ էր՝ որ կոչւում էր Խաչատուր Բէքուլեան զառնչանչի. սրա պատրաստած սուրը մի հարւածով մէջից կիսում էր գոմէշին։

Պարսից Շահնշահի կողմից Նապոլէոնի հետ առաջին դիւանագիտական բանակցութիւնների վարողն ևս հայ էր՝ Ժան Դաւութ կամ Դաւութ Խան Դաւիթեան, որ շքանշանների արժանացաւ երկուստեք։

Մի այլ փառահեղ դէմք էր Մելքոմ Խանը, Նոր Ջուղայեցի։ Նա քանի անգամ նախարար եղաւ և նոյն իսկ Վարչապետ Իրանի։ Նա էր որ Պարսկաստանի կողմից ներկայացուցիչ գնաց Բեռլինի վեհաժողովին, 1878 թւին, իր դիւանագիտական հմտութեան շնորհիւ Պարսկաստանին վերադարձրեց Ղոթուռի շրջանը, որ գրաւել էր Թիւրքիան։ Այնուհետև Մելքոմ Խանը նշանակւեց Պարսկաստանի դեսպան ամբողջ Եւրոպայում։ Նա էր որ աջակցեց նոր պարսկերէն լեզւի ստեղծման, իր «Կանուն» կոչւող ամսագրով և գրած թատերախաղերով, որոնք թարգմանւել են ֆրանսերէնի և գերմաներէնի. այլև հնարեց պարսկերէն ձայնաւոր գիրը։

Այսքանն էլ բաւական է՝ ցոյց տալու համար թէ հայն այս երկրում ինչպիսի խոշոր դեր է կատարել պետական-քաղաքական, զինւորական և մշակութային մարզերում։ Իսկ մեր Նոր-Ջուղայի խոջաները՝ առևտրականները, այնքան զարկ տւին Պարսկաստանի ներքին և արտաքին առևտրին, որ իրենց առևտրական բազուկը հասցրին ո՛չ միայն Ռուսաստան ու Շվեդիա, այլև բովանդակ Եւրոպայի, յատկապէս Վենետիկի հետ վիթխարի առևտուր ունեցան. աւելի՛ն, 18-րդ դարում նրանք առևտուր ծաւալեցին նոյն իսկ Ֆիլիպպինների և «Ենգի Դունիա»-ի՝ այսինքն Ամերիկայի հետ։ Նրանք էին, այդ հայ խոջաները, առևտրական կապիտալի աշխարհահռչակ ներկայացուցիչները, որ սեփական

նաւատորմ ունէին Հնդկական ովկիանոսում՝ պահնորդական նաւերով ուղեկցուած, ծովահէններից զերծ պահելու համար իրենց ապրանքները. Նրանք էին, որ ֆրանսիական պետութեան ու նաև արևելեան Հնդկաստանի առևտրական ընկերութեան հետ հաւասարակողմ առևտրական դաշինքներ կնքեցին՝ մեծ արտօնութիւններ ապահովելով։ Նրանք էին որ Ռուսաստանում առաջին անգամ մետաքսի առևտուրը ծաւալեցին և արդիւնաբերութիւն հաստատեցին, ռուս կայսրների և կայսրուհիների կողմից բարձր տիտղոսների և յիշողական հրովարտակների արժանանալով։

Ահա՛, թռուցիկ ակնարկով, այն առևտական-քաղաքական և մշակութային մեծ դերը, որ խաղացել է պարսկահայութիւնը Պարսկաստանում։

Սակայն հին շահերի օրօք ճնշումը եղել է մերթ կրօնական, մերթ նիւթական գետնի վրայ. այդ ճնշումը չի խաթարել մեր ազգային-մշակութային ինքնութիւնն ու դիմագիծը. այս օրերի քաղաքականութիւնը, սակայն, լեզուի և մշակոյթի մարզում, աւելի՛ վտանգաւոր է և վնասակար, քան անցեալինը։ Մեր ժողովուրդը այս երկրում, դարերի ընթացքում, եղել է երբեւ օրինապահ և յառաջդիմութեան ու զարգացման նպաստող տարր. Նա պարսից շահերի կողմից դիտուել է երբեւ հովանաւորեալ և իրենց խնամքի տակ առնուած տարր. մենք, դարերի ընթացքում, ունեցել ենք մեր մշակութային-հասարակական ուրոյն կեանքը, ներքին գործերի մէջ ինքնօրէն և ինքնուրոյն. սակայն այսօր նոր քաղաքականութիւնը ձեռնամուխ է լինում մեր ներքին, մշակութային ինքնուրոյնութեան. մինչև երկու տարի առաջ մենք բազմաթիւ գիւղերում և բոլոր այն քաղաքներում, ուր հայ կայ, ունէինք մեր տարրական դպրոցները. իսկ Թաւրիզում՝ Արպատալանի Հայոց Թեմական-Կենտրոնական միջնակարգ դպրոցը, Ն. Ջուղայում և Թեհրանում՝ թերի միջնակարգ դպրոցներ. այժմ փակուած են այդ բոլոր դպրոցները, միայն Համադանի, Քերմանշահի և Ռաշտի տարրական դպրոցներն են որ պահել են իրենց գոյութիւնը. այն էլ անուանապէս, հայոց լեզուի սակաւաթիւ անպաշտօն դասերով, որոնք դասաւանդւում են թաքուն. Ի՞նչ հետևանքներ պիտի ունենայ մեր մշակոյթի, յատկապէս լեզուի դէմ սկսուած այս քաղաքականութիւնը։ Խօսքիս սկզբում ես արդէն ասացի, որ մեր երեխաները, զրկե-

րով մայրենի լեզւի ուսումից, տակաւ առ տակաւ պիտի ներշընչւեն օտար լեզւով ու մշակոյթով, աստիճանաբար պիտի խորթանան ու մոռանան իրենց լեզուն, հետեւաբար նաեւ անհաղորդ պիտի մնան մեր ազգային աւանդութիւններին, պատմութեան ու մշակոյթին. արդէն այսօր իսկ նկատելի է, որ մաքուր հայերէն խօսող հայերին մատների վրայ կարելի է հաշւել. այսօր մենք դժւարանում ենք նոյն իսկ ուղղագրութիւն գիտցող սրբագրիչ գտնել մեր թերթերի համար, վաղը այդ դժւարութիւնները պիտի աճեն և մեծանան այն աստիճանի, որ հայերէն գիտցողները պիտի դառնան հազւագիւտ: Տարրական դպրոցը հիմքն է դրագիտութեան, իսկ միջնակարգը՝ ազգային մշակոյթի իւրացման և հմտութեան. այս երկու միջոցներն էլ մեզնից խլւած են այսօր. Ս. Մեսրոպից ժառանգւած հոգևոր անկախութիւնը վտանգւած է գերազանցօրէն: Մենք այս երկրի սահմանադրութեան համար չխնայեցինք մեր արիւնը, որպէսզի յառաջադիմութեան ուղիի վրայ կանգնէր նա, իսկ այդ սահմանադրութիւնը եկաւ արգիլելու քրիստոնեայ տարրին, որ նա իրաւունք չպիտի ունենար նախարարական և պետական-վարչական ու զինւորական բարձր պաշտօններ ստանձնելու. ի վերայ այսր ամենայնի՝ այժմ մեր ժողովուրդը զրկւել է նաև իր սեփական դպրոցներն ունենալու իրաւունքից: Արդ, հարց է ծագում, թէ ինչպէ՞ս պիտի դիմադրաւենք այս վտանգը. ըմբոստութեա՞մբ, բողոքո՞վ. ո՛չ երբէք: Մեր համայնքը տրամադիր չէ ըմբոստանալու, երբ մա՛նաւանդ անիմաստ է ըմբոստութիւնը. մեր համայնքը ի վիճակի չէ նոյն իսկ բողոքելու, քանի որ բողոքները մնում են ձայն բարբառոյ յանապատի և իշխանութեան աչքին կասկածելի դարձնում մեզ. այս պայմաններում բողոքն անգամ կորցնում է իր իմաստը և դառնում չարիք: Մենք ինքներս էլ, թէև հնաւանդ հասարակական-ազգային մարմիններ ունենք, սակայն, դժբախտաբար, դեռևս անկազմակերպ ենք. չունենք ազգային մի այնպիսի մարմին, մի հաստատութիւն, որ իր ձեռքում կենտրոնացնէր մեր բոլոր ցրւած ուժերն ու ճիգերը և մի յայտարարի բերելով՝ կազմակերպէր մեր լեզւի և մշակոյթի թէ՛կուզ գաղանի քարոզչութիւնն և ուսուցումը: Ուրեմն, մեր յոյսը մնում են դարձեալ մեր անհատական և խմբակցական ճիգերը, մեզնից ամեն մեկը պիտի դառնայ մեր

լեզուի ու մշակոյթի քարոզիչն և ուսուցանողը, քուրմի մոլեռանդութեամբ մենք պիտի փարենք այս գործին, պիտի խրախուսենք ու յորդորենք մեր երեխաներին և ծնողներին սիրել մեր լեզուն, մեր մշակոյթը, սովորել, ուսուցանել և պահպանել այն մինչև որ անցնեն այս օրերը։ Գիտենք որ պետութիւնների ռեժիմը յարատև ու մնայուն չէ. պատմական և հզոր ազդակների շնորհիւ փոխւում են վարչաձևերը, բռնի իշխանութիւններն յաճախ փոխարինւում են ժողովրդավար վարչաձևերով, այսպիսով փոխելով հին սարք ու կարգը. նոյնը նաև այս դէպքում կարող ենք ասել. անշուշտ կը գայ մի օր, երբ իշխանութիւնը կը փոխուի, տեղի տալով աւելի ազատամիտ և լուսամիտ տարրերի առաջ. այդ օրն է ահա, որ պիտի վերանայ ազգային փոքրամասնութիւնների վրայ դրուած արգելքը. պիտի վերաբացուեն մեր լեզուի տաճարները, հայ երեխան պիտի սովորի իր մայրենի լեզուն։ Եւ կամ գուցէ բացուեն հայրենիքի դռները։ Մինչ այդ, սակայն, մենք չպիտի նստենք ձեռնածալ, մենք օր ու գիշեր պիտի աշխատենք, տքնենք մեր երեխաների լեզուն և մեր մշակոյթի ջահերը վառ պահելու։

«Լեզուն բանալին է բոլոր շղթաների», — ասում է Միսթրալ. լեզուն բանալին է բոլոր գերութեան շղթաների, կասենք մենք, երբ տիրացած ես մայրենի լեզուիդ, այնուհետև օտար, թէկուզ հզօր մշակոյթ չի կարող քեզ կլանել. չի կարող քեզ գերել։ Եւ ընդհակառակը, եթէ չունենաս մայրենի լեզուդ, ապա կը ձուլուես և կուլ կը գնաս օտարին. կը կորչես իբրև ուրոյն ազգ և հաւաքականութիւն։

Ասում եմ ձեզ. եղէք արթուն՝ պատնէշների վրայ հսկող պահակների պէս, եղէք արթուն՝ ո՛վ դուք մշակոյթի պահակներ և աշխատեցէք ձեր զոհաբերութեամբ փրկել մեր նոր սերունդը օտարացման և ձուլման վտանգից…

Եւ այսպէս խօսում էր Արմէնը երկսեռ. փոքրաթիւ հայ մարդկանց առաջ, որոնք կլանուած լսում էին նրան որպէս մշակոյթի առաքեալի։

Երբ պիտի ցրուէին՝ մի քանի օրիորդներ և երիտասարդներ իրենց պատրաստակամութիւնն յայտնեցին ձրիաբար պարապելու հայ երեխաների հետ. «Զարթօնք» միութեան վարչու-

թիւնը նրանց անունն արձանագրեց գաղտնի դասընթացքի դասատուների ցուցակում։

ՎԵՐԱԴԱՐՁ

Մօտ երկու տարի էր անցել այն օրից, երբ Վաղրիկը մեկնել էր Մազանդարան. աշխատանքներն ընթացել էին կանոնաւոր, չնայած իր յաճախակի կրկնուող հիւանդութեան, և այժմ երկաթուղին միանգամայն աւարտած լինելով՝ հասել էր նրա Թեհրան վերադարձի ժամը։

Ահմէդն արդէն ամուսնացել էր Զուլֆայի հետ և այնքան էր յառաջադիմել իր աշխատանքների մէջ և հաւատարմութեան ու անձնուիրութեան ապացոյցներ տուել, որ Վաղրիկը որոշել էր նրան ևս Թեհրան տանել մի-երկու ամսով, իբրև վարձատրութիւն իր անքնաջան աշխատութեան, և ապա վերադարձնել իր գիւղը՝ տնտեսութեամբ զբաղուելու։

Զուլֆան ճամբի պաշար էր պատրաստել Վաղրիկի և իր ընկերների համար.

—Վազի՛ր աղա,—ասում էր երախտագէտ պարսկուհին,—այս երկու տարուայ ընթացքում դու փրկիչ եղար Ահմէդի հարազատների և ինձ համար. նրանք սովից կը կոտորուէին և ես էլ Ահմէդ չէի ունենայ՝ եթէ դու չլինէիր. Թող Ալլահը քեզ հազար բարիք տայ և հասնես քո մուրազին, երիտասարդ ես, ամուսնանաս, ընտանիք կազմես և վայելես նրա քաղցրութիւնը. Թող Ալլահը քեզ պինդ ձեռով պահի։

—Շնորհակալ եմ, Զո՛ւլֆա, ես մարդկային պարտականութիւնս եմ կատարել, Ահմէդն էլ ստացել է իր հալալ աշխատանքի վարձը։ Մինչև մի-երկու ամիս Ահմէդին յետ կուղարկեմ՝ կը լծուի հօրդ ցանկացած դաշտային աշխատանքներին։ Ես էլ ձեզ եմ երջանկութիւն մաղթում. Մնաք բարով…

—Ա՛ղա,—մէջ մտաւ Ահմէդը անհամարձակ,—ես և Զուլֆան մի խնդիր ունենք…

—Ասա՛, մի՛ քաշուիր, գիտես որ ձեզ հարազատ եմ հաշուում,—ասաց Վաղրիկը։

—Ա՛ղա, շուտով Զուլֆան զաւակի տէր կը դառնայ… մենք

մտածել ենք քեզ խնդրել, որ եթէ տղայ զաւակ լինի՝ քո անունը դնենք, իսկ եթէ աղջիկ՝ քո մօրդ անունը, եթէ թոյլ կը տաս…

Վաղրիկը սրտանց խնդաց.

—Բայց չէ՞ որ ես և մայրս… քրիստոնեայ ենք. յետոյ ուզում էք որ ձեր գիւղը ձեզ հալածի՞։

—Ո՛չ, ա՛ղա ջան, ամբողջ գիւղը քեզ սուրբ է կոչում, քեզ փրկիչ է համարում, ասես ջուրն ընկէք, կընկնեն, ընդհակառակը, բոլորն ուրախ կը լինեն և մեր երեխային էլ շատ կը սիրեն,—յարեց Ահմէդը եռանդով։

—Դէ որ այդպէս է՝ թող լինի ձեր սրտի ուզածը. ասում եմ ձեզ՝ քրիստոնեայ թէ մահմեդական, բոլորը ձգտում են մէկ Աստուծոյ, վերին ճշմարտութեան. իսկական քրիստոնեան և իսկական մահմեդականը իրարից չեն տարբերւում՝ ճշմարտութեան ձգտելով։ Ամենամեծ ճշմարտութիւնը՝ հալալ վաստակն է և խիղճը.—ասաց Վաղրիկը արտակարգ խանդով։

—Որ ասում եմ էս մարդը սուրբ է… լսեցի՞ր ինչ ասաց, Զո՛ւլֆա,—ասաց Ահմէդը ապշած.

—Մօրս անունը Հելէն է, և մի տրցակ թղթադրամ դնելով Զուլֆայի բուռը,—սա էլ իմ սանիկիս կնունքի ծախսը,—ասաց Վաղրիկը։

* *

Ինքնաշարժը սլանում էր Մազանդարանի չքնաղ ու հրապուրիչ անտառների միջով։ Ահմէդն առաջին անգամն էր Թեհրան գնում։ Վերջին խօսակցութիւնից յետոյ նրա ծառայական հաւատարմութեան միախառնւել էր նաև կրօնական երկիւղածութիւն դէպի Վաղրիկը։ Նա աչքը չէր հեռացնում իր տիրոջից և նրա ամէն մի խօսքը ունկնդրում ու կլանում էր երկիւղածութեամբ։

«Չէ՞ որ հազրաթներն էլ մարդիկ են եղել, գուցէ սա էլ նրանցից է՝ մեր մէջ յայտնւած. սա սրբեց հարիւրաւորների արցունքը, փրկեց անխուսափելի մահի ճիրաններից, առատօրէն վարձատրեց մեր աշխատանքը. ինձ տւեց իմ Զուլֆային. վաղը ժառանգ էլ կունենամ, լծկան եզներ, տնտեսութիւն… Աւելին ինչ կարող է անել մի հազրաթ. բոլորի ցաւին հասաւ, բայց ինքը…

ինքը հիւանդ էր»… Եւ արցունքներն հոսեցին Ահմեդի աչքերն ի վար:

—Ահմէ՛դ, այդպէս շատ կարօտեցի՞ր Ջուլֆային. առաջին անգա՞մն ես օտարութիւն մեկնում,—հարցրեց Վաղրիկը:

—Այո՛, աղա, առաջին անգամն է, քո՛ շնորհիւ.—ասաց Ահմէդը արցունքի բուն պատճառի մասին լռելով:

Արմենակն ու Վահրամը ուրախ զրուցում էին ինքնաշարժի խորքում.

—Ցօ՛, Վա՛հրամ, ապա խելօք մարդը էն խորովածները կը թողնի և Թեհրան կը վերադառնա՞յ:

—Ցօ՛ ա՛սա է, ա՛սա… ա՛փսոս իմ խորովածս. էն որ ճղճըղալէն քաշում էի կրակի վրից, կա՛րմիր գինին էլ կոնծում,—և Վահրամը ձեռքն անցկացրեց բեխերի վրայով ու շրթունքները չմփացրեց,—հա՛յ գիտի, մէկ էլ ե՞րբ կը ուտենք էդ խորովածը…

—Մէկ էլ՝ երազումդ, երբ Սաղանդարան գաս Վաղրիկի գործով,—ասաց Արմենակը քամահրանքով:

—Ես Վաղրիկի հոգուն մատաղ. Սաղանդարան չէ՝ ջհաննամն էլ կը գնամ նրա հետ…

—Ջհաննամում խորոված չկայ, հաստափոր ախպե՛ր, այլ կայ ծանր ու քրտնաջան աշխատանք, որին դու անընդունակ ես,—ասաց Արմենակը անողոք կերպով:

—Հա գը՛րթ. միթամ առք կրակի մօտ խորոված անելն աւելի հեշտ ա, քան քեզպէս հաշիւներ գրաելը.—և բարակ ձայնով, Արմենակին ընդօրինակելով՝—«Մո՛ւտք, ե՛լք… մայր հաշիւ. քո՛ւյր հաշիւ»… Ա՛դա, մուտքը մարդու բե՛րանն ա, ելքն էլ…

Եւ երկուսը պայթեցին ծիծաղից:

—Երնէկ ձեր տիրոջը,—ասաց Վաղրիկը յետ նայելով,—տեսնողը կը մտածի թէ Արմանեանի միլիոնը դուք էք շահել:

—Վաղրի՛կ ջան, քո հո՛գուդ մատաղ, միլիոնից աւելի ենք շահել. քեզ պէս ընկեր ունեցողը միլիոնատէրից էլ աւելին ա,—ասաց Վահրամը:

—Էդ լեզուդ որ չլինէր՝ ազատները վաղուց էդ ճպուռ աչքերդ հանած կը լինէին, բայց միենոյն է, մի համ էլ չէին առնի,—ասաց Արմենակը ծիծաղելով:

—Կը թողնես որ փլաւս պահե՞նք… ինչ ես ամեն անգամ

ատամներիս վրայ գինի ցանում,— ասաց Վահրամը աներեւոյթ վիրաւորւած։

—Քո միտքդ գինուց և խորովածից դուրս աշխարհ չունի, դու միայն այդ մասին խօսիր,— առարկեց Արմենակը։

Վաղրիկն այլեւս չէր լսում նրանց. նա խորասուզւել էր մտքերի մէջ։ Մօտ երկու տարւայ բացակայութիւնից յետոյ վերադառնում էր Թեհրան և պիտի հանդիպէր Բլարային… Երկու տարի. Ինքը միայն գիտէր, թէ ինչ տառապանքներ ապրեց այդ ժամանակամիջոցում, որ իրեն դար թւաց. Հոգեկան տառապանքների վրայ աւելացաւ նաև իր հիւանդութիւնը, յաճախակի տենդ, զառանցանք և ֆիզիքական հիւծում։ Նա նիհարել էր, մորթը դեղնին էր տալիս, բայց այդ թեթև դեղնութիւնը ասես սազում էր իրեն, երբ մանաւանդ սև գանգուրներն իջնում էին ճակատին, գոյների հմայիչ հակադրութիւն ստեղծելով։

Նրան հետաքրքրում էր, թէ ի՞նչ փոփոխութիւն է կրել Բլարան այս երկու տարում, ո՞րքան է մեծացել Դիանան, ի՞նչպէս են Արմէնն ու մայրիկը, և ի՞նչպէս պիտի ընդունեն իրեն։ Կեանքի բոլոր մարզերում նա վճռական էր, յաջողակ և նոյնիսկ յաղթական. միայն մի մարզում նա իրեն անզօր ու պարտւած էր զգում, և դա՝ Բլարայի սէրն էր։ Նա իրեն զգում էր մի անելանելի լաբիրինթոսում, Բլարան իրեն սիրէր թէ ոչ՝ արդիւնքը միևնոյնն էր, միմեանց չպիտի հասնէին. դէպի Արմէնը տածած իր ընկերական սէրը մի պատնէշ էր, որը երբէք չէր կամենայ խորտակել. իր բարոյական հասկացողութիւնները թոյլ չէին տայ. ուրե՞մ. ո՞րն էր ելքը. և նա ելք չէր գտնում։ Ուրիշ ոչ մի կին իրեն չէր գրաւում. «Հեռանալ-մոռանալ»,— երգել էր նա վերջին անգամ Թեհրանից մեկնելիս, բայց այսօր, երկու տարի յետոյ, նրա վէրքը մնում էր առաջին օրերի թարմութեամբ, ու թերևս աւելի ուժգին քան երբեւէ. միախառնելով Բլարային մի անգամ ևս տեսնելու կարօտին։ Հիւանդութիւնը նրան դարձրել էր աւելի զգայուն, աւելի դիւրազգաց, մի չնչին առիթ՝ և արցունքներն հոսում էին ակամայ…

Այժմ ինքնաշարժը սլանում էր ժայռոտ լեռների կրծքով. Նրան թւաց թէ կեանքը աւելի դաժան էր, աւելի կոպիտ՝ քան այս ժայռերը. և նա հառաչեց սրտի խորքից։

Ահմէդը ցնցւեց, սիրոջ հառաչանքը տեսնելով. «Այս մարդու դարդը չհասկացայ մինչև այժմ. միայն հիւանդութիւնը չէ, նա առաջ էլ վիշտ ունէր, որ իրեն տանջում էր, այդ նկատեցի հէնց առաջին օրերին», —խորհեց նա և իր հերթին վշտացաւ, որ անզօր էր կռահելու և ամոքելու իր սիրոջ վիշտը։

Ինքնաշարժը սուրում էր կնճռոտ խճուղիով. Վաղրիկը խորհում էր, թէ կեանքն էլ մի կնճռոտ ճամբայ է, որ պիտի բանալ համբերութեամբ և կամքի հզօր ճիգով, սակայն երբեմն նրան պիտի թողնել իր ընթացքին, թող ինքը բանայ իր ճամբան, ինչպէս հեղեղը ճամբայ է բաց անում ընդդիմութեան թոյլ կէտերից։

* * *

—Բլա՛րա, Վաղրիկս եկաւ. —կանչեց տիկին Մարիամը երջանկութիւնից դողդոջուն ձայնով, —և դռան շէմքում փաթաթւեց Վաղրիկի վզով։

Բլարան տժգունեց. մի դող անցաւ նրա մարմնով, մի պահ շփոթւեց, չիմացաւ իր անելիքը. ապա ակամայից գրկեց Դիանային, սեղմեց կրծքին և համբոյրներ դրոշմելով երեխայի դէմքին՝ «Վաղրիկ դեադեան եկաւ, Դիանա ջա՛ն, Վաղրիկ դեադեան»... ասաց տարօրինակ ձայնով և սենեակից դուրս եկաւ միջանցք։

Տիկին Մարիամն ու Վաղրիկը թեւանցուկ բարձրանում էին աստիճաններով։

«Նիհարել է, աւելի նրբացել, դէմքը թխացել է»... — անցաւ Բլարայի մտքով։

«Նիհարել է, մորթը ճերմակել, գանգուրներն աւելի սև են թւում», —մտածեց Վաղրիկը. —«նոյն նիրհուն, նոյն հմայիչ աչքերը»...

Վաղրիկն համբուրեց Բլարայի ձեռքը, ապա գիրկն առնելով Դիանային՝ համբոյրներով ծածկեց նրան, իր հիացմունքը յայտնելով։ Նրանք անցան տիկին Մարիամի սենեակը։

—Դիա՛նա, յիշո՞ւմ ես ինձ, ո՛չ. իսկ ես քեզ յիշում եմ, երբ գնացի՝ դու այսպէս մի փոքրիկ բիբիկ էիր՝ ծծակը բերնիդ. հիմա

մի լաւ, մի սիրունիկ աղջիկ ես դարձել. ես Վաղրիկ գեաղեան եմ և քեզ համար խաղալիքներ պիտի գնեմ. ի՞նչ խաղալիք ես սիրում, ասա՛, մի՛ ամաչիր։

Երեխան նայեց մօրը, որ խանդաղատանքով լի՜ խրախուսեց իրեն,

—Այո՛, ջա՛նիկս, Վաղրիկ գեաղեային պատասխանիր։

—Կամիր գլխակ… ասաց երեխան ցած ձայնով։

—Ամեն օր իրեն պիտի պատմեմ «Կարմիր գլխարկ»-ի պատմութիւնը, որ քնի. ահա՛ այդ է ուզում ասել.—ասաց Բլարան,—բայց խեղճ երեխան չգիտէ, որ մանկական այդ սովորական գրքերն անգամ այժմ մեզ մօտ չեն վաճառւում, հրատարակութիւնն արգիլած է, իսկ գրադարանը, որ թագցրած է, միայն մի օրինակ ունի՝ այն էլ գզգզած…

Մի պահ լռութիւն տիրեց. երեխայի ցանկութիւնը չօշափել էր նրանց վէրքը։

—Մի՞թէ հնարաւոր չէ գաղտնի տպագրել, -հարցրեց Վաղրիկը։

—Արմէնը չօշափել է մի քանի հայ տպարանատէրերի տրամադրութիւնը՝ դասագիրք տպագրելու առթիւ. նրանք խուսափել են, վախենում են հետապնդումից,—ասաց Բլարան։

Զանգը հնչեց. Արմէնն էր։

Արմէնն ու Վաղրիկը ողջագուրեցին մեծ կարօտով։

—Վաղրիկ ջան, վաղ չեմ տեսնում քեզ, միայն թէ մի քիչ նիհարել ես. հիւանդութիւնդ մի քանի շաբաթ գաղտնի պահեցի Բլարայից և տիկին Մարիամից, ապաքինեցիր՝ յետոյ յայտնեցի։ Այժմ ի՞նչպէս ես զգում քեզ, սիրելիս,—հարցրեց Արմէնը։

—Վատ չեմ, միայն թէ տանդը երբեմն ինձ անկողին է նետում. դատարկ բան է, կանցնի։ Դու ինձ այն ասա՝ հայերէն գիրք գաղտնի տպելն հնարաւոր չէ՞ ուրեմն, տպարանատէրերին թէկուզ կրկնակի, եռակի վճարելով.—հարցրեց Վաղրիկը։

—Ոչ, սիրելիս, փորձեր արի և չկարողացայ համոզել. մեր հայերի օրինապահութիւնը երկչոտութեան է հասնում,—ասաց Արմէնը վշտացած։

—Պա՛պա… կամիր գլխակ… գեաղեա Վաղիկը… արնի…— հեգելով և մանկական անմեղութեամբ ասաց Դիանան։

Բոլորը նայեցին միմեանց և հառաչեցին։

Բրաբան Արմէնին բացատրեց խնդրի էութիւնը։

— Ա՛խ, հոգիս, ուրեմն դո՛ւ ես եղել այս խօսակցութեան պատճառը. ամեն ինչ կարելի է ձեռք բերել, Դի՛անա ջան, բացի այդ մէկից… կը ներես, ղուա՛կս,— ասաց Արմէնը թաց աչքերով.— ապա կարծես երազի մէջ մրմնջաց.— վաղը մենք ի՞նչ երեսով պիտի նայենք մեր նոր սերնդին… «Դուք չկարողացաք մեզ համար մի գիրք անգամ տպագրել» պիտի ասի նա,— ապա դառնալով Վաղրիկին,— երեւակայիր, ասաց, «Այբբենարան»-ը կազմել եմ, բայց տպագրող չկայ…

— Այդ մասին կը խորհենք,— ասաց Վաղրիկը,— այժմ, խնդրում եմ, ինձ թոյլ տուէք լուցելու և Ահմէդի մասին կարգադրութիւն անելու։

ԴԱՐՁԵԱԼ ԹՌՉՆԱԿԻ ԲՆՈՒՄ

Երկու տարի բնութեան գրկում ապրելուց յետոյ Վաղրիկն այժմ նորէն վայելում էր տ. Մարիամի և Արմէնի ընտանեկան մթնոլորտը։ Նա նման էր այն թռչունին, որ թողնում հեռանում է իր բնից, ճախրում օդի ազատ ոլորաններում, նստում կանաչ դաշտերի և անտառների գիրկը, և սակայն իր բնի կարօտը ձգում է իրեն, նա վերադառնում է իր օթեւանը և ընդունում թռչնակների ուրախ ծլվլոցով։ Եւ անցած կեանքի մթնոլորտը համակում է նրան։

Ամեն անգամ, երբ իր հայեացքն ընկնում էր Բրաբայի վրայ, իր հին վէրքը մխում էր ցաւագինօրէն. նա կորցնում էր իր զգացմունքների վրայ իշխելու կամքը և իրեն պարտուած էր զգում սիրոյ հմայքների առաջ. ապա ակամայից, մի բնազդական մղումով, իր սիրով և գուրգուրանքով ողողում էր փոքրիկ Դիանային, ժամերով խաղում ու զբաղեցնում նրան և մի արտակարգ, մի տարօրէն հաճոյք էր զգում, երբ երեխան փաթում էր նրա պարանոցին, իր դէմքը և գանգուրները հպում նրա դէմքին. ու Վաղրիկին թւում էր, թէ իր մանկութ օրերի այն թռչնակն է, որ ճռուողում է իր բնում, մի թռչնակ՝ փխրուն կազմուածքով և անպաշտպան. այս միտքը նրա մէջ առաջացնում էր ուժեղ սէր և քնքշանք։

Դիանայի խաղալիքների հաւաքածուն օրէցօր աճում, մեծանում էր. ամեն անգամ, երբ Վաղրիկը փողոց էր ելնում, վերադարձին մի նոր խաղալիք էր բերում երեխայի համար։ Արմէնն ու Բյուրան գիտեցին մի օր, որ երեխան վատ է վարժւում. նա կը կորցնի իր հետաքրքրութիւնը դէպի խաղալիքները և կը վարժուի միշտ նորերը ունենալուն, կը դառնայ պահանջկոտ։

—Մենք մինչև այժմ ի վիճակի չեղանք բաւարարելու այս երեխայի առաջին և հիմնական ցանկութեանը՝ «Կարմիր գլխարկ» հէքիաթը. իմ խիղճս վրդովւում է ամեն անգամ, երբ տեսնում եմ Դիանային և այս մասին մտածում, այս է պատճառը, որ նրան շրջապատում եմ նորանոր խաղալիքներով՝ խղճիս ձայնը լռեցնելու համար։ Ընդունում եմ, որ մանկավարժական տեսակէտից վնասակար է շատ խաղալիքներով երեխային շրջապատելը, ուստի և այսուհետև իրեն համար քաղցրաւենիք կը բերեմ. վերջապէս մի բան պիտի բերեմ իրեն համար, միևնոյնն է, դժգոհէք կամ ոչ, —ասաց Վաղրիկը։

Եւ այդ օրից նա սկսեց շոկոլադ բերել Դիանայի համար։

Մի օր երեխան զարմանքով հարցրեց, թէ այդքան շոկոլադ ո՞րտեղից է բերում։ Եւ Վաղրիկը յօրինեց «Շոկոլադէ տընակ»-ի պատմութիւնը

«Հեռու անտառում, ուր թռչնիկներն են ծլվլում, եղնիկները վազում ու ճչում, կայ մի առուակ՝ կանաչ ափերով. առւակը կարկաչում է ու սուրում հեռուն. այդ առուակի ափին կայ մի տնակ՝ «Շոկոլադէ տնակ». նրա պատերն ու պատուհանները, առաստաղն ու գերանները, սեղանն ու աթոռակները, բոլորը, բոլորը շոկոլադից են։ Մի օր ես մօտեցայ տնակի պատուհանին ու նայեցի ներս. այնտեղ նստած էր մի պառաւ տատիկ, ակնոցները աչքերին և գուլպայ էր գործում... մեր Մարիամ տատիկի նման։

—Ի՞նչ ես ուզում, —հարցրեց տատիկը։

—Ես եկել եմ փոքրիկ Դիանայի համար շոկոլադ խնդրելու, —ասացի ես։

—Եթէ փոքրիկ Դիանան խելօք երեխայ է, լսում է իր մայրիկին, գլուխը սանրելիս լաց չի լինում, ճաշին ինչ որ տալիս են ուտում է, ժամանակին պառկում է քնելու և կապրիզներ չի անում՝ ինչո՞ւ չէ, կը տամ։

—Ո՛չ, —ասացի ես, —մեր Դիանան այդ բոլորն անում է, եթէ չանի՛ ե՛ս էլ իրեն համար շոկոլադ չեմ խնդրի։

Եւ տատիկը վեր կացաւ իր աթոռից, գուլպան դրեց սեղանի վրայ, ապա մի կտոր շոկոլադ պոկելով պատից՝ տւեց ինձ»...

Դիանան ուրախ ծափ տւեց.

—Կարմիր գլխարկի տատիկն է՞... բացականչեց նա։

Վաղրիկը շւարեց. «Այս երեխան չի մոռանում իր «կարմիր գլխարկը», պէտք է ինչ գնով էլ լինի՛ այդ գրքոյկից ձեռք բերել», —խորհեց նա, միաժամանակ ակամայ շայրոյթ զգալով դէպի նրանց, որ փորձում են զրկել երեխային մայրենի լեզւի հաճոյքից։

Նա նոյն օրը գնաց գտաւ երիտասարդ նկարիչ Նշանին և պատւիրեց «Կարմիր գլխարկ» գրքոյկը վրձինով նկարել գունաւոր նկարներով և գրել ու պատրաստել մի օրինակ։ Մի շաբաթ յետոյ Դիանան մեծ հաճոյքով ստացաւ գիրքը և այնքան սիրեց, որ գիշերը քնելիս դնում էր իր բարձի տակ։

* * *

Քանի դեռ Վաղրիկը գծի վրայ էր, Քնարային միշտ թըւում էր թէ իր տան կէսը դատարկ է. իր այս հոգեվիճակը բուժելու համար նա արտակարգ եռանդով նւիրւեց խմբական դասերին և իր Դիանային։ Տանը եղած ժամանակ նա երկար ժամերով նստում ու խօսակցում էր տիկին Մարիամի հետ, բրդէ բաճկոն էին հիւսում և զրուցում. իրենց խօսակցութեան մի զգալի մասը պտտւում էր Վաղրիկի շուրջ. Քնարան յատուկ հաճոյքով էր ունկնդրում տիկին Մարիամին և զգոյշ ու անուղղակի մղում էր նրան յաճախ Վաղրիկի մասին խօսելու։ Արմէնին նա սիրում ու գնահատում էր իբրև իր ամուսնուն, իբրև հասարակական գործչի, իբրև հանրային ցայտուն դէմքի, բայց իր զգացմունքների մի քնքոյշ մասը, միախառնւած երախտագիտութեան և ուշացած գնահատանքի զգացումների հետ, նա վերապահում էր, իր սրտի խորքում, Վաղրիկի համար։ Եւ երիտասարդ կինը տառապում էր նրա կարօտից. նա զգալի կերպով նիհարել էր և Արմէնի պնդումներն ու տրտունջները՝ որ Քնարան չի հետեւում իր առողջութեան՝ անհետեւանք էին մնում։ Բժշկի

ուած գեղերը ապարդիւն էին անցնում. քիչ կաղկղում էր, բայց իր յոյզերը շարունակ բորբոքւում էին և թագուն կրակի պէս լափում ու մաշում իրեն. իր բուն, ներքին ցաւը չէր կարող պատմել ոչ ոքի. եթէ գտնէ կարողանար սիրտը պարպել որևէ մէկի մօտ՝ կը թեթևանար, կը հանգստանար։ Նա դարձել էր արտակարգօրէն զգայուն. ելք չէր գտնում դուրս գալու իր յոյզերի բաւիղից։ Ամուսնուց թագուն՝ նա կարդում ու վերակարդում էր Վաղրիկի նամակները. անփոյթ ձեռքով գրուած, բայց անկեղծութիւն և նուիրուածութիւն արտայայտող այդ նամակները սպեղանիի դեր էին կատարում իր ներքին վէրքի նկատմամբ, բայց այն կարճ միջոց՝ և վէրքը բորբոքւում էր արիւնելու աստիճան։ Նրան թւում էր, որ եթէ Վաղրիկն իր յարկի տակ լինի՝ ինքը պիտի խաղաղուի, հանդարտուի և բուժուի։

Եւ ահա երբ Վաղրիկն եկաւ՝ Բլուրային թւաց թէ իր տունը լցւեց երգով, կեանքով ու բովանդակութեամբ։ Մի տարօրինակ աշխոյժով ու եռանդով լցւեց նա. կեանքը նրան թւաց հաճելի. իր յոյզերի մռայլ ամպերը ցրւեցին և արևի ջերմ ճառագայթները ողողեցին պայծառ օրը։

«Բլուրան նիհարել է. հիւծւել... արդեօք նիւթական հո՞գսն է նրան հիւծում. բայց չէ՞ որ ես միշտ դրամ եմ փոխադրել մայրիկին։ Պէտք է կազդուրել Բլուրային»,—խորհում էր Վաղրիկը։

Բլուրան և տիկին Մարիամը բաճկոն են հիւսում. Դիանան զբաղւած է իր խաղալիքներով և ինքն իրեն խօսում է.

—Ծիտիկը նստած է բնում... ծիտիկի մայրիկը օրօր է ասում... ծիտիկի հայրիկը թռա՛ւ, թռա՛ւ... կերակուր բերաւ ծիտիկի համար... ծիտիկ ջան, կե՛ր, կե՛ր...

Եւ Բլուրան, տիկին Մարիամն ու Վաղրիկը միմեանց են նայում ու ժպտում, նրանք հաղիւ են զսպում իրենց հրճուանքը. Դիանան տարւած է իր ծիտիկներով և չի նկատում նրանց հետաքրքրութիւնը։

—Կե՛ր, ծիտիկ ջան, թէ չէ կը պատժեմ... անկիւնը կը կանգնացնեմ... կե՛ր, որ տատիկը չոկոլադ տայ Վաղիկ դեադեային, որ բերի Դիանային... կե՛ր...

Եւ սակայն ծիտիկը յամառում է, չի ուտում։

Եւ թռչնակը ճռւողում է օրն ի բուն, հմայքներով ու ջինջ սիրով լցնում բոյնը։

Վաղրիկը հոգեպարար հաճոյք է զգում։ Նա ձեռքը սահեցնում է Դիանայի սեւ գանգուրների վրայով եւ յիշում իր մանկութ օրերի թռչնակի բոյնը. թէ ինչպէս պստիկ քարերը բռնած՝ մագլցեց դէպի վեր. տեսաւ բոյնը անպաճոյճ պարզութեամբ, ընքոյշ հիւսուածքով եւ հզօր սիրոյ հմայքով ու երգւեց այլեւս երբէ՛ք, երբէ՛ք ձեռ չտալ թռչնակի բնին։

Բայց… ո՞վ է որ իր սիրտը սեղմում է բռունցքի մէջ եւ ի՞նչ վէրք է մխում՝ սեւ վարսերի յորձանուտից եւ նիրհուն աչքերի հայեացքից…

ԶԲՕՍԱՆՔ

«Բլարան պէտք ունի կազդուրման. նրան պէտք է մաքուր օդ եւ ուժեղ սնունդ»,— խորհում էր Վաղրիկը. «միայն թէ այնպէս պիտի դասաւորել, որ Բլարան չզգայ թէ իրեն կազդուրելն է իմ նպատակս»։

— Մայրի՛կ,— դարձաւ նա մի օր առ Մարիամին,— տենդը ինձ հիւծել է. լաւ սնունդ եւ մաքուր օդ է պէտք. մտածում եմ, որ լաւագոյն միջոցը պարբերաբար զբօսանքի գնալն է. այսպէս, խմբով. կը գնանք մի օր Դերբենտ, մի օր Շիմրան եւ ուրիշ տեղեր. ի՞նչ ես կարծում, լաւ չի՞ լինի։

— Ի հարկէ, որդիս, պէտք է մտածես առողջութեանդ մասին. քաղաքի էս խեղդուած օդում միշտ մնալը վնասակար է առողջութեան։ Դիանան էլ մեզքս է գալիս, բակ չկայ որ խաղայ, այգի չկայ որ զբօսանքի գնայ, մանաւանդ որ Բլարան էլ նիհարել է, նրանց համար էլ փրկութիւն կը լինի,— ասաց տիկին Մարիամը։

— Դէ՛հ. ուրեմն վճռուած է. հէնց այս կիրակի գնում ենք Դերբենտ. ա՛ռ այս դրամը եւ ուտելիքի պատրաստութիւն տես, ես էլ ինքնաշարժ կը վարձեմ. Ահմէդը ձեզ կօգնի, իսկ դու խօսիր Բլարայի հետ,— ասաց Վաղրիկը գոհունակութեամբ։

* * *

Գարնան պայծառ առաւօտ է. տաք օդի մէջ բիւրեղներ են սարսռում։ Ալբորզ լեռը ողողուած է վաղորդեան արեւի ոսկեգոյն շողերով. վէհանիստ լեռը կուրծք ցցած՝ հպարտ ըմպում

է թարմ օդը և դիտում իր դիմաց ձգւող զմրուխտ կանաչը։ Ինքնաշարժը սլանում է Շիմրանի ծառուղիով, որ 15 կիլոմետր երկայնութիւն ունի և պարսիկներն իրաւամբ հպարտանում են, որ աշխարհի երկայն պողոտաներից մեկն է Թեհրան—Շիմրան ծառուղին։

—Ծա՛ռ... է՛լի ծառ... ինչքա՞ն ծառ,—ծափ է տալիս ու հրճւում Դիանան և յափշտակւած նայում։

Ինքնավարի կողքին նստած է Վաղրիկը, և զրուցում է Ահմեդի հետ.

—Ահմե՛դ, ինչպէս գտար Թեհրանը։

—Վաղիր աղա, էս քաղաքը լողում է հարստութեան մէջ. պալատնե՛ր, շէնքե՛ր, օթօներ, ապրանքներից տրաքող խանութներ... իսկ մեզ մօտ, գաւառը խեղդւում է անծայր թշւառութեան, կեղտի և աղքատութեան մէջ... Երանի թէ չտեսնէի, չէի իմանայ աշխարհում ինչ կայ. իսկ հիմա որ տեսնում եմ՝ դարդերս շատանում են. հարստի և աղքատի տարբերութիւնը էստեղ էր որ աւելի զգացի։ Դէ մեզ մօտ աղաների քէօշկերը մենք չենք մտնում, չենք տեսնում...

Վաղրիկը գլխով հաստատական նշան է անում։

Նա յիշում է բանաստեղծի խօսքերը՝

«Խեղճ աղքատը դառը դատի
Դատարկ նստի, է՛յ աշխարհ.
Եւ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քա՛ր աշխարհ»...

Ինքնաշարժը կտրեց, անցաւ Շիմրանի հրապարակը և սկսեց բարձրանալ Դարբանդի ծառուղին։

—Նայի՛ր,—ասաց Վաղրիկը Ահմեդին,—ձախակողմն ընկած պարիսպների յետևում Շահնշահի ամառային պալատն է. ա՛յս էլ Դարբանդի հիւրանոցն է, այս բոլորը նոր են կառուցել, Թեհրանի ունևոր հասարակութիւնը վայելում է այս բարիքները։

Ինքնաշարժը կանգ առաւ Դարբանդի կիրճի բերնին, այնտեղ, ուր վերջանում էր խճուղին։

Վաղրիկն ու Ահմեդը իջան և օգնեցին միւսներին ցած

գալու։ Այդ Ահմէդը չալակեց պաշարը, կապերտը և ինքնաեռը։ Նրանք քայլեցին ծառախիտ կիրճով. լեռնային գետակը հոսում է շառաչով՝ ժայռերին բախվելով։

Դիանան մանկական հրճվանքի մեջ է. Նա առաջին անգամն է բնության գիրկը զբօսանքի ելնում, ուստի և շատախօսում է ու անընդհատ հարցեր տալիս։

—Տե՛ս, Դիանա ջան, սա անտառ է. ծառեր, սա էլ լեռնային գետակ, որ հոսում է քարերին բախվելով,—ասում է Բլարան։

—Տատիկի տնակը ··շոկոլադէ··· ո՞րտեղ է,—հարցնում է երեխան։

—Նա գտնվում է հեռու՛, հէքիաթի անտառում, մենք այնտեղ գնալ չենք կարող...

—Վաղիկ գեղագեան կեթայ.. Դիանայի համար շոկոլադ կը բերի,—ասում է երեխան։

Նրանք ծառերի տակ մի յարմար տեղ ընտրեցին և կապերտը փռեցին։ Տիկին Մարիամը կապոցներից դուրս բերեց ուտելիքը, սփռոցն ու ափսէները. ինքնաեռը յանձնեց Ահմէդին որ պատրաստի։ Մինչդեռ տ. Մարիամն ու Բլարան նախաճաշը պատրաստելու վրայ էին, Արմէնն ու Վաղրիկը Դիանայի ձեռից բռնած՝ զբօսանքի ելան գետակի ափն ի վեր։

Դիանան թռչնակի պէս ճռվողում է. Նա կա՛մ հարցեր է տալիս և կամ անընդհատ խօսում. երեխան իր առաջին և ուժեղ տպաւորութիւններն է ստանում դրսի բնութիւնից, Նա ընկել է մի նոր աշխարհ և լեզուն բացուել է։ Նա ուզում է, որ իրեն տանեն անտառի տատիկի մօտ, «Շոկոլադէ տնակ»ը, որտեղից Վաղրիկը շոկոլադ է բերում.

—Դիանա ջան, նա շատ հեռու է, դու չես կարող քայլել, կը յոգնես, այնտեղ միայն Վաղրիկ գեաղեան կարող է գնալ,—ասում է Արմէնը։

Վաղրիկը մեծ հաճոյք է զգում երեխայի խօսքերից, մանաւանդ երբ Դիանան իր մասին երրորդ դէմքով է խօսում, որ յատուկ է երեխաներին։ Բլարան ու Արմէնը, իբրև մտաւորական ծնողներ, մաքուր հայերէնով էին խօսում Դիանայի հետ, ուստի և երեխայի լեզուն էլ մաքուր էր, միայն թէ մանկական դարձուածքներով և արտաբերութեամբ։

—Հազարաւոր այսպիսի երեխաներ այժմ զուրկ են «Այբբենարան»-ից։ Հին գրքերը մաշուել են, նորերը չկան. մեր տպա-

թանատէրերն էլ երկչոտ են, յանձն չեն առնում փաղանի տպագրութիւնը,—տրտնջում էր Արմէնը։

—Լսի՛ր,—ասաց Վաղրիկը մեկեն.—հնարաւոր չէ՞ արդեօք այդ այբբենարանը նկարել տալ և ապա կլիշէն, հանելով տպագրել. կարծեմ կլիշէների տպագրութիւնն արգիլուած չէ. ես ունեմ և՛ նկարիչ և՛ կլիշէօր ծանօթներ. կարծում եմ կարող եմ երկուսին էլ համոզել…

Արմէնը մտածկոտ կանգ առաւ մի պահ.

—Ինչպէս որ կլիշէների տպագրութիւնն արգիլուած չէ… ի՞նչպէս չէի անդրադարձել մինչև այժմ, այդ ի՞նչ գեղեցիկ գաղափար յղացար, Վաղրիկ ջան։

—Վաղն և եթ գործի կանցնենք. ես կը խօսեմ իմ ծանօթ կլիշէօր Ե. Փափազեանի հետ, ապա նրա համաձայնութիւնն առնելուց յետոյ մեզ մօտ կը կանչեմ երիտասարդ նկարիչ Նշանին, կը յանձնարարենք գրքի էջերը մէկ-մէկ գրել և համապատասխան նկարներով զարդարել,—յարեց Վաղրիկը։

Այս որոշումով՝ նրանք յետ դարձան ընկերների մօտ՝ առոյգ տրամադրութեամբ։

Տ. Մարիամն ու Բլրան պատրաստել էին նախաճաշի սեղանը. ճերմակ սփռոցը փռուած էր կալերաի կենտրոնում, նրա վրայ շարուած էին ափսէները. ապա նախաճաշի ուտելիքներ՝ ձու, մեղր ու կարագ. պանիր և հայկական գաթա. ռուսական ճերմակ ինքնաեռը քլթքլթում էր, տիկին Մարիամը թէյ էր լցնում և տալիս իրեն մօտ նստած Բլրային, որ շարում էր միւսների առաջ։ Բոլորը նստել էին սփռոցի շուրջ՝ ծալապատիկ. ըստ պարսկահայերի սովորութեան։ Անմէգն էլ ծնկների վրայ չոքած՝ տեղ էր բռնել կալերաի ծայրին։

Բնութեան ծոցում՝ նրանք կերան ու խմեցին ախորժանօք։ Բոլորին հաճոյք պատճառեց մանաւանդ Դիանայի ախորժակը, որ բացուել էր. տանը երեխային հազիւ էին կարողանում ուտեցնել, իսկ այստեղ նա ուտում էր ինքնակամ։

—Անմէ՛գ,—դարձաւ Արմէնը ծառային,—ձեր Մազանդարանի բնութիւնն անշուշտ աւելի գեղեցիկ է, քան մերը։

—Այո,—ասաց Անմէգը.—ինչքան Մազանդարանը գեղեցիկ բնութիւն ունի. բայց մենք այդ գեղեցկութիւնը չենք վայելում,

քանի որ ճանճատենդ կայ, և, բացի այդ, այնքան թշուառ կեանք ունենք, որ բնութեան գեղեցկութիւնը մեր աչքին չի երեւում։

—Իրա՞ւ,—դարձաւ Արմէնը Վազրիկին,—այդքան թշուա՞ռ է Մազանդարանի ժողովուրդը։

—Անհաւատ շահագործում և կեղեքում գոյութիւն ունի այդ շրջանում կալուածատէրերի, նրանց գործակալների և պաշտօնէութեան կողմից. գիւղացիութիւնը ծայր աղքատութեան մէջ է։ Վերջերս կառավարութիւնն սկսել է շինարարական ձեռնարկներ անել. նախ՝ անդրիրանեան երկաթուղին, որ մի հսկայ ձեռնարկ է և պիտի միացնի Իրանի հիւսիս-արեւելքը հարաւային շրջաններին, մինչև Պարսից ծոց. ապա կառուցում են մի քանի շատ շքեղ ու հոյակապ հիւրանոցներ Կասպից ծովի ափին. ճամբորդների, բայց յատկապէս ամառը ծովափ մեկնող քաղաքացի հասարակութեան համար. այդ հոյակապ կառուցումներից ոչ հեռու՝ գիւղացիութիւնն ու աշխատաւոր ժողովուրդը ապրում է ծայրայեղ թշուառութեան մէջ,—ասաց Վազրիկը։

—Մեր հայ գիւղացիութիւնը աւելի բարւոք վիճակ չունի. Թերևս մէկ աստիճան աւելի լաւ է նրա վիճակը՝ Մազանդարանի գիւղացիութեան հետ համեմատած. ես շրջել եմ Արաքի հայկական գիւղաշրջանները՝ Բուրվառի, Քեազազի, Քեամարայի և Ջափլաղի. այնտեղ մեր գիւղացիութիւնն ապրում է տիպիկ աւատատիրական պայմաններում, իր աշխատանքի արդիւնքի մի զգալի մասը տալիս է կալուածատիրոջը և նրա համհարզներին. այնուհետև մի շարք ուղղակի և անուղղակի տուրքեր. չունի սեփական հող, չունի սեփական տուն, ապրում է կեղտի և թշուառութեան մէջ. բոլոր գիւղերում մենք դպրոցներ չունենք, 53 հայկական գիւղերից, ուր ապրում են շուրջ քառասուն հազար հայեր, ընդամենը այժմ, մեր ջանքերով, հազիւ 30 գիւղերում կէս-տարրական դպրոցներ ունենք, այն էլ ի՜նչ դպրոցներ, հասարակ գրագիտութիւն ուսուցանող՝ կիսագրագէտ ուսուցիչների միջոցով։ Բարեբախտութիւն է որ կառավարութիւնն իր ձեռքը չի հասցրել այդ դպրոցներին, թէ չէ համատարած թշուառութիւնը կը լրանար համատարած խաւարով։ Երևում է որ Իրանի ներկայ ռէժիմը ձգտում է արդիւնաբերական կեանք ստեղծել երկրում, ոյժ է տալիս գործարանների հաստատման և գործունէութեան, դա մի դրական քայլ է երկիրը օժտելու սեփական

արդիւնաբերութեամբ, սակայն չպէտք է աչքաթող արւէր գիւղական տնտեսութիւնը, որ գտնւում է պրիմիտիւ. նախնական վիճակում։ Այս երկրի ազգաբնակութեան խոշորագոյն տոկոսը գիւղացիութիւնն է, արդիւնաբերութեան հիմնական աղբիւրն էլ գիւղատնտեսութիւնն է. արդիւնաբերական հումույթ ընձեռելու իմաստով, հետեւաբար նա նոյնքան և աւելի՛ ուշադրութեան առարկայ պիտի դառնար։ Այս երկրում իշխում են փաստօրէն մի քանի հարիւր խոշոր կալւածատէր ազնւական ընտանիքներ, որոնցից ամէն մէկը մինչև 500 և աւելի կամ նւազ թւով գիւղեր ունի. հետեւաբար նրանք ազդեցիկ են և արքայական կառավարութիւնը դեռես իր մէջ այնքան ույժ չի զգում նրանց իրաւունքները զգալիօրէն կրճատելու, ա՛յս է պատճառը որ երեսի վրայ է մնում տնտեսութեան հիմնական ճիւղը՝ գիւղատնտեսութիւնը։ Միւս կողմից՝ գործարանային նորաստեղծ կեանքը աճեցնում է արդիւնաբերական գործաւորների թիւը. գիւղական խիստ չքաւոր տարրեր դիմում են նոր կառուցւող ճամբաների-երկաթուղու վրայ աշխատելու և կամ քաղաքների գործարաններում ծախելու իրեն բազուկների ույժը. նոր դասակարգ է առաջանում այս երկրում՝ դրամատէր-գործարանատէր մէկ կողմից, և արդիւնաբերական գործաւորութիւն՝ միւս կողմից։ Մի օր, հետագայում, այս հասարակական նոր ույժերի գրոհի տակ պիտի պարտւի խոշոր կալւածատէր ազնւականութիւնը։ Եթէ կառավարութիւնը և կամ խոշոր կալւածատէրերը արթէզեան ջրհորներ փորելու լինեն այս կիսաանապատ երկրում՝ Իրանը դրախտի կը վերածւի. մանաւանդ որ երկիրը ամէն հարստութիւն ունի. ո՛չ միայն հող, այլև անհուն ու անսպառ հանքեր։ Իրանը 1,640,000 քառակուսի կիլօմետր տարածութիւն ունի և ընդամէնը՝ 15 միլիոն բնակիչ... Այս երկիրը, բանական (ռացիոնէլ) հիմքերի վրայ դրւած տնտեսութեամբ. կարող է հարիւր միլիոն մարդ կերակրել և ապրեցնել,—եզրափակեց Արմէնը։

Եւ մինչդեռ Արմէնը խօսում էր. Վաղրիկը աչքի տակով դիտում էր Դիանային ու Քլարային. նա գոհունակութեամբ տեսաւ, որ Քլարայի տրամադրութիւնը բարձր էր զբօսանքի սկսելուց ի վեր և այժմ էլ ախորժանօք լսում էր. իսկ Դիանան կերաւ իր նախաճաշը առանց սովորական ստիպումների։ Տիկին Մարիամը նայում էր նրանց ժպտուն դէմքով և խրախուսում։

Ահմէդը, լսելով Արմէնին, զարմացած մտածում էր, թէ այս մարդիկ, քաղաքում նստած՝ ինչպէս է որ հասկանում են գիւղացիութեան ծանր վիճակը. նա մի քանի բաներ չհասկացաւ, երբ Արմէնը խօսում էր կառավարութեան քաղաքականութեան մասին, բայց ճնշւում էր բացատրութիւն խնդրելու։ Ահմէդը, սակայն, հոգու խորքում թերահաւատ էր գիւղացիութեան վիճակի բարելաւման հարցում. «Ամեն մի գիւղացի ինձ նման ո՞րտեղից գտնի մի Վաղէր աղա, որ իր վիճակը բարելաւի. սա բախտ էր և ես մէկն եմ այդ հազւագիւտ բախտաւորներից», — խորհում էր նա։

Լեռնային գետակը հոսում էր քարերին բախւելով, նրանց թիկունքին ճերմակ փրփուրի ուռնոց ձգելով. Վաղրիկը մերթ նայում էր այդ հեւիհեւ, վազող ջրերին և խորհում, որ իր կեանքն էլ այս ջրերի պէս բախւում է ժայռերին և փրփուրն այն յոյզերն են, որ փոթորկում են իր ներաշխարհը. «Բայց աշխարհում ամէն ինչ մի ելք ունի, մի հանգրւան, բացի իմ վշտից. գետակը կը հոսի ժայռէ ժայռ, կը հասնի այգիներին ու արտերին և նրա ջրերը կը յամենան, կը ծծւեն մայր հողի մէջ, բոյսերը կըմպեն կենսաբեր ջուրը և կաճեն ու պտուղներ կը տան. իսկ իմ յոյզե՞րս... այս հեղեղը որ տարիներից ի վեր բախւում է հոգուս ափերին, եռում է, փրփրում և տանջում ինձ, այս յոյզերս ի՞նչ ելք, ի՞նչ հանգրւան ունեն. աւա՜ղ, ոչ մի ելք, ո՛չ մի յուսոյ խարիսխ», — խորհում էր Վաղրիկը և յուսահատութեան սև քօղը պատում էր նրա հոգին։ Նա զգում ու հասկանում էր, որ ինքը գերին է որոշ բարոյական հասկացողութիւնների և այդ բարոյական օրէնքները խախտելու՝ անզօր. եթէ նոյն իսկ ցանկանայ խախտել՝ դարձեալ չի կարող. այսպէս է իր դաստիարակութիւնը. և նա զարմացաւ, որ ակամայ ատելութիւն զգաց և՛ դէպի դարաւոր բարոյական օրէնքները և՛ նրանց գործադրողները։

Յանկարծ նրա հայեացքը հանդիպեց Բլաբայի հայեացքին. ծառերի և կանաչ տերևների ֆոնի վրայ Բլաբան արտակարգօրէն հմայիչ երևաց. սև, ալիքաձև վարսերն իջնում էին քունքերն ի վար՝ դէմքի ճերմակ մորթի հետ կախարդիչ հակադրութիւն կազմելով, նիրհուն աչքերի ու սև, սլացիկ յօնքերի ներդաշնակ համադրութեամբ. արևի մի շող. ճիւղերի

արանքից թափանցելով, ընկել էր Քրոյայի գլխին՝ ճառագող լոյսի պատրանքը տալով. ասես մի յաւերժահարս էր, և, այրող աչքերով, գլխին՝ մի աստղ... Վաղրիկը կարկամեց հիացումից. ապա մի անգամ ևս իրեն անզօր ու պարտուած զգաց այդ կախարդանքից։

Արմէնը խզեց լռութիւնը.

—Որքան մտածում եմ՝ մեր ժողովրդի վիճակը աւելի նախանձելի չէ քան պարսիկ գիւղացիութեանը։ Փեօդալական դարաւոր կարգերում ապրելով, մինչ ենթակայ կալուածատէրերի և նրանց գործակալների շահագործման ու բռնութիւններին, մեր ժողովուրդը ևս շատ բան է կորցրել իր բարոյական նկարագրից, իր ֆիզիքականից և նիւթականից։ Մեր գիւղերում համատարած կեղտն ու թշուառութիւնն են տիրում. մանք, նրանց մէջ, նոյն իսկ մոլութիւնների են անձնատուր. Արաքի շրջանի հայկական գիւղերում ինձ նոյն իսկ քահանայ մատնանշեցին, որ ափիոն է ծխում... գիւղացիներն արդէն սովորութիւն են դարձրել գնացողներ կրելու, իրենց ունեցածքը թաքցնելու, աղքատ երևալու, որպէսզի կալուածատէրը մեծ հարկ ու տուրք չը գանձի... Դարերից ի վեր մարդիկ սովորած են սուտ խօսել, կեղծել, թաքցնել, որպէսզի գէթ մի չափով մեղմեն կեղեքումը։ Գիւղացիները խարխափում են միջնադարեան ագիտութեան մէջ. ամեն տարի հիւանդութիւնները բազմաթիւ զոհեր են խլում. երեխաներն առանց բացառութեան տառապում են աչքացաւով, ա՛յս է պատճառը որ հարաւում շատ կը հանդիպէք կոյրերի. մարդիկ, այս ծանր պայմաններում ապրելով, կորցրել են իրենց ֆիզիքական առողջութիւնն ու բարեձևութիւնը, դարձել արտաքինով տխեղծ ու այլանդակ։ Եթէ այդ շրջանների մեր թւով փոքր դպրոցներն էլ փակեն՝ տգիտութեան ու թշուառութեան պատկերը կատարեալ կը լինի։ Աւելի մխիթարակա՞ն է արդեօք մեր միւս գաղութների վիճակը. միջին արևելքի մեր գաղութների համար դեռևս մի մխիթարութիւն կայ. որ շրջապատի ժողովուրդները մեզնից կուլտուրապէս բարձր չեն. հետևաբար մենք դիւրութեամբ, գոնէ մինչև այժմ, պահել ենք մեր ազգային ինքնութիւնը. սակայն այդ ժողովուրդներն էլ արթնանում են և բռնում կուլտուրական զարգացման ուղին, ուժ տալիս իրենց լեզուին, իրենց քաղաքակրթական ար-

ժէքներին․ իրենց պետականութեան, և վաղուայ օրը մեզ համար աւելի՛ անախորժ և դժուարին անակնկալներ ունի պահած։ Իսկ Եւրոպայի և Ամերիկայի մեր գաղութները․ այդ գաղութները կազմւեցին մեր Թիւրքահայաստանի գաւառացի ժողովրդից։ Նրանք ծանօթ չէին ֆրանսերէն և անգլիերէն լեզուներին, բացի այդ՝ մեծ մասամբ անգրագէտ կամ կիսագրագէտ լինելով՝ կարողացան պահել իրենց ազգայնութիւնը, չձուլւեցին և չէին կարող ձուլւել․ բայց ահա՛ նրանց զաւակները, կրթութիւն ստանալու համար, սկսեցին յաճախել տեղական դպրոցները․ այդ սերունդը վարժւեց օտար լեզուներին և ստացաւ կուլտուրապէս բարձր ժողովուրդների կրթութիւն․ այս սերունդն արդէն մի խոշոր քայլ հեռացաւ իր ծնողների և՛ հոգեբանութիւնից, և՛ ազգայնութիւնից․ այս միևնոյն նոր սերնդի երեխաներն արդէն իրենց ծնողներից չպիտի լսէին մայրենի լեզուն, այլ՝ օտար մի լեզու, որ իրենց ականջին հնչում էր մայրենի լեզւի նման․ ա՛յս սերունդն արդէն աւելի՛ հեռացաւ իր ազգայնութիւնից․ ներկայիս ամերիկահայ և ֆրանսահայ նոր սերունդը հայերէն չի խօսում, չի՛ կարդում և ծանօթ չէ իր ժողովրդի պատմութեանը․ ուրեմն, կուլտուրապէս հզօր ազգերին յաջողւում է խլել մեզնից մեր նոր սերունդը և այդպիսով կարել մեր ազգայնութեան ճիւղերը․ վաղը, հին սերունդը, որ հիմքը, արմատն է կազմում մեր ազգայնութեան, պիտի մեռնի տարիքի բերումով և մենք գաղութներում պիտի ունենանք մի նոր, բայց հայութիւնից հեռացած այլակերպ սերունդ։ Քանի որ մեր նոր սերունդը հայկական դպրոցներում չի սովորի՝ ինչպէս՛ քարոզչութիւն էլ որ մղելու լինենք, որքան էլ դառնանք թէ հա՛յ մնացէք, միևնոյն է, ջուրն իր ճամբով կերթայ և մեր ձեռք առած այլ միջոցները կը լինեն միայն և մի՛միայն կիսամիջոցներ։ Եւրոպայի և մա՛նաւանդ Ամերիկայի մեր գաղութների ճակատին գրւած է Լեհաստանի երբեմնի հայ գաղութի ճակատագիրը։ Ես մեծ վտանգ եմ տեսնում մեր գաղութահայութեան ապագայի մէջ… Ո՞ւր էր թէ բացւէին երկրի դռները և այդ բազմութիւնները կենտրոնանային այնտեղ․ սա՛ կը լինէր միակ փըրկութիւնը…

Եւ այս վերջին խօսքերը Արմէնն արտասանեց մի տեսակ երազուն և մարգարէական շնչով։

Արմէնի այս վերջին բացականչութիւնից Վաչրիկն սթափ-ւեց իր երազից և մեքենաբար կրկնեց.

—Այո, ո՜ւր էր թէ բացւէին դռները և բոլորս կենտրոնա-նայինք այնտեղ... «Ո՛վ տայր ինձ ծուխ ծխանի և զառաւօտն նաւասարդի, մեք փող հարէաք և ի թմբկի հարկանէաք»...

—Ի՞նչ ես կարծում, Վա՛չրիկ, կը գա՞յ այդ օրը.—հար-ցրեց Արմէնը։

—Խորապէս համոզուած եմ, որ կը գայ։ Վերջապէս մի օր հայութեան մէջ համերաշխութիւնը պիտի յաղթանակի և այն ժամանակ մենք բոլորս կը լծւենք շինարար և կուլտուրական աշխատանքի՝ հայրենական կանաչ դաշտերում...

Ու յանկարծ, վերջին բառերի արտաբերումով, նրան թը-ւաց թէ խօսում է մի՛միայն ուրիշների երջանկութեան մասին. իր երևակայութեան հորիզոնում նա տեսաւ վերադարձողների երկար կարաւաններ, որոնք հեռանում էին իրենից, և իրեն պա-րուրել էր մի թանձր խաւարի քօղ... նա ակամայ սարսուռ զգաց և աշխատեց ջնջել իր մտքից այդ պատկերը։

Մինչդեռ Արմէնն ու Վաչրիկը զրուցում էին, տիկին Մա-րիամն ու Ահմէդը ճաշի պատրաստութիւն էին տեսնում։ Նրանք արդէն օջախի կրակի վրայ էին դրել բրնձի կաթսան, պարսկական չլով եփելու համար, այժմ էլ ծեծած խորովածի միսն էին քաշում շամփուրներին՝ ձեռքի ափով սղմելով։ Բրայան զբաղեցնում էր Դիանային, պատասխանելով նրա անվերջ հարցումներին.

—Միջազգային քաղաքական մթնոլորտը օր օրին մռայլ-ւում է. սև ամպեր են կուտակւում Եւրոպայի երկնակամարում, նրանք մօտալուտ ահեղ փոթորկի՝ երկրորդ համաշխարհային պատերազմի չարագուշակ նախանշաններ են ցոյց տալիս։ Դրա-մատիրական հասարակակարգը հասել է իր հակասութիւնների ծայրագոյն կէտին. Գերմանիան առաջին պատերազմից յետոյ զրկւելով իր գաղութներից, ուռճացել է տնտեսապէս և շուկա-ների կարիք ունի, մէկ կողմից իր ապրանքներն սպառելու, միւս կողմից արդիւնաբերական հումոյթ ձեռք բերելու համար, ուստի և գաղութներ է պահանջում. այս պահանջը հրամայա-կան է դառնում նաև իր ազգաբնակութեան աճումով։ Անգլիան և Ֆրանսիան մերժում են, թէև իրենց փորձով գիտեն, որ դրա-

մատրական պետութիւնն ապրել ու շնչել չի կարող առանց գաղութների. և ահա՛, բաղխումը դառնում է անխուսափելի. կա՛մ այն է՝ Գերմանիան պիտի սնանկանայ, կա՛մ՝ նուաճումներ անի. իսկ սոյն նշանակում է պատերազմ։ Ամերիկան և Խ. Միութիւնն առայժմ դիտողի դերումն են, բայց բաղխման ժամանակ նրանք էլ պիտի ստիպուեն դիրք ճշտելու։ Միջազգային այս թոհ ու բոհի մէջ, ուր հսկաներ պիտի բաղխուեն, մենք նման ենք այն յարդի շիւղին, որ ընկած է փոթորկայոյզ ծովում։ Առաջին համաշխարհային պատերազմին մենք կորցրինք համարեա՛ մէկ միլիոն հայութիւն. ի՞նչ պիտի բերի մեզ այս երկրորդ փոթորիկը, որ է՛լ աւելի ահաւոր է լինելու, բայց ինչ էլ որ լինի, անձնապէս համոզուած եմ, որ այս երկրում մեր վիճակը պիտի փոխուի և պիտի փոխուի դէպի լաւը. պատերազմի ժամանակ կառավարութիւնների քաղաքականութիւնը մեղմանում է իրենց երկրի ներսում, մա՛նաւանդ նրանք փափկանկատ են դառնում դէպի ազգային փոքրամասնութիւնները. ա՛յս է որ ինձ յոյսեր է ներշնչում. Մեր ժողովրդական առածն ասում է. «Մի առուով որ ջուր է եկել՝ է՛լի կը գայ». այժմ մեր ցամաքած առուն մի օր պիտի առնի՛ այդ ջուրը.—և Արմէնը կարօտով հառաչեց.—Անցեալ օրը խօսում էի մեր Թերթի խմբագիր Ամրունիի հետ. նա գանգատւում էր, որ խիստ, նոյն իսկ անհեթեթութեան հասնող գրաքննութիւնը այնպէս է նեղում իրենց, որ վախով են գրում, ամեն մի բառի վրայ մտածում են, որ չլինի՞ թէ այլ մեկնութիւն տրուի, և գրում են ամենասովորական նիւթերի մասին, յաճախ եզոպոսեան լեզու գործածելով։ Թերթի բոլոր յօդուածները բառ առ բառ Թարգմանում են, տետրակի մէջ արձանագրում, ապա ուղարկում գրաքննիչին. սա յօդուածները պահում է շաբաթներով, նոյն իսկ ամիսներով և երբեմն էլ որոշ յօդուածներ յետ չի ուղարկում։ Մի բանաստեղծութեան մէջ եղել է «կապոյտ երկինք» արտայայտութիւնը, գրաքննիչն այդ «կապոյտ» բառը ջնջել, վրան գրել էր «սպիտակ»... «Իհարկէ այդ բանաստեղծութիւնն այլևս չէր կարելի տպել. բայց մինչև օրս չհասկացայ, թէ ի՞նչ մի վըտանգ կարող էր պարունակել իր մէջ «կապոյտ» բառը», —աւելացրեց խմբագիրը. Ահա՛ թէ ինչ պայմաններում է գտնւում մեր միակ արտայայտութիւնը՝ մամուլը. և ի՞նչ ողբերգութիւն

ենք ապրում մենք։ Եթէ վաղը մենք լրագրողներ էլ չունենանք՝ չպէտի զարմանալ։ Միայն համաշխարհային պատերազմը կարող է այս սարք ու կարգը որոշ փոփոխութեան ենթարկել,— եզրակացրեց Արմէնը։

Վաղրիկը համամիտ էր նրան, քանի որ ինքն էլ ականատես էր բոլոր երեւոյթներին, որոնց եզրակացութիւնը, ամեն մի դատող քաղաքացու համար, միեւնոյնը պէտի լինէր։ Նա մըտքում որոշեց յաջորդ օրւանից ամբողջ եռանդով նուիրել «Այբբենարան»-ի հրատարակութեան։

Ճաշն արդէն պատրաստ էր. պարսկական չլով-քեաբաբը իր իւրայատուկ բոյրով ու համով գրգռեց նրանց ախորժակը, որ աւելի սրւել էր բնութեան գրկում, մաքուր օդի մէջ։

Ճաշից յետոյ, Ահմէդին թողնելով իրերի մօտ, նրանք խմբով զբօսանքի ելան դէպի «Փասխալէ» սանոզ ձորը. տիկին Մարիամն էլ նրանց հետ էր. «Պետիկիս մահից յետոյ, քոռանա՛մ ես, էս առաջին անգամն է որ զբօսանքի եմ ելնում», — ասաց նա աչքերը լցնելով։

— Մայրի՛կ ջան, — ասաց Վաղրիկը զգացւելով, — մենք բոլորս քո զաւակներդ ենք. հիմա դու մեզնով պէտի մխիթարւես։

— Իհարկէ, ո՛րդիս. Աստուած էնքան գթած է, որ ձեզ ուղարկել է ինձ մխիթարելու. ձեզնից զաւակս կարօտն առնելու։ Եւ այս ասելով՝ նա կռացաւ և համբուրեց Դիանային, որ նրա և Բլարայի ձեռից բռնած՝ քայլում էր մանրիկ քայլերով։

Դարբանդի ձորը վայրի բնութեան բոլոր հմայքներն ունի. օձագալար գետակը վշշում է ու փրփուր ցայտում իր ափերի, իր ճամբան արգելող ժայռերի վրայ. ծառերը բուսել են նրա ափերին մերթ խիտ խմբերով, մերթ ցաք ու ցրիւ. երկու կողմից բարձրացող ժայռոտ լեռները ծածկւած են կանաչ, դեղին և ժանգի գոյն մամուռներով. ձորը լցւած է գետակի վշշոցով և ժայռակոյտերով։

Զբօսանքից յետոյ նրանք թէյեցին և երեկոյեան դէմ ճամբայ ընկան քաղաք. Դիանան քնեց ինքնաշարժի մէջ, օրւայ տպաւորութիւններն ու զբօսանքը յոգնեցրել էին նրան։ Բոլորը գոհ էին զբօսանքից. մանաւանդ Բլարան, որ կարծես կազդուրել էր մի օրւայ մէջ։

—Սրանից յետոյ ամէն կիրակի մեր զբօսանքի օրն է,—ասաց Վաղրիկը առիթից օգտւելով,—բժիշկն ինձ խորհուրդ է տւել լաւ սնւել և թարմ օդի մէջ զբօսանքի լինել, մանաւանդ որ Ահմեդն էլ այստեղ է և կարող ենք օգտւել նրա ծառայութիւնից։

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Ինչպէս որ Վաղրիկը վճռել էր զբօսանքի պահուն՝ յաջորդ օրն և եթ գործի անցաւ. նա նախ հանդիպեց կլիշէներ պատրաստող Ե. Փափազեանին, որ իր ծանօթն էր, և մանրմաբար բացատրեց խնդրի էութիւնը.

—Ձեր ցանկութիւնը, պ. Վաղրիկ, պատրաստ եմ սիրով կատարելու, մանաւանդ որ նպատակն էլ սրտիս մօտ է. ճիշտ է որ կլիշէների արտադրութիւնն արգիլւած չէ, բայց որովհետև նկարների հետ նաև հայերէն գրութիւններ պիտի լինեն, ուստի և զգուշութիւնն ու գաղտնապահութիւնը անհրաժեշտ են. պատրաստեցէք նկարները և բերէք ինձ մօտ, ամեն մի էջը կը պատրաստեմ հարիւր ռուբլով, զեղչւած գնով։

Վաղրիկը շնորհակալութիւն յայտնեց ու մեկնեց։ Նա նոյն օրն իսկ հանդիպեց նաև պատանի նկարիչ Նշանին և խնդրեց անցնել իր և Արմէնի բնակարանը։

Վաղրիկն ու Արմէնը, սիրալիր ընդունելով Նշանին, բացատրեցին իրենց նպատակը և այն սրբազան պարտականութիւնը որ յանձն պիտի առնէր պատանի արւեստագէտը.

—Սիրելիս, դու գիտես ներկայ կրթական վարիչի խստութիւնները մեր լեզւի դէմ, ուրեմն գործը պիտի մնայ խիստ գաղտնի, հակառակ պարագային թէ՛ մենք և թէ՛ դու կը վըտանգւենք մեծապէս. չպիտի մոռանալ, որ մեր դպրոցի տեսուչը դեռևս շարունակում է բանտում նստած մնալ,—ասաց Արմէնը,—հա՛, ի միջի այլոց՝ այսօր իմացայ իր եղբայր Յովակիմից, որ դժբախտ տեսուչ Մատթէոս Մելիքեանը բանտում վարակւել է բծաւոր տիֆով, այժմ իր հարազատները կրկնակ մտահոգութեան մէջ են։

Այս լուրը ծանր տպաւորութիւն գործեց Վաղրիկի վրայ.

—Խե՛ղճ մարդ,—ասաց նա,—հերիք չէին բանտային տառապանքներն ու անախորժութիւնները, այժմ էլ հիւանդութեան

տանջանքը։ Նրան կառավարութիւնը պահում է բանտում, երեւ-ի սաստ և ի վախ այն հույերի. որոնք նախանձախնդիր են մեր լեզուի և դպրոցի,—ապա Նշանին դառնալով,—սիրելի Նշան, կարճ միջոցում պիտի պատրաստես այս այբբենարանի էջերը, սա մեր մանուկ սերնդին լեզու պիտի տայ. ներկայ պայման-ներում սա ամենավսեմ գործն է որ մենք պիտի կատարենք։

—Ուրախութեա՛մբ,—ասաց Նշանը աշխուժով.—ես հէնց այսօրուանից գործի կանցնեմ և էջերին համապատասխան նկար-ներ կընտրեմ, ապա ամեն մի էջը կը գրեմ ճերմակ, փայլուն խաւաքարտի վրայ և ձեր հաւանութիւնն առնելուց յետոյ ինքս կը յանձնեմ պ. Փափազեանին։

Վաղրիկը խոստացաւ այդ աշխատանքի համար մի նուէր տալ Նշանին։

Այսպիսով այբբենարանի հարցը կիսով չափ կարգադրուած էր.

—Այժմ պիտի գտնենք մի մամուլ. մի ապարանատէր, որ յանձն առնի տպագրելու մեր կիչէները,—ասաց Արմէնը,—ես, ճիշտն ասած, յուսահատ եմ. ո՛ր տպարանատիրոջ հետ որ խօսեցի, ինչպէս արդէն ասել եմ, յանձն չառաւ. վախենում են։

—Այդ միջոցն էլ կը գտնենք,—ասաց Վաղրիկը,—թող մի կիչէները պատրաստուեն. առայժմ կարեւորը սա է։

* * *

Արդէն երեք ամիս էր անցել այն օրից, երբ Վաղրիկն ու Արմէնը պատուիրել էին Նշանին այբբենարանի էջերը գրել և նկարել. այդ ժամանակամիջոցում նկարիչը պարտաճանաչու-թեամբ կատարել էր իր յանձնառութիւնը և Ե. Փափազեանն էլ պատրաստել էր կիչէները. այժմ մնում էր թուղթ գնել և տպա-գրութեան յանձնել. Վաղրիկն ևս իր հերթին խօսել էր մի քանի տպարանատէրերի հետ. քօղարկուած ձեւով. բայց անյաջո-ղութեան էր հանդիպել. այժմ մտահոգ՝ տուն էր վերադառնում և ճնշւում էր Արմէնին յայտնելու բացասական արդիւնքի մա-սին. յանկարծ նրա գլխում մի միտք ծագեց. «Գուցէ գաւա-ռում աւելի դիւրի՞ն կը լինի գլուխ բերել այս գործը»։ Եւ նա ակամայից խորհեց Թաւրիզի մասին. Տուն հասնելով, նա այս մասին յայտնեց Արմէնին։

—Արի միասին Թաւրիզ մեկնենք,—ասաց Վաղրիկը,—Թուղթն ու կլիշէներն էլ հետներս տանենք. ես մեծ յոյս ունեմ, որ այնտեղ կը յաջողենք.

—Կլիշէները դեռեւս կարելի է ճամբրուկի մէջ տեղաւորել. իսկ Թո՞ւղթը. նա կարող է կասկած յարուցել,—առարկեց Արմէնը:

—Ես մի մարդատար ինքնաշարժ կը վարձեմ, Թուղթն ու կլիշէները այնտեղ կը տեղաւորենք և երկուսով կը մեկնենք. ոչ ոք չի կասկածի, մեկնելու մասին էլ ոչ ոքի չենք ասի, բացի անեցիներից,—ասաց Վաղրիկը:

Արմէնը համաձայնեց. նրանք որոշեցին հէնց նոյն շաբաթուայ մէջ մեկնել:

*
* *

Թաւրիզում մի-երկու անյաջող փորձից յետոյ վերջապէս Վաղրիկը հանդիպեց Յ. Մկրտչեանին և մեծ եղաւ իր ուրախութիւնը, երբ նա սիրալիր կերպով պատրաստակամութիւն յայտնեց յանձն առնելու այդ պարտականութիւնը.

—Ինքս չպիտի տպեմ, բայց ունեմ մտերիմ ծանօթներ, որոնք վստահ եմ թէ չպիտի մերժեն. ես ամեն կերպ պիտի աշխատեմ յաջողեցնել, մանաւանդ որ դուք էք խնդրում, պարո՛ն Վաղրիկ,—ասաց Յ. Մկրտչեանը:

Վաղրիկը քիչ մնաց բռնէր և համբուրէր նրան, այնքան ուրախացաւ: Պայմանաւորուեցին յաջորդ օրը հանդիպելու միմեանց, վերջնական պատասխանի համար:

Այդ երեկոյ Արմէնն ու Վաղրիկը տագնապի մէջ անցկացրին. եթէ այս փորձն էլ չյաջողուէր՝ մնում էր մի ձեռքի մեքենայ, մամուլ առնել և սեփական ոյժերով տպել. ուրիշ ճար չկար. բայց յաջորդ օրը Յ. Մկրտչեանը փարատեց նրանց բոլոր մտահոգութիւնները.

—Դուք կլիշէներն ու թուղթը կը յանձնէք ինձ, թող միայն ինձ ճանաչի պարսիկ տպարանատէրը. ես գրքոյկները տպել և կազմել կը տամ, սնդուկների մէջ կը դասաւորեմ. միայն թէ դուք ինձ պիտի մատնանշէք ձեր այն վստահելի անձին, որին պիտի յանձնեմ սնդուկները,—ասաց Յ. Մկրտչեանը:

—Որպէսզի յանկարծ բոլոր գրքերը չբռնեն և գրաւեն,

ուսուի և մէկ սնդուկը կուղարկէք Անդրանիկին, իսկ միւս սընդուկը՝ Ռուբիկին, — ասաց Վաղրիկը։

Այսպէս պայմանաւորուելուց յետոյ Վաղրիկը յանձնարարեց իր մտերիմներ՝ Ռուբիկին և Անդրանիկին, ստանձնել սընդուկները կատարեալ գաղտնապահութեամբ և ճամբել Թեհրան՝ իր հասցէին։

Այլևս Թաւրիզում նրանք անելիք չունէին։ Յ. Մկրտչեանին վճարեցին գրքի տպագրութեան ծախսը և գոհ սրտով վերադարձան Թեհրան։

Հազիւ քանի օր էր անցել նրանց վերադարձից, երբ ստացան այնքա՜ն ցանկալի սնդուկները։ Յ. Մկրտչեանը, Ռուբիկն ու Անդրանիկը կատարեալ գաղտնապահութեամբ ու անձնուիրութեամբ կատարել էին իրենց վրայ դրուած պարտականութիւնը։ Վաղրիկն ու Արմէնը շնորհակալութեան խօսք ուղղեցին նրանց, աւելացնելով, որ նոր սերունդը երախտապարտ պիտի լինի այդ աջակցութեան համար։

Նրանք որոշեցին գրքոյկներն առաջին հերթին հարիւրաւոր օրինակներով ճամբել Արաքի և Նոր-Ջուղայի գիւղական շրջանները՝ այնտեղի դպրոցներում ցրուելու համար, իսկ Թեհրանում տալիս էին վստահելի և մտերիմ անձանց միայն։

«Այբբենարան»-ի տպագրութիւնը բարձրացրեց Արմէնի տրամադրութիւնը։ Նա և Վաղրիկը որոշեցին մի յատուկ զբօսանք կազմակերպել այդ առթիւ և նւէրներ գնեցին Կլարայի, Դիանայի և տ. Մարիամի համար։

Արմէնի և Վաղրիկի «Այբբենարան»-ի այս տպագրութիւնը վարակիչ հանդիսացաւ նաև ուրիշների համար, այնուհետև Թաւրիզում և՛ մի այբբենարան պատրաստեց մի քանի ուսուցիչների կողմից և լիտոգրաֆով տպուեց։

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

Խմբական դասերը տարիներից ի վեր կանոնաւոր ընթանում էին։ Կլարան և Արմէնը եռանդով ու անձնուիրութեամբ պարապում էին։ Նրանց աշակերտներն արդէն սահուն կարդում էին, գրում փոքրիկ շարադրութիւններ, արտասանում էին հայ բանաստեղծներից կտորներ, երգում և երբեմն էլ, Կլարայի կազ-

մակերպութեամբ, խաղում էին մանկական փոքրիկ թատերախաղեր՝ որեւէ մեծերի տան հիւրասենեակում։

Երեխաներն արտակարգ սիրով կապւել էին Բլորայի հետ և այդ զգացմունքը պատճառ էր դառնում նաև, որ նրանք սիրէին ու կապւէին իրենց մայրենի լեզւի հետ։ Երեխաներին համակել էր մրցման մի տենդ՝ գերազանցել մէկը միւսին և իրենց սիրելի վարժուհու գնահատանքին արժանանալ։ Ծնողներն էլ իրենց հերթին գոհ էին այդ պարապմունքներից, նախ այն պատճառով, որ իրենց երեխաները վարժւում էին մայրենի լեզւի մէջ, հաղորդակից դառնում հայկական մշակոյթին, և ապա նաև՝ որ երեխաները տնից բացակայելով՝ ծնողներին ազատում էին աւելորդ ջղայնութիւններից. և դասերի ընթացքում վարժւում էին կարգապահութեան ու կանոնի։

Այդ օրը Բլորան վերջացրեց իր հերթական պարապմունքը, ըստ սովորութեան՝ աշակերտներին երկ-երկու հերթականութեամբ տուն ճամբեց, ապա վերջը ինքն էլ դուրս եկաւ և ուղղւեց տուն, իր սովորական ճամբով։

Պատանի լրագրավաճառները վազում էին փողոցում, լրագրերի մի կապոց ձախ անութի տակ, մի հատ լրագիր էլ աջ ձեռքում թափահարելով.

—Ռուս-գերմանական պատերա՛զմ… Գերմանիան յարձակւեց Ռուսիոյ վրա՛յ… Թնդանօթները որոտում են ռուսական սահմանի վրա՛յ… Պատերա՛զմ… Պատերա՛զմ…

Մի սարսուռ անցաւ Բլորայի մարմնով. եւրոպական պատերազմը գնալով ծաւալւում, բարդ կերպարանք էր ստանում, այժմ էլ այդ ահաւոր վտանգը կարող էր մօտենալ հայրենիքի սահմաններին. արեւելքը ևս վտանգի տագնապով էր բռնւում… Նա ակամայից յիշեց Դիրանային, մի արտակարգ սէր ու գորով խլրտաց նրա կրծքի տակ. մայրական բնազդն զգաց, որ իր երեխան ևս կարող էր վտանգւել մի օր… Թէև Իրանը չէզոքութիւն էր յայտարարել, բայց դա ի՞նչ նշանակութիւն ունէր. մի՞թէ չէզոք չէին եւրոպական այն փոքր պետութիւնները, որոնք զոհ գնացին հիթլերական յորդաների գրոհին…

Եւ Բլորան ակամայ իր քայլերն արագացրեց. փողոցը ջղայնութեան ու տենդի նշաններ էր ցոյց տալիս. լրագիրները ձեռքից-ձեռք էին անցնում.

—Տիկին Կլարա՛, լսեցի՞ք ինչպէս Գերմանիան յարձակւեց Ռուսաստանի վրայ. պատերազմը ծաւալւո՛ւմ է, ծաւալւո՜ւմ, Կլարա…

—Բայց մենք ծանօթներ չենք, պարո՛ն, և իմ անունը մի անծանօթի կողմից այդպէս ֆամիլիէր արտասանելն էլ ինձ հաճելի չէ,—ասաց Կլարան վրդովւած և ակնյայտ հակակրանքով:

—Օ՜ տիկի՛ն, մենք պաշտօնապէս ծանօթներ չենք, ճիշտ է, բայց երբ դուք դեռևս դպրոցական էիք՝ մենք հետաքըր-քըրւում էինք ձեզնով, մենք՝ մի խումբ երիտասարդներս…

Կլարան վրդովւեց այս բացայայտ յանդգնութիւնից. մի անախորժ զգացում համակեց նրան, մանաւանդ երբ հայեացքն ընկաւ դիմացինի հողագոյն դէմքին և հիւանդոտ աչքերին:

—Ինձ բոլորովին չի զբաղեցնում թէ դուք կամ ձեզպէս-ները երբևէ հետաքըրքըրւած լինեն ինձնով. խնդրեմ ինձ հան-գիստ թողէք,—ասաց Կլարան ջղայնութեամբ:

—Մեր խմբի մէջ էր նաև Վաղրիկը, որի հետ չեմ կար-ծում թէ նոյն լեզւով խօսէք… տիկի՛ն, ես Ջալլադեանն եմ և Վաղրիկն ինձ լաւ է ճանաչում,—շարունակեց նա քամահրանքով:

—Անշուշտ Վաղրիկը ձեզ ճանաչում է իբրև մի սրիկայի… հեռացէ՛ք, ասում եմ: Եւ Կլարան դողաց բարկութիւնից:

—Ես, ինարկէ, կը հեռանամ, բարկացկո՛տ տիկին, բայց իմ աչքերից չեն խուսափում ձեր՝ հէնց ա՛յս փողոցում ունեցած տե-սակցութիւնները Վաղրիկի հետ, ա՛յն Վաղրիկի, որ Մազանդա-րանում պարկուհիների հետ էր քէֆ անում,—ասաց Ջալլադեանը գլխարկը ցուցական ձևով հանելով և հեռացաւ:

—Սրախօ՛ս, անպիտա՛ն տիպ,—բացականչեց Կլարան լացա-կումած նրա յետևից և արագ քայլերով դիմեց դէպի իր բը-նակարանը:

Այս անախորժ միջադէպը այնքան ազդեց զգայուն Կլա-րայի վրայ, որ տուն հասնելուն պէս նա չկարողացաւ իր հեկե-կանքը զսպել: Տիկին Մարիամը խիստ անհանգստացաւ, փորձեց պատճառն իմանալ, բայց երիտասարդ կինը զուսպ մնաց գաղտ-նիքը դրսևորելու հարցում, նրան մտահոգում էր իր ընտանե-կան պատիւը. չէր մտածում նոյն իսկ Արմէնին տեղեակ պահել

այդ անախորժ դէպքերին, այդ քամիների սուլին, որպէսզի ամուսնու հոգին վրդովված չլինէր։

Հէնց նոյն գիշեր Բյուրան ջերմեց. Արմէնը գիտէր, որ Բյուրայի թոքերը թոյլ էին, սուր և խիստ անհանգստացաւ։ Վաղրիկը, առանց հարցնելու, վազեց բժշկի յետևից։

Եկաւ բժիշկ Բալուեանը, քննեց, ջերմը չափեց, ապա դեղեր նշանակեց և երբ մեկնում էր՝ միջանցքում ասաց Արմէնին և Վաղրիկին.

—Տիկնոջը պէտք է լաւ սնուել, մաքուր օդ և հանգիստ կեանք. պէտք խուսափել յուզումներից. Թոքերը քիչ թոյլ են, բայց առանձին մի վտանգ չեմ տեսնում դեռևս, մանաւանդ չպէտք յուզել. այլապէս կարող է պրոցէս առաջանալ։

Մի դող անցաւ Վաղրիկի մարմնով. ո՞հ, եթէ Բյուրային մի բան պատահէր… այլևս կեանքը միանգամայն անիմաստ պիտի դառնար իրեն համար. այս մռայլ կեանքը, որի մէջ Բյուրան պսպղուն աստղի պէս դեռևս լուսաւորում էր իր ճամբան…

Օր ու գիշեր Արմէնը, Վաղրիկն ու տիկին Մարիամը արտակարգ հոգատարութեամբ հսկեցին Բյուրայի անկողնու մօտ. Մէկը միւսին ստիպում էր գնալ գէթ մի քիչ քնել, հանգստանալ, բայց ոչ մէկը չէր ուզում զիջել իր հերթը։

«Թոքերը թոյլ են».— իր մտքում կրկնում էր Վաղրիկը բժշկի խօսքը և սրտի դողով դիտում Բյուրային. Նրա դէմքի պայծառ տժգունութեան վրայ այտերի վարդագոյնը սարսափ էր ազդում Վաղրիկին. Նա յիշում էր իր մի թոքախտաւոր ընկերոջ այտերի վարդագոյնը և հոգին խռովքի էր մատնւում, սակայն սթափւում և յուսադրւում էր, տեսնելով Արմէնի հանգարտ ու սառն համբերութիւնը։

Վաղրիկն յաճախ նկատում էր, որ Բյուրան իրեն էր նայում երկա՜ր, տխուր հայեացքով, չէր խօսում, սակայն վերջում հառաչում էր ու աչքերը փակում. «Արդեօք, ես պատճառ չե՞մ դառնում նրա յուզումների».—անցնում էր Վաղրիկի մըտքով և սիրտը կծկւում էր ցաւագինօրէն. «Ես կը հեռանամ, կը հեռանամ, միայն թէ Բյուրան հանգիստ ու երջանիկ լինի».—ասում էր իւրովի և գլուխը մեղապարտի պէս խոնարհում։

Մի շաբաթ Բյուրան պառկած մնաց. խնամքը իր դերը կատարեց և ջերմն անցաւ։ Այժմ նա քայլում էր սենեակում և

խօսում ու զրուցում առաջուայ պէս, սակայն տխրութեան մի քող միշտ պարուրում էր նրա դէմքն ու արտայայտութիւնները. տնեցիներն այդ համարում էին իր հիւանդութեան հետեւանքը, որ շուտով պիտի անցնէր, սակայն երիտասարդ, զգայուն կինը տառապում էր իր թագուն վշտից։

Եւ ահա մի օր, երբ Արմէնը տանը չէր և տիկին Մարիամն էլ գնումների համար դուրս էր եկել տնից, Կլարան ասաց Վազրիկին։

—Վազրի՛կ, ես ձեզ մի բան պիտի յայտնեմ, բայց նախօրօք խնդրում եմ չյուզուէք և չվշտանաք. մանաւանդ որ խնդիրը բացայայտ պրովակացիա է և այդ հաստատող փաստերը՝ ակնյայտ։— Եւ Կլարան բառացի պատմեց այն խօսակցութիւնը, որ տեղի էր ունեցել իր և Զալլադեանի միջև.—Ես և դուք գիտենք, շարունակեց նա,— որ տեսակցութիւններ չենք ունեցել ո՛չ այլուր և ո՛չ էլ յատկապէս իմ դասարանի փողոցում. որքան փորփրեցի յիշողութիւնս, գիւղ մեկնելուց առաջ ձեզ հետ մի անգամ միայն պատահականօրէն հանդիպել եմ այդ փողոցում, երբ դուք դուրս էիք եկել Արմանեանի տնից, գործի կապակցութեամբ, այնպէս չէ՞։

Վազրիկը կարկամել էր, նրա համար այլևս պարզ էր Կլարայի հիւանդութեան դրդապատճառը. ուրեմն Զալլադեանի սուտ և անմիտ շարախօսութիւնն էր ազդել Կլարայի վրայ ա՛յն աստիճան, որ զգայուն Կլարան անկողին էր ընկել... Եւ Վազրիկը մի ահաւոր զայրոյթ զգաց դէպի Զալլադեանը։

—Ես ձեզ նախօրօք խնդրեցի չյուզուել և չվշտանալ, ի հարկէ դա միանգամայն հնարաւոր չէ, բայց որովհետև Զալլադեանի ստախօսութիւնն ու նենգամտութիւնը բացայայտ է, ուտի և չարժէ զայրանալ. ես էլ իզուր ազդուեցի առաջին օրը և տուժեցի. ես չեմ ցանկանայ, որ դուք էլ տուժէք, Վազրիկ.

«Նա խնայում է ինձ,— խորհեց Վազրիկը,— և եթէ մինչև այժմ էլ ոչինչ չի ասել ինձ՝ դարձեա՛լ խնայելու մտօք է»,— Եւ Վազրիկի զայրոյթն իջաւ, տեղի տալով երախտագիտութեան ջերմ զգացմունքին.

—Կլարա՛,— ասաց նա վերջապէս,— այդ միակ հանդիպման ժամանակ դուք թերևս չնկատեցիք, թէ ինչպէս Զալլա-

դէմն անցաւ, ինձ բարևեց և յետոյ նորէն շուռ եկաւ ու նայեց․ այդ միակ առիթն է, որ նա ի չարն է գործ դրել․ իսկ թէ ո՛վ է Զալլաղեանը, այդ կարող էք իմանալ ամեն մի պատահական ազամարդուց, նա յայտնի է իբրև մարդկանց միջև կռիւ ու երկպառակութիւն սերմանող․ իբրև սրբութիւններ չճանաչող և իր նպատակին հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն չդնող․․․ Արմէնը ևս նրան ճանաչում է որպէս այդպիսին։ Ինչ վերաբերում է ձեզ և ինձ․ մեր լաւագոյն վըկան և դատաւորը մեր խիղճն է։ Վաղուց չէ, որ Զալլաղեանը հետապնդւում էր մի մարդու կողմից, որի կնոջը նա գայթակղեցրել էր ամենաանթոյլատրելի միջոցով․ նրա ընտանեկան յարկը աղտոտելով․ և ահա՛ այդպիսի բարոյականի տէր մէկից ի՞նչ կարելի է սպասել, եթէ ոչ հէնց նո՛յնպիսի մեկնաբանութիւն՝ մաքուր և ընկերական փոխյարաբերութիւնների նկատմամբ։ Բայց այստեղ մի հարց է կարևորը․ ինչպէս անել, որ այդ նենգը չեզոքանայ և չհասնի իր հրէշային նպատակին․ Նա վաղը կարող է միամիտ մարդկանց մտքերը պղտորել․ բամբասանքներ հիւսել․ ինձ մտահոգողը ձեր ընտանիքի պատիւն է, Բյարա՛, և ո՛չ թէ իմ անձը․ ես կարող եմ․ հակառակ պարագային, հեռանալ այստեղից․․․

— Ո՛չ, դուք չպիտի հեռանաք․․․ Ես դրա համար չասացի․․․ Ես չե՞մ կարող․․․

Եւ Բյարան չկարողացաւ իր հեկեկանքը զսպել։

Այլևս պարզ էր Վաղրիկի համար․ Բյարան չէր կարող իր ներկայութիւնից զրկել, նրան ցանկալի էր իր ներկայութիւնը․ ա՛խ, երկար տարիներից ի վեր այս առաջին անգամն էր, որ Բյարան չէր թաքցնում իր զգացմունքը․ յամենայն դէպ․ իր ներկայութիւնը անհաճոյ չէր։

Եւ Վաղրիկը անհունօրէն շնորհակալ զգաց իրեն, աւելին չէր պահանջում։

— Հանգստացէք խնդրում եմ, Բյարա, յուզմունքը կարող է ձեզ վնասել․․ Ես առանց ձեր համաձայնութեան ոչինչ չեմ անի․ միայն թէ կարծում եմ, որ պէտք է Արմէնին տեղեակ պահել այս դէպքին և խնդրի էութեան․ սա լաւագոյն և կարճ միջոցն է չեզոքացնելու Զալլաղեանի նենգ ու անմարդկային մտադրութիւնը։

Բյարան համաձայնեց, վստահ լինելով Արմէնի գիտակից և խոհական նկարագրի վրայ։

Նոյն երեկոյեան, երբ տիկին Մարիամն իր սենեակումն էր, Բյարան, Վաղրիկի ներկայութեամբ, պատմեց Արմէնին եղելութիւնը։

Արմէնը լսեց ամենայն հանդարտութեամբ և երբ Բյարան վերջացրեց յուզումով, ասաց.

— Բյա՛րա, ափսոս որ դու նոր ես լսում Զալլագեանի մասին, եթէ սկզբից ճանաչէիր՝ բնա՛ւ չէիր յուզւի և իզուր սա-ղը չէիր հիւանդանայ. դա մի խոլերա է, մի անուանարկեալ որիկայ, որ չգիտեմ ո՞ր երկրից իրան է եկել և մինչև օրս անպատիժ շարունակում է իր ազնիւ ընթացքը։ Բարոյական մարդկանցից ո՛չ մէկը նրա հետ չի խօսում և չի բարևում։ Թող-նենք նրան անուշադիր, մի օր մի պատասխանիչ մարդ դուրս կը գայ և նրան կը պատժի։ Իսկ ինչ վերաբերում է մեզ, ընդ-հակառակը, մեր մտերմութիւնը պիտի շարունակենք ըստ ա-ռաջնոյն, լաւագոյն պատասխանը, նման դէպքում, արհամար-հանքն է։ Ուրեմն, այս հարցը քեզ համար ցաւ մի՛ դարձրու և բնաւ մի՛ մտածիր։

Այսպէս եզրափակեց Արմէնը և այնուհետև աւելացրեց իր հոգատար վերաբերմունքը դէպի Բյարան, իսկ Վաղրիկի նկատ-մամբ անփոփոխ շարունակեց իր մտերմութիւնը։

ԲԱԽՏՈՐՈՇ ԲԱՂԽՈՒՄ

Այս դէպքից անցել էր մօտ երկու ամիս. Բյարան ու Ար-մէնը համարեա մոռացել էին Զալլագեանի դէպքը. նրանց վե-րաբերմունքը դէպի Վաղրիկը դարձել էր աւելի՛ ուշադիր և ա-ւելի՛ մտերմական, մանաւանդ որ այդ միջոցում Վաղրիկը մի քանի օր հիւանդ պառկել էր, անգից և Բյարան, տիկին Մա-րիամն ու Արմէնը արտակարգօրէն հոգատար ու սրտագին խնամք էին ցուցաբերել նրա նկատմամբ։ Ուժեղ ջերմի պահերին նա երբեմն կորցրել էր իր գիտակցութիւնը և զառանցել, նրա մի քանի կցկտուր արտայայտութիւններից և նրանց յաջորդող հա-ռաչանքներից Բյարայի համար միանգամայն պարզուել էր, որ Վաղրիկը տանջւում, տառապում էր խորը զգացմունքից. և անհ

մի անգամ. երբ նա մենակ էր եղել Վաղրիկի սնարի մօտ, Թրջոցը դրել էր նրա ճակատին, յետ մղել գանգուրները և ձեռքով անցել էր նրա այտի վրայով։

Վաղրիկը բաց էր արել իր աչքերը, նայել նրան սարսափի և միաժամանակ խանդաղատանքի անիմանալի հայեացքով. Բյուրան մեղապարտի պէս կախել էր իր գլուխը և նրա ջերմ արցունքները թրջել էին Վաղրիկի ձեռքը։ Այս եղել էր միակ շօշափելի արտայայտութիւնը փոխադարձ զգացմունքի։

Եւ ահա, շաբաթներ յետոյ, յուլիսեան մի երեկոյ, Վաղրիկը հրաւիրել էր իր մի քանի ընկերներին, իրենց կանանց հետ, Ստամբուլի վրայ գտնուող «Կաֆէ Պալաս» սրճարան-ճաշարանը ընթրիքի։ Ընդարձակ սեղանի շուրջ բոլորել էին Արմէնն ու Բյուրան, Արմենակն ու իր կինը՝ Քնարիկը, Վահրամն ու Վարդուշը, ուսուցիչ Տիգրանը, կապալների գործով զբաղւող Արսենն ու Անաքելը։

Ընթրիքն անցնում էր հաճելի մթնոլորտում. Վաղրիկն աշխատում էր ամէն մէկի նախասիրութեանը գոհացում տալ իր պատւէրներով։

—Վաղրի՛կ ջան,—ասում էր Վահրամը,—էս քաղաքի ճաշարանների խորովածը կը հասնի՞ Մազանդարանի իմ պատմական խորովածին. հա՛յ գիտի, համա խորոված կերանք հա՛, էն երկու տարին…

—Վա՛րդուշ, էս քո Վահրամիդ համար քեզնից և իր ստամոքսից բացի այլ աշխարհ գոյութիւն չունի. ես ուզում եմ իմանալ, որ եթէ ուտելը չլինէր՝ Վահրամն ինչո՞վ կը զբաղւէր,—ասաց Արմենակը կէս լուրջ, կէս կատակ։

—Ինձ սիրելով,—ասաց Վարդուշը ծիծաղելով։

—Ես քո հո՛գուն մատաղ,—ասաց Վահրամը և համբուրեց կնոջ ձեռքը։

Բոլորը ծիծաղեցին։

Յանկարծ Բյուրայի դէմքը լրջացաւ. մի մռայլ ամպ անցաւ նրա հոգով. մուտքի մօտ նա նկատեց Ջալլադեանին, երկու այլ անծանօթների հետ. նրանք եկան ու տեղ բռնեցին Վաղրիկի թիկունքում գտնւող սեղանի մօտ։ Ջալլադեանը հայեացքը դարձրեց դէպի հարևան սեղանը. Բյուրան իր հայեացքը փախցրեց, չնկատել ձևացնելով։

Սկսեցին հերթով կենացներ խմել, առաջարկողը Արմենակն էր:

—Այս առաջին բաժակը խմենք մեր Վահրամի և Վարդուշի կենացը. թէև յիսունից անց, բայց միմեանց սիրում են իրենց մեղրալուսնի սիրով…

Ընդհանուր ծիծաղի մէջ բաժակներն իրար բախեցին։

—Խորովածն աղով է համեղ, մեր ընկերական շրջանակը՝ Վահրամով,—ասաց ուսուցիչ Տիգրանը։

—Ես ձեր բոլորի սրտին մատաղ,—ասաց Վահրամը կարմիր գինու բաժակը միանգամից պարպելով. ապա շրթունքներով չմփացրեց և սրբեց բեխերը։

—Վահրամը խորովածի աղն է, ոչինչ չունեմ, բայց մեր մտաւոր կեանքի աղը Արմէնն ու Բյուրան են. այս մտաւորական ամոլը լծուած է մեր մանուկ սերնդի կրթութեան ու դաստիարակութեան վեհ գործին, մենք հեռացանք դէպքերի բերումով, բայց նրանք պատնէշի վրայ են. ուրիշն չեմ ասում, գիտէք որ նեղ պայմաններում ենք գտնւում,—ասաց Արմենակը ցած ձայնով,—ձեր կենացը, սիրելի Արմէն և Բյուրա։

Եւ մինչդեռ բաժակներ էին խփում, Արմէնի և Բյուրայի կենացի վրայ, Վաղրիկի ականջին դիպաւ, իր թիկունքից, այս խօսքը. «Դրանք երկու չեն, սխալւեց, երրորդին մոռացաւ»…

Վաղրիկը դանդաղ շուռ տուեց իր դէմքը և իր յետևի սեղանի մօտ նստած տեսաւ Զալլաղեանին. ապա դէմքը նորէն դարձնելով, զգուշութեամբ նայեց Բյուրային ու Արմէնին. Նա նկատեց Բյուրայի տխրութիւնը, իսկ Արմէնի դէմքը հանդարտ էր ու անխռով։

«Այս չար ոգին պիտի խանգարի մեր ընթրիքը», մտածեց Վաղրիկը հազիւ իր զայրոյթը զսպելով և մռայլեց։

Նա չիմացաւ թէ ինչպէս խմեցին Արմենակի, Բնարիկի ու նաև Տիգրանի կենացները. միտքն ամբողջ զբաղւած էր Զալլաղեանով և իր լսողութիւնը սրած՝ աշխատում էր բաց չթողնել նրա որևէ ակնարկն ու արտայայտութիւնը։

—Զարմանալի է մեր ժողովուրդը,—ասում էր Արմէնը,—դարեր շարունակ ահաւոր փոթորիկներ պայթեցին մեր երկրի վրայ, բռնակալներ եկան ու անցան. և սակայն այս «փոքր ածու»-ն ապրեց ու մնաց իր գոյութեան կամքով, իր մշակութային կարողութիւններով ու ստեղծագործութիւններով. այժմ

մեր գաղութը թէև մշակութային ճնշման է ենթակայ, բայց նորէն հայ ժողովուրդը արտայայտում է իր ապրելու և յարատևելու կամքը։ Ամեն մի հայ իր ձևով օգտակար է լինում. մտաւորականը՝ գրչով, խօսքով. հարուստը՝ դրամական նուէրներով. այս տեսակէտից մեր ունևորները, ի բաց առեալ մէկ քանիսը միայն, թէև փոքր գումարներով, բայց պարբերաբար նուիրատուութիւններ են անում եկեղեցուն և ազգային այլ պէտքերին. խօսքս մասնաւորելով մեր երկու սեղանակիցների նըկատմամբ՝ Առաքէլի և Արտեմի՝ պիտի ասեմ, որ թէև նրանք մեծահարուստներ չեն, բայց երբև գործի մարդիկ, երբև ապագայ հարուստներ, այժմից աւելի՛ յոյսեր են ներշնչում դրամական զոհաբերութեան, քան նախորդ. աւելի տարէց սերունդը. վերջապէս նրանք աւելի կրթւած են ու հանրային ցաւերին ու կարիքներին աւելի գիտակից. խմենք նրանց կենացը։

«Մէկին մոռացաւ, որի փողով ինքն ապրում է»,—լսեց Վաղրիկն իր թիկունքից...

Վահրամը բաժակը վերցրեց.

—Մնաց վերջին և ամենաթանկագին կենացը, մեր դարդիման ընկեր, անման սրտի և հոգու տէր Վաղրիկի. էլ ի՞նչ ասեմ աւելին, Վաղրի՛կ ջան, քո հո՛գուն մատաղ, քո կենացը...

—Եւ Մազանդարանի իր սիրուհիների՛...—հնչեց մի ձայն։

Բոլորը յանկարծակիի եկած՝ զարմացած նայեցին. Ջալալեանն էր, այս անգամ կանգնած Վաղրիկի թիկունքում. Վաղրիկն արագ ոտքի ելաւ, շուռ եկաւ, լսեց մի շառաչուն ապտակի ձայն, Ջալալեանը կանգնած տեղում տատանւեց մի պահ և ապա գետին փռւեց...

Լսւեց կանացի ճիչ, աթոռների ձայն, ճաշարանի սպասաւորները մօտ վազեցին. այդ պահուն մէկը սեղանի տակից ճչաց՝ «Օգնեցէ՛ք... ինձ վրայ կրակեցին, ինձ սպանո՛ւմ են»...

Վահրամը սեղանի սփռոցը յետ նետեց և Ջալալեանի ականջից բռնելով՝ դուրս քաշեց սեղանի տակից, ասելով.

—Ցօ՛, յի՛մար, քեզ ապտակեցին, ի՞նչ կրակել...

—Պարոննե՛ր, ի՞նչ է պատահել,—հարցրեց «Նաֆթէ Պալաս»ի տէրը վրայ հասնելով։

—Էս սրիկային հեռացրէ՛ք անմիջապէ՛ս,—ասաց Առաքէլը,—թէ չէ պակասը ես կը լրացնեմ.

Ճաշարանատէրը Զալլագեանի թևից բռնած՝ անմիջապէս դուրս տարաւ, իսկ նրա երկու սեղանակիցները իրարանցման ժամանակ արդէն փախել էին։

Արմէնը բաժակով ջուր էր խմեցնում Բլարային, երբ նորէն սեղան նստեցին. Վահրամը կանգնեց Վաղրիկի կողքին, ձեռքն անցկացրեց նրա վզով և ասաց, սեղանակիցներին դառնալով.

—Ընկերնե՛ր, ամբողջ երկու տարի ես և Արմենակը Մազանդարանում օր ու գիշեր Վաղրիկի հետ ենք եղել. էս աննըման տղան սուրբի պէս է ապրել. ես քո հօ՛գուն մատաղ, Վաղրի՛կ ջան. սրտիդ մի՛ առ էդ սրիկայի խօսքերը. ո՞վ չի ճանաչում նրան. — և այս ասելով, համբուրեց Վաղրիկի ճակատը։

—Ես ներողութիւն եմ խնդրում ձեզնից՝ այս անախորժ դէպքի համար. բայց այլ կերպ չէի կարող… չափն անցաւ, — ասաց Վաղրիկը սեղանակիցներին։

—Վա՛ղրիկ ջան, դու որ հրամայես՝ ես կերթամ էդ սրիկայի ատամները կը ջարդեմ, — ասաց Վահրամը։

—Երբ արդէն հեռացել է… — յարեց Արմենակը ծիծաղելով։

—Հա ըլ՛րթ, չտե՞սար ինչ բռնեցի ականջից և սեղանի տակից դուրս բերի… բա երկու տարի Մազանդարանի խորովածը զուր էր ուտո՞ւմ. Վա՛րդուշ ջան, տեսար չէ՞, — ասաց Վահրամը բեխերը սրբելով։ Եւ բոլորը ծիծաղեցին։

Բլարան իրեն վատ էր զգում. արդէն ընթրիքն էլ վերջացել էր. միւս սեղաններին նստողներն էլ անընդհատ նայում էին և քչփչում։ Արմէնը և միւսները ոտքի ելան. Վաղրիկը նրանց ճամբեց, իսկ ինքը մնաց Առաքելի և Արտեմի հետ։ Այդ պահուն վերադարձաւ ճաշարանատէրը. նրանք պատմեցին եղելութիւնը.

—Սա առաջին անգամը չէ, որ այդ պարոնը սկանդալ է անում իմ ճաշարանում. կարծես դիտաւորեալ կերպով ուզում է իմ գործս խանգարել. համբերութիւնս հատաւ, իրեն ասացի որ այսուհետև չպիտի թոյլ տամ ճաշարանս ոտք դնելու, այս մասին պատուիրեցի նաև դռնապանին ու ոստիկանին, — ասաց նա վրդովուած.

—Զալլագեանի նման մի քանի տիպեր կան մեր հասարակութեան մէջ, որոնք չգիտես թէ ո՞վ են և ո՞րտեղից են եկել.

եթէ նմանները այսպէս չպատժւեն, պիտի մտածեն թէ մենք պատւազրկած չենք. դեռ սա քիչ էր. Ջալլադեանը աւելի խիստ պատժի արժանի է, — ասաց Արսէնը:

Արդէն կէս գիշերի մօտ էր. Վաղրիկը վճարեց և երեքով դուրս եկան փողոց:

Արսէնն ու Առաքելը հրաժեշտ տւին. Վաղրիկը, մտքերի մէջ խորասուզւած, քայլեց Ստամբուլ պողոտայով. նա անցաւ «Նուշին» քաղցրաւենիքի խանութի մօտով, որտեղից յաճախ շոկոլադ էր գնել Դիանայի համար, և հասաւ Մոխբիր Դովլէ քառուղին, ուր հրապարակի կենտրոնում կանգնած է երեք առիւծների արձանախումբը. նա ակամայ՝ քայլերն ուղղեց դէպի արձանները: Առիւծը բացել էր իր երախը և կարծես պատրաստւում էր փղոտելու. Վաղրիկն յիշեց Թեհրան գալու իր առաջին օրերը, իր բարեկամին, որ տարաւ ու պտտեցրեց նշանաւոր վայրերը, յիշեց «Դերացած առիւծ»-ին, «Ռոստամի գուրզը» և «Հօրեղբայր Միսակ»-ին... Որքա՜ն յոյզեր ու ապրումներ էր ունեցել այս տասը տարիների ընթացքում... Եւ նրան թւաց, որ թէև տարիքով երիտասարդ, բայց արդէն ծերացել էր ու կքել յոյզերի բեռան տակ. և կեանքը նրան երևաց անհամ ու ձանձրալի, անհրապոյր մի հրապարակ, ուր Ջալլադեաններն ասպատակում են անսանձ մարուկի պէս փրփրած երախով ու անզուսպ կրքերով: «Ինչո՞ւ է այսպէս. ինչո՞ւ են մարդիկ վատութիւն անում, ինչո՞ւ նա ինձ պիտի դնէր այն վիճակում, որ ես սխալւած լինէի նրան ապտակել»... խորհում էր նա:

Գիշերաշրջիկի պէս պտոյտ գործեց արձանների շուրջ, նայեց անիմաստ հայեացքով և քայլեց հեռուն. ապա նրան թւաց թէ առիւծը որոտում էր իր թիկունքում և ժանիքները զայրոյթով կափկափում. իսկ նոյն արձանախմբի կենտրոնում մարմարէ կոթողի վրայ քաղաքային ժամացոյցը ահազանգի պէս խփում էր կէս գիշերւայ ժամի 12-ը՝ տա՜նկ... տա՜նկ... տա՜նկ... Նրան թւաց թէ իր օրերի շղթան կտրւեց չխկոցով և նրա օղակներն էին ընկնում սալայատակի վրայ զրնգոցով և գլորւում խաւարի գիրկը...

ԱՌԱՋԻՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՈՐՍԸ

1941 թուի օգոստոս ամսի վերջն էր։ Դաշնակից զօրքերը հիւսիսից ու հարաւից մուտք էին գործել Իրան և թեթև ընդհարումներից յետոյ՝ օրը օրին տէր էին դառնում կացութեան. դէպի մայրաքաղաք առաջանալով։ Ռզա Շահ Փահլաւին թողնում էր Իրանի սահմանները և նրա երիտասարդ որդին, Եւրոպայում կրթութիւն ստացած, անցնում էր հօր գահի վրայ, դեմոկրատիկ կարգեր խոստանալով։ Իրանահայութիւնն օրօրւում էր շուտով իր դպրոցները վերաբացուած տեսնելու վառ յոյսերով, բոլորն անհամբեր էին և խօսւում էր, որ հինգ տարիների բանտարկութիւնից յետոյ պիտի ազատէր հայոց դպրոցի վերջին տեսուչը՝ Մատթէոս Մելիքեանը։

Այդ օրերին Արմէնը ճաշի վրայ ասաց.

—Վաղրիկ ջան, մենք Բլարայի հետ այս վերջին հինգ տարւայ ընթացքում, գաղտնի կերպով, կատարեցինք մեր պարտականութիւնը մեր ժողովրդի և մեր նոր սերնդի հանդէպ՝ մեր ոյժերը ներածին չափ. այժմ հասել է օրը, երբ Իրանը պիտի որդեգրի ժողովրդավար կարգեր, իր երիտասարդ վեհապետի և Դաշնակիցների աջակցութեամբ, և մեր դպրոցները պիտի վերաբացուեն. այսուհետև մենք ազատ կերպով պիտի դասաւանդենք մեր լեզուն, մեր պատմութիւնն ու մշակոյթը։ Ապրի՛ հայ ժողովուրդը, որի մեծ ապագան դարբնւում է այսօր ռազմաճակատներում, նա՛և մեր ժողովրդի զաւակների սրբազան արիւնով։

Այդ օրերին Մազանդարանից եկաւ նաև Ահմէդը. նա սովորութիւն էր դարձրել ամէն աշնանամուտին տեսութեան գալու իր Վաղիր աղային, Զուլֆայի առած ուտելիքները բերելով։ Նրանք ունեցել էին մի արու զաւակ, որի անունը դրել էին Վաղիր։

—Վաղիր աղա՛, օր չի անցնում որ Զուլֆան քո կեանքդ չօրհնի, քեզ արեւշատութիւն չմաղթի։ Իմ տնտեսութիւնս էլ տարէց տարի առաջանում է. այս տարի կովս ծնեց. քո շնորհիւ ապրում ենք խաղաղ ու երջանիկ, մի մարդ դառայ, քրոջս Ֆաթմային ամուսնացրի. մի քիչ էլ փող ունի, որ փոքրիկ առևտութիւն հիմնեմ։ Փա՛ռք Ալլահին, աւելին չենք ուզում, եղածով գոհ ենք։

Վաղրիկը Ահմէդի երեխայի համար հագուստներ գնեց, մի փոքրիկ գումար էլ տուեց. որ Ահմէդը փոխադրի իր սանիկին։ «Ես չկարողացայ ընտանիք կազմել, բախտաւոր լինել. իմ ճամբան մոլոր գնաց․․․ Թող գոնէ ուրիշները երջանկանան»,— խորհում էր նա և թախիծի մի ամպ անցնում էր իր հոգով։

Դուրսը, մարդկանց խանդավառութիւնը զարմանք էր պատճառում նրան. ապա անդրադառնում էր որ ինքը դժբախտ է, ուստի և իրաւունք էր տալիս մարդկանց՝ ուրախ լինելու։

Այս յոռետեսութիւնն ամրանում էր մանաւանդ, երբ մերթ ընդ մերթ տենդն իրեն զգետնում էր. անկողին նետում։ Վշտերն ամրանում էին, երբ Բյուրան, Արմէնը և տիկին Մարիամը կրկնապատկում էին իրենց խնամքը։ Երբեմն, այդ որխուր մտածումների պահին, տարօրինակ կարօտ էր զգում դէպի իր մայրը․․․ Նա դէմքը կը թաղէր մօր կրծքին և լաց կը լինէր հոնգուր-հոնգուր. միայն նրա՛ն կարող էր պատմել իր վիշտը, միայն նա՛ կը հասկանար իր զաւակին․․․ Եւ արցունքներն հոսում էին, իրերն ու առարկաները կորցնում էին իրենց ձևը. ասես անձրևից ծեծւող ապակու յետևից նայելիս լինէր։

Մի անգամ, այդ յուզքոտ պահուն, Բյուրան ներս մտաւ։ Այլևս ուշ էր և Վաղրիկը չկարողացաւ ծածկել իր արցունքը. Նա փակեց աչքերը, սակայն այտերն ակօսած էին արցունքի շիթերից:

— Ի՞նչ է պատահել ձեզ, Վաղրիկ,— հարցրեց Բյուրան քնքշութեամբ։

— Ո՛չինչ․․․ Բյու՛րա, ոչինչ․․․ ասաց նա հեծկլտալով։

Եւ երկուսը լաց եղան երկար։

*
* *

«Վերջակէտ պիտի դնել այս բոլորին․․․ այլևս հերիք է, էլ չեմ կարող»․․․— ասում էր Վաղրիկը խռովել, երբ հիւանդութիւնից ուշքի էր եկում։

Եւ նա քայլերն ուղղեց դէպի դաշնակից զօրքի կենտրոնատեղին. ա՜խ, ինչպէ՜ս կը նետուէր ռազմի փոթորիկների մէջ՝ իր անձը ուրացած. իր աչքին՝ արդէն կեանքը կորցրել էր իր արժէքն ու հմայքը, կրկնակ հիւանդութիւնն իրեն հասցրել էր յուսահատութեան անդունդի շուրթին. «Մեռնե՜լ, կորչե՜լ» ըր-

չում էր այժմ նրա հոգին. այսպիսով կը փրկէր և՛ ինքը, և՛ Արմէնի-Բրաբայի ընտանեկան պատիւը, որ զուր տեղը Զալլադ-եանների խօսակցութեան առարկայ է դարձել: Նա կը նետուէր ռազմի փոթորիկների մէջ. կը զոհէր իր ժողովրդի և տառապող մարդկանց բազմութիւնների փրկութեան մեծ գաղափարի համար. արդէն իր կեանքը համակ զոհաբերութիւն եղաւ իր մտերիմների, ընկերների և նոյն իսկ օտար մարդկանց համար. անհամար տառապանքների մատնած իր հոգին և հիւանդութիւնից հալ ու մաշ իր մարմինը վերջնական և յաւիտենական հանգիստ կը գտնէր մայր հողի տակ... «Ընդունի՛ր ինձ, մա՛յր երկիր. ընդունիր, ես շատ տանջուեցի» .. հծծում էր նա և արցունքներն հոսում էին:

Նա կանգ առաւ ծառազարդ փողոցում գտնւող շէնքի առաջ, սրբեց իր աչքերը և ապա վճռական քայլերով ներս մտաւ:

Նրան ընդունեց մի երիտասարդ զինուորական.

—Նստեցէ՛ք, խնդրեմ, —ասաց նա:

Վաղրիկը նստեց, մի պահ լուռ մնաց.

—Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել, —հարցրեց պաշտօնեան:

—Ես եկել եմ խնդրելու, որ ինձ կամաւոր արձանագրէք. ես պատրաստ եմ մեռնելու իմ հայրենիքի և տառապող մարդկութեան համար, —ասաց վճռաբար:

Զինուորականի դէմքը շողաց այս խօսքերից. նա սիրալիր հայեացքով նայեց Վաղրիկին, ապա ասաց.

—Երիտասա՛րդ, շատ գովելի է ձեր հայրենասիրութիւնը. առայժմ մենք կամաւորների կարիք չունենք:

Այս պատասխանից ասես մի աշխարհ փուլ եկաւ Վաղրիկի ներսում. նա կարկամեց, ապա մի վերջին փորձ արաւ.

—Ես շատ եմ խնդրում չմերժել ինձ... բացառութիւն արէք:

—Զինուորական որոշում է. ես որոշումը փոխել չեմ կարող. եթէ ապագայում կարիք զգացւի կամաւորների՝ մենք ձեզ կը յայտնենք...

Վաղրիկն զգաց, որ այլևս իզուր էր աղերսելու, բայց ասես թէ կքել էր մի ծանր բեռան տակ: Զինուորականը մօտեցաւ, ձեռքը դրեց նրա ուսին և ասաց.

—Երիտասա՛րդ, մի՛ յուսահատուէք, ձեր կեանքը պահեցէք աւելի վտանգաւոր ժամանակների համար:

Վաղրիկը լուռ մնաց. բացատրութիւն տալ չէր կարող։

*
* *

Նա քայլում էր գիշերաշրջիկի պէս, ծանր մտքերի մէջ խորասուզուած. անտարբեր էր դէպի իր շուրջը խլրտող կեանքը, տենդագին անցուդարձը։ Խորտակել էր իր յոյսը, ռազմաճակատներում մահ ընդունելը։ Եւ այժմ նա քայլում էր մարդաշատ փողոցներում, քայլում աննպատակ ու անյոյս։

Ֆերդովսի փողոցում նա յանկարծ կանգ առաւ զինավաճառի խանութի առաջ. դիտեց ցուցափեղկի զէնքերը. որսի հրացաններ, փամփուշտներ, որսորդական դանակ… ներս մտաւ։

—Որսի հրացան ունէ՞ք.—ասաց նա հանդարտ։

Խանութպանը մի քանի տեսակ հրացաններ հանեց պահարանից և շարեց սեղանի վրայ։

Վաղրիկը զննեց մէկ առ մէկ։

—Հեռադիտակովն էլ ունենք. հեռաձիգ և ճիշտ նշանի համար,—ասաց խանութպանը։

—Ես հեռաւոր որսեր չեմ անում, այլ մօտ, կարճ տարածութեան վրայ,—ասաց անտարբեր ձեւով։

—Այդ դէպքում վերցրէք սա,—ասաց խանութպանը առաջին հրացանը ցուցնելով.—արժէ 500 թուման. 25 փամփուշտով։

—Երեք հատ փամփուշտ բաւական է.—ասաց Վաղրիկը դրամը սեղանի վրայ նետելով։

Խանութպանը զարմացաւ, որ Վաղրիկը չսակարկեց։

Վաղրիկը կառք նստեց և վերադարձաւ տուն։ Նա գոհ եղաւ, որ երբ իր սենեակն էր անցնում, տնեցիներից ոչ ոք չտեսաւ հրացանը։

Նրա համար այլեւս անտանելի դարձան ճաշն ու ընթրիքը։ Ուտում էր զզւանքով, հարկադրուած, խօսում էր ու զրուցում մեքենայաբար, շինծու։ Բլարան զգայուն, կանանց յատուկ նախազգացումով զգում էր, որ Վաղրիկը փոխուել է, ինչ որ անօրինակ բան է կատարւում նրա ներսում, բայց կանացի ամօթխածութիւնն ու հպարտութիւնը թոյլ չէին տալիս որեւէ հարց տալու, որեւէ խօսք ասելու. Նա յաճախ յարմար վայրկեաններ էր որսում Վաղրիկին դիտելու, երբ նրա հայեացքը այլ

կողմ էր ուղղուած: Նա նկատել էր նաև, որ Վաղրիկի դէմքն աւելի նիհարել և աչքերի տակ կապոյտ գիծ էր ընկել: «Ինչպէ՞ս օգտակար լինեմ նրան, ինչպէ՞ս», —խոկում էր Բլարան և միջոց չէր գտնում:

Երկու օր Վաղրիկը փակուած մնաց իր սենեակում. անընդհատ ծխում էր ու քայլում. մերթ նստում էր սեղանի առաջ, գրիչը վերցնում ինչ որ գրելու, բայց դարձեալ ելնում էր ու քայլում:

Նոյն երեկոյեան նա արտակարգ խանդաղատանքով գրկեց Գիւանային, համբուրեց, շոյեց նրա սև գանգուրները: Ընթրիքի պահուն նա տարօրինակ հայեացքով երկար դիտեց Բլարային, ասես առաջին անգամն էր տեսնում. յետոյ զարմացած հայեացքն ուղղեց Արմէնին և տիկին Մարիամին. հակառակ իր սովորութեան՝ աւելի խմեց, և շուտով առանձնացաւ իր սենեակը: Միջանցքում, նախ քան սենեակ մտնելը, Ահմէդին յայտնեց, որ առաւօտեան վաղ տեղ պիտի երթան:

Առաւօտեան ժամը 5-ին արթնացրեց Ահմէդին. ինքը չէր քնել ողջ գիշերը: Ահմէդը ներողութիւն խնդրեց, որ քնով էր անցել: Նրանք անաղմուկ դուրս եկան տնից. Ահմէդը նկատեց, որ Վաղրիկը որսի հրացան ունի.

—Վաղի՛ր աղա, —ասաց նա, —լաւ հրացան է երևում:

—Այո՛, այսօր լաւ որս պիտի ունենամ, —ասաց հանդարտ:

Նրանք ինքնաշարժ նստեցին և հասան Շիմրան: Օդը պայծառ էր, պաղ, և բնութիւնն արտակարգ աշխոյժով բացում էր իր աչքերը: Նրանք քայլեցին Թաջրիշ հրապարակից դէպի աջ տանող խճուղին, ուր ճամբան ձգւում է դէպի Ալբորզ լեռնաշղթայի փէշերին տարածւող ծառաստանները: Վաղրիկը չէր խօսում. նա քայլում էր հրացանն ուսին, մտքերի մէջ խորասուզուած, դէմքի գոյնը մթագնած էր, կապտած: Ահմէդը մտածեց, թէ առաւօտեան պաղ օդն է երևի կապտեցրել իր տիրոջ դէմքը:

Արդէն հասել էին պուրակին, որ Վաղրիկն ասաց.

—Դու մնա՛ այստեղ. նախ՝ ուռենիների ճիւղեր կտրիր և չամփուր պատրաստիր. ապա օջախ դիր և կրակ վառիր, մինչև որ ես որս կը խփեմ...

—Աչքիս վրայ, —ասաց Ահմէդը:

Վաշիրիկը շարունակեց քայլել։ Նա անցաւ ծառաստանի յետեւ տանող ճամբան և թեքուեց դէպի աջ. Անհէգը նրան կորցրեց իր աչքից։

Նեղ շաւիղով քայլում է նա. երկու կողմը կանաչ է ու ծառ. Նա կանգ է առնում մի քանի խոշոր քարերի մօտ։ Թըռչունները ուրախ ճչում են իրենց թուփերի մէջ, ծառերը տատանւում մեղմ հովից։ Նա լցնում է հրացանը և օդի մէջ աննըպատակ կրակում «Այս մէ՛կ», — ասում է նա։ Արձագանգը կրկընւում է հեռուներում, իսկ ծառերից կտրտուած տերեւներ են թօթափւում։

—Վաշիր աղան կրակեց, — մտածում է Անհէգը ծառաստանի յետեւում և շտապ՝ օջախ է գնում։

«Լա՛ւ, ապահով է կրակում», — խորհում է Վաշիրիկը և նորէն լցնում հրացանը։

«Կանաչ արտը մի՛ կոխիր»… յանկարծ հնչում է նրա ականջին. Նա յետ է ցատկում և տեսնում, որ կոխել է կանաչ խոտը. Նա նկատում է իր ոտքի հետքը, որ տրորել էր խոտը. Նա մի պահ ուժգունում է մեռելի պէս, ապա նորէն կապտում… Սև՛, յորձանուտ մազեր և նիրհուն աչքեր… «Բյա՛րա», — կանչում է նա խեղդուած ձայնով, — «Բյա՛րա… էլ չեմ կարող»… Նա արագ նստում է քարին. Հրացանը դնում ոտների արանքը՝ փողը իր կրծքին և ոտքի ծայրով սղմում հրացանի ոտքը…

* *

Մի ջրւոր բահը ուսին կանչում է.

—Էհէ՜յ, հէ՜յ… եւ ձեռքով է անում։

Անհէգը նայում է և համոզւում, որ իրեն է կանչում. «Վաշիր աղան որս է խփել, լուր է տալիս», — ասում է իրովի և վազում, հասնում է ջրւորին.

—Ծանր վիրաւոր է, — ասում է ջրւորը հեւալով. — Հրացանը պայթել է ձեռքում…

Անհէգը խելագարի պէս վազում է, ջրւորը նրա յետեւից։

—Ո՞ւխ, Վաշի՛ր աղա, հոգի՛ս… կանչում է նա հեկեկալով և չոքում ընկածի կողքին.

Հագուստներն արիւնոտ են և դէմքը՝ մեռելի պէս դեղգոյն, նա դանդաղ բաց է անում աչքերը, նայում Ահմէդին և նորէն փակում։

Մի պահ Ահմէդն ու Ջրուորը շուարում են. ի՞նչ անել, ի՞նչպէս փոխադրել քաղաք.

—Ես շալակս կառնեմ և կը քայլեմ, դու վազիր մի օթօ կանգնեցրու ճամբին և ոստիկանին լուր տուր,—ասում է Ահմէդը Ջրուորին։

Մեծ դժուարութեամբ, Ջրուորի օգնութեամբ, Ահմէդը շալակում է Վազրիկին ու քայլում, հառաչելով ու մղկտալով։

Թաջրիշ չհասած՝ վերջապէս մի ինքնաշարժ են գտնում և Ահմէդն ու ոստիկանը Վազրիկին փոխադրում են հիւանդանոց։

Այժմ նա գլխակորոյս վազում է տուն, Արմէնին լուր տալու։ Փողոցում մարդիկ նրան խելագարի տեղ են դնում. քիչ է մնում ընկնի ինքնաշարժի տակ. շարժավարը հազիւ թեքում է մեքենան և հայհոյում, բայց Ահմէդը ուշադրութեան չի առնում, նա վազում է հեւհեւ։

Արմէնը նոր է արթնացել քնից. Ահմէդը քրտնաթոր, այլայլած՝ գուժում է չարագուշակ լուրը. Կլարան ուշագնաց է լինում, տիկին Մարիամը ծեծում է կուրծքն ու ծնկները, Դիանան լալիս է… Նախ ուշքի են բերում Կլարային։

Ուրո՞ւր զարկեց արդեօք թռչնակի բնին, թէ՞ մի ձեռք աւրեց նրան… թռչնակի բոյնը խուճապի է մատնել, մի աննախընթաց խուճապի։

Դողդոջուն ու տժգոյն՝ Արմէնը հագնւում է և դուրս նետւում Ահմէդի հետ։

Եօդօֆորմի սուր, անախորժ հոտը դիպչում է նրա քթին. ամէն անգամ, այդ հոտը առնելիս, Արմէնը անախորժ զգացում էր ունեցել. այս անգամ աւելի՛ անախորժ է թւում նրան. թիւ 7… թիւ 7… Սենեակից ելնում է բժիշկը՝ ձեռներն ու ճերմակ գոգնոցը թարմ արեան բծերով նախշուած.

—Վիրաւորը ձեր ի՞նչն է,—հարցնում է նա Արմէնին կարեկցաբար.

—Մօտ ընկերս է…

—Ցաւում եմ յայտնելու, որ երկար չպիտի դիմանայ… անյոյս է… արիւնաքամ է եղել. մի քանի րոպէ եւս… և… [illegible]

վայնն ամբողջ ծածկուած է մանրադնդակներից. անդամահա-տութիւնն անխուսափ է... քո՛յր եղէք...

Արմէնը նետւում է ներս։

Նա պառկած է մահճակալի վրայ. կրծքից ներքեւ՝ վիրա-կապերի եւ բամբակի մի կոյտ, տեղ-տեղ արիւնով ծծուած. վրան քաշած սաւանը նոյն իսկ արեան բծեր ունի... Դէմքը ճերմակ՝ ձիւնի պէս, եւ գանգուրները ճակատին եւ բարձին։

— Վաչրի՛կ ջան, հո՛գիս... Եւ Արմէնը փղձկում է։

Նա բաց է անում աչքերը եւ մի թեթեւ ժպիտ խաղում է անգոյն դէմքին։

— Վաչրի՛կ ջան, խօսիր... խօսիր, հո՛գիս...

Եւ Արմէնի արցունքները թրջում են նրա ուսը։

Նա լուռ է եւ նորէն ժպտում է։

— Ինձ գոնէ ասա, հո՛գիս, ինչպէ՞ս եղաւ...

— Եղաւ... ասում է նա հազիւ լսելի, անդնդային ձայնով։

Իսկ մահճակալի ոտների տակ չոքել է Ահմէդը, ծնկներն է գրկում եւ հեկեկանքը զսպում։ Գթութեան քոյրը սրսկում է մահամերձին։

Խուճապահար, վիշտն ու սարսափը դէմքներին, ներս են մտնում Բյուրան եւ տիկին Մարիամը.

— Վաչրիկ ջան, քոռանա՛մ ես...

Եւ տիկին Մարիամն ուշաթափւում է։

Նրան դուրս են տանում Ահմէդն ու գթութեան քոյրը։

Բյուրան երկիւղով, ձեռները սրբելով մօտենում է եւ նըս-տում մահճակալին մօտ աթոռին. արցունքներն հեղեղի պէս հո-սում են եւ Վաչրիկի դէմքը երեւում է սոսկ անձրեւից ծեծւող ապակու յետեւից։ Նա բռնում է Վաչրիկի ձեռքը. Արմէնը նոյնպէս.

— Ներեցէք... եղաւ... պատահմամբ...— ասում է նա թոյլ, անդնդային ձայնով։ Ապա փորձում է Բյուրայի եւ Արմէնի ձեռքը դնել իր կրծքին. սեղմում է երկուսի ձեռքը իր սրտին եւ ասում.

— Երջանիկ... եղէք...

Յետոյ նա նայում է Բյուրային՝ մի անհուն քնքշանք իր հայեացքի մէջ. հառաչում է... այժմ նա նայում է պաղ, ապակե-ւայ աչքերով, ձեռքն այլեւս չի սեղմում սիրելի ձեռները... Նա այլեւս չի՛ սեղմի երբեք, չի՛ տեսնի երբեք...

—Մեռա՜ւ... մեռա՜ւ... ճչում է Բյարան և հեկեկանքը խեղդում է նրան։

Այժմ Բյարան և Արմէնը համբոյրներով ծածկում են նրա դէմքը և հեկեկում, լալիս անմխիթար։

Իսկ դուրսը, պատուհանի մօտ, ծառին մի թռչնակ է ծլվլում՝ ճիւղից-ճիւղ թռչկոտելով։

—Է՜յ խո՛դա, է՜յ խո՛դա... Վաղիր աղաս մեռա՜ւ... Ես ի՞նչ անեմ Ջուլֆային, ի՞նչպէս ասեմ թէ նա մեռաւ...

Եւ մինչդեռ նրանք լալիս ու կոծում են, որդեկորոյս մօր պէս ներս է մտնում ուշքի եկած տիկին Մարիամը, ընկնում դիակի վրայ, համբուրում ու լալիս, իր կորած զաւակի անունն է տալիս, իր երկրորդ զաւակի մահն է ողբում։

* * *

Արմէնն ու Ահմէդը մնացին հիւանդանոցում, թաղման պատրաստութիւն տեսնելու համար։ Բյարան և Տիկին Մարիամը մեկնեցին տուն՝ սեւեր հագնելու։

—Երանի չէի տեսել... Երանի չէի ճանաչել, Վա՛ղրիկ ջան, մա՛տաղ... ասում էր՝ «Մա՛յրիկ, հիմա մենք քո զաւակներդ ենք, դու մեզնով մխիթարուիր»...

Եւ ամեն մի խօսք դաշոյնի պէս կտրատում է Բյարայի սիրտը, նա հեկեկում է ու մղկտում անմխիթար, նա իր Վաղրիկին է լալիս։

* * *

Թաղումը կատարեց անշուք կերպով։ Պատերազմի թոհ ու բոհի և քաղաքական դէպքերի գահավէժ յաջորդականութեան մէջ շատերը ժամանակ չունեցան յուղարկաւորութեան մասնակցելու. Մահազդ եւ չտպուեց։ Այնուամենայնիւ ներկայ էին Արմենակը, Վահրամը, Աւաքելն ու Արամը, Տրդատն ու Կարօն, և «Զարթօնք» միութեան մի քանի անդամուհիներ։

—Հէնց այստեղ էր, Ստամբուլի վրայ,—ասում էր Աւաքելը Արամին,—որ վերջին անգամ, այն հիւրասիրութեան գիշերը բաժանուեցինք Վաղրիկից... Է՜յ աշխարհ, փո՛ւչ, անցողա-

կա՞ն աշխարհ… ո՞վ կը մտածէր, թէ էն հոգի տղայի գլուխը մի քանի օր յետոյ այդ նոյն սեղով պիտի տանէինք…

Դիակառքն անցաւ Զարրաֆը Մոխրի Դոլէյով, երեք առիւծների արձանախմբի մօտով, որտեղ Վաղրիկը յուսահատ ու բեկուած անցել էր՝ Զօլլոգիանին ապաւինելու գիշերը։ Առիւծներն ասես բարկացած էին, ժանիքներ ցուցնելով։

«Դաշնակից զօրքերը մտնում են Թեհրա՞ն… Իրանի երիտասարդ արքա՞ն դեմոկրատիկ կարգեր է խոստանո՞ւմ… Շահրիվա՞ր… «Էթէլա՞ա՞թ»… «Էթէլա՞ա՞թ»… ճչում են լրագրավաճառները՝ աջ ու ձախ վազելով։

Եւ մինչդեռ դաշնակից զօրքերը մտնում էին Թեհրան, Վաղրիկի դագաղը քաղաքից ելնում և իր յամր ընթացքն էր առնում դէպի հայոց «Բուրաստան» գերեզմանոցը։

Դագաղը գերեզման իջնելուց առաջ Արմենակը կարճ դամբանական է ասում.

—Ես ինչ բառերով գովեմ մեր թանկագին Վաղրիկին… Նրա անման ընկերասիրութիւնը, նրա անձնուիրութիւնն ու անբիծ նկարագիրը… Մեր ընկերական շրջանի ծաղիկն էր նա, մեր ցաւերով տապակւող, ընկերոջ համար հոգի տւող… Նա բոլորիս երջանկութեան մասին մտածեց, բայց ինքը դժբախտ եղաւ… Վաղրիկ ջա՛ն, այն պահուն, երբ հասել է քո և մեր երազած օրը, երբ մեր լեզուն պիտի ազատւի կաշկանդումներից, երբ մեր դպրոցները պիտի բացւեն, երբ այդ լուսոյ տաճարներում նորէն պիտի հնչեն մեր երեխաների ուրախ կանչերն ու ծիծաղը, երբ նրանք պիտի կարդան ու երգեն մայրենի քաղցր լեզւով՝ ա՛յս օրերին ահա դու ընդմիշտ մեկնում ես՝ մեզ անհուն վիշտ պատճառելով…

Եւ Արմենակը փղձկում է։

…«Թող հողը թեթև գայ վրադ, Վա՛ղրիկ ջան, անմա՛ն ընկեր»… վերջացնում է նա։ Մեռելաթաղները քաշում են թոկերը. լսւում է դագաղի սարսռազդեցիկ, անախորժ դղրդիւնը։

—Զգո՜յշ իջեցրէ՛ք… Վաղրիկս վիրաւոր է… Վէրքերը կը ցաւե՞ն… Պետիկ ջա՛ն, լա՛ւ պահիր Վաղրիկիս… Անմուրա՛զ զաւակներս…

Տիկին Մարիամն է, իր երկու զաւակներին է ողբում։

Մի հով է անցնում և գերեզմանոցի ծառերը հառաչում են։

Երբ գլխիկոր ու լուռ վերադառնում էին գերեզմանոցից, Վահրամն ասում էր Արմենակին.

—Էդ քո Քլարայիդ շունը գնաց մեր աննման Վազրիկը… Ա՜խ ջահել, ջահե՛լ հասակ…

* * *

Վազրիկի գրասեղանի գզրոցից Արմէնը գտաւ հետևյալ գրութիւնը.

«Մահուանս դէպքում, ընկերոջս՝ Արմէն Հայկունիին լիազօրում եմ ունեցուածքս կարգադրելու հետևյալ ձևով.

«Նկարներիս ալբոմը՝ Քլարային և Արմէնին։

«Հագուստներս՝ Ահմէդին։

«Դրամատանն ունեցած կանխիկ դրամից 10,000 ռուբլ մայրիկիս՝ տիկին Մարիամին.

«Մնացորդ գումարն յատկացնել փոքրիկ Դիանա Հայկունիի ուսման։

«Գերեզմանիս վրայ յուշարձան չլինի»։

—Քլա՛րա, տես ի՞նչ է գրել… Արդեօք ինքնասպա՞ն է եղել մեր աննման Վազրիկը…

* * *

Մի շաբաթ անց Ահմէդը մեկնում էր Մազանդարան։ Նրա ծնկների վրայ կար մի կապոց, որ թրջւում էր արցունքներից. Ահմէդը տանում էր Վազրիկի հագուստներն ու արիւնոտ շապիկը։

(ՎԵՐՋ)

ԾԱՆՕԹ. — էջ 123-ի առաջին տողի «բմա դուս դարի»-ն կարդալ «մարա դուս դարի»։

ԹԵՀՐԱՆ, ՏՊԱՐԱՆՈՑ «ԱԼԻՔ».

[3000 ր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0590760

A II
105035

ԳԻՆԸ՝ 60 ՌԻԱԼ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 1 ՈՒ ԿԷՍ ԴՈԼԱՐ

Ստանալու համար դիմել՝

TÉHÉRAN (IRAN) YOUSSEFABAD, PASSAGE LOVLAGUAR № 2
ANDRÉ DER OHANIAN.